

1587

22
U-50

Top row of green cabbages



2010

մայ 16

22

Ս - 50

Հրատարակութիւն Կենդրոնական Դրավագառանցի

կը

Ս Ր Բ Ա Զ Ա Ն
Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն
Հ Ի Ւ Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ի

ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1008
35673

Հ Ա Յ Ո Ւ Մ Ա Ռ Ա Ն Ա Ր Ա Ն Ի Ւ Ն
Ե Ր Ա Վ Ա Ր Ա Ն Ա Ր Ա Ն Ի Ւ Ն

Աշխատասիրեց Պ. Ա. . . ԵԱՆՑ

1008

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Մովսէս Վարդանեանի
Типография М. Вартапяна, Тройцк. переулокъ, д. № 11.

1889



ՀԵՂ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՊԱՏՄԱՒԹԻՒՆՔ

1. Աշխարհի արարագործութիւնը.




կզբում Աստուած ստեղծեց երկինքը և երկիրը. բայց
անպատճաստ էր երկիրը, ծածկած խաւարով ու ջրով և Աս-
տուծոյ Հոգին շրջում էր ջրերի վրալ:

Աստուած ասաց. «թող լինի լոյս», և երկեցաւ լոյսը: Աստուած լոյսը օր անուանեց և խաւար՝ գիշեր: Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ առաջին օր:

Աստուած ասաց. «թող լինի հաստատութիւնը», և երեւեցաւ հաստատութիւնը կամ երկինքը, որ տեսնում ենք: Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր երկրորդ: Աստուած ասաց. «թող հաւաքուին ջրերը միասին և երևի ցամաքը», և ջրերը բաժանուեցան ցամաքից, կազմեցին լճեր, գետեր և աղբիւրներ, որոնք վազում են և թափվում ջրերի մեջ ժողովի մէջ: Աստուած անուանեց ջրերի այս մեծ ժողովը ծով և ցամաքը՝ գետին կամ երկիր: Աստուած հրամայեց

Երկրին տալ իրանից տունկներ և նա ծածկուեցաւ խոտով,
ծաղիկներով, թփերով և ծառերով, որոնք տալիս են պը-
տուղննը՝ ամենն իր կերպով։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ ա-
ռաւօտ՝ օր երբորդ։



Աստուած ասաց. «Թող երկին լուսաւորները երկնալին
հաստատւթեան վրայ. նրանք պէտք է լուսաւորեն և տա-
քացնեն երկիրը, բաժանեն օրը գիշերից և ցոյց տան ժամա-

նակն, օրերն և տարիներ»։ Եւ վայլեցաւ արեգակը՝ օրուան
լուսաւորը և գիշերը երևեցան լուսինն ու աստղերի անթիւ
բազմութիւնը։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ որ չորրորդ։
Դեռ չկար երկրիս վրայ ոչ մի կենդանի, որ գուշաճա-
նար Աստուծոյ այս գեղեցիկ արարածներով։ Այս ժամանակ
Աստուած ասաց. «Թող լքյուեն ջրերը ձկներով և օդը թըռ-
չուններով, որոնք թռչում են հաստատութեան տակ»։ Եւ
ջուրը լքյուեցաւ զանազան մեծ և փոքր ձկներով և թըռ-
չուններն սկսան թռչել օդում։ Աստուած օրհնեց նրանց,
ասելով՝ «աճեցէք և բազմացէք, լքյուէք ջրերը, և թռչուննե-
րը թող բազմանան երկրիս երեսին»։ Եւ եղաւ երեկոյ և ե-
ղաւ առաւօտ՝ օր հինգերորդ։

Աստուած ասաց. «Թող լինին երկրիս վրայ կենդանիք»,
և զանազան անասուններ, զեռուններ և գաղաններ երևե-
ցան երկրիս վրայ։ Սարերի ծալրին և ձորերի մէջ, ամեն
տեղ լայտնուեցան կեանք և ուրախութիւն։ Աստուած ասաց,
«Եկ ստեղծենք մարդուն մեր պատկերով և նմանութեամբ և
թող տիրէ նա ծովալին ձկներին, երկնալին թռչուններին
և ամեն արարածներին, որոնք կենում են երկրիս երեսին»,
և Աստուած ստեղծեց մարդուն։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ
առաւօտ՝ օր վեցերորդ։

Այսպէս ստեղծեց Աստուած աշխարհս ոչնչից, միայն
իր ամենակարող խօսքով։

2. Մարդու ստեղծագործութիւնը.

Երբ երկինքն ու երկիրն ամեն զարդերով պատրաստ
էին, Աստուած առաւ գետնից հող, ստեղծեց նրանից մար-
դուն, կենդանացրեց նրան իր Հոգւով՝ տուեց նրան հոգի
անմահ և նրան անուանեց Ադամ։ Աստուած դրաւ իւր ստեղ-
ծած մարդուն ամենագեղեցիկ Եղեմայ դրախտի մէջ, ժողովեց

Նրա մօտ ամեն կենդանիներին և Աղամը տուեց նրանց անուն՝ իւրաքանչիւրին իր բնաւորութեան համեմատ: Բայց բոլոր արարածների մէջ չկայ արարած նրա նման: Աստուած ասաց. «մարդու համար լաւ չէ մենակ լինել, եկ ստեղծենք նրան օգնական, իր նման»: Աստուած գցեց Աղամի վրայ խորը քուն, առաւ նրա կողերից մէկը և ստեղծեց նրանից կին: Արան տեսնելով Աղամ ասաց. «սա է ոսկը իմ ոսկրներիցս և մարմին իմ մարմնիցս»: Նա անուանեց կնոջը Եւա, որ նշանակում է կենդանիների մայր: Աստուած օրհնեց նրանց ասելով. «աճեցէք, բազմացէք, լքցրէք երկիրը, իշխեցէք նրան. տիրեցէք ծովի ձկներին, երկնքի թռչուններին, երկրիս ամեն անասուններին, գազաններին և զեռուններին»:

Այսպէս Աստուած առաջին երկու մարդոց ձեռքով օրհնեց բոլոր մարդկութիւնը հայրական սիրով և կարգեց ամուսնութեան սուրբ կապը:

Վեց օրում վերջացնելով Աստուած իւր արարչագործութիւնը, տեսաւ որ ամեն բան բարի էր: Եօթներորդ օրը հանգստացաւ Աստուած իր գործերից և սրբեց այս օրը: Այս ժամանակից դրած է պատուիրան՝ վեց օր աշխատել և եօթներորդ օրը նուիրել բարեգործութեան և մանաւանդ Աստուծոյ պաշտօնին:

3. Առաջին մարդոց անմեղ կեանքը դրախտի մէջ.

Աղամը և Եւան անմեղ էին և ազատ ցաւերից և մահից: Նրանք բնակւում էին գեղեցիկ պարտիզի մէջ, որ նրանց համար Աստուած ինքն էր տնկել և որը ոռոգանում էին չորս մեծ գետեր: Ամեն կենդանիները հպատակում էին մարդուն և նա պատճառ չունէր նրանց գազանութիւնից վախենա-

լու: Չգիտենալով մեղք, Աղամը և Եւան շորերի կարօտութիւն էլ չունէին և չէին ամաչում բոլորովին իրանց մերկութիւնից անմեղ երեխաների նման: Նրանք չէին զգում և տրամութիւն: Ակերջապէս երես-երեսի խօսակցում էին նրանք իրանց Արարչի և նրա հրեշտակների հետ, որ երջանկութեան կատարելութիւնն է: Եղեմի՛ երկրային դրախտի մէջ կային ամենակերպ ծառեր, որ դուրալի էին աչքի համար և տալիս էին քաղցրահամ պտուղներ: Դրախտի մէջ տեղում կային երկու հրաշալի ծառեր՝ այն է կենաց ծառը և բարեոյ ու չարի գիտութեան ծառը: Աստուած ասաց Աղամին. «Կեր այս պարտիզի ամեն ծառերի պտուղներից միայն մի ուտիր բարեոյ և չարի գիտութեան ծառի պտղից. Երբ կուտէք այս ծառի պտղիցը, անպատճառ կըմեռնէք»: Այս պատուիրանքով կամեցաւ Աստուած փորձել Աղամին և Եւային, որով հետեւ միայն անպայման խոնարհութեամբ և երեխայական հնագանդութեամբ նրանք կարող էին ցոյց տալ՝ թէ իրանց կատարեալ հպատակութիւնը, թէ ճշմարիտ սէրը և թէ հաւատարմութիւնը դէպի երկնալին Հայրը:

4. Նախահարց մեղքի մէջ ընկնիլը.

Սատանան երկրիս կենդանիներից ամենից խորամանկի՝ օձի կերպարանքով լայտնուեցաւ Եւային և ասաց նրան. «Ինչո՞ւ Աստուած արգելեց ձեզ ուտել դրախտի ամեն ծառերի պտուղներից»: Եւան պատասխանեց. «Աստուած հրամալեց մեզ այս պարտիզի ամեն պտուղներն ուտել, և միայն այն ծառի համար, որ դրախտի մէջ տեղումն է, ասաց. «Մի ուտէք նրա պտուղներից և մի մօտենաք նրանց, որ չմեռնէք»: «Դուք չէք մեռնիլ, ասաց օձը. Աստուած գիտէ, որ եթէ

դուք ուտէք այդ պտղից, ձեր աչքերը կըբացուեն և դուք
կըլինիք ինչպէս աստուածներ, կըճանաչէք բարին ու չարը»:
Եւան նախցաւ ծառին ցանկութեամբ՝ ուտելաւ նրա
պտղից. և այսպէս մեղքն արդէն գործած էր նրա սրտում:
Ով որ թլանում է փորձութեան ժամանակ, գայթաղկվում
է և նայում է ցանկութեամբ և յօժարութեամբ արգելած
բանի վրայ, նա արդէն մեղանչում է սրտում: Այսպէս ա-
րաւ Եւան էլ: Արհամարհելով Աստուծոյ պատուիրանը, նա
կերաւ արգելած պտղիցն և տուեց նրանից իր մարդուն էլ,
որ նմանապէս կերաւ: Այն ժամանակ տեսան նրանք, որ մե-
զանչեցին, զրկուեցան իրանց անմեղութիւնից և նրա հետ
միասին դրախտի երջանկութիւնից, և ամօթից թագնուեցան
թփերի մէջ: Աստուած ասաց. «Ուր ես Ադամ»: — «Ես լսեցի
Քո ձայնդ պարտէզում, պատասխանեց Ադամ, և թագնուե-
ցայ, որովհետեւ մերկ էի»: — «Ով կըյալտնէր քեզ քո մերկու-
թիւնը, թէ դու չէին կերել արգելած ծառի պտղից, ասաց
Աստուած. ինչու անցար դու իմ պատուիրանից»: Ադամը
պատասխանեց. «Կինը, որ դու ինձ տուիր, տուեց ինձ պր-
տուղը և ես կերայ»: Կինն ասաց. «Օձն ինձ խաբեց»: Յան-
ցանքին հետեւ պատիքը: Աստուած ասաց օձին. «Դու անի-
ծածն ես երկրիս ամեն կենդանիներից, դու կըսողաս երկրիս
երեսին և ես կըդնեմ թշնամութիւն քո և կնոջ ծնունդների
մէջ. դու կըխալթես նրա գարշապարը. բայց կնոջ ծնունդը
կըջախջախէ քո գլուխլ»: Կնոջն ասաց Աստուած. «Կըշա-
տացնեմ քո վշտերը: Յաւով կըծնես որդիներ և ամենայն
բանում պէտք է հպատակես մարգուդ»: Վերջապէս Ադամին
էլ ասաց Աստուած. «Որովհետեւ լսեցիր քո կնոջդ և չպահե-
ցիր իմ տուած պատուիրանս, չարչարանքով կըգործես երկիրը,
որ անիծած է քո պատճառով. նա կըբերէ քեզ տատասկ և
փուշ և դու քո երեսիդ քրտինքով կըստանաս նրանից քո հացը,
մինչեւ որ կըկին հող կըդառնաս, ընչից որ առած ես: Դու
հող ես և հող կըդառնաս»: Աստուած տուեց Ադամին և Ե-

ւային կաշէ շորել և արտաքսեց դրախտից: Աստուած դրեց
դրախտում Քէրոբէին, որ պահէ հրեղէն թրով կենաց ծառի
ճանապահը: Ադամ՝ աքսորած դրախտից, սկսաւ գործել եր-
կիրը, որից ինքն առած էր: Այսպէս ճանաչելով մեղքն, ա-
ռաջին մարդիկ կորցրին իրանց առաջուան երջանկութիւնը:
Նրանց միակ ուրախութիւնը և յոյսը էր Աստուծոյ խոստումը,
թէ կնոջ ծնունդը կըջախջախէ օձի գլուխլ, այսինքն՝ կոյսի
որդին կըջնջէ սատանայի իշխանութիւնը:



5. Ադամի որդիքը. նցմիսան աշքածա-
ռայ Ադամը և Եւան երկու որդի ոսէին՝ կայէն և Աբէլ: Կա-
յէն էր երկրագործ և էր խիստ բնութեան տէր. ընդհա-
կառակն՝ Աբէլը հեզ երիտասարդ, հովիւ էր: Երկու եղբայր-
ներն էլ մատաղ բերին Աստուծոյ. Կայէնը երկրի պտուղնե-

ըլից, իսկ Ս.բէլը իր խաշների անդրանիկներից։ Մատաղ բերելիս Կայէնը նկատեց, որ իր մատաղը հաճելի չէ Աստծուն իսկ բարեպաշտ Ս.բէլի մատաղն ընդունելի եղաւ Աստծուն, Կայէնը շատ տրտմեցաւ։ Բայց Աստուած ասաց նրան. «Ինչու համար տրտմեցար։ Թէ բարի կրգործես, ուրախ կըլինիս, թէ չէ, զգոյշ կաց մեղքից, նա արդէն դռան մօտ է»։ Բայց Կայէնն, ուղղուելու տեղ, դաշտ կանչեց իր եղբօրը և սպանեց նրան։ Այն ժամանակ Տէր Աստուած ասաց Կայէնին. «Ուր է Ս.բէլ եղբայրդ»։ Կայէնը պատասխանեց. «Ճգիտեմ. մբթէ ես նրա պահապանն եմ»։ — «Այս ի՞նչ գործեցիր, ասաց նրան Աստուած։ Քո եղբօրդ արիւնի ձայնը գոչում է ինձ։ Գու անիծած ես այս երկիս երեսին, որ քո ձեռովդ ծածկեցաւ եղբօրդ արիւնով. գու կըտատանես, չգտնելսվ ոչ մի տեղ հանգիստ և ապաստան։

Սրանից լետոյ Կալէնը գնաց Նայիդ Երկիրը, ուր միքանի
ժամանակից լետոյ շինեց առաջին քաղաքը, որ նրա Ենոք
որդու անունով կոչուեցաւ: Նրա ամեն լետագաները չար էին
և սուրբ գրքում կոչուում են որդիք մարդկան: Երևելիները
նրանցից էին Յովեալ, որ հնարեց երդ և քնար, և Թոթէլ,
որ էր ճարտարապետ դարբին՝ պղնձի և երկաթի: Տէր Աս-
տուած մեղքացաւ Ադամին և Նւալին և տուեց նրանց՝ Ա-
բէլի տեղ, ուրիշ որդի՝ Սէթ անունով: Սրա որդիքն էին
բարեպաշտ և սուրբ գրքի մէջ անուանւում են որդիք Աստու-
ծոյ: Եւեելիները նրանցից էին Ենոք, որ միշտ Աստուծոյ
կամքին էր հետևում և կենդանի փոխուեցաւ երկինք, ու
Մաթուսաղայ, որ ամեն մարդիկներից աւելի երկար կեանք
ունեցաւ՝ այսինքն ինն հարիւր վաթսուն իննը տարի:

Բացի Սէթից Աղամն ունէր էլի շատ որդիք և աղջիկներ: Խա կեցաւ իննը հարիւր երեսուն տարի և մեռաւ, դառնալավ հոգ, որից առնուած էր:



Ծիւնները։ Մինչև Սէթի բարեպաշտ յետագաներն անդամ՝ իրանց անմիտ կապակցութեամբ Կայէնի յետագաների հետ, զեղիսացան և մոռացան ճշմարիտ Աստուծուն։ Այս ամեն չար մարդոց մէջ արդար էր միայն նոյն Սա բարեպաշտութեամբ մեծացը իր բոլոր որդոց և աշխատում էր նրանց հեռա-

ցնել ամեն չար օրինակից, որով նըանք շրջապատւած էին: Աստուած վճռեց ջնջել մարդկային ցեղը ջրհեղեղով և պահել ընդհանուր մահից միայն բարեպաշտ նոյին իր ընտանիքով: Աստուած հրամայեց նոյին շինել տապան, ալսինքն՝ մի մեծ նաւ անփութ փայտից և ծեփել այն նաւթով, որ կարողանայ կենալ ջրի երեսին: Այս տապանը երեք դստիկոն էր, որոնց ամեն մէկը շատ մասերի էր բաժանած: Պատուհանն էր վերևից և գուռը կողքից: Նոյ, Աստուծոյ հրամանով, առաւ տապանի մէջ մի-մի զոյդ ամեն կենդանիներից և միքանիսից էլ, որ առաւել օգտաւէտ էին մարդոց ու չէին կարող կենալ ջրում, մինչեւ անդամ եօթն-եօթն զոյդ, որ պահպանուին նըանց ցեղը մահից և առաւ նըանց համար մի տարուան կերակուր էլ: Վերջապէս Աստուած հրամայեց նոյին մտնել տապան իր երեք՝ Աէմ, Քամ և Յաբէթ որդիներով և նըանց կանանցով: Ամենը միասին ութը հոգի էին: Աստուած փակեց նըանց տապանի մէջ. սըանց յետ երկինքը ծածկուեցաւ ամսերով, որոնցից եկաւ սաստիկ անձրւ քառասուն օր և քառասուն գիշեր շարունակ. բացի սըանից ծովերն ու գետերը բարձրացան իրանց ափերից և ջուրն այնքան շատացաւ, որ դաշտերը, ծառերը և մարդոց բնակութիւնները ծածկուեցան ջողվ և տապանն սկսաւ լողալ: Մարդիկ և գաղաններ փախչում էին գաշտերից բլուրների գագաթը, միայն ջուրը հասաւ նըանց այնտեղ էլ. բլուրների վրայ էլ չգտնելով ապաստան, վեր ելան ամենաբարձր սարերի գագաթները, միայն ջուրն այնտեղ էլ հասաւ նըանց: Ջուրը բարձրացաւ ամենից բարձր սարերից էլի տասնուհին կանդուն աւելի: Ամեն բան ոչնչացաւ, միայն տապանն ապահով շրջում էր երեսին: Նըան մէջն էին երկրագնդիս բոլոր բնակիչներն՝ ութեան մաստիկ այսաւ նըանց: Հարուր յիսուն օր ջուրն ամենակին չէր փորքանում Հարիւր յիսուն օր ջուրն ամենակին չէր փորքանում և երկրիս երեսից: Սըանից յետոյ փչեց հողմ, յըուեց ամպերը և

փոքր առ փոքր ջուրն սկսաւ ցածանալ: Տապանը, որ շրջում էր ջրի երեսին, կանգնեցաւ Մասիսի գլխին: Նոյ, կամենալով գիտենալ, արդեօք ցամաքել է երկերը, թէ չէ, բաց թողեց ագռաւին, որս էլ յետ չգարձաւ և համբաւ չբերաւ երկրի գրութեան վրայ: Փոքր ժամանակից յետ թողեցան կանգնատանաւոյ յետ դարձաւ և նոյսգելով իր ձեռոք առաւ, նրան նելի ներա տապանի մէջ: Եօթը օրից յետ նոյս միւս անդամ բաց թողեց աղաւնուն, որ երեկոյեան դարձաւ տապան, կտցում ձիթենու ճիւղ բոնած: Ինչպէս ու ըալից անդամ տապանի բնակիչները, երբ այսպէս իմացան, որ ծառերն էլ ջրի տակը չեն: Եօթն օրից յետոյ նոյս կրկին բաց թողեց աղաւնուն, որ էլ յետ չգարձաւ, որովհետև երկրը արդէն ցամաքած էր: Նոյ վեց հարիւր տարեկան էր, երբ Աստուած ասաց նրան. «Դուքս եկ տապանից բոլոր բնտանից քովդ և ամեն կենդանիներով, որոնք քեզ հետ միասին փակուած էին այնտեղ: Աճեցէք և բազմացէք երկրիս վրայ»: զ. մ. յոյ Տապանից գուրս գալից յետոյ, նոյ շինեց սեղան և բերաւ Աստուծոյ շնորհակալութեան մատադ, որ այնպէս հաճոյ եղաւ նրան, որ այս երախտագիտութեան համար օրհնեց երկրիս և մարդկութիւնն, ասելով. «Մինչև երկրը կայ, անպակաս կը լինի նըան երեսից ցանքսն ու հունձը. ամառը կը հետևէ ձմեռին և գիշերին կը հետևէ յերեկին, և այսպիսի ջրհեղեղ էլ չի լինի երկրիս վրայ»: Նոյ նայեցաւ երկինք և տեսաւ ամպերի մէջ փայլուն աղեղը. «Այս աղեղն ամպերի մէջ, ասաց Աստուած, է նշան և գրաւական իմ ողորմութեանս մարդոց. երբ կը հաւաքուեն երկնքում ամպերը և իմ աղեղս կերևի նըանց մէջ, թող մարդիկ շնորհակալութեամբ յիշեն իմ ուխտս՝ թէ էլ չեմ խրկիլ ջրհեղեղ»: Այսպէս աղեղն երեւելով երկնքում միտերս է բերում մեզ մեր Արարէի ողորմածութիւնն ու մարդասիրութիւնը:

նունջը դու ցամարած պատճեաց առնիս մզանչ յցոփ առ զգոփ
առմանայ լու միայն 7. Նոյի որդիքը.

Նոյ Արարատից ցած գալից յետ սկսաւ գործել երկերը
և տնկեց խաղողի ծառ։ Երբ պտուղը հասաւ, քամեց նրա
ծուծը, և որովհետև երբէք չէր փորձած նրա զօրութիւնը,
իմեց անշափի շատ նրանից, այնպէս որ հարբեցաւ։ Թուլա-
ցած գինուց, թմբեցաւ և պառկեցաւ տան մէջ ամենևին
մերկ։ Քամ, տեսնելով իր հօրն այսպիսի անվայել դրու-
թեան մէջ, սկսաւ ծիծաղել նրա վրայ և յալտնեց այն
իր եղբայրներին էլ։ Բայց Սէմ և Յաբէթ մտան վրան և
երեսները շուռ տուած մօտեցան իրանց հօրն ու ծածկեցին
նրան, առանց տեսնելու նրա մերկութիւնը։ Նոյ երբ զար-
թեցաւ, իմանալով Քամի անպատիւ վարմունքն, ասաց. «Ա-
նիծած դու, քո յետազաներդ, Քանանու որդիքը կըլինին քո
եղբայրների որդւոց ստրուկները. բայց Սէմին և Յաբէթին,
որոնք պատուեցին իրանց հօրմինչև անվայել դրութեան մէջն էլ
և ծածկեցին նրա առականքը, ասաց. «Օրհնում եմ ձեզ,
ձեր որդիքը կըբազմանան երկրիս երեսին և կիշխեն Քամի
յետազաների վրայ»։ Նոյի գուշակակութիւնն իր որդւոց յե-
տազաների վրայ կատարուեց։

Նոյի երեք որդիներից՝ Սէմից, Քամից և Յաբէթից, ծա-
գեցան աշխարհիս ամեն մասերի ընակիչներն։ Ինքը նոյ ջըր-
հեղեղից յետոյ էլի երեք հարիւր յիսուն տարի ապրեց։

8. Բաբելոնի աշտարակաշինութիւնը.

Նոյի որդիքը բազմացան և ամենքն իբրև ազգ խօսում
էին մի լեզուով։ Բազմանալով սկսան նրանք ցրուել երկրիս ե-
րեսին. բայց բոլորովին ցըուելից և մէկմէկուց հեռանալից

առաջ վճռեցին շինել մի ընդարձակ քաղաք և բարձր աշտա-
րակ, որի գլուխը հասնէր մինչև երկինք և երսէր հեռութից։
Բայց սրանից նրանք ուզում էին, որ այս շինուածը լինի
երանց յետազաների համար նշան իրանց զօրութեան և իմաս-
տութեան։ Բայց Աստուած ջնջեց նրանց այս հպատ ձեռնար-
կութիւնը։ Նա խառնեց նրանց մտքում բառերն ու մտքերը.
ուստի և աշտարակի շինողները չհասկանալով մէկմէկու,
չկարողացան շարունակել իրանց ձեռնարկութիւնը և ստիպ-
ւեցան ցըուելու զանազան կողմեր. իսկ սկսած և անկատար
մնացած աշտարակն ու քաղաքը մնացին յիշատակ մարդոց անմը-
տութեան, որոնք ձեռք խփեցին մի գործքի՝ առանց Աստու-
ծոյ օրհնութեան։ Այս քաղաքս անուանուեցաւ Բաբիլոն,
որ երբայցերէն նշանակում է խառնակութիւն, որովհետև
նրա շինութեան ժամանակ Աստուած խառնեց մարդոց լեզուն։

9. Աբրահամ.

Մարդիկ ցըուելով երկրիս վրայ բաժանուեցան զանազան
ազգերի և մոռացան ճշմարիտ Աստծուն. նրանք սկսան պաշ-
տել իրանց շինած կուռքերը, զանազան կենդանիներին, ա-
ըեգակը, լուսինը, և այս պատճառով կոչուեցան կուապաշտ-
ներ։ Այս կուապաշտների մէջ էր Սէթի ցեղից մի բարեպաշտ
մարդ Աբրահամ անունով։ Աստուած, ճշմարիտ հաւատը
հաստատ պահելու համար երկրիս վրայ, ընտրեց նրան և
նրա ցեղը։

Աբրահամ Թարախի որդին էր և ունէր երկու եղբայր՝
Նաքովը և Առան անունով։ Այս վերջինը իր հօր Թարա-
խից առաջ մեռաւ, թողնելով իրանից յետոյ մի որդի Ղովտ
անունով, որին Աբրահամ իր մօտ առաւ։ Բայց որովհետև
կուապաշտութիւնը տարածուեց ոչ-միայն Աբրահամի հայրե-

Նիքում այլև նրա հօր ընտանիքի մէջ էլ, Աստուած ասաց Աբրահամին. «Հեռացիր քո հայրենիքիցդ և ազգական ներիցդ և գնա այն երկիրը, որ Ես քեզ ցոյց կըտամ. դու կըլինիս մեծ աղջի հալը. Ես օրհնում եմ քեզ և քեզմով կօհնուին երկրիս բոլոր ազգերը»:

Թէև յուժ ցաւալի էր Աբրահամի համար իր հայրենիքը թողնել. բայց նրա հաւատն Աստուծոյ վրայ այնպէս հաստատ էր, որ ոչ մի բոլէ չտատանեցաւ, այլ առաւ իր Սարա կնոջ, Ղովտ եղբօրորդուն, իր ծառաներին և աղախիններին, հաւաքեց իր խաշները և ամեն իր ստացուածներով հեռացաւ հայրենիքից:

Աբրահամ գնաց Քանան անուանուած գեղեցիկ և բերը երկիրը և երբ հաստաւ Սիւքեմի պտղաբեր հովիտն, Աստուած ասաց նրան. «Ակա այն երկիրը, որ տալիս եմ քեզ և քո որդոցդ»: Աբրահամ շնորհակալութիւնից Աստծուն սեղան կանգնեց այնտեղ, ուր նա երևեցաւ իրան:

10. Աբրահամ և Ղովտ.

Աբրահամ և Ղովտ բնակւում էին միասին և երկուսն էլ ունէին բազմաթիւ խաշների: Բայց Աբրահամ տէր էր շատ մեծագին գանձերի, որոնք իր առաքինութիւններն էին: Նա էր՝ Աստուածանից երկնչող մարդ, արդար, մեծահոգի, ցաւակից խեղճերին, հիւրասեր, լի կենդանի հաւատով գեղի Աստուած, հպատակ Նրա կամքին և հաւատարիմ իր մերձաւորներին: Ինքը միշտ ճշգութեամբ վարուելով կամենում էր ուրիշների մէջ էլ միշտ ճշգութիւն տեսնել: Իր հոգւոյ այս գեղեցիկ յատկութիւնների համար հաճոյ էր նա Աստծուն, սիրելի մարդոց և բաւական ինքն իրմով: Քանանու բնակիչ-

ները շատ սիրով ընդունեցին նրան: Բարեպաշտ մարդիկ ամեն տեղ Աստուծոյ պաշտպանութեան տակն են լինում: Աբրահամի և Ղովտի խաշներն այնպէս բազմաթիւ էին, որ արածելու տեղը, ուր նրանք կենում էին, չերբաւականանում: Նրանց հովիւների մէջ յաճախ ծագում էր վէճ. այս պատճառով Աբրահամ ստիպուեցաւ իր եղբօրորդուն ասելու, «Մենք ազգականներ ենք և չպէտք է վիճենք մէկ-մէկու հետ ծառաներիս համար, աւելի լաւ է իբրև բարեկամներ հեռանալ մէկ-մէկից: «Տես, ահա բոլոր երկիրն առջևու է. ընտրիր, ուր կամենում ես կենալ. թէ դու կերթաս աջ, ես ձախ կերթամ»: Աբրահամը թէև Ղովտից առաւել մէծ էր և զօրեղ, բայց ընտրութիւնը տուեց Ղովտին, որովհետեւ ամեն իր վարմունքի մէջ միշտ մեծահոգի էր: Ղովտ իր խաշների համար ընտրեց բերը հովիտը, որին ոռոգանում էր Յորդանան գետը և ուր շինած էին հարուստ Սոգոմ և Գոմոր քաղաքները: Եւ նա ինքը բնակեցաւ Սոգոմ քաղաքում: Քակ Աբրահամ խփեց իր վրանները Մամբրէի մայրի մօտ, զը Քէբրոնի մօտ էր:

Բայց Ղովտի ընտրութիւնը յաջողակ չէր. Սոգոմի բնակիչները չար մարդիկ էին:

Նրակայ երկիրները բաժանած էին փոքրիկ տէրութիւնների, որոնց ամեն մէկն իր առանձին թագաւորն ունէր: Այս թագաւորների մէջ սկսաւ պատերազմ, որին մասնակից էր Սոգոմի թագաւորն էլ: Սրան թշնամի կողմը յաղթեց և Ղովտ իր ընտանիքով, ծառաներով, աղախիններով, բազմաթիւ խաշներով, Սոգոմ և Գոմոր քաղաքների միւս բնասին գերի ընկաւ:

Գերութիւնից ազատուած մէկ մարդ գնաց և պատմեց Աբրահամին, ինչոր նրա եղբօրորդու գլխին եկել էր: Աբրահամ շուտով ժողովեց իր ամեն ծառաներին, որոնք ողջը երեք հարիւր տասնեւութ հոգի էին: Նրա դաշնակիցներն էսքող, Աւնան, Մամբրէ միացան նմանապէս նրա հետ ի-

րանց մարդերով և շտապով գնացին գերիների ետևեց. Սրանք հասան թշնամիների ետևեց գերերով, ջարդեցին նրանց և քշեցին. ազատեցին Ղովտին և ամեն միւս գերիներին և խլեցին թշնամիների տարած բոլոր աւարը. Աբրահամ՝ Ղովտի, ունրա ընտանիքի, բոլոր նրա մարդերի և Սոդոմի բնակիչների հետ միասին լետ դարձաւ:

Այս յաղթութիւնից լետ դառնալիս Աբրահամ անց էր կենում Շաղէմ քաղաքի մօտով, ուր այն ժամանակ թագաւորում էր բարեպաշտ Մելքիսեդէկն, որ ճշմարիտ Աստուծոյ քահանաւ էլ էր: Սա Աբրահամի առաջը դուրս եկաւ և ասաց. «Օրհնուած է Աբրահամ Բարձրեալ Աստուծանից, որ երկինքն ու երկիրս ստեղծեց, և օրհնուած է Աստուծ, որ մատնեց թշնամիներիդ քո ձեռքդ»: Այս ասելով տուեց նրան հաց և գինի: Աբրահամ պատուելով Մելքիսեդէկի քահանայութիւնն և Աստուծոյ հոգով նրա մէջ յաւիտենական քահանապետի (Յիսուս Քրիստոսի) օրինակը տեսնելով, տուեց նրան աւարի տասանորդը:

Սոդոմի թագաւորն էլ դուրս եկաւ. Աբրահամի առաջ և ասաց նրան. «յետ տուը ինձ միայն մարդիկս, որոնց դու գերութիւնից ազատեցիր, իսկ Սոդոմից յափշտակած բոլոր հարստութիւնները թող քեզ մօտ»: Սոդոմի թագաւորը չէր կարծում, որ Աբրահամն իրան մէկ բան լետ կըդարձնէ, բայց Աբրահամ պատասխանեց. «Աստուծ չանէ, որ ես ու ըիշի ստացուածքից շահուել կամենամ: Ես յետ եմ դարձնում քեզ ամենը, բացի նրանից, ինչ որ կերան մարդիկս և բացի դաշնակիցներիս բաժնից»: Այս ասելով լետ տուեց թագաւորին ամենը, ինչ որ թշնամին նրա տէրութեան մէջ յափշտակել էր:

Նարձ մէջն ոչ յաջակ միմաբայրացն որ հայտնաւ աշխատացի այլանութիւնը մօտ:

Աբրահամը չնայելով իր հարստութեան, տուն չունէր, այլ բնակւում էր վրանում, որ տեղափոխում էր իր հետ միասին ալնատեղ, ուր արածում էին նրա խաշները: Մէկ անգամ կէսօրին նա նստած էր իր վրանի դռան մօտ և տեսաւ իր առջներ երեք անցւորականների: Նա նրանց առաջ դուրս եկաւ և մինչև գետին երկրպագութիւն տալով՝ ասաց. «Եթէ կամենում էք իմ բարիս, մի անցէք իմ վրանիս մօտով: Հանգստացէք փոքր ինչ այս ծառի տակ. Ես կըբերեմ ջուր ոտներնիդ լուանալու և կըպատրաստեմ ձեզ ծաշ»: — «Արա, ինչպէս ասում ես», պատասխանեցին նրանք»: Այն ժամանակ Աբրահամ շուտով մտաւ վրանը, պատուիրեց իր կնկան լաւ նաշիհից թխել նկաններ, յետոյ գնաց խաշների մօտ, ընտրեց ամենից լաւ հորթն ու հրամայեց ծառաներին պատրաստել նրան հիւրերի համար. բերեց նրանց համար նմանապէս կարագ և կաթ. իսկ ինքը կանգնած ծառալում էր նրանց ճաշ ժամանակ:

Ճանապարհորդներն էին հրեշտակներ և Աստուծած մարդու կերպարանքով: Տէր Աստուծն ասաց Աբրահամին. «Ո՞ր է քո կին Սառան»: «Նա վրանումն է», պատասխանեց Աբրահամ: «Առաջիկայ տարի այս ժամանակ Սառան կունենայ որդի», ասաց Աստուծած: Սառան կանգնած էր վրանի դռան ետև և լսելով այսպիսի խոստումն, ծիծաղեցաւ, որովհետև չէր հաւատում և ասում էր ինքն իրան. «Ինչպէս կտրող է այդ պատահել, կարող եմ միթէ ես ունենալ որդի, մինչդեռ ես էլ, իմ մարդս էլ ծերացել ենք» (այն ժամանակ Սառան 90 տարեկան էր և Աբրահամ 100): Բայց Աստուծած ասաց Աբրահամին. «Ինչու է ծիծաղում Սառան. կայ արդեօք անկարելի բան Աստուծոյ համար»: Սառան վա-

խեցաւ տեսնելով, որ անցւորականին յայտնի էր մինչև անգամ իրա միտքն էլ. նա դուրս եկաւ վրանից, կամենում էր ներողութիւն խնդրել, ասելով, թէ ինքը չէ ծիծաղել. բայց Աստուած ասաց. «Ես գիտեմ որ դու ծիծաղեցար»: Աբրահամ համոզուեցաւ, որ իր առջև եղողները հասարակ ճանապարհորդներ չեին:

Նրանք վեր կացան և գնացին դէպի Սոդոմ։ Աբրահամը
ճանապարհ գցեց նրանց։ Աստուած ասաց. «Ես չեմ ծածկիլ
իմ ծառայից»՝ Աբրահամից, ինչոր կամենում եմ անել։ Ես
գիտեմ, որ նո կըսովորեցնէ իր յետագաներին ճշմարիտ ճա-
նապարհով գնալ և բարեպաշտութեամբ կենալ։ Աստուած
յայտնեց Աբրահամին, որ միտք դըել է Սոդոմ և Գոմոր-
քաղաքներն իրանց բնակիչների անօրէնութեան համար ջըն-
ջել։ Աբրահամը հարցուց, Աստծուն, կըխնայէ արդեօք
նա քաղաքին, թէ գտնուին նրա մէջ յիսուն կամ թէ տասն
արդար մարդիկ։ Տէր Աստուած պատասխանեց, թէ կըխնա-
յէր քաղաքին, եթէ գտնուէին նրա մէջ միայն տասն հոգի
արդար մարդիկ էլ։

12. Սովոր և Գոմոր.

Երկու հըեշտակները ճանապարհողների ձեռվ մտան
երեկոյեան Սոդոմ։ Ղովտ, որ նստած էր քաղաքի դռան մօտ,
տեսաւ մտնողներին, միայն չէր իմանում թէ ով են։ Նա
մօտեցաւ նրանց և երկիրպագանելով նրանց մինչև գետին,
խնդրեց, որ մտնեն իր տուն և գեշերն իր մօտ անց կա-
ցնեն։ «Չէ, պատասխանեցին հըեշտակները, մենք կանցկա-
ցնենք գեշերը փողոցում»։ Բայց Ղովտ այնքան խնդրեց,
որ նրանք վերջապէս համաձայնեցան։ Նա ուտեցըրեց նրանց
ընթրիք և երբ քնելու ժամանակ էր և կամենում էին պառ-
կել, քաղաքի բնակիչները շըշապատեցին Ղովտի տունը և
պահանջում էին, որ նա իրանց ձեռքը մատնէ օտարականներին,

որոնք եկել են նրա մօտ։ Ղովտ դուրս գալով ժողովրդի առաջ, փակեց դուռն իր ետևից և խնդրում էր, որ վնաս չտան օտարականներին։ Բայց Սոդոմի բնակիչները գոռում էին նրա վրայ, ասելով՝ «Դու ինքդ մեր մէջ պանդուխտ եկած ես և դեռ մեր դատաւո՞րն էլ կամենում ես լինել»։ Այս խօսքերով՝ յարձակուեցան Ղովտի վրայ. միայն հրեշտակները մտցրին նրան ներս և դուռը փակեցին վրայից։ Այսպէս Ղովտ աղատուեցաւ Սոդոմի բնակիչների կատաղութիւնից, որոնք կուրացած չկարողացան նրա մտնելու ճանապարհը գտնել։ Միևնույն գիշերը հրեշտակներն ասացին Ղովտին. «Մենք ուղարկած ենք Ս.ստծուց այս քաղաքը քանդելու. նրա բը-նակիչների անօրէնութիւնը բարձրացաւ մինչև երկինք»։ Երբ սկսաւ առաւօտանալ, հրեշտակներն առան Ղովտին, նրա կնոջ և երկու աղջիկներին և հանեցին քաղաքից դուրս։ «Ս.յժմ աղատուեցէք, ասաց հրեշտակը. «մի մնաք այս հովտում. այլ գնացէք սարը և լետ մի նալէք»։ «Տէք, ասաց Ղովտը, ես չունիմ զօրութիւն, մինչև սարը գնալու. բայց ահա մօտումս փոքրիկ քաղաք կալ, արդեօք չեմ կարող այնտեղ ազատուել»։ Այս բանումն էլ թող կատարուի քո խրնդիրդ. գնա շուա այնտեղ, մինչև որ դու քաղաք չմտնես, ես ոչինչ չեմ կարող անել»։ Արևի ծագելիս, Ղովտ հասաւ քաղաք, որ այնուհետև Սեգովի անուանուեցաւ։ Ո.յն ժամանակ վեր եկաւ երկնքից կրակ և ծծումք ու ջնջեց Սոդոմ և Գոմոր քաղաքները, բոլոր նրա շրջկան, ամեն բնակիչներին, դաշտերը և խաշները։ Ղովտի կինը, հրեշտակների հրամանից անցներով, ետ մնաց իր ընտանիքից, լետ նախեցաւ և դարձաւ աղի արձան։ Աքրահամը վերկացաւ առաւօտը նախելու այն կողմը, ուր էին Սոդոմ և Գոմոր քաղաքները և տեսաւ որ այնտեղից բարձրանում է թանձր ծուխ և բոց։ Հիշեալ ամեն ոյաք մէջուց մէլ : քառ միջանքայ չի անոյ և խոչ զիջու ոյ սահայ մայս արշան գոյզրա ից

13. Իսահակի ծնունդը. Աղարի և Իսմայէլի
աբսորումն.

Աստուծոյ խոստմանը համեմատ տարուան վերջին Սառան ծնաւ որդի, որին անուանեցին Իսահակ։ Սառան ասում էր. «Աստուծած տուեց ինձ ուրախութիւն ծերութեանս ժամանակ, ամենքն, ով կըլսէ իմ որդուս ծնունդը, կուրախանաւ ինձ հետ միասին»։ Երեխան մեծանում էր և զօրանում։ Աբրահամ հարիւր տարեկան էր և Սառան իննսուն, երբ ծնաւ նրանց որդի։

Իսմայէլ՝ Աբրահամի որդին Աղարից, Իսահակից մեծ էր քանիմի տարով և յաճախ զըկում էր իր եղբօրը։ Սառան նկատեց այս և պահանջեց Աբրահամից, որ նա աքսորէ Աղար աղախնին իր որդովը, այն պատճառով, որ նրանք չեն Աղար աղախնի որդուն՝ Իսահակին։ Աբրահամ շատ տրտմեպատւում իրա որդուն՝ Իսահակին։ Աբրահամ շատ ասաց նրան. ցաւ այս պահանջման համար. բայց Աստուծած ասաց նրան. «արա ինչպէս Սառան կամենում է»։ Աբրահամ, որնոր միշտ անպայման հպատակում էր Աստուծով կամքին, վեր կացաւ առաւտու վաղ, առաւ միքանի հաց և մի տիկ ջուր, ողջը առաւտու վաղ, առաւ միքանի հաց և մի տիկ ջուր, ողջը գրաւ Աղարի ուսին և Իսմայէլին էլ տալով նրան աքսորեց երկուսին էլ։ Աղար թափառելով անապատում կորցրեց ճակարուսին էլ։ Աղար թոնապարհը և Իսմայէլը թուլանում էր ծարաւից։ Աղար թոնապարհը նրան ծառի ստուերի տակ և ինքը մէկ վտաւան հեղեց նրան ծառի ստուերի տակ և ինքը մէկ վտաւան հեղեց նրանից նստեցաւ։ «Ես չեմ կարող տեսնել որդուս մահը», ոու նրանից նստեցաւ։ «Ես չեմ կարող տեսնել որդուս մահը», ասում էր նա լալով։ Իսմայէլ ծարաւից նեղացած, գոռում էր լաց լինում։ Աստուծոյ հրեշտակը լայտնուեցաւ Աղարին էր և լաց լինում։ Աստուծոյ հրեշտակը լայտնուեցաւ Աղարին, և ասաց նրան. «Մի լար, Աստուծած լսեց քո որդուդ ձայնը, և ասաց նրան. «Մի լար, Աստուծած լսեց քո որդուդ ձայնը,

ցրեց Իսմայէլին էլ։ Աստուծած օրհնեց նրան. նա մեծացաւ, քնակվում էր անապատում, դարձաւ ճարտար աղեղնաւոր և Եգիպտացի կին առնելավ ունեցաւ տասներկու որդի և բազմաթիւ ցեղ։ Իսմայէլից դուբս են եկած Աբրահամիները, որ այս պատճառով երեկոն Իսմայէլացիք էլ են կոչվում։

14. Իսահակի մատաղ բերուիլը.

Աստուծած, կամենալով փորձել Աբրահամի հաւատը, մի անգամ ասաց նրան. «Աբրահամ»։ «Այստեղ եմ ես, Տէր», պատասխանեց Աբրահամը։ «Վեր առ քո սիրելի որդուդ՝ Իսահակին», ասաց Աստուծած, «գնա նրա հետ միասին այն սարի գլուխն, որ ես քեզ ցոյց կրտամաւ այնտեղ բեր նրան Ինձ մատաղ ողջակէզ»։

Առաւետը վաղ վեր կացաւ Աբրահամը, պատրաստեց վայտ, բարձեց իշխ վրայ, առաւ հետին երկու ծառաներ և Իսահակին ու ընկաւ ճանապարհ։ Երբորդ օրը նրանք հասան նշանակած տեղը, ուր լետոյ Սողոմոն զինեց ճշմարիտ Աստուծոյ տաճարը։ Այն ժամանակ Աբրահամն ասաց իր ծառաներին. «Մնացէք այստեղ և սպասեցէք ինձ, իսկ ես իմ որդովս կերթամ սարի գլուխն աղօթք անելու»։ Նա վեր առաւ մատաղի կրակն ու դանակը, Իսահակ վեր առաւ վայտը։ Սարը բարձրանալիս Իսահակ ասաց իր հօը. «Հայր իմ, մենք ունինք կրակ և փայտ. բայց ուր է մատաղի ոչխարը»։ «Ո՞րդեակ, ասաց Աբրահամ, Տէր Աստուծած կըլրկէ մեզ մատաղի ոչխար»։ Իսահակի մտքովն էլ չէր անց կենում, որ ինքը նշանակուած է զոհուելու, երբ սարը վեր ելան, Աբրահամ կանգնեց սեղան և դրաւ նրա վրայ փայտը։ Իսահակ համեստ հպատակութեամբ, բղորովին առանց ընդիմութեան, թողեց իրան կապել և փայտի վրայ դնել։ Աբրահամ բարձրացրեց արդէն իր ձեռը և դանակով կամենում էր մորթել իր որդուն և ահա լսեց Աստուծոյ հրեշտակի ձայնը, որ

ասում էր. « Աբրահամ, Աբրահամ »: — « Ես այս տեղ եմ », պատասխանեց Աբրահամ: « Ձեռքդ քեզ քաշիր, ասաց հրեշտակը, մի սպանիր որդուդ: Աստուած բաւական է քո հըպատակութեամբդ, որովհետեւ դու չխնայեցիր նրա սիրոյն համար մինչև անգամ քո սիրելի որդուդ էլ: Աստուած կը վարձատրէ քեզ և քո զաւակդ կըբազմանալ ինչպէս ծովի աւագ և քո զաւակովդ կօրհնուին երկրիս բոլոր ազգերը »: Այս նշանակում էր, որ Աբրահամի ցեղից պէտք է ծնէր երկրիս Փրկիչը:

Յետ նայեցաւ Աբրահամ և տեսաւմի խոյ, որ ծառուից կախուած էր, առաւ նրան և գոհեց Աստծուն իրառդու տեղ և յետոյ իսահակի հետ միասին դարձաւ տուն: Սառան մինչև իսահակի ամուսնութիւնը կենդանի ըլմաց: Նա մեռաւ հարիւր քսան եօթը տարեկան: Մինչև այս ժամանակ Աբրահամ չնայելով իր հարստութեան, չունելու սեպհական երկիր, ուր կարողանար թաղել իր կնոջը: Այն ժամանակ դեռ հասարակաց հանգստարաններ չկային, այլ ամեն մարդ թաղում էր իր մեռելներին իր սեպհական կալածքում: Աբրահամ գնեց այն երկրի քնակիչների մէկից, որի անունն էր Եփրոն, երկիր մի ալրով, ուր և թաղեց իր կնոջը: Ուրեմն Աբրահամի առաջին սեպհականութիւնն այս երկրում էր ազարակ մի ալրով, ուր էր գերեզմանը:

15. Իսահակի ամուսնութիւնը.

Աբրահամ, խօրին ծերութեան հասած, իր մահից առաջ կամեցաւ իր որդու իսահակի վիճակը կարգաւորել: Նա չէր ուզում նրան կին առնել ոչ մի քանանացի աղջիկ, այլ չէր ընտրել նրա համար կին իր հայրենիքից և ազգագնեց ընտրել նրա համար կին իր ծառաներից մէկին, որին կաններից: ուստի և կանչեց իր ծառաներից էր բոլոր նրա կալնա հաւատում էր և որ կառավարում էր բոլոր նրա կալնա հաւատում ու ասաց նրան. « Երդում տնւր ինձ մեր Աստուածներն ու ասաց նրան. « Երդում տնւր ինձ մեր Աստու-

ծոյ անունով, որ երկինք և երկիր ստեղծեց, որ դու իմ ողուս՝ Իսահակի համար կին չես ընտրի քանանացի աղջիկներից, այլ կերթաս իմ հայրենիքս, իմ ազգականներիս մօտ և այնտեղից կաւանես նրան կին: Տէր Աստուածը, որի պատւիրանները բոլոր կեանքիս մէջ ես սպահել եմ, կառաջնորդէ քեզ և քո առաջիդ կըզրկէ Իր Հրեշտակին »: Ծառան երդումով խոստացաւ Աբրահամի ամեն հրամանները կատարել. առաւ տասն ուղարք, բարձեց նրանց վրայ իր տիրոջ հարստութիւններն ու գնաց Միջազետք, ուր Աբրահամ թողել էր իր նաքովը եղբօրը: Երբ այն քաղաքին մօտեցաւ, ուր բնակում էր նաքովը, նա մնաց դուան մօտ և իր ուղտերը՝ կանգնեցրեց այն ջրհորի մօտ, որից ջուր առնելու գալիս էին քաղաքի բոլոր աղջիկները: Եղիազար (այսպէս էր Աբրահամի ծառայի անունը) սկսաւ աղօթք անել Աստծուն որ նա ցոյց տայ իրան Իսահակի ապագայ կնոջ: « Թող այն աղջիկը, ասաց Եղիազար իր աղօթքի մէջ, « որին ես կասեմ, ցածրու սափորդ, որ ես խմեմ և նա կասէ՝ խմիր, ես կըխմեցնեմ քո ուղտերիդ էլ. թող այն աղջիկը լինի Իսահակի կինը »: Զազիւ աւարտեց իր աղօթքը, դուրս եկաւ քաղաքից մի աղջիկ սափորով, մօտեցաւ, աղբիւրին, լքցրեց իր սափորը և կամենում էր արդէն հեռանալ: Եղիազարը մօտենալով նրան ասաց. « Ճուր ինձ խմել քո սափորիցի »: — « Խըմիր ինչքան ուզում ես », պատասխանեց աղջիկը բարութեամբ, սափորը նրան տալով. « Ես կըխմեցնեմ քո ուղտերիդ էլ », աւելցրեց նա. յետոյ հանելով ջուր, լքցրեց այն տաշտն, որ դրած էր անուսուններին ջրելու համար և ջրեց ողջ նրա ուղտերին: Զարմացած այնպիսի բարեհոգութեան վրայ, լուռ նալում էր օտարականը նրան և յետոյ հանելով ոսկի օղեր և ապարանջաներ ընծայեց նրան և ասաց. « Ում աղջիկն ես, ովքեր են քո ծնողներդ. չունիք արդեօք ձեր տանը տեղ ինձ և իմ ուղտերիս համար »: — Ես եմ Ռեբեկա, Բաթուէլի աղջիկը, որ նաքովի որդին է Մելքա կնոջից », պատասխանեց

աղջիկը, «մեր տանը կայ տեղ քեզ համար, ով օտարական, կայ նմանապէս տեղ քո ուղտերիդ համար էլ։ Մենք շատ ունենք յարդ և խոտ»։ Այն ժամանակ երկրպագեց Եղիսաբետ Աստծուն ասելով. «Թրհնեալ է Աբրահամի Տէր Աստուածը Նա երբէք չէ թողնում նըան, և ինձ ուղիղ առաջնորդեց գէպի նրա եղբօր տունը»։

Ուեքեկան շուտով գնաց տուն։ Նա ունէր մի եղբայր Լաբան անունով։ Սա, տեսնելով թանկագին ընծաներն, որոնք իր քոյլը ստացել էր, շտապով գնաց օտարականի մօտ և ասաց. «Ե՛կ մեր տուն, դու Աստուծուց օրհնածդ. ես պատրաստել եմ քեզ համար տեղ. կայ տեղ հանգստանալու քո ուզտերիդ համար էլ»։ Նա տարաւ իր հետ Եղիազարին, վեր առաւ ուղտերի բեռները և տուեց նրանց ուժելու խոտ և յարդ։

Եղիազարը ներս մտաւ թէ չէ, բերին նրան ընթրիք.
բայց նա ասաց. «Ես ոչինչ կերպուր չեմ դնիլ բերանս,
մինչև չկատարեմ իմ աիրոջ կամքը»։ Ապա պատմեց նա իրան
եղած յանձնարարութիւնը և խնդրեց մի վճռական պատաս-
խան։ Բաթուէլ և Լաբան ասացին. «Աստուած ինքը կարգա-
դրեց այս բանը. ահա Ուեբեկան քո առաջնորդ է. առ նրան
և գնա, թող լինի նա քո տիրոջ որդու կինը, ինչպէս Աս-
տուած հրամայեց»։ Այս լսելով Եղիազար եվկրպագութիւն
տուեց Սստծուն և շնորհակալ եղաւ Նրանից։ Բերաւ ոսկի և
արծաթի բաներ, գեղեցիկ շորեր և ողջը տուեց Ուեբեկային։
Նոյնպէս ընծաներ տուեց նրա ընտանիքին էլ։ Խրանից յե-
տոյ ամենքը նստան ընթրիքի։ Միւս օր առաւօտ վազ վեր
կենալից յետ, Եղիազար ասաց. «Այժմ թող ինձ, գնամ տի-
րոջս մօտ»։ Աղջկալ ծնողներն ասացին. «Թող Ուեբեկան մնայ
մեզ մօտ էլի մի տասն օր գոնէ։ Բայց նա պատասխանեց.
«Մի բոնէք ինձ, Սստուած օրհնեց իմ ճանապարհս, ես պէտք
է գնամ շուտովկ իմ տիրոջս ուրախացնեմ»։ Մայրն ու եղբայրն
ասացին. «մենք կըկանչենք Ուեբեկային, թող նա ինքը վճռէ»։

Երբ Ուեբեկան ներս մտաւ, Հարցըին նրան. «Կերթաս դու
այս մարդու հետ»: — «Կերթամ», պատասխանեց Ուեբեկան:
Այն ժամանակ աղքականներն օրհնեցին նրան, հրաժարական
ողջոյն տուին. և Ուեբեկան, առնելով իր աղքախիներին՝ գնաց
Եղիազարի հետ: Իսահակ ամուսնանալով նրա հետ, շատ սի-
րում էր նրան. իր առաքինութիւններով Ուեբեկան եղաւ նը-
րան ուրախութիւն և միխթարում էր նրան մօր մահուան
համար, որի վրայ լալից նա չէր դադարում: Սբրահամ խո-
րին ծերութեան մէջ մեռաւ, թողնելով բոլոր իր կալուածքը
Իսահակին: Նրա որդիք՝ Իսահակ և Իսմայէլ թաղեցին նրան
այն այրի մէջ, ուր շատ ժամանակ առաջ թաղուած էր Սա-
ռան:

16. Եսաւ և Յակով

Աստուծոյ ընտրած ազգի նահապետներն ուղղակի Աստծուց էին ստանում հրամաններ, իսկ իրանք կառավարում էին և պահում իրանց ընտանիքը, ընդուծիններին և այն ազգականներին, որոնք չունեին բաւական հարստութիւն, որ բաժանուէին նրանցից; Ամեն նահապետ միւնոյն ժամանակ նաև քահանայ էր իր տան մէջ և միջնորդ Աստուծոյ և իւրայնների մէջ: Նահապետների ընտանիքների մէջ աւագ որդին ունէր առաւել արտօնութիւններ, քան թէ նրա եղբայրները. որովհետեւ հօր մահից յետոյ ժառանգում էր քահանայութեան և տիրոջ իրաւունքը: Բացի սրանից աւագ կամ անդրանիկ որդին ունէր ամենից մեծ իրաւունք, այն է յոյս ունենալն, որ իսկ իր ցեղից կը ճնուի խոստացած ապագայ Փրկիչն աշխարհիս: Աբրահամ էր տէր և քահանայ իր տան մէջ. նրանից յետոյ միենոյն իրաւունքները ժառանեց նրա որդին իսահակը:

Իսահակից և Ուեբեկայից ծնան երկու եղբայրներ՝ երկուորեակներ—Եսաւ և Յակովը։ Եսաւը ծնաւ առաջ, ուրե-

մըն համարւում էր աւագ: Նրա մարմինը ծածկած էր մազերով ինչպէս բրդով. նա էր զօրեղ, քաջ, միայն շատ վայրագ և թեթևամիտ. նրա սիրելի պարապմունքն էր վայրի կենդանիների որսը. նրա աւարը Խոսհակի սիրելի կերպուրն էր. ուստի և Եսաւին առանձնապէս սիրում էր Հայը: Իսկ Յակովըն էր հեղ և բարեպաշտ երիտասարդ, օգնում էր իր մօրը տան գործքերում և սիրում էր հովուի հանդարտ կեանք. այս շատ դուր էր գալիս մօրը: Յակովը Ոեցեկալի սիրելին էր: Մի անգամ Յակովը իրան համար ոսպէ թան էր եփել և ուտում էր: Նոյն ժամանակ որսից յետ դարձաւ Եսաւ, դադրած և քաղցած: Տուր ինձ քո կերպակուրիցդ», ասաց նա, «ես շատ դադրած եմ և շատ քաղցած»: — «Տուր ինձ քո անդրանկութիւնդ, պատասխանեց Յակովը, ես էլ կըտամ քեզ իմ կերպակուրս»: — «Ի՞նչ հարկաւոր է ինձ անդրանկութիւնս, ահա ես մեռնում եմ սովից»: պատասխանեց թեթևամիտ Եսաւն և երդումով խոստացաւ տալ իր եղբօրը իր անդրանկութեան իրաւունքը: Սրանից յետոյ Յակովըն էլ տըւեց նրան իր կերպակուրը: Եսաւ կերպաւ, խմեց և գնաց, ամենայն չհոգալով իրան եղբօրը վաճառած իրաւունքների վրայ: Եսաւ, երբ քառասուն տարեկան դառաւ, ամուսնացաւ մի ալլազգի աղջկայ հետ, որ ամենեւին չէր պատւում Ոեցեկալին:

17. Իսահակն օրչում է իր որդոց.

Իսահակը երբ շատ ծերացաւ, կուրացաւ և զգալով,
որ մահակ արդէն մօտ է, կանչեց իր որդուն՝ Եսաւին և ա-
սաց նրան. «Որդեակ, ես արդէն ծեր եմ և իմ մահուանս
օրը չգիտեմ։ Գնա դաշտ, որս արա և պատրաստիր նը-
րանից ինձ համար այն կերակուրը, որ ես սիրում եմ։ Ես
մահիցս առաջ կամենում եմ քեզ տալ օրհնութիւնս, ինչ-
պէս անդրանիկ որդուս։ Եսաւ այն ըոպէին գնաց, Բայց

Ուելեկան, որ լսեց Խսահակի այս խօսքերը և կամենում էր անդրանկութիւնն առաւել արժանաւոր Յակովելին տալ. Հը-
րամայեց սրան իրա խաշնից եղջու ուլ բերել, և պատրաս-
տեց նրանցից Խսահակի ճաշակին յարմար կերակուր. յետոյ
Յակովելի վեզն ու ձեռներն փաթաթեց ուլերի մորթով, հագ-
ցրեց նրան Եսաւի լաւ շորելը և տալով նրան պատրաստած
կերակուրը, զըկեց իր հօր մօտ, որ ստանայ անդրանկութեան
օրհնութիւնը: Լսելով, որ մէկը վրանը ներս մտաւ, հար-
ցրեց կոյր ծերունին. «Ո՞վ եկաւ»:—«Եսաւ, քս անդրանիկ որ-
դին», պատասխանեց Յամովը. «Ես կատարեցի հըամանդ,
ահա կեր և օրհնիք ինձ»:

«Մօտեցիր ինձ առաւել, ասաց Իսահակ, ես կամենում
եմ քեզ շօշափել, որ ճշմարիտն իմանամ, թէ դու արդեօք իսկ
իմ որդի Եսաւն ես»։ Յակովը մօտեցաւ, Իսահակը նրան
շօշափելով ասաց. «Ձայնդ նման է Յակովի ձայնին, իսկ վի-
զըգ ու ձեռներդ Եսաւինն են»։ Այսպէս ծերունին խաբուե-
ցաւ, կերաւ բերած կերակուրն ու ասաց. «Մօտեցիր ինձ որ-
դեակ և համբուրի՛ր ինձ»։ Ինքն էլ նրան տուեց իը օրհնու-
թիւնն ասելով, «Եղի՛ր տէր եղբօրդ վրայ, քո մօրդ որդիքը
թող հպատակեն քեզ, անիծած լինի, ով որ քեզ կանիծէ և
օրհնած, ով քեզ կօրհնէ»։

Հազիւ Յակովը դուրս եկաւ թէ չէ, Եսաւ վրանը մը-
տաւ: «Ո՞վ եկաւ», հարցրեց Իսահակ, — «Ես՝ Եսաւ, քո ան-
դրանիկը», պատասխանեց Եսաւ: «Որդեակ իմ», ասաց Իսա-
հակ, «քո եղբայրդ Յակովը յափշտակեց օրհնութիւնն, որ
քեզ համար էր նշանակած»: Եսաւ երկիւղից և բարկութիւ-
նից սկսաւ լաց լինել և ասաց. «Հայր, մի՞թէ ինձ համար
էլ ուրիշ օրհնութիւն չունիս»: Նրա արտասունքներից շարժ-
ւած, ծերունին օրհնեց նրան էլ ասելով. «Թող բնակեցնէ
Տէր Աստուած քեզ էլ բարեբեր երկրի մէջ. միայն գու պէտք
է կենաս սրովդ և լինիս եղբօրդ իշխանութեան տակ»: Այս
ամենը կարգադրած էր Աստուծոյ նախախամութիւնից, որ

յաճախ իր շնորհքը խլում է ապերախտներից և տալիս է երկիւղած մարդոց:

Այս ժամանակից եսաւ ատեց իր եղբօրը և ասում էր մտքում: «Երբ կը մեռնի մեր հայր Խսահակը, ես եղբօրս կը ապանեմ»: Ուելեկան, այդ իմանալով, խորհուրդ տուեց Յակովը ին հայրենի տնից փախչել Միջազետք իր եղբօր Լաբանի մօտ»: «Թող նա այնաեղ ընտրէ իրան կին, ասաց Ուելեկան Խսահակին, ես չեմ ուզում որ նա ամուսնանայ քանանցի աղջկայ հետ. Եսաւի կինը քանանացի է. իմ բոլոր կեանքս մաշեց նա. Եթէ Յակովը էլ քանանացի կին առնէ, էլ ինչո՞ւ համար է իմ կեանքս աշխարհիս վրայ:

18. Յակովի երազը.

Խսահակ կանչեց Յակովը իր մօտ, օրհնեց նրան ճանապարհ ընկնելիս և յետագայ հրամանը տուեց նրան. «Մի առնիւ քեզ կին Քանանացիներից, այլ զնա՞ Միջազետք, քո մօրդ հօր՝ Բաթուէլի տունը և ամուսնացիր Լաբանի աղջիկներից մէկի հետ. Խսկ Աստուած կօրհնէ քեզ, կը մեծացնէ և կը բազմացնէ: Իմ հայր Աբրահամի օրհնութիւնը կը տայ նա քեզ և քո զաւակներիդ»: Յակովը, ծնողաց օրհնութիւնն ստանալից յետ, ճանապարհ ընկաւ դէպի Միջազետք իր մօրեղբօր Լաբանի մօտ:

Եսաւ լսելով, որ Խսահակ օրհնեց Յակովը ին ուղարկեց նրան Միջազետք, որ Լաբանի աղջիկներից մէկի հետ ամուսնանայ, որովհետեւ քանանացի աղջիղներին չէր հաւատում, ինքն էլ գնաց իր հօրեղբօր Խսմալէլի մօտ և կին առաւ իրան նրա Մայելէթ աղջկան:

Երբ Յակովը, իր ծնողների հրամանով գնում էր Միջազետք, մի անապատ տեղում գիշերը նրան վրայ հասաւ: Նա պառկեցաւ գետնի վրայ, գլխի տակ քար դրաւ և քնեց հանդարտ: Երազում տեսաւ նա երկրիս վրայ սանդուղ դրած,

որի գլուխը հասնում էր երկինք: Հրեշտակներն իջնում էին և բարձրանում նրա վրայ. իսկ գլխին կանգնած էր ինքն Աստուած և ասում էր. «Ես եմ քո Տէր Աստուածդ, Աբրահամի Աստուածն, Խսահակի քո հօրդ Տէրը, մի վախիր. Ես կը տամ քեզ և քո զաւակներիդ երկիրն, որի վրայ դու ալժմ քնում ես. քո ազգդ կը բազմանայ ինչպէս ծովի աւազն ու կը տարածուի դէպի արևելք, արևմուտք, հիւսիս և քեզմով ու քո զաւակներովդ կիջնի օրհնութիւն և բոլոր մարդկութեան վրայ: Ես կը լինիմ քեզ հետ, ամեն ճանապարհներում կը պահպանեմ քեզ, կը դարձնեմ կրկին քեզ այս երկիրը և չեմ թողնիլ քեզ, մինչև չկատարուի ամենն, ինչ-որ Ես քեզ ասացի»: Յակովը զարթեցաւ և ասաց. «Աստուած է այս տեղումս և ես չէի իմ ամուսնում. ալստեղ է Աստուածոյ տունն և երկընքի դուռն», և առաւ այն քարը, որի վրայ քնած էր, կանգնեց նրան արձանի պէս, ածեց նրա վրայ իւղ և ասաց. «Երբ Աստուած ինձ յետ կը դարձնէ՝ կը շնորհնեմ այստեղ սեղան. այստեղ կը լինի Աստուածոյ տունն և ես իմ ստացուածներիս տասանորդը կը տամ նրան»: Սանդուղն էր օրինակ Աստուածամօր և Յիսուսի Քրիստոսի երկրի վրայ իջնելուն: Տեղն, ուր Յակովը տեսաւ մարգարէական տեսիլն, այն ժամանակից յետ կոչուեցաւ Բեթէլ, այսինքն Տուն Աստուածոյ:

19. Յակովը ամուսնութիւնը.

Յակովը շարունակեց իր ճանապարհը դէպի արևելք իր մօրեղբօր Լաբանի մօտ, Երկար ժամանակ գնալից յետ, հասաւ մի ջրհորի մօտ, որ դաշտի մէջ էր և որի մօտ երեք խաշներ հանգստանում էին. և ջրհորը ծածկած էր մեծ քարով: Յակովը հովիւներին ասաց. «Եղբայրներ, որտեղից էք»: — «Մենք Խառան քաղաքից ենք», պատասխանեցին հովիւները: «Ճանաչո՞ւմ էք դուք Բաթուէլի: որդի Լաբանին», հարցը Յակովը: «Ճանաչում ենք», պատասխանեցին հո-

վիւները. «Եւ ահա նրա Հռաքել աղջիկն էլ գալիս է ջըհորի մօտ նրա ոչխարներով»: «Դեռ վաղ է խաշները ժողովելու», ասաց Յակովը. «Ինչո՞ւ չէք ջրում խաշներդ և չէք քշում նրանց արածելու մինչև իրիկուն»: «Մենք սպասում ենք միւս հովիւներին», պատասխանեցին նրանք, «որ գլորենք քարը, ջըենք միասին մեր ոչխարներին և յետոյ կրկն ծածկենք ջըհորը»: Այս միջոցին մօտեցաւ Հռաքելն էլ իր հօր խաշներով: Սրան տեսնելով, Յակովը շտապեց քարը գլորելու ջըհորի բերանից, ջրեց Լաբանի ոչխարներին և յետոյ ըարեց Հռաքելին, լաց եղաւ ուրախութիւնից և ասաց, «Որ ինքը նրա հօրաքրոջ Ռեքեկայի որդին է: Այս իմանալով Հռաքել վագեց տուն, որ բոլորը պատմէ իր հօրը: Երբ Լաբան իր քեռորդու գալուստը լսեց, գնաց նրա առաջ, գըկեց նրան, համբուրեց և տարաւ իր տուն:

«Դու իմ ազգականս ես», ասաց Լաբան Յակովին, «բայց ես չեմ ուզում, որ դու ինձ ձըի ծառայես. ասա՛, ինչ վարձ ուզես, կըստանաս քո ծառայութեանդ համար»: Լաբանն ունէր երկու աղջիկ. ելցը անուանւում էր Լիս, որի աչքերը ցաւում էին, և կըստերը Հռաքել, որ շատ գեղեցիկ էր դէմքով: «Ես կըճառայեմ քեզ եօթն տարի կըստեր աղջկանդ Հռաքելի համար», պատասխանեց Յակովը, «եթէ կըտաս դու նրան ինձ կին»: Լաբանը համաձայնեցաւ: Յակովը եօթն տարի արածեցնում էր նրա խաշները: Նշանակած ժամանակն անցելից յետ, Լաբանը խնճուք պատրաստեց և հարսանիք կանչեց շատ հիւրեր: Այս ժամանակուան սովորութեամբ հարսը պէտք է քօղով իր երեսը ծածկէր պատկի ժամանակ: Երբ Յակովը միւս առաւօտ տեսաւ իր կնոջ առանց քօղի, իմացաւ, որ իրան Հռաքելի տեղ Լիալին են տուել: Յակովը գնաց Լաբանի մօտ և ասաց. «Դու խաբեցիր ինձ. եօթն տարի քեզ ծառայեցի Հռաքելի համար և դու ինձ Լիալին տուիր»: — «Մենք սովորութիւն չունինք կըստեր քրոջը մեծից առաջ կին տալու», պատասխանեց Լաբան. «Ե-

թէ կուզես մի շաբթից կըտամ քեզ Հռաքելին էլ, միայն եթէ համաձայնես էլի եօթն տարի ինձ ծառայել»: Յակովը ամուսնացտւ Հռաքելի հետ և ծառայեց Լաբանին էլի եօթն տարի: Բայց իր երկու կնոջից աւելի սիրում էր նա գեղեցիկ Հռաքելին: Այս գերազանցութիւնը շատ տրտմեցրեց Լիալին, բայց Աստուած, նրան միխթարելու համար այս տրտմութիւնից, տուեց նրան շատ որդիք. իսկ Հռաքելը երկար ժամանակ ամուլ էր: Վերջապէս ամուսնութիւնից շատ տարի յետոյ, երբ արդէն Յակովը տասն որդի ունէր, Հռաքելն էլ ծնաւ որդի, որին անուանեցին Յովսէփ:

20. Յակովի Լաբանի մօտ կենալը.

Տասնըորս տարուց յետոյ Յակովը ասաց Լաբանին. «Ես ծառայեցի քեզ հաւատարմութեամբ. Երբ ես քեզ մօտ եկալ, ստացուածքդ մեծ չէր այնքան, այժմ դու հարուստ ես: Եւ ես պէտք է արդէն իմ որդոցս համար հոգս քաշեմ. թողինձ, որ իմ հայրենիքս երթամ»: Լաբանը գիտենալով, որ ճշմարտիւ Յակովը շատ մեծացրեց իրան ստացուածքը, քաղցրութեամբ պատասխանեց նրան. «Խնդրում եմ քեզ, մնա իմ մօտ էլի միքանի ժամանակ. ես տեսնում եմ, որ Աստուած օրհնեց ինձ այն ժամանակից, երբ դու իմ տանս բնակում ես. Նշանակիր ինքդ քո աշխատանքիդ համար վարձ»: Յակովը նշանակեց իրան վարձ խայտախարիւ (գոյնգգոյն) գառներն ու սպիտակ ուլերը, որոնք կըճնեն Լաբանի խաշնի մէջ: Լաբանը համաձայնուեց:

Իս Սրանից յետ Յակովը մնաց էլի ծառայելու Լաբանին և շատ անբաւականութիւնների համբերեց: Եթէ մի անասուն կորչում էր խաշնից կամ պատառում էր վայրենի գազաններից, Յակովը ստիպուած էր Լաբանին նրա համար վարձատրելու: Բայց սրանից Լաբանը քանի անդամ փոխեց պայ-

մանն, որ դրել էր Յակովի Հետ։ Բայց Աստուած էր Յակովի պաշտպանը, և օգնականը։ Երբ Լաբանը նշանակում էր Յակովի համար խալտախարիւ ծնած գառներն ու ուլերը, բոլոր ոչխարները խալտ էին ծնում, իսկ երբ Լաբանը միւս տարին պայմանը փոխում էր և Յակովին մասն էր նշանակում սպիտակ գառները, ծնում էին սպիտակ։ Այսպէս Յակովը կամաց-կամաց ունեցաւ բազմաթիւ խաշներ ոչխարների և ալծերի, որով կարողացաւ շատ ծառաների էլ տէր դառնալ և ուրիշ անասուններ էլ շատ գնել։

21. Յակովի դարձը.

Լաբանը երբ տեսաւ, որ Յակովը շատ հարստացաւ, սկսաւ նրան նախանձել և չէր կարողանում հանդարտ աչքով նայել նրա վրայ։ Յակովը նկատեց այս բանը և շատ տըրտմեցաւ այսպիսի վարմունքի համար։ Այն ժամանակ Աստուած ասաց նրան. «այժմ դուրս եկ այս երկրից, Ես քեզ կըդարձնեմ հայենիքդ, Ես քեզ հետ կըլինիմ»։ Յակովը պատրաստուեցաւ ճանապարհ ընկնելու առանց Լաբանի գիտութեան, նստացրեց իր կանանցը և որդոցն ուտերի վրայ և ճանապարհ ընկաւ դէպի հայրենիք։ Լաբանը յետևներէց ընկաւ և բռնութեամբ կամենում էր նրանց կանգնեցնել։ միան Աստուած արգելեց նրան, որ ոչ մի կերպ նեղութիւն չտալ Յակովին։ Ուստի և Լաբանը, երբ հասաւ նրանց Գաղատ լերան մօտ, հրաժարական ողջուն տուեց Յակովին, իր աղջկներին ու թոռներին և խաղաղութեամբ բաց լթուեց նրանց։

Յակովը, երբ Յորդանան գետի մօտ հասաւ, վախեցաւ՝ իր եղբար Եսաւին միտը բերելով։ Նա իմաց տուեց նրան իր գալուստը։ Ուղարկած մարդիկը յետ գարձան և ասացին։ «Մենք տեսանք եղբօրդ Եսաւին, նա գալիս է քո առաջդ չորս հարիւր հոգով»։ Յակովը զարհուրեցաւ, կարծելով թէ նա գալիս է յափշտակելու իր բոլոր ստացուածքը։

Երկու մասը բաժանեց իր մարդոց և խաշներն, ասելով «Եթէ Եսաւը կըջնջէ ստացուածքիս մի մասը, միւսը էլի կըմնայ ինձ»։ Յետոյ ամեն խաշնից միքանի անասուն զատելով, և ամեն մէկն այս փոքրիկ խաշներից լանձնելով իր հաւատարիմ մարդկանց, հրամակեց նրանց Եսաւի առաջը դուրս գնալ։ Եւ եթէ Եսաւը նրանց հանդիպելով հարցնէր, թէ ում է պատկանում այս խաշն, ծառաները պէտք է ասէին. «Քո ծառալիդ՝ Յակովին, որ զրկում է այս քեզ ընձալ և ինքը գալիս է յետևից»։

Այս ամենն այսպէս կարգադրելից յետ Յակովը սկսաւ աղօթել, ասելով. «Իմ հայրերիս՝ Սբրահամի, Խսահակի Տէր Աստուած, որ հրամայեցիր ինձ վերադառնալիմ հայրենիքս ագգականներիս մօտ, խոստացար ինձ քո ողորմութիւնդ, արժանի չեմ ամեն բարերարութիւններին, որ ինձ արեր Դու։ Երբ ես Յորդանան անցալ, բացի գաւազանիցս ոչինչ չունէի. այժմ տէր եմ երկու մեծ խաշների։ Ազատիր ինձ եղբօրս ձեռքից, որովհետև ես վախենում եմ, որ չլինի թէ նա զայ և սպանէ ինձ և մօրն իր որդիներով»։ Երբ գիշեր եղաւ, Յակովը մնաց մենակ։ Նրա մօտ եկաւ մի անձանօթ մարդ և մարտնչեց (կոռւեցաւ) նրա հետ բոլոր գիշերն և այդ միջոցին վնասուեցաւ Յակովի ոտը, որից էլ կաղում էր բոլոր իր կեանքի մէջ։ Առաւօտեան մօտ, երբ անձանօթը կամենում էր թողնել նրան և գնալ, Յակովը բռնեց նրան և ասաց. «Ես քեզ չեմ թողնիլ, մինչեւ ինձ չօրհնես։ Խորհրդաւոր մարդը հարցըց. «Անունդ ի՞նչ է»։ — «Յակովը է», պատասխանեց նա. «Այսուհետև քեզ, ասաց անձանօթը, Խսրայէլ կանուանեն, որովհետև գու մարտնչեցիր Աստուծոյ հետ, և զօրաւոր կըլինիս դու պատերազմում մարդկանց գէմ էլ»։ — «Քո անունդ ի՞նչ է», հարցըց Յակովը. — Մի հարցընիը իմ անունս, նա հրաշալի է», պատասխանեց Աստուած. Ետոյ օրհնեց նրան և անհետացաւ. Յակովը այս անցքի յիշատակի համար, անուանեց այնտեղ Փանուէլ (տեսիլ Աս-

տուծոյ), որովհետև դէմ յանդիման տեսաւ Աստծուն և չը-
մեռաւ: Առաւօտը տեսաւ իր եղբօրը՝ Եսաւին, որ ընդառաջ
էր գալիս իրան:

22. Երկու եղբայրների հաշտուելը.

Եսաւը քնակւում էր Սէիր երկրում: Նա եղաւ այր զօրեղ,
հարուստ և շատ ժամանակից ի վեր մոռացել էր իր եղբօր
Յակովը դէմ ունեցած ոխը: Երբ Յակովը զրկած մարդիկ
ծանուցին նրան իր եղբօր գալուստը, Եսաւ ուրախութեամբ
գուրս եկաւ նրա առաջ և նրան առաւել պատիւ ցոյց տալ
կամենալով, առաւ հետը չորս հարիւր հոգի էլ: Յակովը
նրան տեսնելով, առաջ կարգեց իր աղախիններին իրանց որ-
դիներով, յետոյ Լիալին իր երեխաներով ու վերջապէս Հռա-
քէլին և նրա որդուն՝ Յովսէփին: Իսկ ինքը գնաց իր եղբօր
առաջ և երկրպագեց նրան մինչև գետին եօթն անգամ: Ե-
սաւը ընկաւ նրա վզին, եղբայրաբար գրկեց նրան և երկուսն
էլ սկսան լալ ուրախութիւնից: Նայելով կանանց և երե-
խաներին, որոնք իր առաջեւը կանգնած էին, հարցրեց Ե-
սաւ: «Ովքեր են սրանք»: «Սրանք իմ զաւակներս են, որով ինձ
օրհնեց Աստուած, և իմ կանալքս են», պատասխանեց Յա-
կովը: Այն ժամանակ մօտեցան աղախինները և իրանց երեխա-
ներով երկրպագեցին Եսաւին. նրանց հետեւց Լիան իր որ-
դիներով և նմանապէս երկրպագեց և վերջապէս եկաւ Հռա-
քէլլ Յովսէփի հետ և երկրպագութիւն տուեց Եսաւին: «Այն
ում խաշներն էին, որոնք ինձ հանդիպեցան ճանապարհին»,
հարցրեց Եսաւ: «Ես զրկեցի նրանց քեզ ընծայ, որ արժա-
նանամ քո ողորմութեանդ», պատասխանեց Յակովը: «Եղ-
բայր, նրանք ինձ հարկաւոր չեն», ասաց Եսաւ. «քեզ առ
նրանց. Ես առանց դրանց էլ բաւական եմ իմ ունեցածովս»:
«Առ նրանց ասաց Յակովը և եղիր ինձ ողորմած, ընդունիր
այն ընծան իբրև Աստուծոյ օրհնութիւնը, որով նա ինձ այս-

պէս առատաձեռնութեամբ վարձատրեց»: Յակովը չդադարեց
խնդրելից, մինչև որ Եսաւ համաձայնուեց ընդունելու այն
ընծան:

Սրանից յետոյ, նրանք հեռացան միմեանցից և գնացին
ուրիշութիւն ճանապարհներով: ճանապարհին Հռաքէլլ ծնաւ-
Յակովըն մի որդի էլ, որին անուանեցին Բենիամին և ինքը
վախճանեցաւ:

Վերջապէս Յակովը, քսանամեայ առանձնութիւնից յետ,
դարձաւ կրկին իր հօր՝ Իսահակի մօտ, որ այս ուրախալի
տեսութիւնից յետ էլ երկար չապրեցաւ: Նա մեռաւ հա-
րիւր ութեսուն տարեկան և իր որդիքը՝ Եսաւ և Յակովը թա-
ղեցին նրան:

23. Յակովը որդիքը.

Յակովը ունէր տասներկու որդի: Ահա նրանց անուն-
ները աւագութեան կարգով. Մուբէն, Շմաւոն, Ղեկ, Յու-
դայ, Զաբուղզովն, Իսաքար, Դան, Գալ, Ասեր, Նեփթաղիմ,
Յովսէփ և Բենիամին: Երկու վերջիններն էին նրա սիրելի
կնոջ՝ Հռաքէլլ որդիքը: Մեծ որդիքը պարապում էին հով-
ութեամբ և իրանց վարքով միշտ արժանի չէին լինում
ծնողական սիրոյն: Բենիամինը՝ ամենից փոքրը դեռ երեխայ
էր. իսկ Յովսէփ գեղեցիկ, հեզ և բարեպաշտ երիտասարդ էր,
և շատ սիրելի հօրը: Յակովը կարեց նրա համար գեղեցիկ ծաղ-
կեայ շորեր: Մեծ եղբայրները նախանձում էին Յովսէփին և ա-
տում էին նրան նրա համար, որ հայրը նրան իրանցից գե-
րազանց էր դասում, և նրանց ատելութիւնն աւելացաւ մա-
նաւանդ այն ժամանակից, երբ Յովսէփ պատմեց նրանց եր-
կու զարմանալի երազ, որ տեսել էր: Մի անդամ ա-
սաց նա եղբայրներին. «Լսեցէք, Բնչպիսի զարմանալի երազ
տեսայ ես: Ես երազումս տեսայ, որ մենք դաշտում ցորեն
էինք հնձում և որայ կապում. իմ որայս կանգնած էր ու-

զիդ. իսկ ձեր որաները պատեցին իմ որայս և երկրպագութիւն տուին նրան»: — «Միթէ դու կըդանաս մեր թագաւորն և մենք քո հպատակները», ասացին նրան եղբայրները բարկութեամբ:

Նուտ սրանից լետ Յովսէփ տեսաւ էլի մի երազ, որ նմանապէս պատմեց եղբայրներին: «Ես տեսայ երազումս», ասաց նա, «որ արեգակը, լուսինը և տասնուռէկ աստղեր երկրագում էին ինձ»:

Յակովը այս լսելիս, սաստեց նրան ասելով. «այդ Բնէ
երազ է. միթէ ես, իմ կինս և եղբայրներդ կըդանք քեզ
երկրպագութիւն տալու»: Եղբայրները շատ չարացան Յովլ-
սէփի վրայ այսպիսի երազների համար, բայց Յակովը, որ
ինքը տեսնում էր տեսիլներ, որ Աստուած նրան զբկում էր,
չմոռացաւ այն երազներն և թաքուն մտածում էր Յովսէփի
խօսքերի վրայ: «Երևի», ասում էր նա ինքն իրան, «Աստուած
նշանակում է իմ Յովսէփիս մեծ բանի համար»: Եւ ճշմա-
րիտ որ Յովսէփ, իր հօրը սիրելին, իր առաքինութիւնների
պատճառով արժանացաւ Աստուծոյ առանձին շնորհքին:

24. Եղբայրները ծախում են Յովսէփին.

Յակովի որդիքն արածացնում էին իրանց հօր խաշները: Մի անգամ խաշները շատ հեռու քշեցին հօր տնից. և որով-վետև հայրը երկար ժամանակ համբաւ չուներ նրանց մա-սին, ասաց Յովսէփին. «Գնա տես, առողջ են արդեօք եղ-բայրներդ և մեր խաշները և յետ դառնալով իմաց տուր ինձ,



ինչոր այն տեղ լինում է»։ Յովսէփը հագաւ իր գեղեցիկ շորերը և գնաց եղբայրների մօտ Եղբայրները, երբ դեռ հեռութից նկատեցին նրան, ասացին մէկ-մէկու. «Ահա գալիս է մեր երազատեսը, եկեք սպանենք նրան և ասենք մեր հօրը, թէ վալրենի գազանները պատառել են նրան և տեսնենք, թէ ինչպէս կըկատարուին նրա երազները»։ Ոռուէնը,

ամենից մեծ եղբայրը, զարհուրեցաւ, իմանալով նրանց այս մտադրութիւնը և ամեն կերպ աշխատելով Յովսէփին ազատել, ասաց. «Մի թափէք անմեղ արիւն, մի պղծէք ձեռք-ներդ ձեր եղբօրն սպանելով. լաւ է, որ գցէք նրան այս անջուր փոսի մէջ»: Նո այս առաջարկեց նրա համար, որ կամենում էր գիշերով գալ, հանել նրան փոսից կամ անջուր ջրհորից և տանել հօր մօտ: Երբ Յովսէփը մօտեցաւ եղբայրներին, սրանք հանեցին՝ նրա շորերը, գցեցին նրան փոսի մէջ: Սրանից յետ, իբրև թէ ոչնչ չար բան չէին արած, հանդիսա նստան ուտելու: Բայց Ուուբէնը չկարողացաւ ուտել նրանց հետ, նա հեռացաւ և մտածում էր, թէ ինչպէս ազատէ Յովսէփին:

Երբ Ուուբէնը հեռացել էր, եղբայրները տեսան իսմայէլացի վաճառականներին, որոնք այնտեղից անց էին կենում ուղտերով: Այս իսմայէլացիներն էին իսմայէլի յաջորդները. նրանք տանում էին դանազան վաճառներ Եգիպտոս: Յուղան ասաց եղբայրներին. «Ինչու համար սպանենք Յովսէփին. նա մեր եղբայրն է և ինչ օգուտ մեզ, եթէ նրան ըսպանենք. աւելի լաւ է, ծախենք նրան այս վաճառականներին»: Այսպէս Յովսէփին էլի հանեցին փոսից և չնայելով նրա խնդրելուն, լացին և արտասուքին ծախեցին իսմայէլացիներին քսան դահեկանով:

Միքանի ժամանակից եկաւ Ուուբէնը, որ հանէ Յովսէփին փոսից: Նա զարհուրեցաւ, երբ չգտաւ նրան այնտեղ և ինքը շատ նեղացած, վազեց եղբայրների մօտ. «Թշուառ երեխալին ինչ արիք», հարցրեց նա, «Ես չգտայ նրան փոսում. ինչ կըլինի ինձ ալժմ»: — «Մենք ծախեցինք նրան», սպատասխանեցին եղբայրները: Յետոյ իրանց յանցանքը հօրից ծածկելու համար մորթեցին մի ալծ, թրջեցին նրա արիւնով Յովսէփի շորերը և ուղարկեցին հօրը, հրամայելով ասել. «Ահա արիւնոտ շորերը, որ կտանք դաշտի մէջ. տես արդեօք քո Յովսէփինը չէ»: Յակովըն իսկոյն ճանաչեց իր

սիրելի որդու շորը և յուսահատած աղաղակեց. «Այս շորը Յովսէփինն է, նրան պատառել են վայրենի գաղանները»: Երկար ժամանակ ողբաց նա իր սիրելի որդու վրայ: Բոլոր որդեքը և աղջիկները հաւաքուեցան նրան մխիթարելու. բայց խեղճ հայրը անմիտարելի էր: «Ո՛հ, ասում էր նա, սրտիս յաւը ինձ էլ շուտ կիջեցնի գերեզման. ես շուտով կըմիանամ իմ որդի Յովսէփի հետ»:

25. Յովսէփը Եգիպտոսում.

Իսմայէլացիք, երբ Եգիպտոս հասան, ծախեցին Յովսէփին մի Պետափրէս անունով մարդու վրայ, որ Եգիպտոսի թագաւորի մեծամեծներից մէկն էր: Պետափրէսը տեսնելով, որ Յովսէփը շատ խելօք, արդար, հեղ և բարեպաշտ տղայ է, կարգեց նրան առաջին մարդն իր տան մէջ և նրան յանձնեց իր բոլոր ստացուածքը:

Պետափրէսի կնիկը չար էր. նա կամենում էր համոգել Յովսէփին, որ իր հետ միասին խաբէ իր մարդուն. բայց որովհետեւ Յովսէփը չհամաձայնեցաւ նրա առաջարկութեան, այս չար կինը գտաւ հնարք նրան իր մարդու՝ Պետափրէսի առաջև զրպարտելու, այնպէս որ սա հրամայեց անմեզ Յովսէփին այն բանտը գցել, ուր պահւում էին արքունի յանցառները: Բայց Տէր Աստուած միշտ անմեղութեան և առաքինութեան պաշտպան է: Յովսէփը բանտի մէջ էլ գտաւ բարեկամներ: Բանտափետը սիրեց նրան, և խիստ չէր պահում իբրև ստրուկի, այլ կարգեց նրան երկրորդն իրանից յետոյ և ասաց նրան, որ նայէ ամենի վրայ, որոնք բանտարկուած էին:

Յովսէփի կալանաւորութեան ժամանակ Եգիպտոսի թագաւորը բարկացաւ երկու արքունի պաշտօնեաների վրայ և հրամայեց նրանց բանտը գցել: Սրանցից մէկն էր տակառապետը, որ թագաւորին գինի էր տալիս. իսկ միւսը մատակա-

բարը, որ վերակացու էր թագաւորի սեղանի: Մի անգամ առաւտեան երբ Յովսէփը մտաւ նրանց մօտ, տեսաւ որ շատ մտածութեան մէջ են. նրանք ասացին նրան. «Մենք զարմանալի երազ տեսանք, որոնց մեկնութիւնը շատ կուզէինք իմանալ. բայց այստեղ բանտի մէջ այնպիսի երազների հըմուտ մեկնիչ չկայ»: Յովսէփն ասաց. «Տեսիլքի մեկնութիւնն Աստուածանից է կախուած, ասացէք, թնչ երազ տեսաք»: Այս ժամանակ տակառապետն առաջինը սկսաւ. «Ես տեսայ երազում, ասաց նա, մի որթ, որ ունէր երեք ճիւղ և ճիւղերի վրայ խաղող հասած. ինձ երեսում էր, թէ հաւաքում էի պառուզը, քամում էի ծուծը թագաւորի բաժակի մէջ և տալիս էի նրան»: Յովսէփն ասաց նրան. «Երեք ճիւղերը նշանակում են երեք օր. այս միջոցն անցնելից յետոյ, թագաւորը կը հրամայէ քեզ ազատել և կը յանձէ քեզ էլի քո առաջուան պաշտօնդ: Քո բախտաւորութեանդ ժամանակ միտդ բեր ինձ և աշխատիր ինձ ազատելու բանտից, ուր ես փակւած եմ իգուր»: Սրանից յետոյ մատակարարն էլ սկսաւ պատմել իր երազը. «Ես տեսայ երազում, ասաց նա, որ երեք խան գլխիս դրած ունէի, վերին խանում էին ամեն կերպ կերակուրներ, որ թագաւորը գործ է ածում, և թռչուններն ուտում էին նրանցից»: Այս ժամանակ Յովսէփ ասաց նրան. «Երեք խաները նշանակում են երեք օր. այս ժամանակի անցնելից յետ թագաւորը կը հրամայէ քեզ կախաղանի վլայ կախել, ուր թռչունները կուտեն մարմինդ»: Ամենը կատարուեցաւ այնպէս, ինչպէս Յովսէփը գուշակեց: Ապերախտ տակառապետն, իր բախտաւորութեան ժամանակ մոռացաւ Յովսէփին. բայց Աստուած, որ երեք չէ թողնում անմեղ մարդկանց, Յովսէփի հետ էր և նրա թշուառութիւններն էլ դարձեց բախտաւորութիւն:

26. Յովսէփի ազատուելը

Երկու տարուց, ինքը Փարաւոն *)՝ Եգիպտոսի թագաւորը տեսաւ զարմանալի երազ: Նա տեսաւ երազում, որ ինքը կանգնած է գետի մօտ, որից գուրս եկան եօթը գէր կովեր և սկսեցին արածել ափում, Սրանց ետևից նոյն նեղոս գետից գուրս եկան եօթը վտիտ կովեր, որոնք կերան եօթը գէր կովերին: Փարաւոն զարթեցաւ, բայց կրկին քնելով տեսաւ էլի երազում եօթը լիք և գեղեցիկ հասկեր մի փնջի վրայ: Նրանց մօտ և նոյն փնջից գուրս եկան եօթն ազագուն (խորշակահար) և չոր հասկեր, որոնք կերան եօթը լիքը հասկերը: Այս երազները շատ ամհանգստացըրին թագաւորին: Երբ առաւտ եղաւ հրամայեց բոլոր իր երազահաններին ժողովել. միայն ոչ ոք չկարողացաւ մեկնել Փարաւոնի երազները:

Այս ժամանակ ապերախտ տակառապետը միտը բերեց կալանաւորութեան ընկերին՝ Յովսէփին և ասաց Փարաւոնին. «Ես այժմ յիշեցի իմ յանցանքս: Երբ գու, տէր արքայ, բարկացար իմ և մատակարարի վրայ և երկուսիս էլ հրամայեցիր բանտը գցել, ամեն մէկս տեսաւ մի-մի զարմանալի երազ: Նոյն բանտումն կար մի երբայցի երիտասարդ էլ. մենք պատմեցինք նրան մեր երազները. նա մեզ երկուսիս էլ մեկնեց և կատարուեց այնպէս, ինչպէս նա ասաց՝ ես ստացայ առաջուան պաշտօնս և մատակարարը կախուեց կախաղանի վրայ»: Փարաւոնն իսկոյն դրկեց Յովսէփի յետևից. նրան հագըրին ճոխ շորեր և բերին թագաւորի առաջ:

Փարաւոնն ասաց Յովսէփին. «Ես տեսայ երազ, բայց ոչ ոք չէ կարողանում մեկնել նրան: Ինձ ասացին, որ գու մեկնումես երազներ»: Չեզ Յովսէփը պատասխանեց. Ես ինքս ոչինչ չեմ կարող անել: Միայն Աստուած կարող է, տէր ար-

*) Փարաւոն բառը Եգիպտոսի թագաւորների տիտղոսն էը:

քայ, տալ քեզ քո ցանկացած մեկնութիւնդ»: Այն ժամանակ Փարաւոնը պատմեց իր երազները:

«Երկու երազներդ էլ մի նշանակութիւն ունին», ասաց Յովսէփ, «Աստուած նրանցմով ասում է թագաւորին՝ Եօթն գէր կովերն և Եօթն լիքը հասկերը նշան են Եօթն պտղաբեր ասարիների: իսկ Եօթն վտիտ կովերն և Եօթն ազազուն — խորշակահար հասկերը նշան են Եօթն սովի տարիների: Ահա ինչպէս այս ամենը կըպատահի: Բոլոր Եգիպտոսում Եօթն տարի շարունակաբար հացի մեծ առատութիւն կըլինի, նրանից յետ կը գան միւս Եօթն տարիները, եթե ոչինչ չի գուրս գալ և ինչ որ պատրաստուած էր պտղաբեր տարիներում, բոլորը կըծախսուի սովի տարիներում. բայց Փարաւոնի երկու միակերպ երազներ տեսնելը ցոյց է տալիս, որ Աստուծոյ կամքը գուցէ շուտով կատարուի: Պէտք է թագաւորը նշանակէ մի իմաստուն և գործունեան մարդ, որ պտղաբեր տարիներին հաւաքէ ամենայն կերպի ցորեն այնքան, որ բաւական լինի բոլոր ժողովրդեան անպտղաբեր տարիների ժամանակ:

Դատ հաւանելի թուեցաւ այս Փարաւոնին և նրա պաշտօնեաներին: «Ո՞ւր կըգտնեմ, բացի Յովսէփից մի մարդ, որի մէջ լինի Աստուծոյ ոդին», ասաց Փարաւոն. «Քեզ յայտնեց Աստուած իր խորհուրդն, ուրեմն դու ուրիշներից իմաստունն ես: Քեզ կըդնեմ ես գլուխ բոլոր Եգիպտոսի վրայ, երկորդ մարդը կըլինիս դու ինձանից յետով. միայն գահովս բարձր կըլինիմ ես քեզանից»: Այս ասելով Փարաւոն հանեց իր մատանին և հագցրեց Յովսէփի մատին: Նմանապէս հրամայեց բեկեղեալ շոր հագցնել նրան, զգին ոսկի մանեակ կախել և արքունի կառքով շըջեցնել մայրաքաղաքի մէջ պատուով, որ ամենքն իմանան նրա մեծութիւնը:

27. Յովսէփի եղբայների առաջին գալուստն Եգիպտոս.

Պտղաբերութեան ժամանակ Յովսէփ շինեց Եգիպտոսի մէջ ահագին մեծութեամբ շտեմարաներ և ժողովեց անչափ ցորեն: Վերջապէս եկան սովի տարիները Այն ժամանակ Յովսէփ բացեց շտեմարաններն ու ցորենը բաժանեց աղքատ եգիպտացիներին: Օտար երկիրներից էլ գալիս էին Յովսէփի մօտ ցորեն գնելու:

Քանանացոց երկրում նմանապէս սով ընկաւ: Յակովըն ասաց իր որդոց. «Ես լսում եմ, որ Եգիպտոսում ծախում են ցորեն, զնացէք և գնեցէք, ինչքան հարկաւոր է, որ սովից չմեռնենք»: Յովսէփի տասն մեծ եղբայրները գնացին Եգիպտոս. միայն Բենիամինը մնաց Հօր մօտ: Յակովը վախում էր, որ չինի, թէ ճանապարհին մի անբախտութիւն պատահի նրան:

Յակովը որդիքը հասան Եգիպտոս: Այստեղ տուանց Յովսէփի գիտութեան ոչ ոք հրաման չունէր ցորեն ծախելու. այս պատճառով նրանք գնացին նրա մօտ: Նրանք չճանաչեցին նրան և մինչև գետին երկրպագութիւն տուին նրան լարգութեամբ: Յովսէփի իսկոյն ճանաչեց նրանց և միտը բերելով իր երեխայութեան տեսիլները, իսորին երախտագիտութեամբ սկսաւ մտածել Աստուծոյ անհապանելի նախախնամութեան վրայ:

Բայց ինքը ցոյց տուեց, իբրև թէ չէ ճանաչում իր եղբայրներին և չէ հասկանում նրանց լեզուն: Նա խստութեամբ ասաց նրանց թարգմանի բերանով. «Դուք լրտես էք և եկել էք իմանալ, ինչոր լինում է Եգիպտոսում: «Զէ, տէր, մենք ճշմարիտ մարդիկ ենք, ասացին եղբայրները. մենք երբէք լրտես չենք եղել և եկանք այստեղ, որ գնենք ցորեն: Մեր

Հալը կենում է քանանացոց երկրում և մենք ողջս տասներկու եղբայրներ էինք: Մեզանից մէկը կորաւ և փոքը մնաց տանը մեր հօր մօտ»: «Զէ դուք կասկածելի մարդիկ էք», ասաց Յովսէփը, «Ես կամենում եմ փորձել, արդեօք ուղիղ են ձեր խօսքերն և չեմ թռղնիլ ձեզ Եգիպտոսից, մինչև ձեր եղբայրը չգայ այստեղ: Ղրկեցէք ձեզանից մէկին ձեր եղբօր ետեւից, բայց միւսներդ մնացէք ինձ մօտ գերի, մինչև ես իմանամ, որ դուք ճշմարիտ էք ասում»: Նա հրամայեց նրանց բանտը տանել:

Վրէժինդրութիւնը բարեպաշտ հոգու յատկութիւն չէ: Յովսէփ չէր ուզում իր եղբայրներից վրէժ հանել, այլ ուղղել նրանց: Երեք օրից նա հրամայեց բերել նրանց իր առջևն և ասաց նրանց. «Ես երկիւղած եմ Աստուծոյ և չեմ նեղացնում ոչ ոքին: Եթէ դուք ճշմարտիւ արդար մարդիկ էք, թո՛ղ մէկը ձեզնից մնալ այստեղ բանտում, իսկ միւսներդ գնած ցորենով գնացէք տուն, ու յետ դարձէք էլի ձեր փոքը եղբօր հետ: Այն ժամանակ ես կըհաւատամ ձեր խօսքերին և դուք կազատուիք ձեզ սպառնացող մահից»:

Թշուառութիւնն եղաւ սկիզբն Յովսէփի եղբայրների ուղղուելուն: Նրանք ասում էին մէկ-մէկու. «Երեի մենք պատժուեցանք մեր խստասրտութեան համար, որ մենք ցոյց տուինք մեր եղբօրը՝ Յովսէփին: Մենք տեսանք նրա հոգուց տրտմութիւնն ու արտասուքը և ականջ չդրինք նրա խընդրելուն»: — «Ես չասացի ձեզ», կըկնեց Ոուբէն, «որ դուք չմեղանչէք ձեր եղբօրը՝ դէմ: դուք ինձ չլսեցիք, այժմ նրա արիւնը մեզնից պահանջում է Աստուած»:

Նրանք կարծում էին, թէ Յովսէփը չէ հասկանում իրանց խօսակցութիւնը, որովհետև նրանք խօսում էին նրա հետ թարգմանի բերանով: Յովսէփը լսելով նրանց խօսակցութիւնն ու գղջումը, շատ զգացուեց: յետ դարձաւ և լաց եղաւ: Բայց ճշմարտութեամբ նրանց զգացմունքըն իմանալու համար, դարձաւ նրանց հրամայեց ամենի

առջև կապել Շմաւոնին: Այս կատարելից լեռ Յովսէփի ծառաները ւրցըին միւս եղբայրների պարկերը ցորենով և ցորենի համար բերած փողերը նմանապէս Յովսէփի հրամանով թաքուն դրին պարկերի մէջ, տուին նրանց նոյնպէս ճանապարհի պաշար էլ: Պարկերը բառնալով էշերի վրայ Յովսէփի եղբայրները գնացին տուն, սաստիկ հրաման ստանալով, որ միւս անգամ առանց իրանց փոքը եղբօր չերևին Յովսէփի աչքին:

Երբ դարձան հօր մօտ, նրանք տրտմութեամբ պատմեցին ամենն, ինչ-որ պատահեցաւ և շատ զարմացան, երբ ցոլենը թափելիս պարկերի մէջ գտան իրանց փողերը:

Մերունի Յակովը ցաւում էր Շմաւոնի վրայ: Բայց ամենից աւելի վախենում էր Բենիամինի համար. «Յովսէփն էլ չկալ», ասում էր նա, «Շմաւոն բանտն է զցած, ալժմ ուզում էք ինձնից լսելի իմ Բենիամինս էլ. ամեն թշուառութիւններն իմ գլխիս ընկան: Զեմ թռղնիլ ես Բենիամինին Եգիպտոս: Նրան մի թշուառութիւն կըպատահի և դուք այն ժամանակ իմ ցաւով լի ծերութիւնս գերեզման կիշեցնէք:

28. Յովսէփի եղբայրների երկրորդ գալուստն

Եգիպտոս.

Սովոր էլի շարունակում էր քանանացոց երկրում: Եգիպտոսում գնած հացը կերան: Յակովը ասաց իր որդոց. «գնացէք էլի Եգիպտոս և եթէ կարելի է, գնեցէք ցորեն»: «Եգիպտոսի իշխանը», պատասխանեց Յուղան, «ասաց մեզ, որ չերևինք նրա աչքին, եթէ չտանենք մեր հետ մեր փոքը եղբօրը: Թո՛ղ մեզ հետ երեխային էլ, թէ չէ, չենք կարող ցորեն ստանալ և մենք ամենքս պէտք է մեռնենք սո-

վեց, դու էլ, մենք էլ, մեր որդիքն էլ: Բենամինին ես իմ ձեռս եմ առնուած: Նրան դու ինձանից պահանջիր, եթէ ես նրան յետ չբերեմ և քո առջեղ չկանգնեցնեմ, թող նրա յանցանքը իմ վրայ լինիք բոլոր իմ կեանքուամ: Եթէ մենք այս- պէս չէինք ուշացել, մենք արդէն երկու անգամ եղիպտոս գնացած և եկած կըլինէինք»:

Վերջապէս Յակովը տխուր սրտով ասաց: «Եթէ այդ շատ կարևոր է, ահա ինչ արէք. վեր առէք այս երկրի լաւ բերքերից՝ ուետին, մեղր, խուճկ, ստաշին, բւեկն և ընկոյզ և տարէք ընծալ եղիպտոսի իշխանին: յետ տարէք նաև պարկե- րուամ գտնուած փողերը: Առէք ձեզ հետ Բենամինին էլ: Թող ամենազօր Աստուածն օդնական լինի ձեզ, որ Եղիպտոսի իշ- խանի ողորմութեան արժանանաք, որ կարողանաք կըկին չետ- ներդ բերել և ձեր ալնտեղ գրաւ մնացած եղբօրը՝ Շմաւո- նին: Բայց թէ ինձ Աստուածանից նշանակած է անզաւակ լինել, թող լինի ալնպէս»:

Յակովի որդիք կըկին գնացին Եղիպտոս: Յովսէփը երբ իմացաւ, որ Բենիամինն եկել է իր եղբարների հետ, հրա- մայեց իր տան հազարապետին պատրաստել հարուստ սեղան և հրաւիրել նոր եկածներին: Երբ հազարապետը մտցըց նրանց ներս Յովսէփի տուն, նրանք դողալով սկսան պատ- մել նրան այն փողի մասին, որ գտել էին իրանց պարկերուամ, կարծելով թէ իրանց ստրուկ կըշինեն այն փողի համար: «Մի հոգաք դրա մասին», պատասխանեց հազարապետը. «Աստուած ինքը յետ է դարձել ձեզ այն փողերն, ես ամե- նը ստացել եմ ինչպէս հարկն էր»: Նա բերեց Շմաւոնին էլ և ամենը միասին մտան Յովսէփի տուն: Հազարապետը յալտ- նեց նրանց, որ նրանք կըմնան ալնտեղ ճաշելու և որ նրանց էշերն էլ կըստանան կերակուր:

Յովսէփի գալուն սպասելով նրանք պատրաստեցին՝ ըն- ծաները: Երբ Յովսէփը ներս մտաւ, բոլոր եղբայրները չոքեցին նրա առաջ. նրանցից ամեն մէկը ձեռքին բունած ունէր իր ըն-

ծան: Նա քաղցրութեամբ բարեւեց նրանց և հարցրեց. «Ա- ռողջ է ձեր հայրը. արդեօք դեռ կենդանի է ծերունին»: Նրանք պատասխանեցին. «Մեր ծերունի ծնողը՝ քո ծառան առողջ է»: Երբ Բենիամինին տեսաւ Յովսէփը, հարցրեց. «Սա է ձեր փոքր եղբայրը, որի մասին դուք ինձ ասացիք: Աստուած օրհնէք քեզ, որդեեակ», ասաց նա երեխային և շուտ հեռացաւ, որ թաքցնէ իր արտասուքը: Նրա սիրտը վառւում էր իր փոքր եղբօր սիրով: Արտասուքն աղբիւրի պէս վա- զում էին աչքերից. նա գնաց իր առանձնասենեակը և այն- տեղ փակուած սկսեց լաց լինել:

Երեսը լուանալից յետ Յովսէփը դարձաւ իր եղբայր- ների մօտ և աշխատելով պահել իր արտասուքը, ասաց. «Բե- րէք կերակուրը»: Եղբայրներին նստացըին սեղան աւագու- թեան կարգով՝ աւագին ամենից ցած: Նրանք մէկ-մէկու վրայ նալելով, զարմանում էին և չէին կարողանում հաս- կանալ, թէ որտեղից ալդպէս լաւ յայտնի են նրանց իրանց տարիքը: Իսկ ինքը Յովսէփը թէս միասին նրանց հետ էր ուտում, միայն առանձին սեղանի վրայ: Իր հարազատ եղ- բօր Բենիամինի իր մայր Հովքէլի որդուն, նա աւելի պա- տիւ էր տալիս: ամեն խմիչքներից և կերակուրներից նրան հինգ անգամ աւելի էին տալիս, քան թէ ուկշներին: Ամենը կերան և խմեցին առատութեամբ:

29. Յովսէփը յայտնւում է իր եղբայրներին.

Յովսէփն էլի մի անգամ կամենում էր փորձել իր եղ- բայրներին. նա հրամայեց իր հազարապետին, որ լքցնէ նրանց պարկերը ցորենով ու դնէ նրանց մէջ ցորենի հա- մար բերած փողերն էլ. իսկ Բենիամինի պարկի մէջ հրա- մայեց դնել իր արծաթի սկիհն էլ: Հազարապետը կատարեց Յովսէփի հրամանը և միւս օրը Յակովը որդիքը ճանա- պարհ ընկան դէպի հալընէք:

Հազիւ կարողացան նրանք քաղաքից դուրս գնալ, Յովսէփի կանչեց հազարապետին և ասաց. «Նտապիր, հասիր այն օտարականներին և ասա նրանց. «Դուք չարութիւն էք հատուցանում բարութեան փոխանակ. դուք դողացել էք այն սկիհը, որից միշտ իմ տէրս խմում է»:

Հազարապետն ամեն բան այնպէս կատարեց, ինչպէս իրան հրամայած էր. «Այս ի՞նչ է նշանակում, ասացին Յովսէփի եղբայրները, ի՞նչպէս կարելի է մտածել, որ մենք այդպիսի չար գործքի լնդունակ լինինք. քո միտդ է, որ մենք քանանցոց երկրից յետ բերինք պարկերում գտնուած փողերը, մի՞թէ մենք կըդողանայինք քո տիրոջդ տանից արձաթի սկիհն. ում մօտ գտանուի, թո՞ղ նա սպանուի, իսկ ողջ մնացածներս լինինք քո տիրոջ ստրուկները»: Նրանք էշերի բեռները վէր բերին, առան պարկերն ու բաց արին: Հազարապետն ինքն էր նայում պարկերը՝ ամենից մեծից սկսելով և երբ կարգը հասաւ փոքրին, սկիհը գտնուեցաւ հենիամինի պարկում: Անպատելի տրտմութիւնից Յովսէփի եղբայրները պատառեցին իրանց շորերը: Պարկերը երկին էշերի վրայ բարձած, նրանք յետ դարձան քաղաք: Ամենքը գնացին Յովսէփի մօտ, իսկ Յուդան նրա ոտերն ընկնելով սկսաւ շատ լաց լինել: «Այս Բնչ արիք, ասաց Յովսէփը, միթէ կարծում էիք, որ ինձ կըխաբէք»: «Ո՛հ, աղաղկեց Յուդան, Բնչ ասենք մեզ արդարացնելու համար. Աստուած պատժում է մեզ մեր վաղուց արած չարութեան համար. ահա նա, ում մօտ որ գտնուեցաւ սկիհը, մենք ամենքս մնում ենք քեզ ծառալ»: — Զէ, պատասխանեց Յովսէփը, այդ անօրէնութիւն կըլինէր, ես չեմ ուզում, որ անմեղները նեղութիւն քաշեն յանցաւորի համար: Ում մօտ գտնուեցաւ իմ սկիհս, միայն նա կըլինի իմ ծառաս. իսկ դուք յետ դարձէք խաղաղութեամբ ձեր հօր մօտ:

Յուդան մօտեցաւ Յովսէփին և ասաց. «Տէր իմ, տուրինձ հրաման քեզ միքանի խօսք ասելու. մի՞ բարկանար հա-

մարձակութեանս վրայ, որով ես համարձակուում եմ խօսել քեզ հետ, որ առաջին մարդն ես թագաւորից յետոյլ: Դու մի անդամ հարցըրի մեզ, կենդանի է արդեօք մեր ծնողը, և ունինք ուրիշ եղբայր էլ: Այն ժամանակ մենք պատասխանեցինք, որ մեր հայրը կենդանի է և թէ մենք ունինք էլի մի փոքր եղբայր, որ մեր հօր համար աշխարհիս վրայ ամեն բանից առաւել թանկագին է: Դու հրամայեցիր մեզ, որ բերենք նրան. բայց մենք պատասխանեցինք, թէ մեր հայրը կըմեռնի, եթէ բաժանուի իր սիրելի որդուց: «Եթէ դուք չէք բերիլ ձեր փոքր եղբօրը, դուք էլ իմ երեսս չպէտք է տեսնէք», ասացիր դու: Մենք այս ամենը յայտնեցինք մեր ծնողին և երբ նա երկրորդ անգամ կամենում էր զըրկել մեզ Եգիսլոսս, մենք ասացինք նրան, որ մենք չենք համարձակուիլ գալ այստեղ առանց մեր փոքր եղբօր: Այն ժամանակ մեր հայրն ասաց մեզ. «Դուք գիտէք, որ ես սիրելի կնոջից՝ Հռաքէլից միայն երկու որդի ունեցայ. մինը տնից դուրս եկաւ և դուք ինձ ասացիք, որ վայրենի գազանները պատառեցին նրան և ես այն ժամանակից ի վեր նրան չեմ տեսած: Եթէ դուք տանէք Հռաքէլի միւս որդուն էլ և նրա հետ էլ պատահի մի անբախտութիւն, ես կըմեռնեմ տրտմութիւնից»: Ուրեմն եթէ մենք դառնանք տուն առանց երեխային, մեր հայրը, որ իր կեանքից աւելի է սիրում նրան, կըմեռնի ցաւից: Ես նրան իմ ձեռս եմ առել. ես յանձնառու եղալ, որ կըպահպանեմ նրան. ես ասացի ծնողիս, որ ես իմ կեանքս կըտամ երեխայի համար. ուրեմն թո՞ղ ես մնամ քեզ ծառալ. բայց նրան բաց թո՞ղ գնայ տուն եղբայրներիս հետ: Ի՞նչպէս ես պէտք է երևիմ ծնողիս աչքին, եթէ երեխան հետս չլինի. ես չեմ կարող տեսնել նրա տրտմութիւնը»:

Այժմ տեսաւ Յովսէփ, որ իր եղբայրներն ուղղուել են և էլ չկարողանալով աւելի անյալտ մնալ, հրամայեց ամեն իրան պատող եղիպատացիներին դուրս գնալ և երբ ինքը մե-

նակ մնաց եղբայրների հետ, բարձր ձայնով սկսաւ լալ և ասաց. «Ես Յովսէփին եմ. արդեօք դեռ կենդանն է մեր հայրը»։ Եղբայրները վախից մնացին անշարժ և չէին կարողանում մի խօսք էլ ասել։

Յովսէփը կամենալով քաջալերել իր եղբայրներին ասաց. «Մատեցէք ինձ, ես ձեր եղբայր Յովսէփին եմ, նա, որին դուք ծախեցիք։ Աստուած բերաւ ինձ այստեղ էլի ձեր լաւութեան համար։ Անցաւ սովի երկու տարիներն և անպատուզութիւնը դեռ կըշարունակուի էլի հինգ տարի։ Բոլոր այս ժամանակ ոչ կըցանեն և ոչ կըհնձեն. ուրեմն Աստուած դրկեց ինձ այստեղ նրա համար, որ դուք միջոց ունենաք կերակրուելու, որ դուք ինձմով ազատուիք սովի մահից։ Ես ոչ թէ ձեր կամքով, այլ Աստուծոյ զօրութեամբ եմ այստեղ։ Աստուած արեց ինձ երկրորդ մարդը Փարաւոնից յետով, հազարապետ նրա տան, իշխան բոլոր Եգիպտոսի վրայ։ Նտապով յետ դարձէք մեր հօր մօտ և յայտնեցէք նրան, որ Յովսէփը՝ նրա որդին, պատուիրեց նրան ասել, թէ «Աստուած իրան դրաւ իշխան բոլոր Եգիպտոսի երկրի վրայ, առանց ուշանալու թող գայ ինձ մօտ. նա կընակի Եգիպտոսի ամենից լաւ տեղում. կըլինի ինձ մօտիկ իր որդիքներով, թոռներով և բոլոր իր ստացուածներով։ Ես կըհոգամ նրա վրայ և ինչ որ նրան պատկանում է, կըկերակըն ձեզ ամենքիդ, որովհետեւ սովն էլի հինգ տարի կըտեէ երկրիս երեսին։ Այժմ դուք տեսնում էք, որ ես խօսում եմ ձեզ հետ ձեր լեզուով առանց թարգմանի։ Գնացէք յայտնեցէք իմ հօրս իմ փառքս ու պատիւս Եգիպտոսի մէջ. պատմեցէք նրան ամեն բան, ինչ որ տեսաք, շտապեցէք, յետ դարձէք ինձ մօտ շուտով և բերէք հետներդ իմ հօրս։

Նա գրկեց իր եղբայր Բենիամինին, համբուրեց և լաց եղաւ. Բենիամինը նմանապէս լալիս էր նրա գրկում։ Յետոյ կարգով գրկեց միւս եղբայրներին էլ և թափում էր արտասուք։

30. Յակովը Եգիպտոս տեղափոխուիլը.

Փարաւոնը շատ ուրախացաւ, երբ լսեց, որ Յովսէփի եղբայրներն եկել են։ Նա տուեց իր կառքերից միքանիսը, որ բերեն Յովսէփի հօրը, եղբայրներին, նրանց կանանց և որդոց։ Յովսէփը բոլոր եղբայրներին լնձալեց մի մի ձեռք շոր, իսկ Բենիամինին տուեց հինգ ձեռք շոր և երեք հարիւր արծաթի դաշեկան։ Իր հօրն էլ զրկեց տասն էշ բարձած Եգիպտոսի լաւ բերքերով և տասն էշ մատակ էշեր բարձած ցորենով և ճանապարհի զանազան պաշարներով։ Իր եղբայրներին ճանապարհ գցելիս ասաց. «Ճանապարհին չվիճէք մէկմէկու հետ»։

Բայց ծերունի հայրն այս միջոցին տրտմութեամբ և անհանգստութեամբ սպասում էր իր որդոց դառնալուն։ Յանկարծ յայտնուեցան նրա առաջ բոլոր որդիքը, Բենիամինն էլ նրանց հետ և առացին. «Քո որդիդ Յովսէփը կենդանի է. նա է այս հզօր իշխանն Եգիպտոսի, որի վրայ մենք քեզ պատմեցինք»։ Ծերունին չէր կամենում նրանց հաւատալ։ Այն ժամանակ նրանք պատմեցին Յովսէփի բոլոր պատմութիւնը և կրկնեցին նրա ամեն խօսքերը։ Յակովը, երբ տեսաւ Փարաւոնի զրկած կառքերն ու հարուստ լնձաները, հաւատաց ու կարծես թէ քնից զարթելով աղաղակեց. «Իմ որդիս՝ Յովսէփը կենդանի է, կերթամ կըտեսնեմ նրան մեռնելիցս առաջ»։

Յակովը առանց ուշանալու պատրաստուեց ճանապարհ ընկնել։ Նրա որդիքը նստեցին իրանց որդոց և կանանց հետ Փարաւոնի կառքերի վրայ. առան հետները բոլոր իրանց խաշներն ու ստացուածները և գնացին Եգիպտոս։ Ողջը միասին էին եօթանասուն հինգ հոգի։ Քանանացոց երկրի սահմանի վրայ Յակովը Աստուծուն մատաղ բերաւ։ Նա չէր վըձուռ թողնել այս երկիրն, որ խոստացած էր իրան և իր զաւակ-

Ներին Աստուածանից: Աստուած ասաց նրան գիշերուան տեսիլքում. «Ես եմ քո հօրդ Աստուածը, գնա՞ աներկիւղ եգիպտացոց երկիրը. ես քեզ հետ կըլինիմ: Այնտեղ քո ցեղդ կըդառնայ մեծ ազգ և ես կըդարձննմ նրան՝ քեզ և քո նախնիներիդ խոստացած երկիրը: Յովսէփ կըծածկէ քո աչքերդ»: Այս տեսիլը հանգստացրեց բարեպաշտ ծերունուն, որ աներկիւղ շարունակեց իր ճանապարհորդութիւնը դէպի Եգիպտոս: Յուղան առաջ գնաց, որ իմաց տայ Յակովբի գալուստը: Յովսէփ նստաւ իր կառքն ու շտապեց առաջ դուրս գալու իր հօրը: Ելք նրան տեսաւ, կառքից իջաւ, ընկաւ նրա գիրկը և լաց էր լինում երկար ժամանակ: Ծերունին ասաց. «Այժմ ես հանգիստ կըմեռնեմ. ես տեսայ քո երեսդ, դու դեռ կենդանի ես»:

Յովսէփ իմաց արաւ Փարաւոնին իր հօր գալուստն և թագաւորն ասաց. «Բոլոր Եգիպտոսի երկիրը բաց է քո հօրդ, եղբայրներիդ համար. ընտրիր նրանց բնակութեան համար իմ թագաւորութեանս ամենից լաւ տեղը»: Յովսէփ ինքը տարաւ իր հօրը Փարաւոնի մօտ: Բարեպաշտ ծերունին օրհնեց Փարաւոնին, որ հարցըրեց նրան, թէ «Քանի՞ տարեկան է»: Յակովբ պատասխանեց. «Հարիւր երեսուն տարեկան եմ: Սակաւ եղան և տիսուր իմ օրերս. նրանք ամեննեին չեն հաւասարում նախնիներիս պանդխտութեան օրերին»: Նա միւս անգամ օրհնեց Փարաւոնին և շարժած սրտով դուրս եկաւ: Յովսէփ իր ընտանիքի բնակութեան համար, Փարաւոնի հրամանով, ընտրեց Եգիպտոսի ամենից լաւ երկիրը, այն է՝ Գեսէմ: Նա հոգս էր քաշում իր ազգականների վրայ և ամեն նրանց հարկաւորութիւնները լցնում էր:

31. Յակովբի և Յովսէփի մահը.

Յակովբը հասաւ խորին ծերութեան. նա հարիւր քառասուն և եօթը տարեկան էր, երբ զգաց մահուան մօտենալը և լրկեց Յովսէփի ետևից, որ եկաւ նրա մօտ շուտով և բերաւ հետը իր երկու որդոց՝ Մանասէին և Եփրեմին, որոնք ծնան նրա Ասանէթ կնոջից, որ Սարէգ քաղաքի քրմապետի աղջիկն էր: Յակովըն իր զօրութիւնը հաւաքելով նստաւ մահճի վրայ և ասաց. «Ո՞վ են սրանք»: «Երեխալքս, որոնցով Աստուած օրհնեց ինձ», պատասխանեց Յովսէփի: «Մօտեցնուր դրանց ինձ», ասաց Յակովբ. «Ես կամենում եմ դրանց օրհնել»: Յովսէփը մօտեցրեց նրանց մեռնող ծերունուն, որ որդեգրեց նրանց, գրկեց, համբուրեց և յետոյ ասաց Յովսէփին. «Ես կարծում էի, թէ քեզ էլ չեմ տեսնիլ երբէք, բայց Աստուած բերաւ ինձ, որ ես տեսնէի քեզ և քո որդոցդ»: Վերջապէս օրհնելով Յովսէփի որդոց՝ իր ձեռքերը խաչի պէս նրանց գլխին դրած, ասաց բարեպաշտ ծերունին. «Աստուած, որին հաճելի էին իմ հայրերս—Աբրահամ և Իսահակ, և որ կերակրեց ինձ երեխալութիւնիցս մինչև այժմ. Հրեշտակն, որ ազատեց ինձ չարից, թող օրհնեն այս երեխաներին»: Յետոյ դառնալով դէպի Յովսէփի, շարունակեց: «Ես մեռնում եմ Աստուած միշտ ձեզ հետ կըլինի. Նա կըդարձնէ ձեզ ձեր հայրերի երկիրը: Քեզ առանձնապէս, բացի միւս ժառանգութիւնից, տալիս եմ ես Սիկիմն էլ:

Յակովբ հրամայեց ըոլոր որդոց, որ հաւաքուեն իր մահճի չորս կողմում. օրհնեց նրանց ամենին. իսկ Յուղային ասաց յետագայ մարգարէական խօսքերը. «Ո՞վ Յուղա, քեզ թող օրհնեն եղբայրներդ, քեզ երկրպագութիւն տան քո հօրդ որդիքը, թագաւորներ և զօրավարներ կըլինին քո յետագաներդ, մինչև կըգայ Խաղաղարն՝ ամեն ազգերի Յոլսը»:

Յետոյ նա ասաց բոլոր որդկերանց. «Թաղեցէք ինձ քանանցոց երկրում այն այրի մէջ, ուր թաղած են Արքահամը, Սառան, Իսահակը և Ռեքեկան. այնտեղ, ուր դրի ես Լիալի մարմինը»։ Այս ասաց, պառկեց իր մահճի վրան և վախճանեցաւ։ Այսպէս խաղաղ և հանգիստ մեռնում է նա, ով վարում է բարեպաշտ կեանք։

Յովսէփը Փառաւոնի հրամանով բոլոր եղբայրներով, եգիպտացի մեծամեծներով և բոլոր իր ընտանիքով տարաւ Յակովի մարմինը քանանցոց երկիրը և թաղեց այրում, որ Արքահամ գնեց Սառալին թաղելու համար։ Բայց երբ Եգիպտոս դարձան, եղբայրները վախենալով որ նա գուցէ վրէժը հանել ուզենայ իրանցից, ասացին նրան. «Մենք շատ յանցաւոր ենք քո առաջ. բայց մեր հայրը մեռնելիս պատուիրեց, որ դու մեղներես, վրէժ մի հանիր մեղնից. մենք քո ծառաներդ ենք»։ — «Եւ ես Աստուծոյ ծառան եմ», պատասխանեց Յովսէփ. «Աստուծած բարի արաւ, թէ ինձ համար և թէ ձեզ համտր այն չարութիւնն, որ դուք ինձ կամենում էին անել. հանգիստ եղէք, ես միշտ ձեր պաշտպանը կըլինիմ»։

Յովսէփ հարիւր և տասն տարի ապրեցաւ, նա տեսաւ իր որդոց, թոռներին և թոռների որդոցը։ Իր մեռնելից առաջ ասաց նա իր եղբայրներին. «Այժմ ես մեռնում եմ, բայց Աստուծած կըդարձնէ ձեզ մեր հայրերին՝ Արքահամին, Իսահակին և Յակովին խոստացած երկիրը. երդումն տուէք ինձ, որ երբ պատահի այս տեղափոխութիւնը, դուք կըպատւիրէք ձեր որդոց և նրանց յետագաներին, որ իմ մարմինս էլ իրանց հետ տանեն»։ Նրանք երդումն տուին և նա մեռաւ կատարեալ հաւատով և յուսով։ Նրա բարեպաշտ կեանքը ոչ մի անօրէնութեան բիծ չունեցաւ. նրա մահը հանգիստ էր շատ. Ամենը նրա վրայ լաց եղան սրտանց։ Նրա մարմինը, դրին դագաղի մէջ և թաղեցին Եգիպտոսում։

32. Արդար Յովսէփ.

Աստուծաշնչի մէջ նկարագրած է մի բարեպաշտ մարդու կեանք, որ բնակւում էր Արքեալի մէջ Աւսիդ (Աւստեր) աշխարհում, դեռ Մովսէսից առաջ։ Նրա անունն էր Յովսէփ. սա էր անարատ, արդար, բարեպաշտ և ամեն անօրէնութիւններից հեռացած մարդ։ Երկիրն, ուր նա բնակւում էր, գեղեցիկ էր և պտղաբեր. նա տէր էր բազմաթիւ խաշների, ունէր արծաթ ու ոսկի շատ. ամենքը պատւում էին նրան և նրա բախտը կատարեալ էր մանաւանդ նրա համար, որ այս ամեն բանի հետ միասին ունէր գեղեցիկ և բազմաթիւ ընտանիք էլ։ Նա ունէր եօթն որդի, երեք աղջկի, որոնք նրա ուրախութիւնն էին։ Ամեն բան միացել էր, որ Յովսէփն բախտաւորացնէ։ Սրա օրինակովն Աստուծած կամեցաւ ցուց տալ, որ ճշմարիտ բարեպաշտ մարդը չի փոխուիլ թէ բախտաւորութեան և թէ անբախտութեան մէջ։ Սատանան բամբասեց Յովսէփն Աստուծոյ առաջ, ասելով թէ այս բարեպաշտը միայն այն պատճառով այնպէս հաւատարիմ ծառայում է նրան, որ նա առատաձեռն տուել է Յովսէփն ամեն երկրաւոր բարիքներն։ Աստուծած Յովսէփ ստացուածների իշխանութիւնը տուեց ստանալին։

Նրա որդիքը, որոնք շատ սիրով կենում էին միմեանց հետ, շուտ-շուտ խնճուքներ էին պատրաստում մէկ-մէկու համար, միայն Յովսէփ ինքը իսկի մասնակից չէր լինում այս ուրախութիւններին, այլ հեռանալով նրանցից աղօթք էր անում Աստծուն իր որդոց համար։ Մի անգամ, երբ երիտասրդները խնջուք էին պատրաստել, ուրախանում էին և Յովսէփ աղօթք էր անում, ծառաներից մէկը վազելով եկաւ ասաց, ող Արքացի աւազակները փախցրին բոլոր նրա եղերն ու էշերը։ Նրանից յետ եկաւ երկրորդ ծառան և համբաւ բերեց, թէ երկնքից կըակ ընկաւ և ալրեց բո-

լոր ոչխարներին ու հովիւներին. յետոյ երրորդն եկաւ ու համբաւ բերեց, թէ ասպատակաւորներ եկան յափշտակեցին բոլոր ուղտերին ու հովիւներին սպանեցին. վերջապէս չորրորդն եկաւ և ասաց, որ անապատից մեծ հողմ փշեց և քանդեց այն տունը, ուր նրա որդիքն ու աղջիկներն ուրախանում էին և մեռան ամենքը: Յովեն, շատ տրտմեցաւ, մանաւանդ այս վերջին համբաւովը: Նա տիրութիւնից պատառեց իր շորերը, բայց մտածելով, որ այս ամեն անբախտութիւններն Աստուծոյ զրկած են, ասաց. «Աստուած տուեց ինձ ամենը, Աստուած էլ առաւ. օրհնեալ լինի՞նրա անունը»:

Յովեն աղքատացաւ. նա տիրում էր որդոց կորստի համար, բայց երբէք չէր տրանջում Աստուծոյ վրայ և մնաց հաստատ իր բարեպաշտութեան մէջ: Այս անբախտութիւններից յետ, Աստուած թողեց սատանալին, որ նորից էլի փորձէ Յովենի համբերութիւնը: Նրա բոլոր մարմինը ծածկուեցաւ սաստիկ խոցերով, բայց նա համբերութեամբ տանում էր իր ցաւին և օրհնում էր Աստուծուն: Յովենի կնոջն անտանելի էին թւում նրա չարչարանքները. նա խորհուրդ էր տալիս, որ լաւ է մեռնի, քան թէ համբերէ այսպիսի տանջանքների: «Մի խօսք ասա՞ Աստուծոյ դէմ, ասաց նա, և մեռիր»: «Դու խօսում ես ինչպէս անմիտ կին», պատախանեց Յովեն. «Եթէ մենք ընդունեցինք Աստուծոյ ձեռքից բարութիւնները, միթէ չպէտք է համբերենք չարչարանքներին էլ, որոնք նա՞զ զրկում է մեզ»:

Յովենի բարեկամներն ու ծանօթները, տեսնելով նրան այս գրութեան մէջ, կարծում էին, յայտնի բան է, թէ Աստուած պատժում է նրան, բերսի, գաղտնի յանցանքների համար: Անկարելի է կարծում էին նրանք, որ Աստուած, այնքան բարի և արդարադատ գոլով, այդպէս խիստ պատժէ անմեղ մարդուն: Նրանք չէին մտածում, որ Աստուած շատ անգամ փորձում է արդարներին էլ թշուառութիւններով, որ նրանց առաքինութիւնն առաւել փայլի թշուառութիւններում:

Ների մէջ և վերջապէս կայ ուրիշ աւելի լաւ կեանք, ուր արդարն ստանում է վարձ իր քաշած նեղութիւնների, իր հաստատութեան, որով համբերեց նրանց, և իր առաքինութիւնները կատարելագործելուն համար: Խիստ բարեկամները յայտնեցին թշուառ Յովենի իրանց անարդար կասկածները նրա վրայ: Յովեն՝ զրկուած որդիներից, ստացուածքից, առողջութիւնից, տեսաւ, որ կամենում չեն իրանից խլել մինչև անգամ իր բարի անունն էլ. բայց նրա խղճմբանքը յստակ էր և յոյսն Աստուծոյ վրայ հաստատ: Նա ասում էր. «Կորչողներուն ազատում էի, տիրուր որբերուն մըխիթարում էի, կոյրի համար աչք էի ես, անոտ մարդուն՝ ցուպ, խեղճերին՝ հայր: Միենոյն ժամանակ խարազան էի աւազակների և յափշտակողների համար, խլում էի նրանցից ապօրէն աւարը, ջարդում էի մեղաւորննրի ատամները: Եթէ ես գնացել եմ մեղքի ճանապարհով, եթէ ես խաբել եմ մէկին, թող զրկէ Աստուած իմ վրայ ինձ արժանի պատիժս. բայց իմ խղճմանքս հանգիստ է: Հարցըք իմ ծառաներիս, արդեօք բարի տէր չէք նրանց համար, բաց չէր արդեօք իմ դուռս ճանապարհորդի համար, արդեօք պատրաստ չէք աղքատին օգնելու: Զէ, իմ յոյս ես արծաթի և ոսկու վրայ չէի դրած. չէ: Ես վախենում էի Աստուածանից, իմ յոյս նրա վրայ էր»:

Այս ժամանակ անսիրտ բարեկամներն, իրանց դատողութիւններով աշխատում էին խլել Յովենից նրա միակ մնացած մխիթարութիւնը: Նրանք աշխատում էին նրան այն տեղը հասցնել, որ նա իրան մեղաւոր կարծէ, և այսպէս շատ նեղացնում էին արդար մարդուն: Զարչարուած ցաւով և իր խիստ բարեկամների դատողութիւններով, Յովեն երբեմն անհամբերութիւն էր յոյց տալիս, գանգատում էր Աստծուն իր վիճակի վրայ և մինչև անգամ անիծեց իր ծննդեան օրն էլ: Աստուած ինքն եղաւ միջնորդ Յովենի ու նրան չարչարող բարեկամների մէջ: Աստուած յայտնուեց նրանց մըրկում

և ամպերում և ասաց, որ Աստուծոյ ճանապարհներն անհասանելի են մարդկալին մտքին և թէ մարդուս պարտաւորութիւնն է անպալման հպատակել Աստուծոյ կամքին և չդատել նախախնամութեան ճանապարհների մասին։

Աստուած վարձատրեց Յովը ին կրկնապատիկ ամեն քաշածների համար։ Յետ դարձրեց նրան իր հարստութիւնն ու առողջութիւնը։ Նրան ծնան էլի եօթն որդի և երեք աղջիկ։ Յովը սրանից յետոյ ապրեցաւ էլի հարիւր եօթանասուն տարի և տեսաւ որդոց և թոռներին, մինչև չորրորդ ագդը։

33 Մովսէսի ծնունդը և կրթութիւնը.

Քանանացոց երկրում Աբրահամի ցեղից ոչ ոք չկար, այնտեղ հանդստանում էին միայն նրա ընտանիքի ոսկորները.



Իսկ Եգիպտոսում Աբրահամի ցեղը ժամանակով բազմացաւ

շատ և հզօր տզգ դարձաւ։ Յակովը կոչուեցաւ Խորակէլ, ուստի և այն ազգն էլ ստացաւ Խորակէլ կամ Խորակէլացիք անունը։ Յակովը տասներկու որդի ունէր և Խորակէլացոց ազգն էլ տասներկու տոհմեր բաժանուեց, որոնց ամեն մէկը իր ցեղապեատի անունովն էր անուանում։

Յովսէփի ժամանական Փարաւոնը վաղուց մեռած էր, թագաւորում էր ուրիշ Փարաւոն, որ չէր իմանում Յովսէփի գործքերը։ Օտար ազգն, որ բնակվում էր նրա տէրութեան մէջ, երկիւղալի թուեցաւ նրան։ Նա վախենում էր, որ Խորակէլացիք գուցե միանգամ միանան իր թշնամիների հետ, և այս պատճառով, կամենալով նրանց ջնջել կամ թուլացնել, հրամայեց ամեն կերպով նեղել նրանց։ Նրանց գործ էին ածում ամեն ծանը աշխատանքի համար, կերակրում էին վատ, վարւում էին հետները տմարդաբար. բայց չնալելով այս բանին Խորակէլացոց ազգը շարունակ էլի բազմանում էր։ Վերջապէս Փարաւոնը մի տմարդի հրաման հանեց, որ ամեն Եբրայեցի նորածին արու երեխաներին սպանեն և գետը գցեն։

Այս ժամանակներումս կենում էր մի բարեպաշտ և Աստուածասէր Խորակէլացի կնիկ, որի մարդը նմանապէս բարեպաշտ էր և ինքն էլ Ղեկի ցեղիցն էր. այս կինը ծնաւ մէկ գեղեցիկ որդի։ Նա ինչպէս որդեսէր մայր ջատ սիրում էր նրան և թաքուն պահում էր մօտը մինչև երեք ամիս։ Էլ չկարողանալով երկար թաքնել երեխային, նա հիւսեց մի կողով պրտուից, ծեփեց նրան կպրով, որ ջուրը ներս չմտէ, դրեց նրա մէջ իր փոքրիկ որդուն և կողովը գցեց ջրի մէջ։ Կարելի է, մտածում էր նա, Աստուած զրկէ մէկին, որ մեղքանալ իր գեղեղիկ երեխային։ Խոկ երեխայի քոյրը, փոքր ինչ հեռու կանգնած, նայում էր, թէ ինչ է լինելու իր եղբօրը։

Թագաւորի աղջիկն իր աղախիների հետ միասին գնաց ջրի ափ լուացուելու։ Նա տեսաւ թփի մէջ ծեփած կողովը, հրամայեց իր աղախիններին, որ առնեն այն և բաց անելով

տեսաւ նրա մէջ Երեխային, որ լաց էր լինում: Շատ մեղքացաւ երեխային: «Յայտնի է», ասաց նա, «որ այս Իսրայէլացի մանուկ է»: Երեխայի քոյթը տեսնելով, որ թագաւորի աղջիկը ողորմած է շատ, համարձակեցաւ, մօտեցաւ նրան և ասաց. «Իշխանուհի, թէ կըհրամայես, ես կըբերեմ մի Իսրայէլացի կին, որ սնուցանէ երեխային»: «Բարի է, ասաց թագաւորի աղջիկը, «Ես քեզ դրա համար կըվարձատրեմ»:

Ի՞նչպիսի ուրախութեամբ, ի՞նչպիսի սրտանց շնորհակալութեամբ բարձրացրեց խեղճ մալրն իր աչքերը դէպի երկինք, երբ կրկին տեսաւ իր փոքրիկ երեխային իր գրկումը: Նա կերակրեց նրան և երբ փոքր ինչ մեծացաւ, տարաւ Փարաւոնի աղջկայ մօտ, որ կրթեց նրան իր որդու պէս և անուանեց Մովսէս, որ նշանակում է ջրից հանած:

34. Մովսէսը Յոթորի մօտ.

Մովսէսը երբ մեծացաւ, հզօր էր թէ մարմնով և թէ հոգով և սովորած էր եգիպտացոց բոլոր իմաստութիւնը: Բայց չնալելով այն առատութեան, բախտաւորութեան, որոնցով նա պատաժ էր, նա չէր մոռանում իր նեղացած եղբայրներին՝ Իսրայէլացիներին: Նա չէր կամենում թագաւորի որդի անուանուել. նա աւելի լաւ էր համարում Աստուծոյ ժողովը-դի աղքատութեանը մասնակից լինել, քան թէ վայելել մեղսալից քաղցրութիւններ Փարաւոնի տան մէջ: Նա կուպաշտների մէջ չմռացաւ ճշմարիտ Աստծուն և բոլորովին կարեկից էր նեղացած Իսրայէլացիների խեղճ վիճակին:

Մի անգամ, երբ ալցելութիւն արաւ իր եղբայրներին, տեսաւ, որ մի եգիպտացի անողորմաքար ծեծում էր իսրայէլացուն: Մովսէս ամեն կողմը նայեցաւ, տեսաւ որ ոչ ոք չկայ, իսկոյն իր ազգակցին պաշտպան կեցաւ ու սպանեց ե-

դիպտացուն և ծածկեց նրա մարմինն աւագի տակ, կարծելով թէ ոչ ոք չի իմանալ նրա այս մարդասպանութիւնը. բայց Փարաւոնն իմացաւ և Մովսէսը գուցէ իր ազգի սիրոյն համար իր կեանքը կորցնէր, եթէ Եգիպտոսից չփախչէր:

Եգիպտոսից փախչելով գնաց Մադիամու երկիրը և ճամապարհից դադրած լինելով, նստաւ մի ջըհորի մօտ: Այս տեղին մօտ բնակւում էր մի բարեպաշտ քահանայ, որ եօթն աղջիկ ունէր, որոնք արածեցնում էին իրանց հօր խաշները: Երբ-այս աղջիկները ջուր էին հանում, որ ջրեն իրանց ոչխարները, եկան ջըհորի մօտ կոպիտ հովիւներ, որոնք ուզում էին աղջիկներին դուրս անել, որ առաջ իրանց ոչխարներին խմացնեն: Մովսէսը, որ միշտ թուլերին ու նեղացածներին պաշտպանում էր, հովիւներին չթողեց խստութիւն գործ դնել և օգնեց աղջիկներին իրանց խաշները ջրելու:

Այն ժամանակ Յոթորի աղջիկները ոչխարները տունքեցին: Երբ հայրը նրանց տեսաւ, հարցըեց. «Ինչո՞ւ համար այսօր այսպէս շուտ յետ դարձաք»: «Եգիպտոսից եկած մի անծանօթ մարդ օգնեց մեզ ջուր հանելու և մեր ոչխարները ջրելու», պատասխանեցին աղջիկները: Հայրը շատ բաւական մնաց օտարականի այսպիսի գործքով և հարցըեց աղջիկներին. «Ո՞ւր է այն օտարականը, ինչո՞ւ չկանչեցիք նրան մեր տուն. գնացէք շուտով եւ հրաւերեցէք նրան մեզ մօտ ընթրիքի»: Մովսէս գնաց Յոթորի մօտ, և որովհետև լաւ մարդիկը շուտով բարեկամանում են մէկ-մէկու հետ, ուստի Մովսէս շուտ բարեկամացաւ Յոթորի հետ, որ նրան կին տուեց իր աղջկանը՝ Սեփովըալին:

աճյափ ժաւու կրուս մնելուն ապն բնի ծառ և մաստարձը
այս աշխատանքուն է 35. Անկեզ Մորենին.

Մովսէս արածեցնում էր իր աներոջ՝ Յոթորի խաշները։
Մովսէս յաճախ մտածում էր իր եղբայրների՝ իսրայէլացի-
ների վրայ և աղօթք էր անում Աստծուն, որ ազատէ նրանց
եգիպտացոց ծառայութիւնից։

Մի անգամ Քորեք լեռան ստորոտում, ոչխարներն ա-
րածեցնելիս տեսաւ Մովսէս մի մորենի, որ այս տեղերում դուրս
է գալիս, պատած կրակով։ Կրակը վառւում էր, բայց թուլին
անվնաս էր։ Մովսէս մօտեցաւ առաւել, որ լաւ տեսնէ այս
հրաշալի երեոյթը։ Յանկարծ թփի մէջից նա լսեց ձախն,
որ կանչում էր։ «Մովսէս, Մովսէս»։ — «Ես եմ, Տէր, Բնէ է»,
պատասխանեց Մովսէսը։ «Ես եմ քո հայրերի Աստուածն,
Աքրահամի Աստուածն, իսահակի և Յակովի Աստուածն»,
ասաց ձախնը։

Մովսէս, լի երախասագիտութեամբ և յարգութեամբ ծած-
կեց իր երեսը։ Աստուած շարունակեց. «Ես տեսնում եմ ժո-
ղովրդեանս թշշուառութիւնը Եգիպտոսի մէջ։ Լսում եմ նրա
աղաղակը, և հասաւ ինձ նրա աղօթքը։ Ես կամենում են ա-
զատել նրանց եգիպտացոց ձեռքից, և մտցնել գեղեցիկ ըն-
դարձակ երկիրն, ուր բխում է մեղք և կաթ, այն է Քանա-
դարձակ երկիրը։ Ես զրկում եմ քեզ Փարաւոնի մօտ, որ հա-
նես իմ ժողովուրդս Եգիպտոսից»։ Մովսէս խոնարհութեամբ
ասաց. «Տէր Աստուած, ես ով եմ, որ համարձակուեմ թագա-
ւորի առաջ դուրս գալ և իսրայէլացիներին հանել Եգիպ-
տոսից. բայց իսրայէլացիներն էլ չեն լսիլ ինձ և չեն հաւա-
տալ, որ ինձ Աստուած յայտնուել է։ Աստուած ասաց. «Ալդ է
Բնէ է ձեռինդ»։ — «Գաւազան», պատասխանեց Մովսէս. «Գցէր
դրան գետնի վրայ»։ Մովսէս զցեց գաւազանը գետնի վրայ և
գաւազանը դարձաւ օձ։ Մովսէս վախեցաւ և կամենում էր
փախչել. բայց Աստուած ասաց նրան. «Ձգիր ձեռք և վեր

առ օձին»։ Մովսէս ձգեց ձեռքը, վեր առաւ օձին. և նա կըր-
կին ասաց նրան. «զիր ձեռքդ ծոցդ»։ Մովսէս ձեռքը ծոցը,
դրաւ ու երբ հանեց, տեսաւ, որ ձեռքը ծածկած է բորով.
բայց երբ երկրորդ անգամ տարաւ ծոցը, Աստուածոյ
հրամանով հանեց բոլորովին առողջ։ «Ալս հրաշքները, ա-
սաց Աստուած, կը հաւատացնեն իսրայէլացիներին, որ նրանց
հայրերի Աստուածը յայտնուել է քեզ»։ «Տէր Աստուած», ա-
սաց Մովսէս, «Ես ծանրալեզու եմ, դժուարութեամբ եմ ար-
տասանում բառերը»։ Աստուած ասաց. «Ով տուեց մարդուն
բերան, ով է մարդուս կոյը կամ ականիէ անում, ոչ արդեօք
ես. գնա, Ես կլինիմ քո բերանդ. Ես կըսովորցնեմ, ինչոք
պէտք է խօսես»։ Մովսէսը, «Որ դեռ էլի իրան ընդունակ
չէր համարում այս մեծ գործին, ասաց. «Տէր Աստուած,
խնդրում եմ Քեզ, զրկիր մի ուրիշին»։ Աստուած ասաց նը-
րան. «Քո եղբայրը՝ Ահարոնը ճարտարախօս է, նա կը հան-
գիպի քեզ ուրախութեամբ. դու կըդնես Իմ պատգամներս
նրա բերանն. նա քո տեղ կըխօսի ժողովրդի հետ»։ Մովսէս
հպատակեցաւ. նա գնաց Յոթորի մօտ և խնդրեց, որ իրան թող-
նէ Եգիպտոս երթալու. Յոթորն ասաց. «գնա խաղաղու-
թեամբ»։ Մովսէս նստացրեց էշերի վրայ իր կնոջն ու երկու
որդոցը, առաւ իր գաւազանը և ճանապարհ ընկաւ. Աս-
տուած ասաց Ահարոնին. «գնա անապատ քո եղբօրդ՝ Մով-
սէսի առաջ»։ Ահարոն շուտ գնաց և զրկելով համբուրեց
նրան, սրտանց ուրախացած. Մովսէս պատմեց նրան ինչու
համար որ Աստուած իրան զրկեց և երկուսը միասին գնացին
իսրայէլացիների մօտ. Ահարոն յայտնեց Աստուածոյ հրամանը
և Մովսէս արաւ հրաշքներն, որ Աստուած նրանց ցոյց
տուեց. Բոլոր ազդը հաւատաց և երկիւղածութեամբ երկրպա-
գեց Աստծուն։

36. Եգիպտոսի տասն պատիճները.

Այն ժամանակ գրեթէ բոլոր աշխարհքն ընկղմած էր կռապաշտութեան և ամեն կերպի սնոտիապաշտութեան մէջ։ Եգիպտոսն այս սնոտիապաշտութիւնների աղբերն էր։ Եգիպտացիները, ոչ միայն երկնալին լուսաւորներին էին երկրպագութեւն տալիս, այլև կենդանիներին էլ անդամ։ Նրանք պաշտում էին կուռքեր և կարծում էին, թէ սրանք լսում են իրանց աղօթքներն ու կարող են օգնել իրանց։ Աստծուն հաճոյ թւրացաւ իրան յայտնել հրաշալի դիպուածներում մարդոց, որ սրանք ճանաչեն վերջապէս ճշիարիտ մի Աստուծուն, որ է երկնքի և երկրի Արարիչը։ «Եգիպտացիներն ինձ կըճանաչեն Աստուած ամենազօր», ասաց նա Մովսէսին, «կըձգեմ Իմ ձեռս և կըհանեմ նրանցից իսրայէլացիներին։

Երկու ծերունիները՝ Մովսէս ութսուն տարեկան և Ահարոն ութսուն և երեք տարեկան, յայտուեցան Փարաւոնի առաջ։ Նրանք յայտնեցին նրան Աստուծոյ կամքը։ «Աստուած ասաց», կըկնեցին նրանք, «թող Իմ ժողովրդիս»։ Փարաւոնը, հպարտութեամբ փքուած, պատասխանեց. «Ո՞վ է այն Աստուածն, որին կամենում էք, որ ես հպատակեմ. ես չեմ ճանաչում ձեր Աստծուն և ձեր աղքին էլ չեմ թողնիլ։»

Մովսէս, կամենալով համոզել Փարաւոնին զցեց նրա առաջ իր գաւազանը, որ օձ դարձաւ. նա ցոյց տուեց իր բորոտ ձեռքը և կըկին բժշկեց. Եգիպտացի քուրմերն էլ արին միենոյնը, միայն Մովսէսի օձը կերաւ Եգիպտացիների օձերին։ Փարաւոնը չհամոզուեցաւ այս հրաշքներով և շարունակեց չարչարել իսրայէլացիներին առաջուանից աւելի։

Մովսէս Փարաւոնի առջևը խփեց գաւազանով նեղոս գետի ջրին, և ջրերը ոչ միայն նեղոս գետում, այլև Եգիտուուի ամեն ջրհորում և լճում դարձան արիւն. ոչ ոք չէր

կարողանում խմել և բոլոր ձկները սատակեցան։ Բայց Փարաւոնի սիրտը չկակղեցաւ։

Մովսէս ձգեց իր գաւազանը Եգիպտոսի գետի, աղբիւրների և լճերի վրայ և այս ջրերից դուրս եկան անթիւ բազմութեամբ գորտեր, որոնք ծածկեցին բոլոր երկերը. թագաւորի պալատն, ամեն տներն, անկողինները, շտեմարաններն, ամեն բան լքցուեց գորտերով։ Փարաւոնը խոստացաւ թողնել իսրայէլացիներին. բայց հազիւ գորտերը Մովսէսի նշանով ջնջուեցան թէ ոչ, Փարաւոնի սիրտը կըկին խստացաւ։

Մովսէս խփեց գաւազանով գետնին և բոլոր աւազն ու փոշին դարձան մուն (մոծակ), բացի Գեսէմ երկրից, ուր բնակում էին իսրայէլացիները. բոլոր Եգիպտոսի մէջ մունը չարչարում էր մարդոց և այլ կենդանիներին. իսկ հպարտ Փարաւոնը չէր փափկում։ Եգիպտացոց քուրմերն էլ աշխատում էին միենոյն անել, բայց չկարողացան և ըստիպուեցան ասել Փարաւոնին. «Այդ Աստուծոյ ձեռն է։»

Յետոյ շանաձանճով լքցըց արքունի պալատն և Փարաւոնի ծառաների տները, դաշտերն ու ամեն բան, ինչոր կար գաշտերում։ Այն ժամանակ Փարաւոնը խոստացաւ Աստուծոյ ժողովրդին թողնել, բայց երբ Եգիպտոսն ազատուեցաւ այս պատից ևս, թագաւորն էլի չկատարեց իր խոստումն։

Սարսափելի մահ երկեցաւ կենդանիների մէջ բոլոր Եգիպտոսում, բացի Գեսէմի երկրից։ Ուղտերն, էշերն, եղները ոչխարները, ամենը մեռնում էին. բայց Փարաւոնը մնում էր էլի անհամոզելի։

Մովսէս վեր առաւ մոխիլ և ցանեց օդում Փարաւոնի առջև։ Կեղը և խաղաւարտը ծածկեցին բոլոր Եգիպտացիներին և բոլոր նրանց մնացած կենդանիներին. բայց Փարաւոնն այս էլ բանի տեղ չդրաւ։

Մովսէս բարձրացըց իր գաւազանը դէպի երկնք և ահա վերկացաւ սաստիկ մըրիկ, ինչպիսին երբէք չէր եղած

Եղիպտոսում. գոռում էր սաստիկ գոռոցըն, անընդհատ փալում էր փայլակն և լուսաւորում էր թանձը ամպերով ծածկած երկինքը. եկաւ այնպիսի սաստիկ կարկուտ, որ դաշտերի բոլոր բոլուերն ու ծեռերն ջարդուեցան և շատ մարդիկ, որոնք տանից դուրս էին, կոտորուեցան: Փարաւոնը աղաղակեց, «Ես մեղանչեցի. արդար է Աստուածն, որ պատժում է ինձ և իմ ազգիս. աղօթք արէք, որ այս սարսավելի մըրիկը վերջանալ, ես կըթողնեմ Խորայէլացիներին»: Բայց հազիւերկինքը պարզեցաւ թէ ոչ, Փարաւոնի սիրտը կըկին խըստացաւ:

Մովսէս էլի մի անգամ ձգեց իր գաւազանը Եղիպտոսի վրան և երևեցաւ անթիւ բազմութեամբ մարախ օդի մէջ և ծածկեց երկիրն այնպէս, որ ոչինչ չէր երևում, դաշտերում և ծառերի վրայ ոչ մի կանաչ տերև չմնաց. այն արտերը, կանաչներն ու բոլուերը, որոնք կարկուտից ազատուել էին բոլորովին ջնջուեցան մարախից: Փարաւոնը խնդրեց ողորմութիւն, խոստացաւ կատարելու ամեն բան, ինչ-որ Մովսէս պահանջէր, բայց իր խօսքը չպահեց:

Այնպիսի խաւար պատեց բոլոր Եղիպտոսի վրայ, որ երեք օր շարունակ ոչինչ չէր կարելի տեսնել: Միայն Գեսէմի երկրում ցերեկով փայլում էր արեգակն և դիշերը լուսաւորում էր լուսինն ու փայլում էին աստղերը: Փարաւոն սաստիկ բարկացած ասաց Մովսէին. «Ճեռացիր աչքից. Եթէ ես քեզ մէկ տեղ տեսնեմ, կըհրամայեմ քեզ սպանել»:

37. Եղիպտոսից դուրս գալը. Տախտակը

Մովսէս Աստուծոյ հրամանով վերջին անգամ գնաց Փարաւոնի մօտ և յայտնեց նրան յետագալ խօսքերն. «Աստուած ասաց, եթէ գիշեց կըլինի, բոլոր Եղիպտոսի մէջ ամեն անդրանիկ կըմեռնի, թագաւորի որդուց սկսած մինչեւ աղախնի որդին. նոյնպէս էլ անասունների անդրանիկները: Եղիպտոսի բոլոր երկրում կըլինի ողբ, որպիսի երբէք չէ եղած. բայց Խորայէլացոց մէջ ամեն բան յաջողակ կըլինի: Այս վերջին հրաշքը ցոյց կըտայ ձեզ, թէ որպիսի զանազանութիւն է զնում Աստուած Եղիպտոսացոց և Խորայէլացոց ազգի մէջ»: «Սրանից լետ», շարունակեց Մովսէս ասելով, «բոլոր քո ծառաներդ, բոլոր հպատակներդ կըգան ինձ մօտ և ոտերս ընկնելով կտսեն՝ գնա այս տեղից դու և քո ազգդ, և ես դուրս կերթամ»: Փարաւոնը սարսափեցաւ: Գիշերը մօտենում էր: Աստուած Մովսէսի ձեռքով Խորայէլացիներին յետագալ հրամանը տուեց. Խորայէլացիների իւրաքանչիւր ընտանեաց գլխաւորը պէտք է մորթէր մի ոչխար մի տարեկան, անարատ, այսինքն առանց բժի և վնասի և խորովէր կրակի վրայ ամբողջ՝ ոսկորները չկորորտած: Ամեն տանտիկին, պէտք է պատրաստէր խմոր, որ եփէ բաղարջ. այս վերջին ընթրիքն Եղիպտոսի մէջ պէտք է լինէր զօրացուցիչ կերակուր ճանապարհի համար և միենոյն ժամանակ յիշատակ Աստուծոյ հովանաւորութեան: Որ ընտանիքը փոքրաթիւ էր, պէտք է հրաւիրէր դրացին, որովհետեւ ընթրիքից ոչինչ չպէտք է մնար: Խորայէլացիներին հրամայած էր ուտել այս ընթրիքը կանգնած, ճանապարհի շորերով և գաւազանը ձեռներին: Այդ ոչխարի արիւնովը սրսկած էին ամեն Խորայէլացիների դուները: Մահուան հրեշտակը, որ կոտորեց ալս գիշեր բոլոր Եղիպտոսի անդրանիկներին, անց էր կենում

Եբրայեցոց տների մօտով, որոնք զատկի գառնի արիւնով նշանակած էին:

Կէս գիշերն եկաւ. Իսրայէլացոց տներում կատարում էին զատիկն, այսինքն ուտում էին պասէքի գառը: Այս ժամանակ կատարում էր Եգիպտացոց տուած վերջին պատիժն Աստուծոյ. ամեն անդրանիկ ընտանիքի մէջ մեռաւ թագաւորի գահի ժառանգից սկսած մինչև վերջին աշխատաւորինը: Նմանապէս սատակեցան և անսառների անդրանիկներն: Փարաւոնը, նրա ժառաներն ու բոլոր ազգը պատաժ էր սարսափանքով: Ողորմելի աղաղակ, լաց և ողբ լսելի եղան յանկարծ բոլոր Եգիպտոսի մէջ: Ոչ մի տուն չէր խնայած. ամեն տան մէջ մեռել կար: Փարաւոն գիշերով հրամայեց կանչել Մովսէսին և Ահարոնին և ասաց նրանց. «Շուտով հեռացէք իմ երկրից, դուք և բոլոր Իսրայէլացիներդ: Առէք ձեր հետ բոլոր ձեր անսառներն էլ և ձեր դուրս գալից առաջ օրհնեցէք ինձ»: Եգիպտացիները ստիպում էին Իսրայէլացիներին, որ շուտով հեռանան: «Շտապեցէք, ասում էին նրանք, թէ չէ, մենք ամենքս կըկոտորուինք»: Իսրայէլացի կանայք ստիպուեցան եփել հացը չխմորուած և շատերն էլ չեփած առան հետները: Միայն չմոռացան հետներն առնելու Յովսէփի ոսկերներն ևս:

Եգիպտացոց ծառայութիւնից ազատուելու լիշտակի համար Իսրայէլացիները մինչև այժմ տօնում են պասէքը, այսինքն ուտում են գիշերով պասէքի գառն և բոլոր շաբաթը բաղարջ: Այս կատարում են նրանք գարունքի առաջին ամսի կիսին, որովհետեւ այս ժամանակ գուրս եկան նըրանք Եգիպտոսից. բայց Եբրայեցոց պասէքն այժմ ոչինչ նշանակութիւն չունի. նա օրինակ էր ապագային և նրա տեղը բոնեց այժմ իսկ ճշմարիտ քրիստոնէական պասէքը: Պասէքի գառն, որի արիւնը ազատեց Եբրայեցիններին մահուան հրեշտակի կոտորածից, օրինակ էր Ամենամաքուր Գաուին՝ Յի-

սուս Քրիստոսին, որի արիւնովը հաւատացողներն ազատում են յաւիտենական մահից:

Յակովը մտաւ Եգիպտոս եօթանասունուհինդ հոգով: Չորս հարիւր երեսուն տարի մնաց նրա ազգն Եգիպտոսում. և երբ Մովսէս հանեց Իսրայէլացիներին, նրանք վեց հարիւր հաղար հոգի էին՝ համարելով կանանց և երեխաներին:

38. Կարմիր ծովն անցնելը.

Այսպէս ազատեց Աստուած Իսրայէլացիներին ծանը ծառայութիւնից: Աստուած ինքն ցոյց էր տալիս նրանց ճանապարհը. հրաշալի ամպն առաջնորդում էր Աստուծոյ ժողովրդեան. ցերեկով ամպն էր խաւարին, որ պաշտապանում էր նրանց արեգական ճառագայթներից և գիշերով երեսում էր նա հրեղէն և լուսաւորում էր նրանց ճանապարհը: Երբ Իսրայէլացիներն, ամպին հետևելով, հասան կարմիր ծովի ափին, բանակ գցեցին մի հովտի մէջ:

Բայց այս միջոցին Փարաւոնի և նրա ազգի միտքը փոխեցաւ: «Այս ի՞նչ արինք մենք», ասում էին նրանք, «ի՞նչութողինք այնքան բազմութիւնը մեր ծառայութիւնից»: Փարաւոնն ասաց. նրանց պատում է անապատը, նրանք չեն գտիլ ճանապարհը. հասնենք հետևերից»: Նա շուտ հրամայեց պատրաստել վեց հարիւր լաւ պատերազմական կառքեր և բոլոր իր զօրքով, բոլոր հեծեալներով ու զօրպարներով Իսրայէլացիների հետևից ընկաւ և հասաւ նրաց Կարմիր ծովի ափի մօտ:

Գիշերը մօտենում էր. Իսրայէլացիները պատած էին ամեն կողմից. առաջներին ծովն էր և ետևներին Փարաւոնի անթիւ զօրքն: Ահը պաշարեց նրանց: Մէկ քանիսն աղօթք էին անուած՝ Աստուածանից օգնութիւն խնդրելով. իսկ իւսները պարսաւում էին Մովսէսին ասելով. «Միթէ. փոքը էր գե-

ըեղմանի տեղ մեզ համար Եգիպտոսում, ինչու բերեր մեզ այստեղ, որ ամենքս անապատում կորչենք: Աւելի լաւ էր մեզ համար, որ ծառայէինք Եգիպտացիներին, քան թէ այստեղ մեռնէինք». այսպէս անհանգիստ է լինում մարդու սիրտ, եթէ նրա լոյսն Աստուծոյ վրայ հաստատ չէ:

«Ոչինչ քանից մի վախենաք», ասում էր Մովսէս. «Դուք կըտեսնէք, ինչպիսի հրաշք կըգործէ Աստուծած ձեր ազատութեան համար: Շուտով այս Եգիպտացիներն, որոնք այնպէս հպարտ կանգնած են ձեր առաջին, յաւիտեան կըկորչեն ձեր աչքից»: Այսպէս հանդարտ և հանգիստ լինում է այն մարդու սիրտը, որ իր բոլոր լոյսը դնում է Աստուծոյ վրայ:

Այն ժամանակ Աստուծած ասաց Մովսէսին. «Թող վեր կենան Խորայէլացիներն ու շարունակեն իրանց ճանապարհը. իսկ դու առ գաւազանդ և ձգիր ձեռդ ծովի վրայ. ջուրը երկու կըբաժանուի և Խորայէլացիները կանցանեն ցամաքով: Եգիպտացիները կիմանան, որ Ես եմ Տէր Աստուծը: Ես ցոյց կըտամ Իմ զօրութիւնս Փարաւոնի, նրա կառքերի և Հեծեալների վրայ»: Ամպը բարձրացաւ և կանգնեցաւ Եգիպտացիների և Խորայէլացիների մէջ. նա փայլում էր կրակի պէս և ցրում էր գիշերային խաւարն, իսկ Եգիպտացիների կողմը պատած էր խաւար: Այսպէս գիշերով երկու բանակները մէկ-մէկու չկարողացան հանդիպել:

Մովսէս ձգեց իր գաւազանը Կարմիր ծովի վրայ և ջուրը բաժանուեցաւ երկու մասի: Սաստիկ հոգմը ցամաքացրեց ծովի յատակը և բոլոր գիշեր Խորայէլացիներն անց էին կենում ծովի ցամաքած յատակի վրայով: Նրանք դնում էին և երկու կողմում կանգնած էին պատերի պէս բարձրացած ջրերը: Երբ լուսացաւ, Փարաւոնը, տեսնելով որ Խորայէլացիներն անց են կենում ծովի միջով ինչպէս ցամաքի վրայ, յանկարծ ընկաւ նրանց ետեւից և իր կառքերովն, այրուձիով և բոլոր զօքով երբ հասաւ մէջտեղը, այն ժամանակ վեր կար-

ցաւ սաստիկ մըրիկ, եկան ամպերը, գուաց գուացքը, փայլեցան փայլակները: «Յետ դառնանք, յետ, աղաղակեցին սարսափած Եգիպտացիները. Աստուծած ինքը պաշտպանում է իսրայէլացիներին, փախչենք Նրա բարկութիւնից»: Բայց Աստուծած հրամայեց Մովսէսին, որ բոլոր Խորայէլացիներով անց էր կացել միւս ափը, դարձնել իր գաւազանը Եգիպտացիների դէմ: Մովսէսը ձգեց իր ձեռքը և ծովը սարսափելի ձալնով թափուեցաւ Եգիպտացիների վրայ, ծածկուեցան կառքերն, այրուձին և բոլոր զօքը, ոչ մի Եգիպտացի կենդանի չմնաց:

Այն ժամանակ Մովսէս բոլոր Խորայէլացիների հետ միասին երգեցին Աստուծոյ շնորհակալութեան երգը, ասելով. «Օրհնենք Տիրոջը, որովհետեւ փառաւորուած է նու: Օգնական և պաշտպան է նա ինձ. Նա եղաւ իմ վրկութիւնն. Նա է իմ Աստուծը, և փառաւորում եմ Նրան. իմ հօրս Աստուծն է նա և բարձրացնում եմ Նրան. . .»: Մովսէսի քոյրը Մարիամ ուրիշ Եգիպտացի կանանց հետ միասին առանձին պար կազմելով, կրկնում էր միւսոյն խօսքերը:

39. Հաց Երկնքից և ջուր քարից.

Երբ Խորայէլացիներն անցան Կարմիր ծովը, բանակ գցեցին ընդառնակ, անպտղաբեր և անբնակ անապատում. մի տեղ չէր երկում ոչ ցանք և ոչ խրճիթ: Խորայէլացիները մանաւանդ գտում էին ջրի պակասութիւն: Մի անգամ գլուխան նրանք ջուր, միայն դառն էր: Աստուծած հրամայեց Մովսէսին դնել նրա մէջ մի կտոր փայտ, որից ջուրը բոլորովին լաւացաւ և խմելու ջուր դարձաւ: Եգիպտոսից դուրս գալից երեք օր յետ Խորայէլացիների հացը պակասեցաւ և չգիտէին որտեղից առնեն հաց:

Այն ամեն հրաշքներից յետ, որ Աստուած նրանց ազատութեան համար գործեց, կարելի էր արդեօք, որ Իսրայէլացիներն երկմտէին Աստուծոյ ողորմութեան մասին: Բայց նրանք, բոլորովին իրանց յոյսն Աստուծոյ վրայ դնելու տեղ, տրտնջում էին և ասում Մովսէսին ու Ահարոնին. «Ինչո՞ւ չմնացինք մենք Եգիպտոսում: Մեզ համար այնտեղ լաւ էր, մենք հաց շատ ունէինք և մեր առաջը դրած էին մսով լիք կատաները: Դուք բերիք մեզ անապատ, որ բոլոր ազգը կոտորուի սովից»: Զնայելով որ այս խօսքերը շատ անմիտ և ապերախտ խօսքերը էին, էլի Աստուած մեղքացաւ այս անգամ էլ այդ փոքրոգի ազգին, նա ասաց Մովսէսին. «Ես կը դրկեմ ձեզ հաց երկնքից, թող ժողովուրդը ամեն առաւօտ դուս գայ վրաններից և հաւաքէ հաց, ինչքան իրան հարկաւոր է: Թող նրանք տեսնեն, որ Ես եմ ձեր Տէր Աստուածը»: Մովսէս և Ահարոն յանդիմանում էին ժողովրդին ասելով. «Մենք ի՞նչ ենք. դուք տրտնջում էք ոչ թէ մեր վրայ, այլ իրան Աստուծոյ վրայ:

Առաւօտը վաղ, երբ ցօղն իջաւ, բոլոր անապատը, կարծես թէ, ծածկած էր ձիւնով, սրանք էին մանր սպիտակ հատիկներ, նման գինձի և ունէին մեղրով խառնած ալիւրի համ: «Այս ի՞նչ է», աղաղակեցին Խորայէլացիները»: «Այս այն հացն է, որ ձեզ դրկում է Աստուած», պատասխանեց Մովսէս: «Հաւաքեցէք, ինչքան ամեն մէկիդ բաւական է մի օրւան համար»: Այս կերակուրը կոչւում էր մանանայ: Խորայէլացիները հաւաքում էին նրան ամեն առաւօտ և կերակրում էին նրանով:

Մանանան մի օրից աւելի չէր պահւում, միայն այն մանանան, որ շաբաթ օրւան համար հաւաքում էին, դիմանում էր երկու օր: Շաբաթ օրը չէր իջնում և այս պատճառով Խորայէլացիները շաբաթի նախընթաց օրը պատրաստում էին երկու օրւան համար: Խորայէլացիներն առաջ գնալով հասան ուրիշ անապատ

տեղ, ուր բոլորովին ջուր չկար: Ծարաւը նրանց նեղում էր և նրանք աղօթքով դէպի Աստուած դառնալու տեղը ըսկան էլի տրտնջել Մովսէսի վրայ. «Ճուր մեզ ջուր», կանչում էին նրանք, «մենք, մեր որդիքը և մեր ամեն անասունները մեռնում ենք ծարաւից. ինչո՞ւ հանեցիր դու մեզ Եգիպտոսից»:

«Դուք էլի մեղանչում էք Աստուծոյ դէմ», ասում էր նրանց Մովսէս: Բայց ծարաւից նեղացած ժողովուրդը չէր լսում նրա խօսքերը և շարունակում էր գոռալ և ապստամբիլ: Աստուծոյ երկայննամութիւնը գեռ չկտրուեցաւ. Նա մեղքացաւ նեղացած ժողովրդին և ասաց Մովսէսին. «Առ գաւազանդ և գնա կանգնիր Խորայէլացիների առջեւը. դու կը տեսնես վէմ, խփիր նրան գաւազանով քարին և ջուր կը բխէ քարից և կը ջրէ բոլոր ժողովրդեան»:

Մովսէս մօտեցաւ վէմին և բոլոր ժողոված ազգի առաջին խփեց իր գաւազանով քարին և ահա առատ քաղցր ջրի աղբիւր սկսաւ բղիսել քարից:

Սրանից խմեցին բոլոր Խորայէլացիներն ու իրանց անասունները: Ամենքն ուրախացան և վառաւորում էին այսպիսի հրաշքը:

40. Տասն պատրիրանները.

Խորայէլացիները հասան Սինա լեռան մօտ: Մովսէս երբ ելաւ սարի գլուխն, Աստուած ասաց նրան. «Ասա Խորայէլացիներին, դուք տեսաք ինչպէս Ես լինցեցի Եգիպտացիներին և ձեզ կարծես արծուի թևերի վրայ հանեցի Եգիպտոսից: Այժմ, եթէ կը լսէք Իմ ձայնիս, կը պահէք Իմ ուխտս, Դուք կը լինիք Իմ ընտրեալ ազգս. բոլոր աշխարհն Իմ է. Եթէ դուք կը լսէք Իմ խօսքերս և կը պահէք Իմ ուխտս, դուք

կըւինեք Իմ սուրբ թագաւորութիւնս, Իմ քահանայութիւնս, ընտրեալ և սուրբ ժողովուդս. Իմ այս խօսքերս ասս Խսրայէլացիներին»: Մովսէս Երկնեց ժողովրդի առաջին Աստուծոյ խօսքերն և բոլոր Խրայէլացինիրը միաձայն աղաղակեցին, «մենք պատրաստ ենք կատարելու Աստուծոյ ամեն Հրամանները»:

Աստուած ասաց Մովսէսին. «Գնա ժողովրդի մօտ, սրբիր ամենին, թող լուսանան իրանց շորերն և երրորդ օրը պատրաստ լինին: Երբ փողի ձայն լսուի, թող մօտենան սարին»: Ամենքը սրբուեցան, Հագան լուսացած շորերն ու պատրաստուեցան մեծ և սուրբ Հանդիսի Համար:

Երրորդ օրը, Երբ լուսացաւ, Խսայէլացիները տեսան փալւակներ և լսեցին գոռոցքի ձայնը. թանձր ամպերը ծածկեցին Սինայի սարը, լսուեցաւ փողի ձայն. ժողովրդին պաշարեց Երկիւդ և ահ, Մովսէս ժողովրդին բանակից Հանեց Աստուծոյ առաջ: Նրանք մօտեցան սարի ստորոտին. բոլոր սարը ծխում էր, վառում էր և շարժում: Փողի ձայնը հետզհետէ զօրանում էր:

Յետոյ ամեն բան Հանդարտեցաւ. Աստուծոյ ձայնը լայտնի լսում էր բոլոր ժողովուրդը:

1. «Ես եմ քո Տէր Աստուածդ. մի ունենար քեզ ուրիշ աստուածներ բացի ինձանից»:

2. «Մի շինիր քեզ կուռքեր, և ոչ մի նմանութիւն՝ ոչ երկնքում և ոչ երկրիս վրայ, ոչ ջրերում և ոչ գետնի տակ: Մի երկրպագիր և մի լսիր նրանց»:


3. «Սնոտի բաների Համար մի լիշիր Աստուծոյ անունը»:

4. «Միտր պահիր շաբաթ օրը, որ սուրբ պահես նրան. վեց օր գործիր և ամեն քո բաներդ արա, եօթներորդ օրը՝ շաբաթ օրը նուիրիր քո Աստծուդ»:

5. «Պատուիր հօրդ և մօրդ և քեզ բարի կըլինի ու երկարակեաց կըլինիս երկրիս վրայ»:

6. «Մի սպանիր»:

մասն «Մի չնար»: Վրձնի զնուան և մասն գնամիտուրք վեան 8. «Մի գողանար»: Վրձնադրուալ լեզառան ասքատուն սորի 9. «Քո ընկերոջդ դէմսուտ վկայութիւն մի տար»: այս շաբաթ ու մասն բացառ ապօպատաւ ու ամամիւն անունուած անունուած անունուած:



10. «Քո ընկերոջդ կնոջ մի ցանկանար. մի ցանկանար նրա արտին, ոչ նրա ծառալին, ոչ աղախնին, ոչ եզին, ոչ էշին և ոչ անասուններին և ամեն բանին, ինչ-որ պատկանում է նրան»:

Բոլոր ժողովուրդը լսում էր Աստուծոյ և փողի ձայնը. բոլոր ազգը տեսնում էր բոցն ու սարը, որ ծխում էր: Նա կանգնած ժողում էր և սարսում: «Մի վախենաք», ասաց Մովսէս, «Աստուած ձեզ դէպի բարին է առաջնորդում,

հպատակեցէք նրան և փախէք մեղքից»։ Ազգը միաձայն խոստացաւ կատարել պատուիրանները։ Այս անցքի լիշտակի համար Խորայէլացիները մինչև այժմ տօնում են Պէնտէկոստէն, որովհետև այս պատահեցաւ Պասէքից լիսուն օր յետոյ։

41. Ոսկի Հորթը.

Սրանից յետոյ Մովսէս գնաց Սինայի գլուխն, ուր Աստուած տուեց շատ ուրիշ օրէնքներ էլ Խորայէլացիներին և իր տասն պատուիրաններն՝ երկու քարէ տախտակների վրայ գծագրած։ Մովսէս մնաց Սինային գլխին Աստուծոյ հետխօսելով քառասուն գիշեր։

Ժողովուրդը նրա բացակայութեան ժամանակ վճռեց քանդել իր ուխտն Աստուծոյ հետ։ Խորայէլացիներն ուզում էին, եգիպտացոց օրինակով, ունենալ կուռքեր։ Մենք ուզում ենք առաջ գնալ, ասում էին նրանք Ահարոնին. զինքը մեզ համար աստուածներ, որոնք մեզ առաջնորդեն. մենք կրտանենք նրանց մեր ամբոխի առջեր. մենք չգիտենք, ինչ եղաւ Մովսէսի հետ, որ մեզ Եգիպտոսից հանեց։ Ահարոնը վախեցաւ ժողովրդին ընդդէմ խօսելու և ասաց. «Իերէք ինձ ձեր կանանց և աղջիկների ոսկի գինդերն ու մատանիները»։ Խորայէլացիները շուտ հաւաքեցին իրանց կանանց և աղջիկների օղերն ու մատանիներն և բերին Ահարոնի մօտ, որ բերած ոսկուց մի հորթ ձուլեց։ Երբ սրան տեսաւ, բոլոր ազգն աղաղակեց. «Ահա այն Աստուածն, որ որ մեզ հանեց Եգիպտոսից»։ Նրանք ստիպեցին Ահարոնին կանգնել սեղան և զոհել ոսկի հորթին. ուրախանում էին և պար էին գալիս նրա չորս կողմում։

Մովսէս չէր իմանում, ինչ-որ Սինայի ստորոտումն լինում էր. բայց Աստուած ասաց նրան. «Իջի՞ր սարից, ժողովուրդն, որին դու հանեցիր Եգիպտոսից, մեղանչեց. նա

շուտ դարձաւ իմ ցոյց տուած ճանապարհից։ Ես կըջնջեմ նրան և դու կըլինիս նախահայր ուրիշ մեծ ազգի»։ Բայց Մովսէս ընկաւ Աստուծոյ առաջ և խնդրեց նրան, որ խնայէ ժողովրդին։ Աստուած լսեց Մովսէսի աղօթքն և խնայեց Խորայէլացիներին։

Մովսէս իջնում էր սարից, ձեռին օրինաց տախտակները բռնած. բայց երբ մօտեցաւ բանակին, տեսաւ ոսկի հորթին և ազգին, որ երկրապագութիւն էր տալիս նրան, բարկութիւնից գյեց տախտակներն և կոտորեց։ Յետոյ հրամայեց հորթին ալրել. վոշի շինեց նրան ու ջրի մէջ խառնելով, հրամայեց Խորայէլացիներին խմել։ «Ի՞նչ արին քեզ այս մարդիկ, ասաց Մովսէս Ահարոնին, որ դու նրանց այսպիսի մեղք անել տուիր»։ «Մի բարկանար», պատասխանեց Ահարոնը, «դու ինքդ էլ լաւ գիտես նրանց յանդենութիւնը»։ Նրանք, որոնք ցաւում էին հորթի վրայ, սպանուեցան Ղետացիների սրով, հազարաւոր մարդկի վչացան։ Այն ժամանակ Մովսէս ասաց. «Դուք շատ մեղանչեցիք. ես կըբարձրանամ էլի սարի գլուխն, որ կաղզացնեմ Աստծուն, որ զայրացած է ձեր յանցանքի վրայ»։ Նա ելաւ սարի գլուխն և գոչեց Աստծուն ասելով. «Տէր, Քո ազգդ մեղանչեց Քեզ, բայց Քո ողորմածութեամբդ ներիր նրանց յանցանքը, կամ ջնջիր իմ անունս կենաց զրքից»։ «Կըջնջեմ կենաց զրքից նրա անունն, որ մեղանչեց ինձ», ասաց Աստուած. «Կըգալ օրն, երբ կիջնի իմ պատիժն մարդոց վրայ իրանց մեղքերի համար»։ Մովսէսն այս անգամ էլ մնաց Սինա սարի վրայ քառասուն օր և քառասուն գիշեր, խօսելով Աստուծոյ հետ երես առ երես։ Աստուած տուեց նրան ուրիշ տախտակներ, վրան պատուիրանները գծագրած և երբ Մովսէս իջաւ սարից նրա երեսն այնպէս փայլում էր, որ նա պէտք է ծածկէլ իր երեսը քողով, որ ժողովուրդը կարողանար նայել նրա վրայ։

Աստուծոյ հրամանով Մովսէս շինեց տապանակ անկիուտ փայտից, պատեց նրան ոսկի թերթով և դրաւ նրա մէջ պա-

Առաջիրանները: Առանձին, գոյն-զգոյն շորերով և կաշիներով ծածկած վրան շինեց այս տապանակի համար: Սա դրած էր երկրորդ վարագոյրի ետևը: Իսկ առաջին վարագոյրի ետև դրած էր սեղանը խնկով, ոսկի աշտանակն եօթն ճրագարաններով և մի սեղան էլ տասներկու հացերովն երեսաց: Այս տապանն, որի մէջ պահւում էին պատուիրանները, անուանուեց Տապանակ Ուխտի: Վրանն, որի մէջ դրած էր Տապանակը կոչւում էր Խորան վկայութեան: Նա պատած էր սրահով, ուր դրած էր զոհարան, և ուր ժողովուրդն աղօթում էր: Խորանի առաջին մասը, որ բաժանած էր սրահից վարագուրով, անուանում էր Սրբութիւն. իսկ երկրորդը, որ բաժանած էր առաջինից ուրիշ վարագուրով, անուանում էր Սրբութիւն սրբոց: Երբ ամենը պատարաստ էր, ամպը ծածկեց խորանն, որ Աստուծոյ իմառքով լքուեցաւ: Ահարոնը քահանայապետի շորերով, խորանի սրահում, զոհը դրեց զոհարանի վրայ: Այս ժամանակ ամպից, որ հովանի էր Խորանին, իջաւ զոհի վրայ կրակ: Ժողովուրդն այս հրաշքը տեսնելով, ուրախութիւնից երեսի վրայ ընկաւ զետին, երկրպագեց ամենազօր Աստծուն և շնորհակալ եղաւ Նրան: Այսպէս ու այսպէս այս զգացման ընալու զնոն բանական է այս գոյն պատճենը:

42. Աստուծոյ նոր Տրաշքներն անապատում.

Շուտով Խորակացիների մէջ ծագեցան նոր ապստամբութիւններ: Նրանք ձանձրացան այն հացից, որ ընկնում էր երկնքից. նրանք կամենում էին ուրիշ կերակուր: Իրանց վրանների դռների մօտ նստած լաց էին լինում և գոռում էին փոքրիկ երեխաների պէս. «Ով կրտայ մեզ միս, ասում էին նրանք. մենք չենք մոռանալ բնաւ Եգիպտոսի վարունդները, սեխը, սոխն ու խստորը: Խոկ այժմ մենք մանանայից աւելի բան չենք տեսնում:

Մովսէսը չափից գուրս տրտմեցաւ այսպիսի լիմարութեան վրայ, նա լաց էր լինում Աստուծոյ առջև: «Յալտնիր ժողովրդին», ասաց Աստուծած, «Նրանց լացը լսեցի. Ես կըղրկեմ նրան միս, ոչ թէ մի կամ երկու օր այլ ամբողջ ամիս շարունակ, մինչև որ նրանից ելագուի: Խորակէլացիներն այսուհետեւ թող չգանգատեն, որ թողին Եգիպտոսի երկիրը»:

«Տէր Աստուծած, ասում էր Մովսէս, նրանք վեց հարիւր հազար հասակն առած մարդիկ են բացի կանանց և երեխաներից, որտեղից առնենք այնքան միս, որ բոլոր ամիս կերակրութիւնը ողջ աղգը»: «Միթէ Աստուծոյ ձեռը բաւական չէ, ասաց Աստուծած, այժմ լըտեսնես իմ խօսքերիս կատարուելը»: Աստուծոյ հրամանով վեր կացաւ սաստիկ հողմ և բերաւ ծովից անթիւ բազմութեամբ լորամարգի: Անապատը մի օրւան ճանապարհի չափ տեղ ծածուեցաւ նրանցով երկու կանգուն բարձրութեամբ գետնից: Ժողովուրդը հաւաքեց բոլոր այն օր և գեշեր և միւս օրն այս լորամարգիներից:

Բայց գեռ ողջը չկարողացան ուտել, գեռ միսն ատամների տակն էր, երբ զգացին Աստուծոյ պատիթը. Նրանք շատ ուտելից հիւանդում էին և բազմութեամբ մեռնում: Այստեղ, ուր էր այն ժամանակ Եգիպտուսի բանակը, կոչուեցաւ գերեզման ցանկութեան:

Այս միջոցներումն պատահեցաւ յետագալ անցքն էլ. Ղետացին կորիսը և երեք հոգի Մուբէնի ցեղից ուրիշ անուանի մարզոց հետ յարուցին մեծ խովովութիւն: Նրանք վիճում էին Մովսէսի և Ահարոնի հետ նրանց իշխանութեան և քահանայութեան վրայ: Կորիսին, Դամթանին և Աբիրոնին, այս վերջին երկուսին իրանց ընտանիքովը, կուլ տուեց երկիրը. Իսկ միւս երկու հարիւր լիսուն հոգին կոտորուեցան հրաշալի կրակով, երբ բուրուտառը ձեռնքերին կանգնած էին վկայութեան Խորանի առջև, կամենալով Ահարոնից քահանայութիւնը խլել: Միւս օրն, երբ գեռ շարունակում էր

իռովութիւնը, կոտորուեցաւ ժողովրդից 14,700 հոգի։ Այս Քահանայութեան իրաւունքի վէճերին յաւիտեան զերջ դնելու համար, հրամայեց Աստուած Մովսէսին, առնել ամեն տասներկու ցեղերի ծերերի գաւազանները և դնել Խորանում։ Մէկ գիշերում Ահարոնի գաւազանից բուսաւ ձիւղ ծաղկով և պտղով։

43. Խոստացեալ Երկրի մասին Համբաւ.

Խորայէլացոց ազգն արդէն մօտենում էր Քանանացոց Երկրի սահմաններին։ Մովսէս ընտրեց Յեսուսին՝ Նաւեայ որդուն, Քաղէփին և տասն ուրիշ անուանի մարդոց Խորայէլա-



ցիներից և զրկեց նրանց, որ լրտեսեն խոստացած Երկրը։ Նրանք լիտ գարձան քառասուն օրից։ Մովսէսի և Ահարոնի առջեր գնացին Յեսու Նաւեայն և Քաղէբն ու բոլոր ժողո-

վրդի առաջին պատմեցին յետագայն։ «Մենք էինք այն երկրում, ուր դուք մեզ զըրկեցիք. ճշմարտիւ այն երկրում բղխում է մեղը և կաթ։ Ահա պտուղներն, որ մենք բերինք այնտեղից։ և նրանք ցոյց էին տալիս թուզ, նուռն և մեծ ողկոյզ խաղօղի։ Բայց միւս տասն լրտեսներն ընդդէմ խօսեցան Յեսուսին և Քաղէբին և տարածում էին ժողովրդի մէջ վատ համբաւ այն երկրի վրայ։ «Երկիրն, ուր մենք էինք, ասում էին նրանք, մարդածախ է իր բնակչաց համար։ Այն տեղ քաղաքները մեծ են, պատած ամուր պատերով։ Այնտեղ բնակում են հսկաներ, որոնց առջև մենք այնպէս փոքր ենք, ինչպէս մարախ»։ Երբ որ լսեցին Խորայէլացիք, ըսկըսան լաց լինել և գանգատել։ Նրանց լացը շարունակուեցաւ բոլոր գիշերը։ Վերջապէս Խորայէլացիք ապստամբեցան Մովսէսի և Ահարոնի դէմ։ Նրանք ասում էին. «Ինչու ըրմնացինք Եգիպտոսումն։ Աստուած արդեօք մեզ այստեղ նրա համար չըերած, որ մեզ, մեր որդոց և մեր կանանց մատնէ թշնամիներիս ձեռքը։ Աւելի լաւ է մեզ համար, որ դառնանք էլի Եգիպտոս։ Ընտրենք մեր մէջից զօրավար և դառնանք Եգիպտոս։

Մովսէս և Ահարոն ընկան երեսի վրայ ժողովրդի առջև, որ փափկացնեն նրա սիրտը։ «Բայց մի վախենաք ոչընչից», ասում էր Մովսէս, «Աստուած կըպաշտպանէ ձեզ այն մարդոց դէմ էլ, ինչպէս նա պաշտպանեց Եգիպտացիների դէմ։ Միթէ մոռացաք, թէ ինչպէս նա առաջնորդեց ձեզ անպատում, ինչպէս հօր ափս հոգաց ձեր վրայ։ Յեսու Նաւեայն և Քաղէբը տրամութիւնից պատառեցին իրանց շորերը։ «Մենք տեսանք բոլոր երկիրն, ասում էին նրանք. «Նա շատ գեղեցիկ է։ Աստուծոյ օգնութեամբ մենք կըմըսնենք այնտեղ։ Աստուած կըբնակեցէ մեզ այն երկրում, ուր մեզը և կաթ է բղխում։ Աստուածանից մի ապստամբէք։ Այն երկրի ազգերից մի վախենաք, մենք կըջնջենք նրանց։ Աստուած կըլինի մեզ նիզակակից»։ Բայց իդուր էին այս ա-

մեն խօսքերը՝ ժողովուրդը կատաղած գոռում էր և կամեանում էր քարկածել Մովսէսին, Աշարոնին, Յեսուս Նաւեային և Քաղեբին։ Կումիզմատար առ Յափ և պրան չ նաուրա Այս միջոցին երեսցաւ Աստուծոյ փառքը ժողովրդի առաջև ամպի մէջ Խորանի վրայ։ Աստուած ասաց Մովսէսին։ «Մինչև Երբ պէտք է այս ժողովուրդն ինձ կըքարկացնէ, մինչև Երբ չպէտք է հաւատալ իմ հրաշքներիս. Ես կըկոտորեմ նրան և կըջնջեմ երկրիս երեսից. իսկ քեզ կըդնեմ նախահայր աւելի զօրեղ և հզօր ազգի»։ Բայց Մովսէս, որին Խրայէլացիները կամենում էին քարկածել, ասաց. «Աստուած, մի ջնջիր այս մարդոց։ Երբ սրանք ջնջուին երկրից, Եգիպտացիներն և ուրիշ ազգեր կասեն. Աստուած չկարողացաւ Խրայէլացիներին մտցնել խոստացած երկիրը, նրանք կորան անապատումն։ Ողորմած եղիր նրանց և ցոյց տուր Քո զօրութիւնդ։ Տէր Աստուած, Դու երկայնամիտ ես և բազումողորմ. աղաչում եմ քեզ, որ Քո ողորմածութեամբդ ներես այս անգամ էլ Քո ազգիդ իր յանցանքը»։

Աստուած ասաց. «Ներում եմ քո խօսքովդ. Խրայէլացիները յանկարծակի այժմ չեն մեռնիլ, բայց նրանց ոսկորները կրիտեն անապատումն. ոչ ոք նրանցից, որոնք տրտնջացին իմ վրայ, չի մտնիլ խոստացած երկիրը։ Նրան կըտեսնեն միայն Յեսուս Նաւեան և Քղէբը, որոնք Ինձ հաւատարիմ մնացին։ Միայն որդոց, որոնք ապստամբութեանը մասնակից չեն, կըմտցնեմ խոստացած երկիրն և նրանք կըտիրեն նրան։ Բայց նրանք էլ կըմնան քառասուն տարի անապատումն, մինչև որ փտեն նրանց հայրերի ոսկորները»։

Տասն հոգին, որ Յեսուսի և Քաղեբի հետ միասին լրտեսեցին Քանանու երկիրն և յարուցին Խրայէլացոց մէջ խոռովութիւն, մեռան յանկարծակի, իսկ միւսները, որ հասակով դուրս եկան Եգիպտոսից մեռան անապատում կամաց-կամաց։ Եգիպտոսից դուրս գալից յետ, քառասներորդ տարին Եբրայեցիները կրկին մօտցան խոստացած երկրի սահմաններին։ Այս

տեղ նրանք էլի սկսան տրտնջալ Մովսէսի և Աշարոնի վրայ ջրի պակասութեան պատճառով։ Երբ ստացան հրաման Աշարոնի հրաշալի գաւաղանով քարից ջուր հանելու, Եբրայեցոց առաջնորդները ցոյց տուին այս անգամ իրանց հաւատի թուլութիւնը կամ երկբայութիւնն Աստուծոյ ողորմութեան մասին անարժան ազգի վրայ։ «Սըդեօք այս քարից մենք կարող ենք ջուր հանել ձեզ համար», ասաց Մովսէսն Եբրայեցիներին և խփեց գաւաղանով քարին երկու անգամ։ Հրաշքը գործուեցաւ, բայց Մովսէս և Աշարոն, խոստացած երկիրը տեսնելուն ուրախութիւնից զրկուեցան։ Շուտ այս քանից յետով Աշարոնը վախճանեցաւ։

Եբրայեցոց նոր տրտնջանքի համար Աստուած զրկեց նրանց վրայ թունաւոր օձեր. տրտնջողներից շատերը մեռան. Երբ Եբրայեցիները զջացին իրանց մեղքը, Աստուած հրամայեց Մովսէսին գնել գրօշակի վրայ պղնձի պատկերն օձի. և ով որ նայում էր այս պատկերի վրայ, ստանում էր առողջութիւն օձի թոյնից։ Նոյնպէս էլ այժմ մեզ համար խաչուած Յիսուս Քրիստոսին հաւատացողներն՝ ապահովնելով նրան, ազատւում են մեղքից և ստանալի իշխանութիւնից։

44. Մովսէսի մահը.

Մովսէսն, Խրայէլացիներին խոստացած երկիրը մտնելից առաջ արգէն հարիւր քսան տարեկան ծերունի էր. Իր մահից առաջ նա ժողովեց բոլոր Խրայէլացիներին և հրամայեց, որ բերան անեն իր շարադրած մարգարէական երգը, որ սկըսում է յետագայ խօսքերով. «Նայեցէք երկինք, ես կըխօսեմ և թող լսէ երկիր իմ բերանիս պատգամները. . .»։ Այս երգը, որ լի է յորդորանքներով և սպառնալիքներով, թողեց Մովսէս ապագայ սերունդների համար իբրև յիշատակ։

Վերջին անգամ նա ասում էր ազգին՝ իբրև հայր իր որդոց. «Ես պէտք է մեռնեմ անապատում. բայց դուք կանցնէք Յորդանանը և կըմտնէք գեղեցիկ երկիրն, որ Աստուած ձեզ խոստացել է։ Մնացէք հաւատարիմ Աստծուն, վկայ կանչելով երկինք և երկիր, ես թողնում եմ ձեզ իմ օրհնութիւնս էլ, անէքս էլ, օրհնութիւնս—եթէ դուք կըմնաք հաւատարիմ Աստծուն. անէծքս—եթէ կապստամբիք Նրանից: Ժամանակով Աստուած ձեր միջից, ձեր եղբայրների միջից կըվերկացնէ ինձ նման ուրիշ մարդարէ, նրան լսեցէք»։ Այս Մովսէսի նման Մարդարէն է մեր Տէր Յիսուս Քրիստոս: Յետոյ Մովսէս գնաց սարի գլուխը, որտեղից նա կարողանում էր նայել հեռուից այն երկրի վրայ, որ խոստացուած էր Իսրայէլացիներին, այն երկրի վրայ, ուր բնակւել էին նրա սուրբ նախահայրերը՝ Աբրահամ, Իսահակ և Յակովը: Նա տեսաւ նրան բոլոր պտղաբեր դաշտերով, գետերով և բարձր լեռներով: Այնտեղ՝ Նաբաւ լեռան գլխին Մովաբացոց երկրում վախճանեցաւ Մովսէս: Տեղն, ուր հանգչում է նրա մարմինը, մնաց անդամ:

45. Յետու Նաւեայի խոստացած երկիր մանելը.

Ո՞վ կըմտցնէ ուրեմն Իսրայէլացիներին Աւետեաց երկիրը. Մովսէս չկալ, ազգը որբացաւ. բայց կենդանի է ամենազօր Աստուածը. Նա լքցրեց իր Հոգով Յետու Նաւեային և հրամայեց նրան վերջացնել Մովսէսի սկսած գործը:

Իսրայէլացիներն երեսուն օր սուգ արին Մովսէսի վըրայ, յետոյ դուրս եկան բանակից և հրաշալի կերպով անցան Յորդանանը. Երբ քահանաները, որոնք տանում էին Ուխտի տապանակը, մտան գետի մէջտեղը, Յորդան անի ջուրը բաժանուեց և Եբրայէցիներն առանց ոտները թքնելու ան-

ցան Յորդանանը. Հասան վերջապէս այն նպատակին, որի համար քառասուն տարի թափառում էին. Ուրախութեամբ քարեեցին այն երկիրն, ուր բնակուել էին իրանց նախնիք, որոնց հետ Աստուած Ինքը խօսակցում էր և ուր հանգըստանում էին նրանց ուկրները։ Այս պատահեցաւ պասէքից առաջ:

Այժմ դադարեցաւ մանանան իջնելու երկնքից, երբ Իսրայէլացիներն առաջին անգամ կերան երկրի սլտուղներից՝ տօնելով պասէքը։ Բայց Աւետեաց երկրի բնակիչները կուպաշտներ էին, զեղիս և խիստ մարդիկ, այնպէս որ իրանց հարազատ որդոց զոհ էին բերում կոքերին։ Նրանք չէին ուզում թողնել Աբրահամի զաւակներին իրանց նախնեաց երկիրը մըտնելու. այս պատճառով ծագեցաւ երկարատև պատերազմ, միայն Աստուծոյ օգնութեամբ Իսրայէլացիներն ամեն տեղ յաղթում էին։

Առաջին քաղաքն, որին տիրեցին Իսրայէլացիներն, էր Երիքով։ Սա պատած էր ամուր և բարձր պատերով, որոնք անառիկ էին թւում։ Բոլոր Իսրայէլացի ժողովուրդը մօտեցաւ քաղաքին. նրանց մէջտեղում էին քահանաները՝ տանելով Ուխտի Տապանակն և փողեր փշելով. Աստուծոյ հրամանով վեց օր այսպէս պատեցին ամեն կողմից Երիքովի պատերը՝ փողեր հարկանելով։ Եօթներորդ օրը նոյն կերպով առաւօտ վաղ եօթն անգամ պատեցին Երիքովի պատերի շուրջն և երբ քահանաները եօթներորդ անգամ փողերը փչեցին, Յետու տուած նշանով ժողովուրդը հանեց պատերազմական ձախներ. Երիքովի պատերը հրաշքով քանդուեցան և Իսրայէլացիները մտան քաղաք և տիրեցին նրան։ Քաղաքի բոլոր բնակիչներին կոտորեցին բացի մի Ռահաբ անունով կնոջից և նրա ընտանիքից. որովհետև ալդ կինը դեռ սրանից առաջ իր տուն էր ընդունել լրտեսներին, որոնց Յետու Նաւեան զրկել էր լրտեսնելու համար։

Այսպէս Իսրայէլացիները, Աստծուն իրանց նիզակակից

ունենալով, շարունակեցին իրանց աշխարհակալութիւնը։ Մի պատիկ պատերազմի ժամանակ Գաբաւոն քաղաքի մօտ արեգակը մօտենում էր արդէն մայր մտնելու, Յեսու Նաւեան տեսնելով, որ չէ կարող վերջացնել պատերազմը մինչև արեկ մըտնելն, ասաց. «Ով արեգակ, կաց Գաբաւոնի Հանդէպն, և դու լուսին, կանգնիր Եղոնի ձորի վրալ»։ Ամենը կատարուեցաւ Յեսուի խօսքերով. արեգակն ու լուսինն իրանց ընթացքը դադարեցրին և այս օրը ուրիշ օրերից երկար եղաւ։

Խորայէլացիները տիրեցին գրեթէ Քանանանցոց բոլոր երկրին և ջնջեցին բնակիչների մեծ մասը։ Այս ժամանակ Յեսու Նաւեան սկսաւ բաժանել երկիրն Խորայէլացոց տասներկու տոհմերին, այսինքն Ռուբէնի, Շմաւոնի, Յուդայի, Զաքուդոնի, Խոաքարի, Դանի, Գաղի, Ասերի, Նեփթաղիմի, Բենիմամինի, Եփրեմի և Մանասէի ցեղերի մէջ։ Երկու վերջիներն էին Յովսէփի որդիքն, որոնց Յակովը որդեգրեց։ Ռուբէնի, Գաղի ցեղերն և Մանասէի կէս տոհմը ստացած էին իրանց բաժինն արդէն Մովսէոի ժամանակ Յորդանանի միւս կողմումը։ Դեկի տոհմը չունէր առանձին մասն, որովհետեւ Դետացիք կերակրում էին այն զոհերից, որ ժողովուրդ բերում էր Աստծուն, և բնակլում էին քաղաքներում, որոնք նրանց մասն Հանածէին Խորայէլացոց ամեն ցեղերից, Յորդանանի երկու կողմերում՝ ծովի և անապատի միջոցումը։

Ամեն բան այսպէս կագաղրելից լետոյ Յեսու Նաւեան հաւաքեց բոլոր Խորայէլացիներին Սելով, որպէսզի հրաժարական ողջոյն տալ նրանց իր մահից առաջ։ Նա նրանց միտները բերաւ Աստուծոյ ամեն բարերարութիւններն և խնդրեց, որ նրան հաւատարիմ մնան։ Երբ ազգը խոստացաւ, որ չի անցնի Աստուծոյ օրէնքներից, Յեսու Նաւեան վախճանեցաւ հարիւր տասն տարեկան։

Դա ցցոց կապահվ մարմանիրու միաց օրս խօժքանչ յացա՞ 46. Դատաւորները։ Դեբովրա կին մասնակտ դէ նազարակ և ծաց ցցուայ առանց և սկզբ սկսու ոյ քանի աղջան մազան։ Աազի իշխան մշակաբանամ իրառ ցման մոտ ընթացման մասն մասնակտ ա բառ այս ընտան ու Յեսու Նաւեայի մահից լետոյ Խորայէլացիները չունէին ընդհանուր զօրավար, որ հոգար Աստուծոյ օրէնքների կատարելու վրայ և պաշտպանէր ազգը բազմաթիւ և հզօր թշնամիներից։ Քանի որ նրանք հաւատարմութեամբ ծառալում էին Աստծուն, Աստուած Ինքը պահում էր նրանց. իսկ երբ հեռացան ճշմարիտ Աստուծոյ պաշտօնից, Քանանացիք, Մովաբացիք, Փղշտացիք, Մադիամացիք և Ամմոնացիք, Ակսան նեղել նրանց։ Բայց այս ծանը միջոցումն էլ Աստուած չէր մոռանում նրանց, եթէ նրանք խոնարհութեամբ դէպի նրան էին դառնում։ Նա զրկում էր նրանց վրկիչներ, որոնք կոչում էին դատաւորներ։ Երբ նեղացնում էր նրանց Քանանացոց Յաբին թագաւորը, կենում էր մի կին Դեբովրա անունով. սա դատում էր Խորայէլացիներին և էր մարդարէ։ Ամեն երկելի բաներումն նրանից խորհուրդ էին հարցնում և նրանից իմանում էին Աստուծոյ կամքը։ Նա բնակլում էր մի արմաւենի տակ լեառներում, Եփրեմի ցեղի բաժնի մէջ։ Աստուած յալտնեց, նրան, որ կամենում է տասներկու տարի Յաբինից նեղացած Խորայէլացիներին ազատել և հրամակեց նրան, որ մի անուանի մարդու Նեփթաղիմի ցեղիցն, Բարակ անունով, զլկէ տասն հազարով Յաբինի զօրավար Սիսարալի գէմ։ Դեբովրան կանչեց Բարակին և յալտնեց նրան Աստուծոյ կամքը։ Բայց Բարակ առանց նրան յանձն չէր առնում պատերազմ երթալ։ Այն ժամանակ մարդարէուհին խոստացաւ գնալ նրա հետ։ միայն այս էլ առաց. «Ես կըգամ, բայց յաղթութեան կատարեալ փառքը կընկնի կնոջ և քեզ»։ Բարակ ժողովեց տասն հազար զօրք։ Թշնամեաց զօրքը շատ բազմաթիւ էր նրանցից, բայց

չնայելով այս բանին լաղթուեցան. Սիսարայի զօրքը կոտորուեց, իսկ ինքը փախաւ: Սա երբ տեսաւ, որ Բարակ իր ետևից գալիս է, թռաւ կառքից ցած և փախչում էր ոտով: Ճանապարհին կար մի Կիսեցիի վրան. Սիսարան թագնուեց այս տեղ և սպանուեց վրանի տանտիկնոջից, որի անունը Յայէլ էր: Այսպէս կատարուեց մարդարէուչու խօսքը, որ ասաց, թէ լաղթութեան կատարեալ փառքը կը ընկնի կը-նոջ: Դեբովրան և Բարակ այս լաղթութիւնից լետոյ երգեցին Աստուծուն Հանդիսաւոր և շնորհակալութեան օրհնութիւն:

47. Φεղέռ.

Իսրայէլացիներն էլի ընկան առաջուան անօրէնութեան
մէջ։ Նրանք մոռացան ճշմարիտ Աստծուն և սկսան երկրպա-
գութիւն տալ կաքերին։ Այն ժամանակ Աստուած էլ հե-
ռացաւ նրանցից և մատնեց Մադիամացոց ձեռքը, որոնք
եօթն տարի շարունակ գալիս էին հունձքի ժամանակ ան-
թիւ ուղղութով, փչացնում էին և լափշտակում ամեն բան,
ինչ-որ գտնում էին։ Ոչ միայն ոչինչ պաշար չմնաց, այլև Խո-
րայէլացիները հազիւ կարողանում էին ազատել իրանց կեանքն՝
թագնուելով այլերում և լեռների մէջ։ Երբ վերջին թելլ
հասան, նրանք դարձան դէպի Աստուած և խնդրեցին նը-
րանից օգնութիւն։ Աստուած լսեց նրանց։

Մի Եբրա անունով անյալտ քաղաքում ընակում էր մի մարդ Գեղէոն անունով Մանասէի ցեղիցը. սրան ընտրեց Աստուած, որ փրկէ իր ազգին:

Այս Ս.ստուծոյ ընտրած զինւորը երեք հարիւր ընտիր մարդկիներով ցրուեց թշնամիների բազմաթիւ զօրքը։ Գեղեցնի երեք հարիւր զինւորները գեշերով մօտեցան թշնամու զօքին, վչեցին երեք հարիւր փողեր և աղաղակեցին.

«Աստուծոյ և Գեղէոնի սուրբ»։ Թշնամիները պարսակած փախան մէկ-մէկու սպանելով և Խորայէլացիներին թողին հարուստ աւար»։

Իսրայէլացիներն, երբ տեսան, որ Գեղէոնի ձեռքով ազատուեցան, ասացին Նրան. «Թագաւորի՛ր մեր վրայ դու և քո ազգը». բայց Գեղէոնը, որին Աստուած ընտրել էր Իսրայէլացիներին փրկելու համար և ոչ թագաւորութեան, պատահսանեց Նրանց. «Ես չեմ կամենում ձեր թագաւորը լինել. Աստուած թոնի թագաւորէ ձեր վրայ»:

48. Упіймліп

Գեղէոնն ունէր եօթանասուն որդի և մի որդի Սիկի-
մացի կնոջից՝ Աբիմելէք անունով։ Գեղէոնի որդոց ոչ մինը
չէր փնտրում իշխանութիւն Իսրայէլացիների վրայ բացի
Աբիմելէքից։ Սա էր հպարտ, փառասէր և խստասիրտ մարդ։
Գեղէոնի մահից յետ շուտով գնաց նա Սիկիմ իր մօր ազգա-
կանների մօտ, զինորեց նրանց Գեղէոնի միւս որդոց դէմ
և տմարդօրէն սպանեց բոլոր իր եղբայրներին, բացի ա-
մենից փոքրին, որի անունն էր Յովաթամ։ Զարագործու-
թիւնն առանց պատժի չմնաց։ Սիկիմի բնակիչները, որոնք
ընտրեցին Աբիմելէքին թագաւոր, առաջինն ապստամբեցան
նրա դէմ։ Աբիմելէք գնաց նրանց վրայ պատերազմ, պա-
շարեց նրանց քաղաքը, առաւ այն և ալրեց։ Սիկիմի բնա-
կիչները հաւաքուեցան մի տմուր աշտարակի մէջ և կամե-
նում էին մինչև վերջին շունչ պաշտպանել իրանց։
Աբիմելէք պատեց աշտարակն և հրամայեց նրա չորս կող-
մում շարել փայտ, որպէսզի ալրէ։ Մի կին տեսնելով նրան աշ-
տարակի մօտ, ուր ինքը փակուած էր, գցեց նրա վրայ վե-
րեից երկանի կտոր և ջարդեց եղբայրասպանի գլուխը։ Աբի-
մելէք կանչեց իր կապարճակրին և հրամայեց նրան, որ ըս-

պանէ, չկամենալով կնոջ ձեռքով մեռնել։ Կապարծակիըը կատարեց նրա վերջին հրամանը։

49. Յեփիթայէ.

Միքանի ժամանակից Ամոնացիները յարձակուեցան Իսրայէլացիների վրայ Գաղաղդի մէջ, Յորդանանի միս կողմում։ Իսրայէլացիները հաւաքեցին զօրք, բայց զօրավար չունէին։ Նրանք որոնում էին զօրավար, միայն ոչ ոք չէր ուզում կամ ոչ ոք չէր կարողանում առաջնորդել նրանց։ Նըրանք միտները բերին այն ժամանակ Յեփիթայէ անունով մէկին, որին եզրայրները մի ժամանակ առաջ գուրս էին գցել Հայրենի տնից և զրկել նրան ժառանգութիւնից։ Յեփիթայէն ստիպուեցաւ հեռանալ Հայրենիքից և բնակեցաւ օտարերկրում, ուր նա անուանի եղաւ իր քաջութեամբ։ Եւ այս պատճառով էլ Իսրայէլացիներն ասում էին. «Եթէ Յեփիթայէն մեր մէջ լինէր, յալտնի բան է, նա մեզ կազատէր։ Եւ նրանք մարդիկ զրկեցին և կանչեցին նրան, որ իրանց զօրավար լինի։»

Յեփիթայէն էր քաջ և մեծահոգի, միայն չկարողացաւ նա զսպել իր օրինաւոր բարկութիւնն և ասաց իր մօտ եկած պատգամաւորներին, ինչպէս չարացած մարդ. «Իուք չէիք, որ ինձ աքսորեցիք Հայրենի տնիցս և ստիպեցիք ինձ օտար երկրում ժափառել. ինչու այժմ ձեր նեղութեան ժամանակն եկաք ինձ մօտ։»

Բայց երբ լսեց ամեն թշուառութիւններն, որ քաշում էին իր քազաքացիները, մոռացաւ իր սեպհական նեղութիւններն ու զրկանքը և շտապով գնաց օգնելու Իսրայէլացիներին։ Յեփիթայէի նման մեծահոգի և կարեկից մարդը շուտ յանձն չի առնիլ արիւնահեղութիւն։ Նա աշխատում էր ամեն կերպով պատերազմը վերջացնել և երկու անդամ

Ամմոնացոց թագաւորի մօտ պատգամաւորներ ղրկեց, յորդորելով նրան, որ յետ կենալ իր անօրէն պահանջմունքերից և խաղաղութիւն անէ։ Բայց Ամմոնացոց թագաւորը չընդունեց ոչ մի առաջարկութիւն. ուստի և Յեփիթայէնով վճռեց պատերազմը տալ։

Պատերազմի գաշտը դուրս գալիս Յեփիթայէն առանց մըտածելու խոստումն արաւ, որ եթէ լաղթող կըմնալ, ողջակէզ կըբերէ առաջին բանը, ինչոր իր տնից իրան առաջ գուրս կըգալ։ Նա ջարդեց թշնամուն, քշեց նրան իր երկրի սահմաններիցն և ազատեց իր նեղացած հայրենիքը։ Յաղթութեամբ տուն յետ դառնալիս, պատահեցաւ նրան քաղաքի դրան մօտ իր միամօր աղջիկը։ Սա Գաղաղադացի կանանց և աղջիկների հետ իր ծնողի առաջ էր գուրս եկել, որ շնորհաւորէ նրան։ Յեփիթայէն, երբ նրան տեսաւ, սարսափած պատառեց իր շորերը. «Աղջիկս», աղաղակեց նա, «Ես սարսափելի խոստումն արի»։ Հեզ աղջիկը հասկացաւ նրա միտքն ու ասաց խոնարհութեամբ. «Ով Հայր, կատարիր քո խուստումդ, երբ Աստուած պարգևեց քեզ լաղթութիւն։ Միայն տուր ինձ հրաման, որ երկու ամիս իմ ընկերակիցներովս գնամ սալն և լամ իմ կուսութիւնս։» Այս ժամանակի անցնելից յետ Յեփիթայէն կատարեց իր խոստումն։

55. Սամփառն.

Յեփիթայէի մահից յետ Իսրայէլացիներն իրանց անօրէնութեան համար ընկան Փղշտացիների իշխանութեան տակ։ Երկար ժամանակ տանջուեցան նրանք այս ծառայութեան մէջ. վերջապէս Աստուած տուեց նրանց մի արտաքոյ կարգի մարդ, Սամփառն անունով, որ սարսափեցրեց փղշտացիներին։ Հրեշտակը յայտնեց նրա ծնողներին, թէ նրանց կըծնի որդի գերբնական

գօրութեամբ։ Երբ նա հասակն առաւ, կամեցաւ ամուսնանալ մի փղտացի աղջկալ հետ։ Ծնողները լայտնեցին նրան, որ Աստուածալին օրէնքն արգելում է Խօրայէլացիներին օտարազգիների հետ կապակցութիւն ունենալ։ Բայց Սամփառն չլսեց նրանց և անպատճառ կամենում էր կատարել իր կամքը։ Աստուած բանն այնպէս կարգեց, որ Սամփառնի ամուսնութիւնը միջոց եղաւ վրէժ հանելու փղաշտացիներից՝ Խարայէլացիներին նեղացնելու համար։

Մի անգամ Սամփառն, երբ գնում էր իր հարսի մօտ, դաշտում տեսաւ մի առիւծ, որ իբա վրայ յարձակեցաւ։ Սամփառնը բռնեց և պատառեց նրան։ Միքանի ժամանակից երբ յետ էր դառնում միւնայն ճանապարհով, հանդիպելով իր պատառած առիւծին, կամեցաւ տեսնել նրան և գտաւ ամբողջ մեղուների գունդ, որոնք մեղր էիր շինել նրա բերանում։ Նա առաւ մեղրից, համը տեսաւ և բերաւ իր հօրն ու մօրն էլ, որոնք նոյնպէս կերան նրանից, միայն չասաց որտեղից էր առել այն։ Իր հարսանիքի օրն նա, այն ժամանակաւն սովորութեամբ, առաջարկեց փղտացիներին մի հանելուկ այն պայմանով, որ եթէ նրանք կիմանան եօթն օրւան մէջ, Սամփառն պէտք է հիւրերին մի մի ձեռք շոր ընձալէ (հիւրերը երսուն հոգի էին). իսկ եթէ առասպելը չկարողանան լուծանել փղտացիները պէտք է իրանք նրան տալին երեսուն ձեռք շոր։

Ահա նրա առասպելը. «Ուտողից դուրս եկաւ ուտելիք, հզօրից՝ քաղցր»։

Այսպիսի առասպելն անկարելի էր իմանալ, որովհետև Սամփառնի սխրագործութիւնն առիւծի դէմ ոչ ոք չէր իմանում, բայց Սամփառն լայտնեց խորհուրդն իր հարսին, որ պատմեց այն փղտացիներին։ Հիւրերը ձեւանալով, իբրև թէ իրանք իմացան առասպելն, ասացին՝ ինչ է մեղրից քաղցը և ինչ առիւծից զօրեղ։ Սամփառն հասկացաւ, որ իր խորհուրդը հարսի դաւաճանութեամբը լայտնուած է, բայց պալ-

մանին նայելով շորերը պէտք տարէ նա երկար չմտածեց, թէ որտեղից առնէ շորերը։ Գնաց Սակազոն քաղաք, սպանեց այնտեղ երեսուն փղտացիներ ու բերաւ նրանց շորերը հիւրերին, որոնք հրաւելած էին հարսանիք, և բարկացած գնաց իր հօր տուն։ Նրա կնոջ հալրը կարծելով որ Սամփառն բոլորովին թողեց իր կնոջը, տուեց նրան կին մի ուրիշին։ Մի քանի ժամանակից Սամփառն եկաւ իր կնոջ մօտ և երբ իմացաւ, որ նրան ուրիշին կին են տուել, սառնութետմբ չկարողացաւ համբերել այս անապատութեան, վճռեց այս բանի համար վրէժ հանել բոլոր փղտացիներից։ Հնձի ժամանակը նա բռնեց երեք հարեւը աղուէս, երկու-երկու կապեց նրանց պոչից և պոչերի մէջ վառած ջահ դնելով բաց թողեց ցորենի արտերի մէջ, որոնք փղտացիներին էին պատկանում։ Այսպէս այրուեցան նրանց ոչ միայն արտերն, ալլև խաղողի վազներն ու ձիթենիներն էլ բոլորովին ոչնչացան։

Փղտացիք պահանջում էին, որ Խորայերացիները Սամփառնին կապած իրանց ձեռքը մատնեն, աալա թէ ոչ, սպառնում էին որ կրակի և սրի զոհ կանեն բոլոր բնակիչներին։ Սամփառն անձնատուր եղաւ Խորայելացիներին։ Թողեց իր ձեռքերը կապել չուաններով, բայց երբ Փղտացիները, նրան առած, կամենում էին տանել իրանց հետ, Սամփառն կարտեց չուաններն ինչպէս խծուծ, մի սատկած էշի ծնօտ վեր առաւ և ալդպիսի չնչին զէնքով սպանեց հազար փղտացի։

Մի անգամ էլ պատահեցաւ նա մի քաղաքում, որ պատկանում էր Փղտացիներին։ Կառավարութիւնը պահապան դրաւ այն տան մօտ, ուր նա կենում էր. երբ գիշեր եղաւ, քաղաքի գաները փակուեցան. ամենքը կարծում էին, թէ Սամփառնին անկարելի է փախչել, բայց Սամփառն բարձրացրեց քաղաքի գոները իր սեմով և նիգով ու իր ուսին դրած տարաւ քաղաքի մօտ եղած սարի գլուխն ու հանգիստ էլի դարձաւ տուն։

Եթէ Սամփառնի բարեխառնութիւնը համեմտ լինէր

Նրա զօրութեամը, նա երբէք չէր ընկնիլ Փղտացիների ձեռքը: Ապաբախտաբար նա ծանօթացաւ մի Թալիլա անունով Փղտացի կնոջ հետ, Փղտացիները փողով և ընծաներով խաբեցի այս կնոջ, որ իմանալ Սամփսոնից, թէ ընչից է նրա այն անսովոր զօրութիւնը: Նա գործ դրաւ ամեն կերպի հընարքներ, որ իմանալ նրա գաղտնիքը: Վերջապէս Սամփսոն, չդիմանալով նրա խնդրելուն և հաւատալով նրան, լայտնեց, որ ծնողներն իր ծննդից նուիրել են նրան Աստուծոյ: որ նրա մազերը երբէք գերծած չեն եղել և որ իր բոլոր զօրութիւնը կախուած է մազերից և եթէ սրանց կտրեն, նա ուրիշ մարդիկներից աւելի զօրեղ չի լինիլ: Ուալիլան քնացրեց նրան և մինչև որ նա անհոգութեամբ հանգստանում էր, կանչեց վարսավիրային, հրամայեց գերծել նրա գլուխը, ու լետոյ կանչեց նրա թշնամիներին: Սամփսոն, երբ զարթեաւ, զգաց իր տկարութիւնն և ստիպուեցաւ մատնել իր անձը Փղտացիների ձեռքը, որոնք հանեցին նրա աչքերը, կապեցին շղթաներով և չնչին ստրուկի պէս հրամայեցին աղալ բանտում:

Այս սարսափելի անբախտութիւնից լետ, Սամփսոնը զղացաւ և հանեց վրէժն իր թշնամիներից: Ինքը մեռաւ, բայց իր հետ միասին սպանեց շատ Փղտացիներ էլ: Երբ նրա գլխի մազերը մեծացան, նրանց հետ միասին լետ դարձաւ նրա առաջուան զօրութիւնն էլ:

Մի անգամ Փղտացիները կազմեցին մեծ հանդէս իրանց Բագոն Աստուծոյ պատուի համար և բազմութեամբ հաւաքած նրա տաճարում շնորհակալութեան զոհեր էին բերում նրան, որ աղատեց իրանց ահալի թշնամուց՝ Սամփսոնից: Այս միջոցին դուրս բերին Սամփսոնին էլ, որ ծաղը անեն նրան, որ ամենին ցոյց տան նրա ալժմեան անզօրութիւնն և սկսան ծիծաղել վրան: Փղտացիներն ամենեին չեին կարծում, որ նրա զօրութիւնը կրկին լետ կըդառնար. ծերերն, երեխաները, կանալը, ամենքը ծիծաղում էին Սամփսոնի վը-

րայ և տանջում էին նրան: Թշուառ կոյրը խնդրեց իրան ման ածողին, որ մօտեցնէ նրան տան սիւներին, ուր ուրախանում էին նրան ծաղը անողները: Նինուածքը հաստատած էր սիւների վրայ: Տափարակ տանիքի վրայ կալին այն ժամանակ մինչև 3000 հոգի: Ծառան մօտեցրեց նրան սիւներին: Սամփսոն աղօթք արաւ Աստծուն և խնդրեց նրա օգնութիւնը. լետոյ երկու ձեռքով շարժեց տեղից երկու միջին սիւներն, որով քանդուեցաւ բոլոր շինուածքն ու ըսպանեց թէ նրան և թէ բոլոր այնտեղ եղող Փղտացիներին: Այս անգամին նա սպանեց աւելի Փղտացի, քան թէ բոլոր իր կեանքումն մինչև այն օրը:

51. Հոռովթ.

Այն ժոմանակ, երբ դատաւորները կառավարում էին Խրայէլացոց ազգին, նրանց երկում մի անգամ սով ընկաւ: Յուդայի հեթղեհէմ քաղաքի բնակիչներից մինը, Եղիմելէք անունով, իր նոեմի կնկով և երկու որդիներով տեղափոխուեց Մովաբացոց երկիրը: Եղիմելէք մեռաւ և նոեմին իր երկու որդոց հետ, որոնք Մովաբացի կին առան, մնաց Մովաբացիների երկում: Նրա հարսերից մէկի անունն էր Որփա և միւսինը Հոռովթ: Փոքր ժամանակից մեռան նոեմի որդիքն էլ. բայց հարսները կենում էին նրա մօտ: Իր տեղափոխութիւնից տասն տարի լետոյ նոեմին իմացաւ, որ Խրայէլացոց երկում սովը վերջացել է, միտը դրաւ դառնալ իր հայրենիք. Հարսներն էլ գնացին հետը:

Ճանապարհին մտածում էր իր աղքատութեան վրայ և նրա վրայ, թէ ինքը չէ կարող կերակրել իր հարսներին: «Իմ աղջիկներս», ասաց նրանց, «դարձէք ձեր ծնողների մօտ. Աստուած օրհնէ ձեզ, որ դուք էլք բարի կանալք իմ հանգուցեալ որդոցս և յարգութեամբ վարվում էլք ինձ հետ: Ես շատ ցաւում եմ, որ չեմ կարող ձեզ համար մի բան անել.

դուք տեսնում էք, թէ ինչպէս ես խեղճ եմ։ Հարսները լաց եղան և Որփան գրկելով իր սկեսրին համբուրեց, հրաժարական ողջոյն տուեց և դարձաւ տուն։ Նոեմին ասաց Հռութին։ «Դու տեսում ես, Որփան դարձաւ իր ազգի, ազգականների և աստուածների մօտ, հետևիր դու էլ նրա օրինակին»։ Հռութ պատասխանեց. «Չէ, ես քեզ չեմ թողնիլ, ուր որ դու երթաս, ես էլ կըգամ հետդ. քո ազգդ կըլինի ինձ ազգ և քո Աստուածդ՝ ինձ Աստուած. ուր դու կըմեռնիս, այնտեղ էլ ես պէտք է մեռնիմ։ Միայն մահը կըբաժանէ ինձ քեզնից։ Եւ Հռութ գնաց նոեմիի հետ։

Շուտ նոեմին յայտնի եղաւ քոլոր Բեթղեհէմի մէջ։ Բոլոր բնակիչները պատեցին նրան ասելով՝ «Դու ես նոեմին»։ — «Ինձ էլ մի անուանէք նոեմի, այսինքն՝ գեղեցագոյն, այլ կանչէցէք ինձ դառնացած», պատասխանեց թշուառ կինը։ «Դառնութիւններով լիքն է իմ կեանքս. հարուստ հեռացայ ձեզանից և այժմ աղքատ լետ դարձեց ինձ Աստուած»։

Նոեմին հասաւ Բեթղեհէմի գարիի հնձի ժամանակ։ Օրւան հացի կարօտ լինելով, Հռութը գնաց արտերը՝ մնացած հասկերը հաւաքելու։ Խեղճ օտարականը չէր իմանում ուր երթալ, բայց Աստուած բերեց նրան մի հարուստ մարդու արտ, որ իր մարդու ազգականն էր և անունը Բոռս էր։ Սա եկաւ քաղաքից, որ նաև ինչպէս են քաղել գարին, կանչեց հնձողների վերակացուին և հարցրեց. «այս բնչ կին է»։ Վերակացուն պատասխանեց. «սա Մովաբացի աղջիկ է, որ նոեմի հետ եկաւ. նա հրաման ուզեց, որ հաւաքէ մնացած հասկերը։ Նա այստեղ արտում առաւօտից մինչեւ այժմ աշխատում է և ոչ մի րոպէ չէ հեռացել»։

Բոռս մօտենալով Հռութին ասաց. «աղջիկս, մի երթար ուրիշի արտ։ Մնա իմ աղախիներիս մօտ և գնա նրանց ետևից, ուր նրանք կը հնձեն։ Ես կը հրամալեմ իմ բոլոր ծառաներիս, որ նրանք քեզ հետ քաղցրութեամբ վարուեն։ Երբ խմել ուզեաս, խմիր այնտեղից, ուր խմում են իմ

ծառաներս»։ Հռութն երկրպագեց նրան մինչև գետին և աղաղակեց. «Ենչով արժանացալ ես ալդքան ողորմութեան, ես այստեղ մի օտարական կին եմ»։ Բոռս պատասխանեց նրան. «Ես գիտեմ դու ինչպէս լարգութեամբ վարուեցար քո սկեսրիդ հետ մարդուդ մահից յետոյ։ Աստուած կը վարձատրէ քեզ քո որդիական սիրոյդ համար։ Իսրայէլի Տէր Աստուածն, որին դու հաւատացիր, կը հատուցանէ քեզ»։ — «Ես արդէն բաւական վարձատրուած եմ նրանով էլ, որ դու ալդպէս ողորմած ես դէսի ինձ», պատասխանեց Հռութ։ Դու ինձ մխիթարեցիր քո քաղցր խօսակցութեամբ, ինձ, որ աւելի փոքր եմ, քան թէ քո վերջին աղախինդ»։

Ոհ, թէ իմանային բախտաւորները, թէ ինչպիսի բարերարութիւն է թւում նրանց մի քաղցր խօսքն էլ նեղացած սրտի համար։

Երբ ճաշի ժամանակ եկաւ, Բոռսը կանչեց Հռութին, որ իր ծառաների հետ ուտէ. ինքն ածում էր նրա համար կերակուր։ Հռութ կշտացաւ և պահեց փոքր ինչ իր սկեսրի համար էլ։ Ճաշից յետոյ անմիջապէս նա էլի իր աշխատանքն սկսաւ։ Բոռսը հրամայեց հնձողներին արտումն աւելի հասկեր թողնել, որ նա հեշտութեամբ կարողանայ հաւաքել։ Հռութ հաւաքեց մինչեւ երեկոյ, յետոյ չորացրեց հաւաքած հասկերը, ծեծեց նրանց և եղաւ ամբողջ արդու գարի։

Երեկոյեան Հռութ տարաւ իր սկեսրին գարին և իր պահած կերակուրը։ — «Աղջիկս, ով ողորմեց քեզ, աղաղակեց նոեմին, Աստուած օրհնէ այն կարեկից մարդուն»։ Ես հաւաքում էի հասկեր Բոռսի արտում, պատասխանեց Հռութ։ — «Նա մեզ ազգական է», ասաց նոեմին. «Նա միշտ սիրում էր մեր հանգուցեալներին նրանց կենգանութեան ժամանակ, այժմ նրանց մահից յետոյ էլ մտքումն ունի հին բարեկամութիւնն և այդ պատճառով անում է ողորմութիւն մեռած բարեկամների ալրիներին։ Աստուած օրհնէ նրան։ Իսկ դու սիրելի աղջիկս, ուրիշի արտ մի գնար հասկաքե-

լու, օտար մարդիկ խստութեամբ և անպատշաճ կերպով կը-
վարուեն հետդ։ Նոեմին տալիս էր իր հարսին շատ ուրիշ
օգտաւէտ խրատներ էլ և Հռութը միշտ պատրաստ էր նրա
հրամանները կատարելու։

Դարիի և ցորենի հնձի ժամանակ Հռութ հաւաքում
էր հասկեր Բոսի արտում։ Երբ հունձը վերջացաւ, Բոս
ասաց նրան. «Աղջիկս, Աստուծոյ օրհնութիւնը քեզ վրայ
լինի։ Քո ամեն վարմունքդ յայտնում է սէրդ դէպի քո ըս-
կեսուրդ։ Դու ամենեին երիտասարդնիրի սիրոյ ետևից չըն-
կար. բոլոր քաղաքը համարում է քեզ առաքինի կին։ Եթէ
դու համաձայն ես և ոչ ոք չի ընդդիմանալ իմ նպատակիս,
ես կամունանամ քեզ հետ։ Բոսո յայտնեց իր միտքը ծե-
րերին և ամենքը հաւանեցան՝ բախտաւորութիւն ցանկանա-
լսվ նրան. «Աստուած օրհնէ կնոջդ, ինչպէս նա օրհնեց մի
ժամանակ Հռաքէլին և Լիալին՝ Խորակէլացոց ազգի մայրերին»,
ասում էին նրան ծերերն և բոլոր ժողովուրդ, «Աստուած
պարգևէ քեզ որդի նրանից, փառաւորուի անունդ Բեթղեհէ-
մի մէջ։»

Բոս ամուսնացաւ Հռութի հետ. Աստուած տուեց նը-
րանց որդի, որին անուանեցին Ովքէդ։ Սա էր Յեսսէի հայրը.
իսկ Յեսսէն էր Դաւիթի հայրը, որի վրայ յետոյ խօսք կըլինի։
Երբ Ովքէդը ծնաւ, Բեթղեհէմի կանալք շնորհաւում էին
Նոեմին ասելով. «Օրհնեալ է Աստուածն, որ չժողեց քեզ
անզաւակ։ Ահա քո հարսիդ Հռութի որդին, Հռութի, որ
քեզ այնպէս սիրում է և որ քեզ աւելի ուրախութիւն է
ալատճառում քան թէ եօթն որդիք։ Աստուած այս երեխան
դրէց քեզ ուրախութիւն և կերակրիչ ծերութեանդ ժամա-
նակ։» Նոեմին առաւ երեխալին իր գիրկը, եղաւ նրա դա-
եակն և մեծ սիրով կրթում էր նրան։

52. Հեղի դատաւորն և քահանայապետը.

Պատերազմասէր զօրավարներից լետոյ, Հեղի քահանա-
լապետը դառաւ դատաւոր Խորակէլացոց ազգին քառասուն
տարի շարունակ։ Նա բնակւում էր այն ժամանակ Սելով քա-
ղաքում, ուր էր վկայութեան խորանը։ Այստեղ ըերում էին
ընտանեաց մեծերն իրանց խաշների նախածիններուն, պը-
տուղների երեխայրիքը և տասանորդն ամեն իրանց եկամտից.
ալստեղ հաւաքում էին բոլոր Խորակէլացիներն՝ Ուխտի
տապանակի առջև Աստծուն մատաղ բերելու համար։

Հեղին երկու որդի ունէր, մէկի ամունն էր Ովնի և
միւսինը Փենեհէս. երկուսն էլ ամենկին Աստուծոյ եր-
կիւղ չունէին և ոչ էլ յարգում էին խօրանի սրբութիւնն
և Աստուածապաշտութիւնը։ Հեղին արդէն շատ ծեր էր,
նա գիտէր իր որդոց անկարդ վարքը, յաճախ նրանց յանդի-
մանում էր, միայն այնպէս թուլ, որ նրանք բանի տեղ չէին
գցում։

Նոյն ժամանակումն կենում էր էլի մի բարեպաշտ մարդ
եղկանա անունով, որ երկու կին ունէր՝ Աննա և Փեննանա
անունով։ Վերջինն ունէր որդիք, իսկ Աննա, թէպէտ և
աւելի սիրելի էր մարդուն, միայն ամուլ էր և այս շատ
տրտմեցնում էր նրան։ Աննան ամեն տարի գնում էր Սելով
ալօթելու և զոհ անելու ճշմարիտ Աստծուն։ Մի անգամ
աօնի ժամանակ, Աննան մենակ գնաց խօրանի մօտ, որ տեղ
էր Հեղի քահանայապետը։ Աննան ջերմեռանդութեամբ ա-
զօթք էր անում Աստուծոյ, որ պարգևէ իրան մի որդի և
խոստացաւ նրան Աստուծոյ ծառայութեան նուիրել խօրա-
նումը։ Հեղին երկար ժամանակ նայում էր նրան և տես-
նելով, ինչպէս նրա երեսը վառւում էր, շրթունքները շար-
ժում էին առանց մի բառ արտասանելու, կարծեց թէ նա
հարբած է և ասաց նրան. «ամօթ չէ քեզ, որ հարբած Աս-

տուծոյ տուն ես եկել, գնա և արբեցութիւնդ անցկացը՛»:
— «Ոչ, պատասխանեց Աննան. «Ես հարբած չեմ, այլ ես
թափում եմ Աստուծոյ առաջ իմ սրտիս ցաւն և խնդրում
եմ Նրա օգնութիւնը»: Խորայէլացիների մէջ կնկայ համար
ոչմիայն անբախտութիւն, այլ ամօթ էլ էր համարում
որդի չունենալը: «Գնա խաղաղութեամբ», ասաց Հեղին: Մի
քանի ժամանակից Աննան ծնաւ որդի և անուանեց Սամուէլ:

Աննան, երբ երեխային ծձից կտրեց, իր մարդու և փոք-
րիկ Սամուէլի հետ միասին գնաց Սելով: Գնաց քահանայա-
պետի մօտ և ասաց. «Ես այն կին եմ, որ քո առաջիդ ա-
զօթք էի անում Աստծուն և խնդրում էի, որ ինձ որդի
պարզեց: Աստուած լսեց խնդիրքս և ահա ես Իրան եմ նուի-
րում իր պարզեց: Ահա իմ որդիս, թող մնայ սա այս
տեղ խորանում և ծառայէ Աստծուն բոլոր իր կեանքում»:
Ենորհակալութիւն անելից լետ սրտաշարժ և խորիմաստ եր-
գով Աննան թողեց Սամուէլին Աստուծոյ տանը՝ քահանա-
յապետի հովանաւորութեան տակ, որ կըթում էր նրան և
սովորեցնում էր նրան Աստուծոյ օրէնքները: Աննան ամեն
տարի տօնին գալիս էր Սելով և բերում էր իր որդու հա-
մար նոր շոր: Սա միշիթարուում էր, երբ լսում էր ամենից, որ
իր որդին շատ ժրաշան է, խոնարհ և երկիւղած և տեսնում
էր, որ իր որդին զօրանում է մարմնով և հոգւով: Աննան
այնուհետև ունեցաւ էլի ուրիշ երեք որդի և երկու աղջիկ:

ՅՅ. Սամուէլ.

Սամուէլը դեռ երեխայ ժամանակը քնում էր միշտ
վկայութեան խորանում: Հեղի քահանայապետը քնում էր
փոքր ինչ հեռու այնտեղից առանձին սենեակում: Մի ան-
գամ գիշերով Սամուէլը լսեց ձայն, որ կանչում էր՝ «Սա-
մուէլ, Սամուէլ»: Սամուէլը կարծելով թէ քահանայա-

պետը կանչում է իրան, վազեց նրա մօտ և ասաց. «Ես այս-
տեղ եմ, դու էիր կանչում ինձ»: բայց Հեղին պատասխա-
նեց. «Ես քեզ չեմ կանչել՝ գնա քնիր»: Զայնը էլի մի ան-
գամ կանչեց՝ «Սամուէլ, Սամուէլ»: Երեխան վեր կացաւ և
վազեց քահանայապետի մօտ ասելով. «Դու ինձ կանչեցիր,
ես այստեղ եմ»: «Չէ, որդեակ. ես քեզ չեմ կանչել», պատաս-
խանեց Հեղին. «Գնա քնիր»: և Սամուէլը քնեցաւ. բայց էլի
զարթեցրեց նրան այն ձայնը, որ կանչում էր՝ «Սամուէլ, Սա-
մուէլ»: նա էլի գնաց քահանայապետի մօտ և ասաց. «Դու
ինձ կանչեցիր և ես ահա եկայ»: Այն ժամանակ Հեղին հաս-
կացաւ, որ Աստուած ինքը կանչում է երեխային և ասաց
նրան. «Գնա որդեակ և քնիր. միայն եթէ էլի լսես ձայն,
պատասխան տուր. ասա. «Տէր, Քո ծառայիդ լսում է Քեզ»:
Սամուէլ քնեցաւ և չորրորդ անգամ էլ լսեց էլի ձայն, որ
կանչում էր՝ «Սամուէլ, Սամուէլ»: Այն ժամանակ Սամուէլն
ասաց. «Խօսիր, Տէր, ծառադ լսում է քեզ»: Աստուած ա-
սաց նրան. «Կըգայ օր, երբ ես կըպատճեմ Հեղին և նրա որ-
դոցը: Հեղին գիտէ իր որդոց լանցանքներն և չէ պատժում
նրանց»:

Առաւօտ երբ Սամուէլ վեր կացաւ, դուրս գնաց խո-
րանից. նա սիրտ չէր անում պատմել քահանայապետին Աս-
տուծոյ խօսքերը: Բայց Հեղին կանչեց նրան իր մօտ ասելով.
«Սամուէլ որդեակ»: «Այս տեղ եմ ես», պատասխանեց Սա-
մուէլ: «Խնդրում եմ քեզ», ասաց Հեղին, «մի ծածկիր ինձ-
նից որ Աստուած քեզ լայտնեց»: Այն ժամանակ Սա-
մուէլ պատմեց քահանայապետին ամենը, ինչ-որ Աստուած
իրան լայտնեց և ոչինչ չծածկեց: Հեղին հպատակելով Աս-
տուծոյ կամքին, ասաց. «Նա է Տէրը, թող լինի նրա կամքը»:
Միայն Հեղին որդիքը չէին, որ Աստծուն անհնազանդ էին,
այլ և բոլոր Խորայէլացոց ազգն էլ. ուստի և պատժուեցաւ
պատերազմելիս Փղտացոց հետ: Խորայէլացիները լաղթուե-
ցան և փախան կռւի դաշտից:

Այն ժամանակ ծերերից միքանիսն ասացին. «Եթէ ուխտի Տապանակը հետներս տանենք, յայտնի բան է, յաղթութիւնը մեր կողմը կը մնալ և մենք կը ջարդենք Փղշտացիներին»: Ուղարկեցին Սելով Ուխտի Տապանակի ետևից, որ բերեն նըրան: Հեղիի որդիք՝ Ոփնին և Փենեհէսը պէտք է բերէին Տապանակը: Միայն Խորայէլացիներն այս կուռումն էլ ջարդւեցան: Նրանք կորցրին երեսուն հազար հոգի կուռում, իսկ մնացած զօրքը ազատուեցաւ փախչելով: Ուխտի Տապանակն ընկաւ թշնամիների ձեռքն և Հեղիի որդիք՝ Ոփնին ու Փենեհէսը սպանուեցան: Մի զինւոր, որ ազատուեցաւ այս կոտորածից, Սելով քաղաք վազելով, յայտնեց այս բանը քահանայապետին, որ խորանի դրան մօտ նստած անհամբերութեամբ սպասում էր կուի համբաւին: Հեղին սարսափանքով և տրտմութեամբ պաշարած ընկաւ կոնսկի վրայ աթոռից, որի վրայ նստած էր, կոտրեց իր ողնը (մէջքի ոսկորը) և մեռաւ: Նա իննսուն ութը տարեկան էր:

54. Սամուէլի զոհը և յաղթութիւնը Փղշտացոց դէմ:

Փղշտացիք Խորայէլացոց երկրում ամեն բան սրի և կրակի կերակուր արին: Ոչ ոք չէր համարձակում նրանց դէմ կենալ. սարսափը պաշարեց բոլոր խեղճ ազգին ամեն տեղ: Նոյն իսկ Տապանակն՝ Խորայէլացոց որբութիւնն, ընկաւ թշնամիների ձեռքը. Նրանք պէտք է հասկանալին, որ այս ամեն թշուառութիւնները ծագեցան իրանց մեղքից, և որ մինչև նրանց յոխը Տապանակի վրայ դնելն էլ Աստուծոյ ընդունելի չեղաւ: Նրանք ոսկով պատեցին Տապանակն, ուր դրին Աստուծոյ տուած պատուիրանները, միայն իրանց սըրտերը չկը թեցին և չսովորեցրին այն պատուիրանները կատարելու:

Սամուէլը դառաւ Խորայէլացոց ազգի ազատիչը: Նա հաւաքեց յըրուած Խորայէլացոց և ուզեց դարձնել նրանց իրանց մոլորութիւններից, որոնց մէջ ընկել էին, ուստի ասաց. «Միայն մի բան կարող է ձեզ վրկել. դարձէք բոլոր սրտով դէպի Աստուծած և կատարեցէք նրա ամեն հրամաններն, այն ժամանակ նա ձեզ կազմատէ»:

Ժողովուրդը տխուր և զզջալով բոլոր օրը անցկացրեց պահով և աղօթքով ու բարձր ձախով աղաղակում էր. «Մենք մեղանչեցինք Աստուծոյ դէմ»: Սամուէլ ողջակէզ բերաւ գառը և աղօթք արաւ Աստուծուն: Աստուած լսեց նրան. այն ժամանակ երբ դեռ ողջակէզի ծուխը բարձրանում էր, Խորայէլացիների վրայ յարձակեցան Փղշտացիներն և կուին սկսաւ. յանկարծ սարսափելի գոռոցք եղաւ. Փղշտացիները սարսափած ջարդուեցան ու փախան: Խորայէլացիները քշեցին նըրանց իրանց սահմաններից և Աստուած զրկեց Փղշտացիների վրայ զանազան թշուառութիւններ, մինչև որ նրանք յետ դարձրին Ուխտի Տապանակը, որին դրին առաջ իրանց Դագոն կուռքի բագինում, միայն միւս օրը գտան Դագոն կուռքը ընկած գետնի վրայ Տապանակի առջեր: Երբ նրանք կուռքն իր տեղը դրին, միւս օրը գտան նրան ոչ միայն ընկած գետնի վրայ, այլև առանց գլխի և ձեռների: Սրանից յետոյ Աստուած զրկեց Փղշտացոց վրայ անթիւ մկներ և մահ: Այն ժամանակ Փղշտացիները, ընդհանուր խորհրդով վճռեցին, որ Ուխտի Տապանակը դնեն կառքի վրայ, և լծեցին երկու դեռ չլծած արջառներ և բաց թողին: Անասուններն, առանց կառավարի, տարան Տապանակն Խորայէլացոց երկիրը: Այսպէս Աստուած յոլց տուեց Խորայէլացիներին, որ միայն արտաքին Աստուածապաշտութիւնը բաւական չէ մարդուս, այլ պէտք է ուղղել իր զգացմունքներն էլ՝ կատարելով Աստուծոյ սուրբ պատուիրանները:

Սամուէլ այն տեղում, մինչև ուր Խորայէլացիները Փղշտացիներին քշեցին, դրեց քար և անուանեց նրան վէմ օգնականի:

55. Սաւուղի թագաւոր ընտրուիլը.

Առաքինի Սամուէլն էր դատաւոր Խորայէլացոց ազգին, բայց երբ ծերացաւ, իր իշխանութիւնը յանձնեց իր երկու որդոց, որոնք ամենեւին նրա արդարասիրութեանն ու նրա առաքինութիւններին մասնակից չէին: Ազգն անբաւական էր նրանցից և Սամուէլից թագաւոր էր պահանջում: Սամուէլ այս մասին հարցուց Ս.ստծուն և Ս.ստուած հրամայեց նրան որ թագաւոր ընտրէ և ինքը ցոյց տուեց ընտրելու մարդուն: Բենիամինի տոհմի բաժնում բնակում էր մի հարուստ մարդ Կիս անուով: Սա ունէր որդի, որ երևելի էր ամենից իր մեծ հասակով, գեղեցկութեամբ և զօրութեամբ: Նրա նմանը չկար բոլոր Խորայէլացիների մէջ: Մի անգամ Կիսի էշերը կորան: Նա զրկեց իր որդի Սաւուղին մի ծառալի հետ, կորած անասուններին փնտրելու համար: Սաւուղ իր ծառալով գնաց Եփրեմի տոհմի լեռները, միայն չգտաւ, ինչոր փնտրում էր: Սաւուղ երեք օր թափառեցաւ և արդէն միտը դրել էր դառնալ. միայն նրա հետ եղած ծառան առաջարկեց նրան մտնել մերձակայ քաղաքը. «Այն տեղ է այժմ սուրբ մարդը, Սամուէլ մարդարէն, ասում էր ծառան, նա կասէ մեզ, ուր պէտք է փնտրենք կորած էշերին»:

Սաւուղ գնաց մարդարէի մօտ: Սամուէլին, դեռ մի օր առաջ յարտնել էր Աստուած, որ Սաւուղը ընտրած է Իրանից Խորայէլացոց թագաւոր: Սամուէլ տարաւ Սաւուղին իր հետ Բամա քաղաքը, ուր պէտք է ժողովէր ժողովուրդն և լինէր ազգային ուրախութիւն: Այս Սաւուղին հիւրերի մէջ առաջին տեղը նշանակուեցաւ և ուրիշ կերակուրների հետ միասին բերին իրան մարդարէի հրամանով առաջւանից նրա համար պատրաստած ազդը: Միւս օրը, երբ Սաւուղը տուն էր դառնում, Սամուէլը նրան ճանապարհ զցեց քա-

ղաքից դուրս և հետն առած ամանով իւղ, ածեց Սաւուղի գլխին: Այս կերպով նա օծեց նրան թագաւոր: Սաւուղ եկաւ տուն: Ազգականները հարցորին նրան, թէ ինչ ասաց նրան մարդարէն: «Նա ասաց ինձ», պատասխանեց Սաւուղ, «որ մեր էշերը շուտով կը գտուին», որ ճշմարիտ էլ կատարուեցաւ, բայց ծածկեց այն գաղտնիքն, որ իրան յայտուեցաւ, այսինքն, որ ինքը օծուեցաւ Խորայէլացոց թագաւոր:

56. Սաւուղ Խորայէլացոց թագաւոր.

Սամուէլ հաւաքեց Խորայէլացոց բոլոր ցեղերը Մասեփաթ քաղաքում, որ ընտրեն թագաւոր: Վիճակ գցեցին տոհմերի մէջ և վիճակը դուրս եկաւ Բենիամինի տոհմին. յետոյ էլի գցեցին վիճակ Բենիամինի տոհմի ընտանեաց մէջ և վիճակը դուրս եկաւ Ամատարէսի ցեղին. Էլի գցեցին վիճակ Ամատարէսի ցեղի մարդոց մէջ, ելաւ վիճակը Կիսի որդի Սաւուղին: Բայց Սաւուղ պահուեցաւ. Սամուէլ գըտաւ նրան և հանեց հաւաքուած ժողովուրդի առաջնե: Սաւուղ գեղեցիկ էր տեսքով և ուսով չափ բարձր էր ամեն իր առջև կանգնածներից: «Ահա թագաւորն, ասաց Սամուէլ, «որին Աստուած ձեզ տուեց, սրա նմանը չկայ բոլոր Խորայէլի մէջ»: Ժողովուրդը տեսնելով գեղեցիկ և ելիսամարդ մարդուն, ուրախութեամբ աղաղակեց. «Կեցէ մեր թագաւորը»: Միայն միքանիսն անբաւական մնացին այս ընտրութեամբ: Նրանք անարդում էին Սաւուղին և ասում էին. «Ինչ կարող է նա մեր համար անել»: Սաւուղ իբրև թէ չլսեց այս խօսքերն և դարձաւ իր հօր տուն և միքանի ժամանակ կեցաւ այստեղ անյաւտութեան մէջ: Սաւուղ օծուած սուրբ կեցաւ ստացաւ մարդարէութեան չնորհք: Ամմոնացիք պաշարեցին Յաքիս քաղաքը և սպառնում էին, թէ քաղաքի բնակիչների աջ աչքերը պէտք է հանեն: Նրանք պաշար-

ւածներին եօթն օր ժամանակ տուին մտածելու համար. Յաբիսի ընակիչները սարսափած մարդիկ զրկեցին բենիամինի տոհմից օգնութիւն խնդրելու, Սաւուղն, երբ լսեց Յաբիսի ընակիչների ողորմելի դրութիւնը, շատ տխրեցաւ: Աստուծոյ հոգին իջաւ նրա վրայ: Աս առաւ երկու եզներ, կտոր-կտոր արաւ նրանց, և զրկեց Իսրայէլացոց ամեն ցեղերին, հրամայելով յայտնել, թէ ով որ չի զինաւորում իր հետ միասին Ամմոնացոց գէմ, նրա եզներն էլ այսպէս կըկտրտուին, Իսրայէլացիք ամենքը գէնք առան, ժողովեցան վեց հարիւր եօթանասուն հազար հոգիք: Այս զօրքով Սաւուղը յարձակեցաւ Ամմոնացոց վրայ, բոլորովին ջարդեց նրանց և աղատեց Յաբիս քաղաքը: Այն ժամանակ Իսրայէլացոց ազգն ուրախացած, օրհնել սկսաւ Սաւուղին և գոչում էր. «մատնիր մեր ձեռքը նրանց, որոնք չէին կամենում քեզ թագաւոր լնտրել իրանց. մենք նրանց կըսպանենք». բայց մեծահոգի թագաւորը պատասխանեց. «այս օր, երբ Աստուած փրկութիւն դրկեց Իսրայէլացոց ազգին, ոչ ոք չպէտք է կորչի»: Այս յաղթութեամբ և մանաւանդ իր մեծահոգութեամբ, Սաւուղ ամենի սիրով գրաւեց: Ապա Սամուէլ յայտնի օծեց նրան Իսրայէլացոց թագաւոր:

Կառավարութիւնն ընտրած թագաւորին յանձնելով, Սամուէլ ժողովեց ազգն և ասաց. «Ես աշխատում էի հասարակաց բարութեան համար իմ մանկութիւնիցս մինչև այսօր: Այսուհետեւ ժողովրդին կըկառավարէ թագաւորը: Ես կանգնած եմ ձեր առջևը, ով Իսրայէլացիք, պատասխանեցէք իմ մասին Աստուծոյ և նրա օծեալի առաջին, արդեօք զրկեցի ես մէկին իր սեպհականութիւնից, նեղեցի ես արդեօք մէկին. կտրեցի արդեօք մէկի գատաստանն անարդար կամ երեսպաշտութեամբ և առի արդեօք մէկից ընծայ: Թո՛ղ, պատրաստ եմ ամեն բան ուղղելու, ամեն բան յետ դարձնելու»: Բայց բոլոր ժողովութը միաձայն աղաղակեց. «Դու էիր մեր հայրը, դու երբէք անարդարութիւն չես արել, մենք օրհնում ենք քեզ:

Սաւուղ իր քաջ որդի Յովնաթանի օգնութեամբ մեծ գործքեր կատարեց, շատ երկելի յաղթութիւններ էր առաւ և միշտ ազատում էր Իսրայէլացիներին իրանց թշնամիներից:

Միայն յաջողութիւնները, իշխանութիւնն ու փառքը մոլորեցը ինչ Սաւուղին: Ինչքան որ մեծանում էր նրա զօրութիւնը, նրա սիրով լքվում էր զեղիսութեամբ: Սամուէլ յաճախ զգուշացնում էր նրան. բայց սա չէր լսում նրան: Միանգամ, երբ յաղթեց Ամաղէկին, Աստուծոյ կամքը կտարելու տեղ, իր շահի ետեից ընկնելով, Ամաղեկացոց ընտիր խաշները իրան աւար առաւ, որ Աստուած հրամայել էր բոլորը ջնջել. բացի սրանից համարձակուեց այդ աւարից Աստուծուն զոհ էլ բերել:

Սամուէլ ասաց Սաւուղին. «Ես պէտք է յայտնեմ քեզ Աստուծոյ կամքը, որ նա ինձ այս գիշեր ասաց: Երբ դու ինքդ քեզ ոչինչ էիր համարում, Աստուած քեզ Խորայէլացոց թագաւոր ընտրեց, բայց այժմ դու հպարտացար, ընչամէր եղար և մոռացար Աստուծուն, որ քեզ այնքան բարութիւններ արաւ: Աստուած արհամարում է քեզ և քո թագաւորութիւնդ կըտայ ուրիշին»:

Այս ասաց և երեսը դարձեց, որ հեռանայ նրանից, միայն Սաւուղ զղալով բռնեց նրա փէշից և պատուց:

Աստուած ողորմում է Հնազանդներին և հակառակ է հպարտներին:

Այս ժամանակից յետոյ Սամուէլ էլ իսկի չգնաց Սաւուղի մօտ և էլ չտեսաւ նրան մինչև նրա մահը, թէս էլի միշտ աղօթք էր անում նրա համար և լաց էր լինում նրա վրայ: Սաւուղ ընկաւ մտածմունքի մէջ, յաճախ տիրում էր նրան տիրութիւն և անտանելի անհանգստառական: միայն նա չէր փնտրում միիթարութիւն Աստուծոյ մէջ և չէր աշխատում իրան ուղղել:

57. Դաւիթ.

Սամուելն էլի միշտ տխրում էր, որ Սաւուղ բարկացրեց Աստծուն: Աստուած ասաց Սամուելին. «մինչև երբ դու պէտք է լաց լինիս Սաւուղի վրայ: Նա էլ թագաւոր չի լինիլ Իսրայէլացոց վրայ: Գնա Բեթղեհէմ Ովբէդի որդի Յեսսէի տուն: Ես ընտրեցի նրա որդոց մէկին թագաւոր»:

Սամուել զնաց Բեթղեհէմ, բերեց Աստծուն զոհ և հրաւիրեց Յեսսէին իր որդոց հետ զոհ ուտելու: Երբ նրանք եկան Սամուելը տեսնելով Յեսսէի մեծ որդի Եղիաբին, որ մի քաջ, բարձրահասակ և գեղեցիկ տեսքով մարդ էր, կարծեց իր մըտքում թէ յայտնի բան է, սա կըլինի օծեալը: Բայց Աստուած պատասխանեց նրան. «մի նալիր ոչ հասակին և ոչ գեղեցկութեան. սա չէ իմ ընտրած»: Աստուած մարդոց պէս արտաքին տեսքով չէ դատում: Մարդս տեսնում է միայն այն, ինչ-որ նրա աչքի առաջնան է. բայց Աստուած տեսնում է նրա սիրտն էլ»: Յեսսէն Սամուելի առաջ հանեց իր երկրորդ որդուն՝ Ամենագաբէն: Սամուել ասաց. «Զէ, Աստուած դրան չէ ընտրել»: Նրանից յետ հայրը Սամուելի առջև հանեց իր երրորդ որդուն: «Սա էլ չէ ընտրած Աստուածանից», ասաց Սամուել: Յեսսէն հանեց մարդարէի առաջ իր եօթն որդոց՝ մէկը միւսի ետևից: «Սրանից ոչ մէկին Աստուած չէ ընտրել», ասաց Սամուել:

Ոչ ոք չէր հասկանում, ինչ են նշանակում այս խօսքերը: Ուրիշ որդի էլ չունիս դու արդեօք», հարցրեց Սամուել: «Ունիմ էլի մի որդի, պատասխանեց Յեսսէն, ամենից փոքրն է նա՝ Դաւիթը, նա արածացնում է իմ ոչխարներս»: — «Նուտ մարդ զրկիք նրա ետևից, ասաց Սամուել: Թո՞ղ գայ նա մեր սեղան նստելից առաջ»:

Հայրը մարդ զրկեց, կանչեց Դաւիթին և հանեց Սամուելի առջև երեխալին, որ գեղեցիկ էր դէմքով և քաղցր տես-

քով: Այն ժամանակ Աստուած ասաց Սամուելին. «աչա իմ ընտրածս. օծիք սրան թագաւոր»:

Սամուել առաւ շիշը իւղով և օծեց Դաւիթին իր բոլոր եղբայրներին երկայութեամբ: Աստուածոյ Հոգին իշաւ օծեալի վրայ և այնուհետև մնաց միշտ նրա հետ:

58. Երիտասարդ Դաւիթը արքունի պալատում:

Աստուածոյ Հոգին բոլորովին թողեց Սաւուղին, որ սըրտով զեղիսացել էր: Սաւուղ ընկաւ տրտմութեան մէջ, և տանջւում էր չար դեկից: Ով որ իրան Աստուածոյ ողորմութեանն անարժան է զգում, չէ զղջում իր վատ գործերի վրայ և չէ աշխատում նրանց լաւացնել, նա չէ կարող ամենկին հանգիստ լինել՝ ինչպիսի մեծ փառքով և մեծութեամբ էլ պատած լինի:

Պալատականներն ասացին Սաւուղին. «թագաւոր, եթէ կը հրամայես, մենք կը բերենք քեզ մօտ մի մարդ, որ լաւ ածում է քնար, գուցէ երաժշտութիւնը մեղմացնէ քո տըրտմութիւնդ»: — «Բարի է, պատասխանեց Սաւուղ. «ճանաչում էք մի ալնպիսի մարդ»: Այն ժամանակ պալատականներից մէկն ասաց. «Երբ ես Բեթղեհէմումն էի, Յուդաի բաժնում, լսեցի մի անգամ, ինչպէս Յեսսէի որդին քնար էր ածում: Նա գեղեցիկ ածում է. բացի սրանից նա շատ խելօք է, բարեպաշտ և Աստուածահաճոյ»: Սաւուղ այն ըովէին մարդ դրկեց Յեսսէի մօտ Բեթղեհէմ հրամայելով նրան, շուտ զրկել իր որդի Դաւիթին, որ արածեցում է նրա ոչխարները: Յեսսէն առաւ մի քանի հաց, մի տիկ գինի, ուլ և Դաւիթին այս գիւղական ընծաններով զրկեց թագաւորի մօտ: Այն ժամանակ Խորայէլացոց երկրում առվորութիւն էր թագաւորի մօտ ընծաններով երթալ:

Դաւիթ յայտնուեցաւ Սաւուղին և շատ սիրելի եղաւ նրան։ Թագաւորը նրան իրան կապարճակիր շինեց և հրամակեց Յեսսէին ասել, որ ինքը պահում է նրա որդուն իր մօտ, որովհետեւ արժանացաւ իր ողորմութեանը։ Ամեն անգամ, երբ տրտմութիւնը տիրում էր Սաւուղին, Դաւիթ ածում էր քնար, և այս ցրում էր Սաւուղի տխրութիւնը և նրան տանջող չար ոգին հեռանում էր նրանից։

59. Գողիաթ.

Փղտացիները նորից զինաւորուեցան Իսրայէլացոց դէմ։ Սաւուղ դուրս եկաւ նրանց դէմ իր զօրքով։ Փղտացոց զօրքը վեր եկաւ սարի գլխին։ Իսրայէլացիներն նմանապէս վեր եկան նրանց դէմ ու դէմ միւս սարի գլխին։ Հովիտը բաժանում էր երկու զօրքերը մէկ մէկից։

Փղտացոց բանակից առաջ եկաւ մի հսկայ, Գողիադ անունով։ Նրա հասակն էր կարգից դուրս բարձր, դլուխը ծածկած էր երկաթէ սաղաւարտով և ինքը հագած ունէր պղնձի զրահ։

Զեռին ունէր տէգ ահագին մեծութեամբ։ Նրա բոլոր զէնքն էր շատ ծանր և ցոյց էր տալիս նյա արտաքոյ կարգի զօրութիւնը։ Նրա առջևից գնում էր նրա զինակիրն, որ տանում նրա սուրը։

Հովիտի մէջ ցած իջնելով Գողիադ կանչեց Իսրայէլացիներին։ «ինչու դուք ամենքդ պատրաստում էք կուի։ Ես Փղտացի եմ և դուք Սաւուղի ծառաներն էք։ Ընտրեցէք ձեր մէջից մէկին, որ կարողանայ ինձ հետ մենամարտել։ Եթէ նա ինձ կըսպանէ, մենք կըլինինք ձեր ծառաները, իսկ եթէ ես նրան կըսպանեմ, դուք եղէք մեր ծառաները։

Այսպիսի առաջարկութիւն որ լսեցին, Սաւուղ և բո-

լոր Իսրայէլացիները խռովեցան շատ և սարսափեցան։ Իսկ Գողիադ ծաղը էր անում նրանց, տեսնելով որ ոչ ոք չէ համարձակում դուրս գալ իր դէմ և պարծենում էր իր ուժով։

Դաւիթ, որին Սաւուղ չէր կամենում իր հետ առնել պատերազմ՝ նրա մանկութեան պատճառով, յետ դարձաւ էլի իր հօր ոչխարներն արածացնելու, բայց նրա երեք մեծ եղբայրներն էին արքունի զօրքումն։ Յեսսէն ասաց Դաւթին։ «Առ հաց և տար զօրաց բանակը եղբայրներիդ համար։ Ահա էլի տասն կտոր նոր պանիր, որ կըտաս դու նրանց հազարամետին։ տեղեկացիր, արդեօք եղբայրներդ առնդշն և ինչպէս են գնում գործերը»։ Դաւիթ, որ ամեն բանում հընազանդ էր հօրը և սրանց սիրում էր եղբայրներին, ուրախութեամբ գնաց բանակը, տանելով իր հօր տուածպաշարը։

Երկու կողմն էլ արդէն պատրաստ էր պատերազմելու երբ Դաւիթ եկաւ այնտեղ։ Ինչոր հեաը բերել էր, առւեց վանապանին։ Իսկ ինքը գնաց իր եղբայրներին տեսնելու։ Այդ ժամանակ Գողիադ հսկան առաջ դուրս եկաւ թշնամու զօրքի մէջից, պարծենում էր իր զօրութեամբ ու նախատում էր Իսրայէլացիներին։ Սրան տեսնելիս Իսրայէլացիները վախեցած փախան։ Բայց Դաւիթ ասաց. «Ո՞վ է այս լանդուգն մարդը, որ համարձակուում է նախատել Աստուծոյ ազգի զօրքին։ Ի՞նչ վարձատրութիւն է նշանակած նրան, ով որ կըսպանէ այս հպարտ Փղտացուն և կազատէ Իսրայէլացիներին ամօթից»։

Դաւթի մեծ եղբայր Եղիաթ լսեց նրա խօսքերն և բարկացաւ։ «Ինչու եկար դու այստեղ», ասաց նա. «այս քո տեղդ չէ։ Գնա արածացը ոչխարներդ, ինչու թողիր նրանց անապատում։ Ես քո հպարտութիւնդ ու սրտիդ չարութիւնը գիտեմ, դու հետաքրքրութիւնից եկել ես պատերազմ տեսնելու»։ Դաւթի եղբայրներն էին հպարտ և կոպիտ և այս

պատճառով էլ Աստուած չընտրեց նրանց: Բայց Դաւիթ հեգութեամբ և խոնարհութեամբ համբերում էր նրանց կոպառութեան և Աստուած ընտրեց նրան: Աստուած ցածացնում է հպարտներին և բարձրացնում է խոնարհներին:

Օտար մարդիկ, որ կանգնած էին Դաւիթի մօտ, աւելի քաղցրութեամբ վարուեցան: Նրանք պատասխանեցին նրան. «Ով որ կըյադթէ այս հսկային, նրան թագաւորն ինքը կը վարձատրէ. նա իր աղջկան նրան կին կրտայ և նրա հօր տունը հարկից ազատ կըլինի»: Դաւիթ, որ բոլոր սրտով սիրում էր հալբենիքը, յայտնեց, որ ինքը շատ ցանկանում է կուել հսկայի հետ: Յյո բանը հասցըին Սաւուղի ականջին և նա հրամայեց Դաւիթին իրան մօտ բերել:

Դաւիթ թագաւորի առջև գալով ասաց նրան. «Թագաւոր, ոչնչից մի վախենար, հրաման տուր ինձ, որ երթամ մարտնչեմ այդ Փղտացու հետ»: Սաւուղ պատասխանեց. «Ի՞նչպէս կարող ես յաղթել այն հսկային: Դու դեռ մասնուկ ես. իսկ նա հասակն առած մարդ է և մանկութիւնից սովոր է պատերազմի»:

Դաւիթ պատասխանեց. «Երբ ես արածացնում էի իմ հօրս ոչխարները, երբեմն գալիս էր գալլը և յափշաակում էր ոչխարներից մէկին, ես ընկնում էի ետեկից ու խլուժ նրա բերանից աւարը. բայց եթէ ընդիմանում էր ինձ, բոնում էի նրա փողից և սպանում էի նրան: Առ իւծ և արջ էլ ըսպանել է քո ծառագ: Նոյն կերպ կըվարւեմ եօ այդ Փղտացու հետ էլ: Ի՞նչպէս համարձակւեցաւ նա նախատել ճշմարիտ Աստուծոյ գօրքին: Աստուածը, որ ինձ ազատեց առիւծի և արջի բերանից, կազմոէ Փղտացու ձեռիցն էլ»:

«Գնա, Աստուած քեզ հետ լինի», ասաց թագաւորը: Սաւուղ հրամայեց հազցնել Դաւիթին պղնձի սաղաւարտ, զրահ և կապել մէջքին իր սեպհական սուրբ: Դաւիթ ալսուէս զինաւորուած ման եկաւ յետ ու առաջ և տեսաւ որ

շատ ծանր է. նա սովոր չէր այսպիսի զինւորական զրահին: «Ես չեմ կարող ման գալ այսպէս զինաւորւած», ասաց նա, ու հանեց սաղաւարտը, զրահն ու սուրբ. վեր առաւ իր հովուական ցուպը, ընտրեց գետի ափից հինգ ողորդ քար, ձեռքն առաւ իր պարսը և այս զէնքով միայն դուրս եկաւ հսկայի դէմ:

Գողիադ դուրս եկաւ պատերազմի տեղը կատարելապէս զինաւորւած, որի առջեկից գնում էր նրա զինակիրը: Նա, երբ տեսաւ Դաւիթին, արհամարհեց նրան: Դաւիթի քնքուշ մանկութիւնն ու հեղ դէմքն ամեներին չէին ցոյց տալիս նրա քաջ և զօրեղ զինւոր լինելը:

«Միթէ շնէն եմ ես, որ իմ դէմ քարերով ես գալիս, ասաց հսկան. շուտով ես քո մարմինդ կերակուր կրտամ երկնային թուշուններին և երկրային զազաններին»:

Դաւիթ պատասխանեց. «Դու գուրս ես գալիս իմ դէմ վահանով, սրով ու տէգով. իսկ ես գալիս եմ քո դէմ Զօրութեանց և Խօրայէլի Աստուծոյ անունովն, որին դու անարգում ես: Այժմ Աստուած կըմատնէ քեզ իմ ձեռս և բոլոր երկիրը կիմանալ, որ նա է միայն ճշմարիտ Աստուած: Բոլոր այս ներկայ ժողովուրդը կըլինի վկայ, որ Աստուծոյ օգնութիւնն աւելի զօրեղ է, քան թէ սուրն ու տէգը. ձեզ Աստուած կըմատնէ մեր ձեռքը»:

Հսկան գնաց Դաւիթի վրայ. երիտասարդ Դաւիթն աներկիւդ դուրս եկաւ նրա առաջ և իր պարսն առնելով զցեց նրանով մի քար Փղտացու վրայ. քարը պատռեց նրա ճակատը: Գողիադ երեսնիվայր ընկաւ գետնին, իսկ Դաւիթ առնելով նրա ահազին սուրը կարեց նրա գլուխը: Փղտացիները՝ իրանցից ամենից զօրեղին սպանած տեսնելով, վախեցան և փախան: Խօրայէլացիները, պատերազմական ճալներ հանելով, ընկան ետևներից, կոտորեցին նրանց, ցրուեցին և ոտնակոխ արին նրանց զօրագնդերը: Թշնամու բոլոր բանակն ընկաւ յաղթողների ձեռքը:

60. Յովնաթան.

Գողիադին յաղթելից յետոյ Դաւթին տարած տառ առ սպաս հօգոս ու մըտք բառապատճեն բանաշ առ Գողիադին յաղթելից յետոյ Դաւթին տարած թագաւորի առջև։ Սաւուղ ընդունեց նրան քաղցրութեամբ, իսկ նրա որդի Յովնաթանը սիրեց Դաւթին բոլոր սրտով։ Նա դառաւ Դաւթի բարեկամն և տեսնելով նրա առաքինութիւնները սիրում էր նրան ինչպէս իր կեանքը։ Բարեկամութեան նըշանի համար Յովնաթան ընծայեց Դաւթին իր շորը, թուրը, ազեղն ու նետերը։ Սաւուղ յետ դառնալիս վեր առաւ հետը Դաւթին։ Այն քաղաքներում, որոնց մօտից անց էին կենում, աղջկները նրանց առաջ էին դուրս գալիս երգերով ծնծղաներով։ Իրանց հանդիսաւոր գովասանական երգերումը երգում էին նրանք. «Սաւուղը յաղթեց հազարին, իսկ Դաւթի բիւրերին»։ Ուրախութիւնն, որով ամեն տեղ ընդունում էին Դաւթին և գովասանութիւններն, որ նրան տալիս էին, տրտմեցրին Սաւուղին, որ բարկացած ասաց. «Դաւթին ինձնից գերազանց են համարում, ուրեմն ի՞նչ է նրան պակաս, միայն թագաւորութիւն»։ Այն ժամանակից Սաւուղ սկսաւ կասկածել Դաւթի վրայ և նրա առաջուան այսահարութիւնն էլի նորոգուեցաւ։ Մի անգամ Դաւթի ածում էր քնար թագաւորի մօտ, Սաւուղ վեր առաւ տէգն ու գցեց նրա վրայ. բայց Դաւթի ծռուելով ազատուեցաւ այս հարուածից։ Այս երկու անգամ պատահեցաւ։

Դաւթի էլի միանդամ յաղթեց Փլշտացիներին և Սաւուղ այս պատճառով, աւելի ատեց նրան։ Նա իր որդի Յովնաթանի առջև հրամայեց թիկնապահներին սպանել Դաւթին։ Բայց Յովնաթան ասաց. «Թագաւոր, մի մեղանչիր քո ծառայ Դաւթին։ Նա անմեղ է։ Ինչ-որ Դաւթին արաւ, բոլորը քո օգտիդ համար էր, քեզ համար չխնայեց իր կեանքը։ Նա չէր որ սպանեց Գողիադին։ Նա չէր, որ ազատեց Խարայէ-լացիներին։ Դու ինքդ վկայ էիր նրա քաջութիւններին, դու

ինքդ գովեցիր նրան, ինչու համար ես կամենում թափել անմեղ արիւն, ինչու ես կամենում սպանել նրան, որ քեզ ոչինչ չէ արել»։ Այս խօսքերը կակղացրին Սաւուղի սիրտն և ասաց. «Չէ.. թող Սստուած ինքը վկայ լինի, ես չեմ ըսպանիլ Դաւթին»։ Այն ժամանակ Յովնաթան բերաւ Սաւուղի մօտ իր բարեկամին։ Սաւուղ իր Մեղքող աղջիկը տուեց նըրան կին։

Նուատ սրանից յետոյ Դաւթի կրկին յաղթեց ալլագգիներին. այս էլի նորոգեց Սաւուղի սրտի մէջ նախանձը։ Նըրա առաջուան այսահարութիւնը նորոգուեցաւ առաւել զօրութեամբ։ Նա նստած էր տանը գեղարդը ձեռին և Դաւթին ածում էր քնար և երգում։ Սաւուղը գցեց նրա վրայ գեղարդը. բայց Դաւթի մի կողմ քաշուեցաւ և գեղարդը ցըցւեցաւ պատի մէջ։ Նոյն գիշեր Դաւթի ընաց և պահուեցու լեռներում։

Մի քանի ժամանակից յետոյ թագաւորն, երբ նստած էր սեղանի առջև, հարցրեց. «Ինչու Յեսսէի որդին չէ գալիս իմ սեղանիս մօտ։ Նա երէկ էլ չկար, ալսօր էլ չէ երևում»։ Յովնաթան սկսաւ արդարացնել Դաւթին. և այս մասին Սաւուղ շատ չարացաւ. «Դո՛ւ անհնաղանդ որդի», գոչեց նա, «Ես գիտեմ, դու ինձ և մօրդ ամաչացնելու համար ընտրել ես քեզ բարեկում Յեսսէի որդուն։ Այս բոպէիս հրամալիր բերել նրան այստեղ։ Նա պէտք է մեռնի»։ Յովնաթան հեղութեամբ պատասխանեց. «Ինչու պէտք է զրկես նրան կեանքից, նա ի՞նչ է արել»։ Սաւուղ բարկացած վեր առաւ գեղարդը և կամենում էր սպանել իր որդուն։ Յովնաթան, վեր թռաւ սեղանից, դուրս գնաց և տիրութիւնից բոլոր օրն ոչինչ չկերաւ։ Այն միտքն, որ իր հալը վճռել է Դաւթին սպանել, շատ տիրեցնում էր նրան։

Միւս օր առաւօտ վաղ Յովնաթան գնաց այն սարը, ուր թագնուել էր Դաւթի, միայն նրան էր յայտնի սըրա թագնուած տեղը։ Դաւթի նրա առաջ դուրս եկաւ։ Յով-

Նաթան խորհուրդ տուեց նրան, որ ոչ ոքին չլայտնուի և իրաբից հրաժարուելիս գրկեցին մէկ-մէկու և լաց էին լինում երկուսն էլ. վերջապէս Յովնաթանն ասաց. «Դնա խաղաղութեամբ. բարեկամութիւնն, որով մենք Աստուծոյ իրան առաջը երդում տուինք, կըմնայ անքակտելի. Աստուած թող վկայ լինի իմ և քո մէջ, իմ որդոց և քո որդոց մէջ»։ Սրանից յետոյ նրանք հեռացան մէկ-մէկից։ Յովնաթանը դարձաւ տուն, իսկ Դաւիթ հեռացաւ խորն անապատի մէջ։

Սաւուղ շարունակեց հալածել Դաւիթին անապատումն էլ։ Նա զրկեց իր բոլոր զօրքը զանազան կողմեր Դաւիթի ետեկից։ «Եթէ գետնի տակն էլ պահուած լինի, այնտեղից էլ պէտք է գտնուի նա», ասում էր Մաւուղ։ Բայց Դաւիթը հեռացաւ շատ հեռու և բոլորովին անապատ տեղեր։ Յովնաթան այնտեղ էլ գտաւ նրան և աշխատում էր միսիթարել նրան ու զօրացնել նրա մէջ այն յոյսն, որ նա ունէր Աստուծոյ վրայ։ «Ոչնչից մի վախենար», ասում էր նա, «իմ հօրս ձեռքը չէ կարող քեզ հասնել, դու կըլինիս ժամանակով Իսրայէլի թագաւոր. իսկ ես կամենում եմ երկըրդը լինել քեզնից յետ»։

Յովնաթանը յաւիտեան կըմնայ իբրև մի ընտիր օրինակ հաստատ և անկեղծ բարեկամութեան։

61. Նաբար և Արիգիա.

Դաւիթի պաշտպան Սամուէլը վախճանեցաւ. Նրա վրայ լաց եղաւ Իսրայէլացոց բոլոր ազգն. նրան թաղեցին Արիթմաթեմում։

Դաւիթը շատ խղճալի դրութեան մէջ էր՝ ստիպուած մի տեղից միւս տեղ թափառելու. նա ոչ մի տեղ չէր գըտնում հաստատ ապաստանի տեղ։ Նրա կեանքը միշտ վտանգի

մէջ էր. իբրև աքսորուած, հեռու մարդկանց ընկերակցութիւնից, նա պէտք է ծածկուէր կամ թանձր անանցանելի անտառներում կամ խոր ալբերում։ Բայց այնտեղ էլ ապահովութեան մէջ չէր, այնտեղ սպառնում էր նրան մարդապանի նետը, այստեղ սպառնում էին նրան Սաւուղի զինորները։ Թէ ուրիշը լինէր նրա տեղ, կըլուսահատուէր. բայց Դաւիթ չկորցրեց իր արիութիւնը, նա բոլոր սրտով յոյսը դնում էր Աստուծոյ վրայ և իր տիսուր աքսորանքի ժամանակը գրեց Աստուծոյ հոգով շնչած սաղմուներն, որոնց մէջ նա իր բոլոր սիրութ բաց էր անում Աստուծոյ առջև։ Ալսուէս կենում էր նա անապատումն, բայց մի քանի ժամանակից յետոյ Սաւուղից ամեն անբաւական և զրկեալ մարդիկ վիխան և մտան Դաւիթի պաշտպանութեան տակ և Դաւիթ դառաւ իշխող չորս հարիւրից աւելի մարդոց։

Մասն անունով մի փոքրիկ քաղաքում, որ անապատի մօտն էր, բնակում էր մի հարուստ մարդ, Նաբար անունով։ Նա ունէր երեք հազար ոչխար և հազար այծ, որոնք արածում էին անապատում և որոնց Դաւիթ պահպանում էր։ Նաբարը, չնայելով իր հարստութեան, էր շահասէր և խըստասիր մարդ։ Միանգամ Նաբարը ժողովեց բոլոր իր մշակներին և հովիւներին, որ խուզեն հօտերը։ Այս բանի համար, այն ժամանակուան սովորութեամբ, նա կամենում էր մեծ խնճոյք կազմել։ Դաւիթ, գրեթէ պաշարից զրկած լինելով, զրկեց նրա մօտ տասն երիտասարդներ, որոնք իր մօտ էին և մասնակից էին լինում իր ամեն կարօտութիւններին։ Նա հրամայեց նրանց հարցնել Նաբարի և ընտանեաց առողջութիւնն ու ասել նրան. «Դաւիթը բարեկամաբար ողջունում է քեզ։ Ցանկանում է քեզ և քո բոլոր ընտանեացդ ողջութիւն և ինչ որ դու ունիս։ Մենք իմացանք, որ այժմ քո հովիւներդ պէտք է խուզեն քո ոչխարները, որ մեզ մօտ անապատում արածում էին։ Մենք ոչ միայն չէինք արգելում քո մարդոցդ արածացնելու խաշներդ մեր մօտ, ոչ

թէ միայն ոչինչ վնաս չէինք տալիս, այլև պահպանում էինք նրանց գողերից և վայրենի գազաններից: Հարցընև այս մասին քո հովհաններիդ, նրանք, յայտնի բան է, կը հաստատեն մեր խօսքերը: Այս պատճառով մենք լոյս ունինք արժանանալ շնորհք գտնելու քո առջևդ: Մենք քեզ մօտ գալով այսօր, որ քո կազմած հանդէսիդ օրն է, յոյս ունինք, որ դու կը զրկես մի բան Դաւթին էլ, ինչպէս հայր իր որդուն. նոյնպէս էլ մեզ՝ քո ծառաներիդ մի ողորմութիւն կը տաս»:

Դաւթիթը յայտնի էր նորալէլացոց բոլոր ազգին, ամենքը սիրում էին նրան, ամենը գովասանութեամբ խօսում էին նրա վրայ. բայց նաբաղ ձեացրեց, իբրև թէ չէ ճանաչում նրան: Նա բարկութիւնից տեղից վեր թռաւ և գոռաց. «Այս ով է Յեսսէի որդի Դաւթիթը: Այժմ շատացել են փախըստականներն և իրանց տիրերից փախած ծառաներն, ետք հացս և միսս, որ պատրաստել եմ իմ ծառաներիս համար, նրանց չեմ բաժանիլ. ես Դաւթին չեմ ճանաչում»: Դաւթի մարդիկ ամօթով յետ դարձան:

Նաբաղի կողջ անունն էր Արիգիա: Սա էր իւելօք, բարի և գեղեցիկ կին: Հովիւներից մէկը գնաց և յայտնեց Արիգիաին այս անցքը: «Դաւթն, ասաց նա, զբկել էր իր մարդոց, որ շնորհաւորեն այս ուրախութեան օրը քո մարդուդ, բայց նաբաղ յետ խրկեց նրանց մեծ կոպտութեամբ: Իսկ Դաւթ և նրա մարդիկը մեզ շատ օգտաւէտ էին: Ինչքան որ մենք անապատումն էինք, բերդի պէս պահպանում էին մեզ ցերեկը և գիշերը պաշտպանում աւազաներից ու վայրենի գազաններից: Լաւ մտածիր, որ Նաբաղի իմարութիւնն ուղելու հարք գտնես: Ես վախենում եմ, չլինի թէ մի թշուառութիւն պատահի քո մարդուդ և բոլոր նրա տանը:

Արիգիան այս ըոսէին վեր առաւ երկու հարիւր նըկանակ, երկու աման գինի, հինգ խաշած ոչխարներ, մի կողով չամիչ և երկու հարիւր շարուկ չոր թուզն, այս ամենը զըր-

կեց իր ծառաների հետ Դաւթի համար, ասելով. «Գնացէք դուք այս ընծաներով առաջ, շուտով ես ինքս էլ կը գամ ձեր ետևից»: Նա նստաւ իշխ վրայ և գնաց ծառաների ետևից, բայց գիտենալով իր մարդու կոպիտ բնութիւնն, ոչինչ ըլյայտնեց նրան:

Բայց այն տասն երիտասարդներն արդէն յետ դարձած յալտնել էին Դաւթին նաբաղի պատասխանը: Դաւթի, չարացած ալսպիսի խստութեան վրայ, կապեց իր սուրն և իր մարդոցն էլ հրամալեց զինաւորուել: «Ուրեմն, ասաց նա, մենք իզուր պահպանում էինք նաբաղի խաշները, նա մեզ բարին չարով է հատուցանում, Աստուած էլ թող այնպէս հատուցանէ մեր թշնամիներին, վազն առաւօտ նրա բոլոր ունեցածից մի շուն էլ չի մնալ. եկէք ետևիցս»:

Դաւթիթ արդէն ճանապարհումն էր. նա պատրաստ էր մեծ յանցանք գործելու. բայց Արիգիան, նաբաղի իմաստուն կինը, ցածացը նրա բարկութիւնը: Երբ Դաւթին հանդիպեցաւ, նա շուտ իշխ իջաւ և նրա առաջին ընկնելով երկպագութիւն տուեց նրան մինչև գետին: «Տէր իմ, աղաղակեց նա, թող իմ մարդուս յանցանքի պատիմը միայն իմ վրաս ընկնի: Հրաման տուր ինձ՝ քո աղախնիդ, բերել քեզ օրհնութիւն և ականջ գիր իմ խօսքերիս: Ես բերի քեզ ընծաներ, բաժանիր այն քո զինւորներիդ: Բանի տեղ մի դընիր նաբաղի լիմարութիւնը, Դու կը լինիս Աստուծոյ ազգի առաջնորդն, անմեղ արիւն թափելը թող չլինի արատ քո փառքիդ: Ինձ միտդ բեր այս ժամանակ»:

Դաւթիթ, փափկացած այս հեզ խօսքերով, ասաց Արիգիային. «Օրհնեալ է Աստուած, որ զրկեց քեզ. օրհնեալ լինիս դու էլ, որ պահեցիր իմ ձեռքս արիւնհեղութիւնից: Դարձիր խաղաղութեամբ քո տունդ, ես կը կատարեմ ինդիրդ»:

Իսկ Նաբաղ այս միջոցին խմում էր, ուտում էր և ուրախանում ոչինչ չկասկածելով: Միւս օրն առաւօտ, երբ սթափեցաւ գինիից, կինը յայտնեց նրան, թէ ինչպիսի վը-

տանգի մէջ էր նրա կեանքը: Նապեաղն, երբ այս լսեց, քար
կտրեցաւ վախից և տասն օրից յետոյ մեռաւ: Դաւիթ, «Ո
լսեց նրա մահը, ամուսնացաւ Աբիգիալի հետ:

62. Դաւիթի վերջին տեսութիւնը

Սաւուղի հետ.

Սաւուղի բոլոր աշխատանքը Դաւիթին բռնելու համար
իզուր եղան. Աստուած պահում էր այս հեղ և առաքինի
մարդուն: Չնայելով Սաւուղի ատելութեան և հալածելուն,
Դաւիթ էլի միշտ յարդում էր նրան, իբրև Աստուծոյ օծեա-
լին և իր թագաւորին:

Միանդամ Սաւող երեք հազար ընտիր զինորներով
գնաց Դաւիթին փնտրելու: Նա վեր եկաւ մի սարի գլխին:
Դաւիթն իմացաւ այս և գիշերով թագուն գնաց իր ամենից
հաւատարիմ զինորի՝ Աբեսսայի հետ միասին Սաւուղի բա-
նակը: Սաւուղի զօրավար և Աբեններ, նրա բոլոր զինոր-
ները խոր քուն էին մտել: Դաւիթ Աբեսսայի հետ առանց
արգելքի գնաց մինչև թագաւորի վրանը: Սաւուղի թիկնա-
պահները քնած էին և ինքը թագաւորն էլ խորին քնի մէջ
էր ընկղմել: Նրա գեղարդը ցցած էր գետնին, գլխի մօտ,
այն տեղ մօտիկ էլ դրած էր ջրի մի կուժ:

«Աստուած մատնում է մեր ձեռը մեր թշնամուն
ասաց Աբեսսան. ես կըսպանեմ դրան իր գեղարդով»: — «Զէ».
խօսքը կտրեց Դաւիթ, «չհամարձակիս ձեռդ բարձրացնել
Աստուծոյ օծեալի վրայ: Ա՛ռ նրա գեղարդն ու կուժն
և գնանք այստեղից»: Նրանք վեր առան գեղարդն ու կուժն
և հեռացան բանակից. ոչ ոք չնկատեց նրանց:

Դաւիթ, վեր ելաւ դէմուղէմ եղած ժայռի վրայ և բարձր
ձայնով գոռաց. «Աբեններ, պատասխան տհւը ինձ»: Ա-

բենները ձայն տուեց հարցնելով. «Ո՞վ ես դու»: Դաւիթն
ասաց. «Դու ես այն հաւատարիմ և քաջ զինորն, որի
«նմանը չկայ բոլոր Խորայէլի մէջ: Այսպէս ես պահպանում
դու քո թագաւորիդ: Տես, աչա նրա կուժն ու գեղարդը,
որոնք նրա գլխի մօտն էին դրած»: Այն ժամանակ Սաւուղ
գոչեց. «Դաւիթ, իմ որդեակս, քո ձայնդ է այս»: «Այո,
թագաւոր, ես եմ՝ ծառադ», պատասխանեց Դաւիթ. «ինչո՞ւ
համար հալածում ես դու ինձ, արքայ, ես ինչ եմ արել.
թողել Եմ արդեօք երբէք քո հրամաններդ առանց կատարե-
լու. ինչո՞ւ ես կամենում Աստուծոյ առջև թափել անմեղ
արիւն»: Սաւուղ ասաց. «Ես մեղանչեցի: Դարձիր մօտս, որ-
դեակ: Որովհետև, դու խնայեցիր իմ կեանքս, երբ ես քո
ձեռումդ էի, ես քեզ ոչինչ չարութիւն չեմ անիլ»:

Դաւիթն ասաց. «Տես, ահա քո գեղարդդ և կուժդ:
Հրամայիր ծառաներիցդ մէկին, որ գայ և առնէ: Աստուած
ամենին կըհատուցանէ իրանց գործերի համեմատ: Ինչպէս այ-
սօր մեծացաւ քո անձդ իմ առաջիս, այսպէս էլ կըմեծա-
նայ անձս Աստուծոյ առաջին: Նա կըփրկէ ինձ ամեն չարից»:
Սաւուղը օրհնեց Դաւիթին և հեռացան մէկ մէկից խաղաղու-
թեամբ: Դաւիթի այս տեսնուելը Սաւուղի հետ վերջինը եղաւ:

Սաւուղը իր բոլոր զօրքով չկարողացաւ լաղթել Դաւ-
իթին, բայց Դաւիթ միայն մեծահոգութեամբ լաղթեց Սաւուղին:

Սաւուղ, որի առաքինութեան սէրը միայն ըոպէական
էր և սերտ չէր, զուտ սրանից լետոյ լաղթուեցաւ Փղտացի-
ներից: Նրա զօրքը բոլորովին ջարդուեցաւ. նրա երեք որդիքը
մեռան, որոնց մէջ էր և առաքինի Յովնաթանը՝ Դաւիթի
բարեկամը: Սաւուղ ինքը վիրաւորեցաւ. փղտացիներն ա-
մեն կողմից լարձակեցան նրա վրայ և կամենում էին գերի
առնել նրան: Սաւուղ վախենալով թշնամու ձեռքն ընկնե-
լուց, ընկաւ իր սրի վրայ և մեռաւ:

Դաւիթ թէպէտ և ազատուեցաւ իր հզօր և ահալի թշ-
նամուց, բայց էլի չէր ուրախանում Սաւուղի մահուան վը-

րալ: Նա և նրա բոլոր զինւորները ողբում էին Սաւուղի և Յովնաթանի վրայ, որոնք մեռան պատերազմում: Նրանք լացով և առանց ուտելու անց կացրին բոլոր օրը:

63: Դաւիթ Իսրայէլացոց թագաւոր.

Սաւուղի մահի ժամանակ Դաւիթ բոլոր իր զինւորներով կենում էր Գէթալ Անքուս թագաւորի մօտ, Սիկելակ քաքում: Յանկարծ եկաւ նրա առաջ Սաւուղի զինւորներից մէկը, որ փախել էր պատերազմի դաշտից. նա բերաւ Դաւիթին Սաւուղի թագաւորական թագն ու ապարանջանները, յուսալով այս կերպով ողորմութիւն գտնել նրանից: Այս մարդը պատմեց, թէ երբ Սաւուղ ընկաւ սրի վրայ, մինչև ի մահ չվիրաւորուեցաւ և դեռ կենդանի էր. ուստի և իրան կանչեց և ասաց. «սպանիր ինձ. ես խիստ տանջւում եմ և դեռ շունչս մէջս է»: Յետոյ շարունակեց եկած մարդը. «ես տեսնելով, որ Սաւուղ այնպէս վիրաւորուած է, որ չէ կարող երկար ժամանակ ապրել, սպանեցի նրան, առայ նրա գըլխից թագը և ձեռներից ապարանջաններն ու եկայ քեզ մօտ»: Դաւիթ և բոլոր զինւորները տրտմութիւնից պատառեցին իրանց շորերը: Դաւիթը շատ ողբաց Սաւուղի և իր բարեկամ Յովնաթանի վրայ:

«Ի՞նչպէս կարողացար դու բարձրացնել ձեռդ Աստուծոյ օծեալի վրայ», ասաց Դաւիթ Սաւուղին սպանող մարդուն. «Ի՞նչպէս համարձակեցար դու քո թագաւորիդ կեանքից զըրկել: Թագաւորի կեանքը Աստուծոյ ձեռին է. նրա արիւնը քո գլխիդ կըլինի, որովհետև և դու ինքդ վկալեցիր քո դէմ»: Դաւիթ հրամայեց սպանել այս համբաւ բերողին:

Դաւիթ դուրս եկաւ Սիկելակից իր ընտանիքով և վեց հարիւր զինւորներով դարձաւ իր հայիենիք և Քերընում լայտնի ընտրուեցաւ թագաւոր:

Դաւիթ Յեսսէի որդին էր, իսկ Յեսսէն Որէթի որդին էր և Որէթը Հռութի և Բոսսի որդին: Այսպէս՝ աղքատ բայց առաքինի Հռութի ցեղը նստաւ Իսրայէլացոց գահը: Յետոյ էլի նրա զաւակներից ծնաւ Աստուծոյ խոստացած Մեսսիան, նա, որով Աստուծ օրհնեց երկրիս բոլոր ազգերին:

64. Դաւիթի թագաւորական գործքերը.

Փշտացիները պատերազմի դաշտում գտնելով Սաւուղին և նրա որդոց մարմինները, վեր առան նրանց և ուրիշ մեռեալներին. և նրանց ազգը նախատելու համար կախեցին դիեըը իրանց բերդի պատի վրայ: Յաբիսի բնակիչները լիւեցին, ինչպէս մի ժամանակ քաջ թագաւորն ազատեց իրանց քաղաքը կորըստից. գիշերով ժողովուեցան և իրանց կեանքը վտանգի մէջ գնելով վեր առան թշնամու պատերից իրանց թագաւորի և նրա որդոց մարմիններն, որոնք յարգելի էին՝ իրանց համար, այլեցին և թաղեցին նրանց Յաբիսում ու Եօթն օր պահեցին:

Դաւիթ, երբ լսեց Յաբիսի բնակիչների այս գործը, օրհնեց նրանց և ասաց. «Աստուծ թո՞ղ վարձատըէ ձեզ ձեր հաւատարմութեան համար գէպի ձեր թագաւորն և ես էլ իմ կողմից կըվարձատըմ ձեզ»:

Սրանից յետ Դաւիթ սկսաւ պատերազմել այն օտար ազգերի հետ, որոնք նեսու Նաւեալի ժամանակից մնացել էին Իսրայէլացիների մէջ և անդադար նրանց հետ կուր էին անում: Նա յաղթեց նրանց և սրբեց Իսրայէլի բոլոր երկիրը: Դաւիթ պաշարեց Երուսաղէմ քաղաքն և առաւ: Երուսաղէմ ընտրեց իրան բնակութեան տեղ: Կարծում են որ այս քաղաքը, որ թագաւորանիստ դառաւ, նոյն Սաղիմ քաղաքն է, ուր Մելքիսեդէքը Աբրահամին պատահեցաւ: Այսպէս Աբրահամի զաւակը թագաւոր դառաւ այն զեղեցիկ երկրին, որ Աստուծ խոստացաւ տալ նրա ազգին:

Դաւիթ բարի և բարեպաշտ թագաւոր էր: Նա սրտով կամենում էր, որ իր ազգը լինի առաքինիւ երջանիկ: Ինքն ունէր սիրով լիքը սիրտ, երախտագէտ էր Աստուծոյ և լոյսը հաստատ նրա վրայ և բոլորովին հպատակ նրա սուրբ կամքին: Այս զգացմունքներն էին նրա բոլոր երջանկութիւնն երկրիս երեսին և այս պատճառով կամենում էր արմատացնել նրանց իր հպատակների սրտերումն էլ:

Դաւիթ սկսաւ իր թագաւորութիւնը, տարածելով ազգի մէջ աստուածապաշտութեան սէրը: Երուսաղէմ քաղաքի մօտ էր Սիօն լեռը, որ ունէր բերդ էլ: Այստեղ իրան համար արքունիք շինելից յետոյ կանգնեց Դաւիթ հոյակապ խորան՝ Ուխտի տապանակը մէջը տեղաւորելու համար, որ մինչև այն ժամանակ Կարիաթարիմ քաղաքումն էր: Երբ ամեն բան պատրաստ էր, հանդէսով տեղափոխեցին Ուխտի տապանակը նրա համար պատրաստուած տեղը, և գըթէ Խորակէլացոց բոլոր պզն ուղեկից էր նրան փողերով և ուրախութեան երգերով: Բայց իր սրտումն Դաւիթ շինեց Աստուծոյ համար աւելի գեղեցիկ տուն: Նա Աստուծոյ հոգւով լքուած գրեց այն սրտաշարժ և խրատական սալմոսներն, որոնք կարդացողի հոգին ազնւացնում են և միթարում:

Նոր Սիօնի վրայ շինած սըբութեան մէջ Դաւիթ զոհ բերաւ Աստուծոյ, օրհնեց իր ազգին, ամենին բաժանեց հաց, զոհի միս և գինի: Այս զոհի սեղանին ամենքը մասնակից եղան. այս ուրախութեան օրը վերջին աղքատն էլ Դաւիթի հպատակներից լիացաւ կերակրով:

Դաւիթ հարցրեց. «Սաւուղի ցեղից արդեօք չմնաց մի հոգի կենդանի. ես իմ բարեկամիս Յովնաթանի՝ սիրոյ համար կամենում եմ նրան լաւութիւն անել»: Մնացել էր միայն Յովնաթանի մի որդին Մեմֆիթոսսթէն, որ երկու ոտով էլ կաղ էր: Նա բնակում էր նոդաբարօւմը: Դաւիթը զրկեց նրա ետևից, բնակեցրեց իր տան մէջ և տուեց նրան Սաւուղի բոլոր կալուածներն և վարւում էր նրա հետ իր որդու պէս: Մեմֆիթոսսթէն միշտ ուտում էր թագաւորի սեղանից, Դաւիթի որդոց հետ միասին:

65. Դաւիթի մեղանչելն ու զզջումն.

Ամեն թշնամիներին լաղթելից յետով, Դաւիթ և իր թագաւորութիւնը վալելում էին խաղաղութիւն և առատութիւն: Բայց շատ անգամ բախտաւորութիւնը լինում է մեզ վնասակար: Թշուառութեան ժամանակ Դաւիթ էր առաքինի, բայց լիութեան, հպատակութեան և զօրութեան ժամանակ նա լնկաւ փորձութեան մէջ և գործեց սարսափելի լանցանք:

Սկսաւ պատերազմ Ամոնացոց դէմ: Առհասարակ թագաւորներն իրանք առաջնորդում էին զօրքին. բայց Դաւիթ կամեցաւ վայելել հանգստութիւն. նա ինքը չգնաց կռիւ և յանձնեց զօրքը իր զօրավար Յովաբին, իսկ ինքը մնաց Երուսաղէմում:

Մի անգամ, երեկոյեան մօտ, դուրս եկաւ նա յստակ օդ շնչելու իր պալատի տանիքի վրայ, որտեղից երևում էր բոլոր քաղաքն և ազատ, անգործ մարդու պէս նայում էր. ամեն կողմ հետաքրքրութեամբ: Անգործութիւնից ծնում են միշտ վատ մտքեր: Նա տեսաւ մի կին և գայթակղուեցաւ նրա գերբնական գեղեցկութեամբ: Այս կնոջ անունն էր Բերսաբէ: Սա էր Ուրիային կինն, որ Դաւիթի զօրավարներից մէկն էր և արժանաւոր մարդ էր: Դաւիթ զրկեց Ուրիային իր զօրաւոր Յովաբին մօտ նամակով, որի մէջ հրամայում էր նրան, որ Ուրիային զրկէ ամենից երկիւղալի տեղն և երբ պատերազմը սաստկանալ, նրանից բոլոր զօրքին լետ կանչէ, որ թշնամին կարողանալ անարդել սպանել նրան: Ամեն բան կատարուեցաւ Դաւիթի հրամանին համեմատ. Ուրիան սպանուեցաւ. իսկ նրա կին Բերսաբէն՝ սուզի օրերի անցնելից յետ, ամուսնացաւ Դաւիթի հետ:

Մարդկերանցից ամենից լաւն էլ կարող է ընկնէլ լանցանքի մէջ, բայց առաքինի մարդը չէ ընդունակ լամառելու իր լանցանքի մէջ և երկար ժամանակ հեռանալու բարի

զգացմունքներից, որ ունէր նա իր բոլոր անցեալ կեանքի մէջ և որոնք էին նրա երջանկութիւնն, Աստուած ինքը զրկում է նրան իր օգնութիւնը: Նա զրկեց Դաւթի մօտ Նաթան մարդարէին: Մարդարէն ասաց նրան. «Մի քաղաքում բնակում էին երկու մարդիկ. նրանցից մէկը հարուստ էր և միւսն աղքատ. Հարուստն ունէր ոչխարների և կովերի ամբողջ խաշներ, իսկ աղքատն ունէր միայն մի գառն, որին դեռ շատ փոքրիկ գնել էր. նա կերակում էր նրան և այն էր նրա բոլոր հարստութիւնը: Այս մասն էր հանում նրան իր աղքատ կերակուրից, մի ամանից նրա հետ խմում էր, և քնացնում էր նրան իր ծոցումը»: Բայց հարստի մօտ եկաւ հիւր. Նա չկամեցաւ նրա համար իր ոչխարներից մէկին մորթել, այլ խլեց աղքատից նրա սիրելի գառն և պատրաստեց նրանից կերակուր իր հիւրի համար»:

Սկզբումը Դաւիթ չհասկացաւ այս առածն, որի մէջ նկարագրում էր իր լանցանքը: Նա բարկացաւ շատ և գոռաց. «Հարագործն, որ խլեց աղքատից գառը, արժանի է մահուան»: — «Դու ինքդ վճռեցիր քո պատիժդ, ասաց Նաթան»: Այս խօսքերը շատ ներգործեցին Դաւթի վրայ: Նա ճանաչեց իր լանցանքի բոլոր վատութիւնը:

Նաթան շարունակեց. «Աստուած ասում է քեզ. «Ես օծեցի քեզ Խորայէլի թագաւոր. Ես ազատեցի քեզ Սաւուղի ձեռքից. Ես հպատակեցրէ քեզ ոչ միայն Յուդայի տոհմը, այլև Խորայէլացոց բոլոր տասներկու տոհմերը: Եթէ այս փոքրէ, կանեմ քեզ համար աւելի: Ինչու դու անարգեցիր քո Աստուծոյ պատուիրաններն և գործեցիր նրա առաջ այսպիսի անօրէնութիւն: Դու սպանեցիր Ուրիային թշնամու ձեռքով, դու առար նրա կնոջ քեզ կին: Այս պատճառով սուրը չէ հեռանալ քո տնիցդ: Քո լնտանիքեցդ կըծագէ քեզ վնաս»:

Դաւիթ սարսափելով և գողալով ասաց. «Ես մեղանչեցի Աստուծոյ առջելը»: — Եւ Աստուած ներում է քեզ մեղքդ»,

ասաց Նաթան. «Դու չես մեռնիլ ալժմ, բայց այս առաջին նրդիկ ներսաբէից կենդանիսչի մնալ»: Դժ նաև մնալ ու կանչելաւուղն էլ քանիցաւանգամ խոստովանեց, որ մեղանդէից Աստուծոյ առաջ, բայց Աստուած չէր ներում նրան. Աստուած կարգում է մեր սրտում եղածը: Նա աեսնում էր, որ Սաւուղի գողումն միայն խօսքերով էր: Բայց Դաւիթ զղում էր բոլոր սրտիցը: Այսպիսի զղման հետևանքն է միշտ ուղղուելը յայն զի նախախայլ զէ նորուածը այս Դաւիթի այս միջոցին գրեց այն գեղեցիկ սաղմոսն, որի մէջ կենդանին կարագրում է իր բեկեալ սրտի զգացմունքները: Այս սաղմոսը ակւում է այս խօսքերով. «Ողորմեան ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գիտութեան քում քանօրէնութիւնս իմ»: (Ողորմիք ինձ, Աստուած, քո մեծ ողորմութեամբ և քո շատ գիտութեամբ քաւիր իմ անօրէնութիւններս):

66. Աբիսողոմի ապստամբութիւնը.

Դաւթի որդիներից ամենից արժանայիշատակներն են՝ Աբիսողոմ և Սողոմոն: Աբիսողոմ ամենից գեղեցիկ մարդն էր բոլոր Խորայէլի մէջ: Արտաքուստ ոչինչ պակասութիւնն չունէր նա. մանաւանդ գեղեցիկ էին նրա մազերը. բայց նրա սիրաց փառասիրութեամբ լիքն էր. Նա մտքում դրեց չար խորհուրդ՝ իր հօրը գահից վայր գցելու, որ ինքը թագաւորէ նրա տեղ: Այս նպատակին աւելի հեշտութեամբ հասնելու համար նա ամեն կերպով աշխատում էր ազգի սէրն ստանալու: Գաղաքի դռան մօտ կանգնած, հարցնում էր անցկացսղներին. «Բնչ խնդրելու են գնում թագաւորից»: Եւ երբ մէկը պատմում էր իր գործը, Աբիսողոմ առում էր. «Քո գործքդ ճշմարիտ է, բայց թագաւորի մօտ չկայ մարդ, որ քո կողմդ բռնէ: Ո՞հ, թէ ես լինէի ազգի դատաւորը,

Ես ինքս կըլսէի ամենքին և ինքս կըդատէի արդարութեամբ»։ Ով որ կամենում էր նրան պատիւ տալ, որպիսի արժան է թագաւորի որդուն, Աքիսողոմ գրկում էր նրան։ Այսպէսով նա ազգին շատ սիրելի եղաւ և ամենքը կամենում էին նրան թագաւոր ունենալ։ Նոյնպէս իր կողմ ցցեց Աքիսոփելին՝ թագաւորի խորհրդականին էլ, որ մեծ պատիւ ունէր Խորայէլացոց մէջ։

Աքիսողոմ չէր կասկածում իր չար խորհրդի լաջողութեան մասին։ Նա գնաց թագաւորի մօտ և հրաման ինդրեց նրանից Քերըն քաղաքն երթալու, որ զահ բերէ Աստուծոյ, ինչպէս որ խոստացել էր։ Դաւիթ ասաց. «գնա, Տէրը քեղ հետ լինի, որդեակ»։ Աքիսողոմ, Քերըն հասնելից լետոյ, զահ բերդաւ և միենայն ժամանակ կազմեց դաւակցութիւն էլ հօր դէմ։ Նա առաւ թագաւորից հրաման միայն նրա համար, որ կասկածանքից ազատ լինի. երեսպաշտը բարեպաշտութեան դիմակի տակ ծածկում էր իր աւելի ժողովուրդ հաւաքելու միտքը։ Դեռ Քերըն գնալից առաջ, զրկեց նա հրեշտակներ Խորայէլացոց ամեն ցեղերին, հրամայելով լայտնել նրանց. «Երե կըլսուի փողի ձայնը, Աքիսողոմ Քերընում թագաւոր կընտրուի»։ Ժողովուրդը ամեն կողմից հաւաքւում էր նրա մօտ և լնտրեց նրան թագաւոր։

Գասպիթ, երբ իմացաւ տրս աւլստամբութիւնը, հարկաւոր համարեց հեռանալ փոքրաթիւ զօրքով, որ իր մօտ մընացել էր։ Այս փախուստի սկզբումն արդէն Աստուած զըրկեց Դաւիթին միթթարութիւն։ Նա ոտսվ փախաւ քաղաքից բոլոր իր լնտանքով և շատ ժողովուրդ հետեւց նրան։

Դաւիթ կանգնեցաւ Երուսաղէմի մօտ։ Այն ժամանակ եկան նրա մօտ Յովաբը, Աքիսան, Եթթի և բոլոր վեց հարիւր հոգիք, որոնք նրա թիկնապահներն էին։ Դաւիթ, երբ տեսաւ այլազգի Եթթիին, որին նոր էր առել ծառայութեան մէջ, ասաց. «գնա նոր թագաւորի մօտ, դու այլազգի ես, ես քեզ երէկ միտյն ընդունեցի ծառայութեանս մէջ և այ-

սօր դու կամենում ես ինձ ընկեր լինել թշուառութեանս մէջ։ Ես ինքս դեռ չգիտեմ, ինձ ինչ է լինելու»։ «Որտեղ էլ լինիս, թագաւոր, ասաց Եթթին, ես քեզ կըծառայեմ, ես գալիս եմ քեզ հետ կենդանի մնալու կամ մեռնելու»։ «Դընանք, եկ ուրեմն ինձ հետ», ասաց Դաւիթ շարժած այսպիսի հաւատարմութիւնից։ Ամեն ներկայ գտուողները լաց եղան և հետեւեցին Եթթիի օրինակին։ Ամենքը գնացին իրանց թագաւորի ետևից։

Դաւիթ անցաւ կեղեղատը բոլոր իր մարդոց հետ։ Այն ժամանակ եկան նրա մօտ Սարովիկ քահանայապետն և ամեն քահանաները բերելով Ուստի Տապանակը։ Բայց Դաւիթ ասաց. «գարձիր քաղաք Սուրբ Տապանակովդ. Եթէ Աստուծոյ հաճոյ կըլինի, կըդառնամ Երուսաղէմ երգրապատութիւն կըտամ Տապանակին Խորանում։ Խոկ Եթէ Աստուած կըթողնէ ինձ, ես այն ժամանակ կատարեալ հպատկութեամբ կամեմ. թող Քո կամքդ լինի. խոկ դուք գարձէք քաղաք»։

Դաւիթ գնաց բոկոտն Զիթենեաց սարի գլուխը, զլիխն մոխիր ածած և լաց լինելով։ Մեծ թշուառութիւնը նրա համար իր գահից զըկուելը չէր, այլ իր սիրելի որդու տպըստամբութիւնը։

Սեմէի, որ Սաւուղի թոռներից մէկն էր, դուրս եկաւ Դաւիթի առաջ։ Նա քարեր էր զցում Դաւիթի և նրա ուղեկիցների վրայ, անիծում էր և զոչում. «Փախէր, փախէր մեր երկրից, դու անօրէն մարդ։ Այժմ Աստուած վըէժինդիր է լինում Սաւուղի և նրա որդոց թափուած արիւնի համար, այժմ Աստուած տալիս է թագաւորութիւնդ քո որդուն»։

Աքիսան, Դաւիթին սիրող քաջ, հաւատարիմ և արի զինուրը զայրացաւ շատ, լսելով այսպիսի նախատանըներ ու զըպարտութիւններ և ասաց Դաւիթին. «Ի՞նչպէս է համարձակում այս տաելին անիծել իմ թագաւորիս։ Ես չեմ կարող համբերել այս բանին և կըկտրեմ այն լրբի գլուխը»։

Դաւիթ հեղութեամբ ասաց. «Միթէ դու մռացար, որ

իմ հարազարտ որդիս զէնք է բարձրացը և իմ դէմ։ Ուրեմն էլ ի՞նչ յարգանք կարող ես պահանջել օտար մարդից։ Թող նրան, թող անհծէ ինձ։ Գուցէ Աստղած կը ողորմի ինձ և նրա աշնէ քները կը դառնանան ինձ օրհնութիւններ։ Թագաւորը շարունակեց իր ճանապարհը, իսկ Սեմէին երկար ժամանակ հետևում էր նրան իր անէ քներով, սարից նրա վրայ քարեր զցելով և հող ցանելով։

Դաւիթ իր բոլոր ուղեկիցներով անցաւ Յորդանանը և հեռացաւ անապատ։ Այստեղ Կարօտութիւն էին քաշում նրանք ամեն պաշարների կողմից։ Մի առաքինի ծերունի, ներգէլի անունով և ուրիշ էլի երկու ճշմարիտ մարդիկ բերին թագաւորի և նրա ընկերակիցների համար անկողիններ, զանազան ամաններ և ամեն տեսակ ուտելով պաշարներ։ Ինչպիսի զանազանութիւն անարժան Սեմէին վարմուքի և առաքինի Բերգէլիի ազնութեան մէջ։ Մէկը բամբասում է իր թագաւորին, տեսնելով նրան թշուառութեան մէջ, կարծելով թէ նա զուրկ է իրան վնասելու միջոցներից, իսկ միւսն աշխատում է նրան օգնութիւն տալ՝ չլուսալով նրանից ոչինչ վարձատրութիւն։

67. Արքիսողոսի մահը.

Դաւիթը մնաց անապատի մօտ եղած Մանալիմ (բանակ) քաղաքում և կարգի դրեց իր գորքը։ Նա բաժանեց նրան երեք մասի. մի մասի վրայ զօրավար դրեց Յովաբին, միւսի վրայ Արքիսալին և երրորդի վրայ Եթթիին։ Զօրքն անցում էր նրա մօտով և նա իր երեք զօրավարներին ասում էր. «Խնալեցէք իմ որդի Արքիսողոմին»։

Արքիսողոմն էլ նմանապէս հաւաքեց բազմաթիւ զօրք և հանդիպեցաւ Դաւիթի զօրքին Եփրեմի անտառում։ Արքիսողոմի զօրքը ջարդուեցաւ և ինքը շտապեց ազատուել փախ-

չելով։ Նա գնում էր ջորիի վրայ նստած խիտ անտառի միջով։ Արքիսողոմի երկար գանգուր մազերը փաթաթուեցան ծառի ճիւղերին և ինքը կախուեցաւ, ջորին տակից դուրս եկաւ և գնաց։ Դաւիթի զինւորներից մէկը տեսաւ այս և յարտնեց Յովաբին։ Ինչու չսպանեցիր դու նրան, ասաց Յովաբը, ես քեզ կը տալի դրա համար լիսուն սիկլ արձաթ»։ Խոկ արդար զինւորը պատասխանեց. «Ես չէի առնուլ քեզնից հազար գահեկան էլ նրա համար, որ թաթաւէի ձեռս իմ թագաւորիս որդու արիւնում։ Ես լսեցի, ինչպէս թագաւորը հրամայում էր քեզ, Արքիսալին և Եթթիին ասելով. «խնալեցէք իմ որդի Արքիսողոմին»։

Յովաբ զայրացած լինելով ատելախտ և անհնազանդ որդու դէմ, առաւ երեք նետ, գնաց այն կողմն, ուր Արքիսողոմն էր և խիեց նետը նրա սրտին. բայց որովհետեւ Արքիսողոմ դեռ կենդանի էր, Յովաբի ուղեկիցներից, տասն երեսարդները, որոնք հասան նրա մօտ, զրկեցին նրան կեանքից։ Այս ժամանակ Յովաբ հրամալեց փողեր ածել, որ պատերազմը վերջացնեն, որովհետեւ խնալում էր նա իր հայրենակիցների արիւնը։ Արքիսողոմի մարմինը գցեցին անտառում փոսի մէջ և ծածկեցին քարի շեղջով։

Յալտնի բան է, ամեն այստեղից անցկացողը տեսնելով այս լիշտակարանը կը սարսափէր և միտք կը բերէր, Աստուծոյ պատուիրանը. «Պատուիր քո հօրդ, և մօրգ, քեզ բարի կը լինի և երկար կեանք կունենաս երկրիս վրայ»։

Դաւիթը քաղաքի դռան մօտ նստած սպատում էր պատերազմի յաջողութեան աւետիքի։ Լուր բերողը, որ պատերազմի տեղից եկաւ, բերեց նրան Արքիսողոմի մահուան համբաւը։ Դաւիթ շատ տխրեցաւ, մտաւ սենեակ և գառնապէս լաց էր լինում, աղաղակելով. «Որդեակ իմ Արքիսողոմ, որդեակ իմ, Արքիսողոմ որդեակ իմ, մէկ, ով կը դարայ ինձ մահ քատեղ. Արքիսողոմ, որդեակ իմ Արքիսողոմ»։ Այսպէս էր ողբում Դաւիթ իր ապերախտ որդու մահն, որ կամենում էր նրան գահից զրկել։

68. Դաւթի իր թագաւորութիւն դառնալը.

Բոլոր ժողովութը ուրախութեամբ Դաւթի առաջ դուրս եկաւ նրան ընդունելու: Սուրհանդակներ զրկուեցան թագաւորի մօտ խնդրելու նրան, որ շուտ դառնայ իր մայրաքաղաքը: Դաւթի էլի մտաւ Երուսաղէմ:

Երբ Յորդանանին մօտեցաւ, հանդիպեցաւ Սեմէիին, այն Սեմէիին, որ այնպիսի ցածութեամբ նախատում էր նրան, զրպարտում և անիծում նրան անբախտութեան ժամանակ: Սեմէիին ընկաւ թագաւորի ոտները, ասելով. «Թագաւոր, մոռացիր այն զրկանքներն, որ ես քեզ տուի, քո Երուսաղէմից փախչելու օրդ, ես յանցաւոր էի քո դէմ, բայց այժմ ես առաջինը չեմ արդեօք, որ քո առաջդ դուրս եկայ»: Արիսան գոչեց. «Եւ դեռ համարձակում է պարծենալ, միթէ Սեմէիին կենդանի կը մնայ, նա, որ անիծում էր Աստուծոյ Օծեալին»: Բայց ազնիւ սիրտը միշտ պատրաստ է ներելու: Դաւթի ասաց Արիսային. «Ինչու դու աշխատում ես ինձ վատ գործի մէջ գցել: Այսօր չպէտք է կորչի ոչ մի Խորայէլացի: Ոչ արդեօք այսօր դառայ էլի Խորայէլացոց թագաւոր»: Յետոյ դառնալով Սեմէիին, ասաց նրան քաղցրութեամբ. «Սեմէի, դու չես մեռնիլ իմ ձեռքից»:

Էերզէլին՝ ութսուն տարեկան ծերունին, նմանապէս եկաւ Դաւթի առաջ ուրախ սրտով: Թագաւորը շնորհակալ եղաւ նրան և ասաց. «Եկ ինձ հետ, գնանք Երուսաղէմ. այնտեղ կը կենաս ինձ մօտ հանգստութեան և լիութեան մէջ: Էերզէլին պատասխանեց. «Թագաւոր, ես արդէն ուժուն տարեկան եմ, ինձ էլ երկար ժամանակ չէ մնում ապրել երկիս երեսին: Ես՝ էլ համ չեմ տեսնում ոչ ուտելում և ոչ խմելում, երգեցողների երգերն ինձ էլ չեն ուրախացնում, ես միայն ծանրութիւն կը լինիմ իմ թագաւորիս. իսկ վարձատրութիւն ինձ ամենեին հարկաւոր չէ: Ես քեզ կամե-

նում եմ էլի փոքր ինչ ուղեկից լինել և յետոյ հրաման տուր ինձ տուն յետ դառնալ, այնտեղ կսմենում եմ վերջացնել օթերս և թաղուել հօս և մօրս գերեզմանների մօտ»:

Դաւթի բոլոր ազգի ուղեկցութեամբ Յորդանանն անցնելից յետոյ զրկեց Բերզէլին և օրհնեց նրան. բայց էլի հօրը վարձատրելու համար, առաւ նրա որդին իր արքունիք և շատ ողորմած եղաւ նրան: Խոկ Բերզէլին դարձաւ իր տուն:

69. Դաւթի մահը.

Դաւթի հասաւ խորին ծերութիւններ և զգում էր արդէն իր մահուան մօտենալը: Նա չէր բաւականում նրանով, որ բոլոր կեանքը նուիրած էր Աստուծոյ անունը փառաւորելու և իր հալատակների բարօրութեանը, այլ կամենում էր դեռ իր մահից յետոյ էլ օգտաէտ լինել: Ահա այն գեղեցիկ բարեկարգութիւններն, որ նա արաւ իր մահից առաջ:

Դաւթի սրտումն երկու ցանկութիւններ կային, որ կամենում էր կատարուած տեսնել իր մահից առաջ: Առաջինը՝ կանգնել հոլակապ տաճար Աստուծուն և երկրորդը՝ տալ թագաւորութիւնն իր որդի Սողոմոնին: Այս առաջին ցանկութիւնը բաց արաւ նախան մարգարէին, որ յայտնեց նրան Աստուծոյ կամքը:

Իր մահից փոքր ժամանակ առաջ Դաւթի հաւաքեց Երուսաղէմում ամեն իշխաններին, մէծամեծներին և բոլոր Խորայէլացոց ազգին, որ ամենի առաջեւ բաց անէ Աստուծոյ կամքն, որ նախան մարգարէի միջնորդութեամբ յայտնուեցաւ իրան: Բազմաթիւ ժողովի մէջ ասաց նա յետագայ խօսքերը.

«Եղբայրներ, իմ ժողովներս, ես կամենում էի կանգնել տուն, որ գնուի նրա մէջ Ուխտի Տապանակն և պատրաստեցի ամեն հարկաւոր նիւթները նրա համար. բայց Աստուծած

ասաց ինձ. «Դուք չես կանգնել ինձ տղւն, որի մէջ վառաբանուի. Իմ անունս. դու զիւնոր էիր և շատ արիւն թափեցիր: Քո որդի Սողոմոնը թող կանգնէ իմ տղւնս: Նա ինձ որդի կը ինի և Ես նրա հայրը. Ես կը զօրացնեմ նրա թագաւորութիւնը, եթէ կը պահէ իմ պատուիրաներս:»

«Աստուծոյ իրան առջև բոլոր ազգի ներկայութեամբ, պատուիրում եմ ձեզ, որ եթէ կատարէք Աստուծոյ պատուիրաններն, այն ժամանակ հանստութեամբ կը տիրէք երկրին, որ Աստուծ ձեզ տուեց և կը տաք այն ձեր որդոց ժառանգութիւն:

«Իսկ դու, որդեակ Սողոմոն, պաշտիր քո նախնիքների Աստծուն, և ծառայիր նրան սուրբ սրբով: Աստուած փորձում է մեր սրտերը, տեսնում է մեր խորհուրդները: Փընտրիր Աստծուն և կը գտնես նրան, բայց եթէ կը հեռանաս նրանից, նա էլ կը թօղնէ քեզ յաւիտեան: Աստուած ընտրեց քեզ, որ կանգնես նրան տաճար, կատարիր Ամենաբարձրեալի կամքը»:

Դաւիթը տաճարի շինութեան համար թողեց Սողոմոնին շատ սոկի, արծաթ, պղինձ, երկաթ, քար և փայտ: «Զնայելով, որ աղքատ էի Ես, ասաց նա, էլի կարողացաւ Աստուծոյ տան շինութեան համար հաւաքել ալսքան նիւթեր»:

Ամենքը հետեւցին թագաւորի օրինակին. ամեն մարդ բերում էր շինութեան համար՝ որչափ իր կարողութիւնը ներում էր, ոսկի, արծաթ, թանգաղին քարեր, երկաթ, պղինձ և ալյն: Ֆողովուրդն ուրախանում էր տեսնելով տաճարի շինութեան համար սրտանց բերած նուերների այնքան բազմութիւնը, բայց թագաւորն ինքը ամենից աւելի ուրախանում էր: Նա բարձր ձայնով, բոլոր ազգային ժողովի առջև, փառաբանում էր Աստծուն:

Դաւիթ շնորհակալութեան զոհ բերաւ Աստծուն և տոնեց բոլոր ազգի հետ միասին այս օրը:

Սողոմոնը գեռ երիտասարդ էր, երբ նստաւ Խորարէլի գահը: Թէ ինչպիսի զգացմունքներով ոգեսրած էր նա իր թագաւորութեան սկզբին, կարելի նկատել յետագայ խնդիրքից: Աստուած երազում ասաց նրան. «Խնդրիր ինձանից, ինչոր ուզում ես»: Սողոմոն պատասխանեց. «Ես գեռ երիտասարդ եմ և անփորձ, Դու, Տէր Աստուած, յանձնեցիր ինձ բազմաթիւ ազգի կառավարութիւնը. Խնդրում եմ Քեզնից սուրբ սիրտ և հանճար, որ կարողանամ կառավարել ժողովրդեան և դատել նրան արդարութեամբ և առանց կողմնա-

ւեցաւ Խորայէլացոց թագաւոր: Խշանները, մեծամեծներն ու ազգը ուրախանում էին այս ընտրութեան վրայ: Ալսպէս արքունի գործքերը կարգադրելից յետով, Դաւիթ յանձնեց կառավարութիւնն իր որդուն: Խորայէլացու անձնութեամբ այս Մահուան մահճումը պառկած, Դաւիթ ասաց Սողոմոնին. «Ես գնում եմ այնտեղ, ուր ամեն մահկանացու պէտք է երթալ, իսկ դու միիթարուիր և եղիլ կատարեալ մարդ: Պահիր Աստուծոյ ուխտը, գնա նրա ցոյց տուած ճանապարհով և կատարիր Մովսէսի օրէնքներումը գրած պատուիրանները: Թաղ կատարուի Աստուծոյ իսուսքը, որ նա ինձ ասաց, «Եթէ քո որդիքդ հաւատարիմ կը մնան իմ պատուիրաններիս, քո զաւակիդ թագաւորութիւնը Խորայէլի գահից երբէք չի գագարիլ»:

Գլխաւոր խոստումն, որ Աստուած տաւեց Դաւիթին և որ միսիթարեց նրան մահուան ըոպէին, էր այն թէ, Դաւիթի զաւակից կը ծնի Փրկիչը:

Դաւիթ վախճանեցաւ խորին ծերութեան մէջ, թագաւորեց Սաւուղից յետոյ քառասուն տարի և թաղեցին նրան Սիօն սարի վրայ:

70. Սողոմոն թագաւորը.

Սողոմոն գեռ երիտասարդ էր, երբ նստաւ Խորարէլի գահը: Թէ ինչպիսի զգացմունքներով ոգեսրած էր նա իր թագաւորութեան սկզբին, կարելի նկատել յետագայ խնդիրքից: Աստուած երազում ասաց նրան. «Խնդրիր ինձանից, ինչոր ուզում ես»: Սողոմոն պատասխանեց. «Ես գեռ երիտասարդ եմ և անփորձ, Դու, Տէր Աստուած, յանձնեցիր ինձ բազմաթիւ ազգի կառավարութիւնը. Խնդրում եմ Քեզնից սուրբ սիրտ և հանճար, որ կարողանամ կառավարել ժողովրդեան և դատել նրան արդարութեամբ և առանց կողմնա-

պահութեան։ Տուր ինձ միտք, որ կարողանամ բարին չարիցը զանազանել. որովհետև ինչպէս կարելի է առանց իմաստութեան կառավարել այսպիսի բազմաթիւ ազգին։»

Այս խօսքերը հաճոյ թուեցան Աստծուն. Նա ասաց Սողոմոնին. «Որովհետև դու չխնդրեցիր ինձանից ոչ երկար կեանք, ոչ քո թշնամիներիդ մահ, ոչ փառք և ոչ հարստութիւն, այլ խնդրեցիր իմաստութիւն, Ես տալիս եմ քեզ ոչ միայն ինչ որ խնդրեցիր, այլև ինչ որ չխնդրեցիր, այն է՝ հարստութիւն և փառք։ Ես կըտամ քեզ միտք և իմաստութիւն. քեզ նմանը չէ եղել քեզնից առաջ և ոչ էլ կըլինի քեզնից յետոյ։ Միայն պահիր իմ ուխտս և վարութիր իմ պատուիրաններիս յարմար, ինչպէս վարւում էր քո հայրդ։»

Սողոմոն զարթեցաւ ուրախութեամբ լիքը սրտով և երուսաղէմում Ուխտի Տապանակի առաջին բերաւ Աստծուն շնորհակալութեան մատաղ։ Շուտ սրտնից յետոյ եկան նրա մօտ երկու կանալք։ Սրանցից մէկն ասում էր.

«Թագաւոր, ես քեզ մի խնդիրք ունիմ ասելու. Ես բնակում եմ այս կնոջ հետ միասին մի տան մէջ, ուր բացի մեր երկուսից ուրիշ ոչ ոք չկայ։ Երկուսս էլ ունէինք մի մի երեխայ։ Նա քնած տեղը, երբ ես էլ քնած էի, խեղդեց իր որդուն, իմ կենդանի երեխաս վեր առաւ իր մօտ և իր մեռած երեխան դրեց ինձ մօտ։ Առաւոտ երբ զարթեցայ, տեսայ այս մեռած երեխային. բայց լաւ նայելով ճանաչեցի որ երեխան իմ չէ, այլ նրանն է։» Միւս կինն ասաց. «այդ սուտ է, իմ երեխաս կենդանի է, այլ քո երեխադ մեռաւ։» — «Զէ։ Կանչեց առաջինը. «դու սուտ ես ասում։» — Այսպէս վիճում էին նրանք թագաւորի առջև։ «Տուէք սուրը», ասաց Սողոմոն։ Սուրը բերին և Սողոմոն ասաց. «Կէս արէք կենդանի երեխան և տուէք ամեն մի կնոջ մէկ կէսը։» Այս խօսքերը լսելիս հարազատ մօր սիրտը սարսեցաւ. «Զէ, թագաւոր, աղաղակեց նա, մի հրամայիր երեխան սպանել. տուր նրան կենդանի այս կնոջ։» Իոկ միւսը ասաց. «լաւ է նրան

կէս անել, թող ոչ դրան լինի և ոչ ինձ։» Այս խօսքերից թագաւորն այն ըոպէին ճանաչեց իսկական մօրը։ Մայրական սէրը յայտնեց նրան։ Սողոմոն ասաց. «տուէք երեխան առաջին կնոջ. նա է նրա մայրը։» Այս դատաստանը յայտնի եղաւ Խորակէլի բոլոր երկրում և թագաւորը հասարակաց յարգութեան արժանացաւ։ Ամենքը տեսնում էին, որ Աստուած նրան իմաստութիւն է տուել։ Այս իմաստութիւնը փառաւորեց նրան ամեն տեղ։ Նրա թագաւորութեան ժամանակ Խորակէլացիները վայելում էին խաղաղութիւն և հանգըտութիւն։ Ամեն դրացի թագաւորները Սողոմոնի հետ բարեկամութեան ուխտ դրին, և նրա ամեն մի հպատակը կարողանում էր առանց երկիւղի նստել իր այգում և իր թզենու տակ։

71. Տաճարի շնորհիւնը.

Սողոմոն կանգնեց Աստուածոյ հոյակապ տաճարը։ Երբ շինուածը վերջացաւ, ժողովեցան ամեն ծերերն ու Խորակէլացոց բոլոր ազգը։ Քահանաներն այս հանդիսաւոր ժողովի առջև տեղափոխեցին Ուխտի Տապանակը տաճարի ամենից ներքին մասը, որ կոչւում էր Սրբութիւն սրբոց։ Պատրաստած էին շատ զոհեր։

Սողոմոնը բոլոր ազգի առջեւը մօտեցաւ զոհարանին, ծունը իջաւ և իր աղօթքումն ասաց յետագայ խօսքերն էլ.

«Տէր, Խորակէլի Աստուած, Դու ես տիեզերքի միակ Աստուածը. բացի Քեզանից ուրիշ Աստուած չկայ ոչ երկնքում և ոչ երկրում. Դու տալիս ես Քո ողորմութիւնդ ամենին, որոնք ճշմարտութեամբ պաշտում են Քեզ. թող կատարուին իմ հօրս Գաւթին տուած ամեն Քո խոստումներդ։ Յիրաւի կը ընակի՞ արդեօք Աստուած մարդոց հետ երկիւս վրայ։ Եթէ երկինքն և երկնից երկինքը չեն բաւական Քեզ պարունակելու,

առաւել ևս այս տաճարը, որ ես շինեցի Քո անուանդ համար։ Տէր և Աստուած իսրայէլի, այս աղօթքի տանը մէջ նայիր մեր—Քո ծառաներիդ վրայ. Թողբարձրանան այստեղից մեր խնդիրքները Քեզ մօտ, ցերեկ և գիշեր լսիր մեզ։ Երբ մեր մեղաց համար կը փակուի երկնքի դուռը, կը դայ երաշտութիւնը և Քո ժողովուրդը զղջալով և բեկեալ սրտով կը դայ այս տաճարում աղօթելու, լսիր նրա խնդիրքի ձայնը. ներիր նրան իր յանցանքն և ջրիր երկիրս անձրեով։

«Ինչպիսի թշուառութիւն էլ որ հասանի այս թագաւորութեան՝ սով, ջրհեղեղ, երկրաշարժ, ցաւ, կրակ, այլազգիների յարձակմուներ — լսիր Քո մարդոց, որպա՞ այս տաճարումս աղօթք կանեն, և ողորմիր նրանց։»

«Եթէ կը դայ այլազգի հեռու երկրից այս տաճարում Քեզ աղօթք անելու, լսիր նրան էլ, Տէր Աստուած. կատարիր նրա խնդիրքը, թո՞ղ իմանան երկրիս ամեն ազգերն Քո անուանդ և երկնչին Քեղանից և գիտենան, որ Քո անուանդ դրած է այս տաճարիս վրայ, որ ես Քեզ կանգնեցի։»

Երբ աղօթքը վերջացրեց, Սողոմոն վեր կացաւ, օրհնեց բոլոր ազգին և յորդորեց նրան պահել Աստուծոյ ամեն պատուիրանները և չանցնել Մովսէսին տուած օրէնքներից։ Այն ժամանակ երկնքից ընկաւ կրակ պատրաստած զոհերի վրայ և բոլոր ժողովուդն ընկաւ գետին՝ փառաւորելով Աստծուն։

72. Սողոմոնի մահը.

Նարունակ բախտաւորութիւնը, Սողոմոնի սրտում աւելի սէրև շնորհակալութիւն զարթեցնելու տեղ գէպի Աստուած, նրան փչացրեց։ Նա ճշմարիտ ճանապարհից մոլորուեցաւ և սկսաւ գէպի կռապաշտութիւն հակիլ։ Այսպէս մարդոց ամենից իմաստունն էլ, եթէ իր կրքերին յանձնէ իրան, նա էլ կընկնի մոլորութեան մէջ,

Սողոմոնը շատ կանալիք ունէր և ընդդէմ օրէնքների, որոնք արգիլում էին ամուսնութիւն կռապաշտների հետ, կային նրա կանանց մէջ մի քանի կռապաշտներ էլ։ Իր ծերութեան ժամանակ, նրանց սիրտը գրաւելու համար, նա հրաման տուեց շինել կոքերի բագիններ Երուսաղէմի մօտերումն։ Այսպէսով ինքն օրինակ տուեց ազգին Աստուծոյ օրէնքից անցնելու։

Աստուած յայտնեց Սողոմոնին, որ նրա թագաւորութիւնը կը բաժանուի և թէ այս թշուառութիւնը կուշանայ փոքր ինչ նրա հօր Դաւթի առաքինութիւնների համար, ինքը Սողոմոնը չի տեսնիր այդ, այլ կը լինիր նրա որդւոյ ժամանակը։

Սողոմոնի ճշմարիտ Աստուածանից հեռանալու ժամանակից սկսան խոռվութիւնները խանդարել նրա հանգստութիւնը և նա ինքն, իր կեանքը զեղիսութեան մէջ անցկացնելով, վաղ ծերացաւ։ Իր մահից փոքր ժամանակ առաջ Սողոմոն զղջաց և այս ժամանակ գրեց իր զիրքը երկրային ամեն բաների ունալութեան վրայ։ Այս զիրքը Աստուածաշնչումն կոչւում է ժողովող (Եկեսիաստէս)։ Այս զիրքի գլխաւոր մըտքերը յետագաներն են. «Ես մեծ գործքեր արի, շինեցի տներ, ունէի շատ ծառաներ և աղախիններ. ունէի մեծ խաշներ, հաւաքեցի անթիւ գանձեր, ինձ մօտ պահում էի երգիչներ և երգեցող կանանց. ամեն կարելի ուղախութիւններն անում էի, կատարում էի ամեն ցանկութիւններս, բայց ոչինչ չէր ուրախացնում սիրտս. Ես տեսայ, որ ամենն ունալութիւն էր և հոգւոյ չարչարանք։ Արեգակի տակ ոչինչ հաստատ բան չըկալ։ Ամեն իմաստութիւններ բովանդակութիւնն է յետագայն. «Վախեցիր Աստուածանից և պահիր նրա պատուիրանները»։

73. Թագաւորութեան բաժանուիլը.

Սողոմոնի մահից յետոյ նրա որդի Մոբովամը նստաւ Խորական կահը: Նա չէր լսում իր հօր ծեր և փորձառու խորհրդականներին և վարում էր ազգի հետ հպարտութեամբ ու խստութեամբ, որ և եղաւ պատճառ նրա թագաւորութեան բաժանուելուն: Տասն ցեղեր ապստամբեցան նրանից և ընտրեցին թագաւոր Յերօբովամին, Եփրեմի տոհմից: Միայն երկու ցեղ մնաց Հաւատարիմ Դաւթի տան, այն է՝ Յուղալի և Բենամինի ցեղերը: Տասն ապստամբած ցեղերը Յերօբովամի առաջնորդութեամբ կազմեցին առանձին տէրութիւն, որ կոչուեցաւ Խորայէլի թագաւորութիւն: Մի քանի ժամանակից նրա մայրաքաղաքը դառաւ Ամամբիան: Ամեն այս տասն ցեղերը յաճախ ընկնում էին կռապաշտութեան մէջ:

Մոբովամը թէւ իր ձեռին ունէր մայրաքաղաքն Երուսաղէմ, միայն տիրում էր ազգի շատ փոքր մասին: Նրա տէրութիւնը կոչում էր Յուղալի թագաւորութիւն: Այս ժամանակից բոլոր Խորայէլացոց ազգը կոչում էր յաճախ Յուղալ: Աակալն բացի սրանից, թէ Յուղալի թագաւորութեան և թէ Խորայէլի տէրութեան հալատակները կոչում էին նմանապէս Երայեցիք, Եբերի անունով, որ Սեմի զաւակն էր և Աբրահամի նախահայրը:

Երկու թագաւորութիւնների բաժանուելը շատ վնասակար հետեանքներ ունեցաւ. Երկու թագաւորութիւնները շատ անգամ պատերազմում էին միմեանց դէմ: Յուղալի թագաւորները բացի միքանիսից, մոռանում էին ճշմարիտ Աստծուն, ազգն ընկաւ տգիտութեան և մեղքի մէջ:

Թագաւորների և ազգին ուղղելու համար, Աստուած զըրկում էր Երբեմն Երբեմն սուրբ մարգարէներ: Սրանք նախագուշակում էին ապագան և աշխատում էին մարդոց ուղղելու:

Յուղալի թագաւորների անուններն, որոնք թագաւորեցին երկու ցեղերի վրայ, են՝ Ռոբովամ, Սբիու, Ասա, Յովսափատ, Յովրամ, Ոքողիա, Յովկաս, Ամասիա, Ազարիա կամ Ոզիա, Յովգաթամ, Աքազ, Եղեկիա, Մանասէ, Ամովն, Յովսիա, Յովագագազիմ. Յեքոնիաս, Սեղեկիա:

Խորայէլի թագաւորների անուններն, որոնց կառավարեցին տասն ցեղերին, են՝ Յերօբովամ Ա., Նագատ, Բասաս, Էլա, Զամբը, Ամը, Աքաբ, Ոքողիա, Յովկամ, Յէօւ, Յովգագազ, Յովսա, Յերօբովամ Բ., Զաքարիա, Սելում, Մանալիմ, Փակէէ և Ովսէէ:

74. Յուղալի թագաւորների վրայ.—Յուղալի թագաւորութեան ընկնիլը.

Խորայէլի ցեղերի թշուառ բաժանմունքից յետոյ, ինչու ասացինք, Դաւթի զաւակները թագաւորեցին միայն երկու ցեղերի վրայ, այն է՝ Յուղալի և Բենիամինի. Նրանց մայրաքաղաքն էր Երուսաղէմ, ուր էր Ազգունի Հոլակապ տաճարը. բայց Յուղալի թագաւորների մեծ մասը Աստուծու օրէնքից հեռանում էր և ընկնում կռապաշտութեան մէջ: Յուղալի քսան թագաւորներից միայն ութն էին բարեպաշտ: Ահա Նըրանց անունները. Ասա, սրա որդի Յովսափատը, Յովսա, Ամասիա, սրա որդի Ազարիան, սրա որդի Յովգաթամը, Եղեկիա և Յովսիա:

Միանգամ Դաւթի ցեղը հազիւ ազատուեցաւ ջնջուելից: Աստուած հրաշալի կերպով տղատեց այս բարեպաշտ թագաւորի յետագաներից մէկին միայն, որովհետեւ սրան խոստացած էր, որ նրա զաւակից կը ծնի Մեսիան:

Յովլամը, Յովսափատի որդին, իրան կին ունէր Խորայէլի չար թագաւորի՝ Աքաբի աղջկան՝ Գոգողիալին: Յովլամի մահից յետոյ շուտ վախճանեցաւ նրա որդի Ոքողիան էլ:

Ոքողիալի մայրը, Գոդողիան, իշխանասէր, անիւնահեղ կինը,
կամենալով ինքը թագաւորել, վճռեց արքունի ցեղը ջնջել:
Այս սարսափելի սպանութեան ժամանակ Ոքողիալի մի տա-
րեկան որդի Յովասին թաքցրին: Նրան, ծծմօր հետ միա-
սին ազատեց իր ազգականը, Յովիդա քահանայալետի կինը,
Աստուծոյ տաճարում: Երեխան կրթուեցաւ քահանաների մէջ
Աստուծոյ տանը և նրա հովանաւորութեան տակ վեց տարի:
Գոդողիան չէր իմանում նրա կենդանի լինելը:

Երբ Յովասը եօթն տարեկան դառաւ, Յովիդա քահա-
րապետը ժողովեց բոլոր քահանաներին Կետացիներին
և պատեց տաճարը զինաւորուած մարդերով, որոնց հաւատար-
մութեան հաւասարի էր. ժողովուրդը մեծ հետաքրքրութեամբ
ժողովեցաւ տաճարի մօտ սպասելով մի արտաքոյ սովորու-
թեան բանի: Այս ժամանակ քահանայալետը գուրս հանեց
եօթն տարեկան երեխային և աղաղակեց. «Յուդայիք, ահա
ձեր թագաւորը Յովաս, Ոքողիալի որդին, որ ազատուեցաւ
Գոդողիալի ձեռքից»:

Իոլոր ազգի առաջին Յովասն օծուեցաւ թագաւոր և բո-
լոր տաճարը լքցուեցաւ փողերի ձախով և ուրախութեան աղա-
զակներով: Ազգն ուրախութեամբ ընդունեց մատաղ թա-
գաւորին, որ Դաւթի ցեղի ճիւղն էր:

Յովաս սկզբումն թագաւորում էր բարեպաշտութեամբ.
Բայց Յովիդայի մահից յետ, մեծամեծները խնդրեցին և ստա-
ցան թագաւորից հրաման աղօթք անելու տաճարում, ոչ թէ
ճշմարիտ Աստծուն, այլ կուռքերին: Յովիդայի որդին Զա-
քարիա քահանան ընդդիմացաւ այս բանին. Բայց թագաւո-
րի հրամանով քարկործուեցաւ տաճարի բակի մէջ: Զաքա-
րիան ասաց. «Աստուած կը լինի գատաւոր իմ և քո մէջ»:
Յովասը բազմաթիւ զօրքով ջարդուեցաւ Ասորոց թագաւորից
և յետոյ սպանուեցաւ իր սեփական ծառաների ձեռքով: Յո-
վասից յետոյ Յուդայում թագաւորեցին առհասարակ բարե-
պաշտ թագաւորներ՝ Ամասիան, յետոյ նրա որդի Ողիան,

որին յաջորդեց իր որդի Յովաթամը, բայց Յովաթամի որդի Աքազը
չհետեւեց իր նախորդների բարեպաշտութեան, նա փակեց Սողո-
մոնի կանգնած տաճարն և շինեց շատ սեղաններ կոքերի համար:

Աքազի բարեպաշտ որդին Եղեկիան, որի ժամանակ Խորա-
ցէլի թագաւորութիւնը վերջացաւ, բաց արաւ Աստուծոյ տա-
ճարը, զալդարեց նրան և քանդեց կոքերի բոլոր Սեղան-
ները: Սրա ժամանակ Ասորեստանի թագաւորը Սենեքերիմ,
Սաղմանասարի որդին, պաշարեց Երուսաղէմը, բայց մահուան
հրեշտակը մի գիշերում ջնջեց Ասորեստանցոց զօրքն և Սենե-
քերիմ, թողնելով Երուսաղէմի պաշարումն, դարձաւ նինուէ:

Մանասէն պաշտպանում էր կոապաշտութիւնն և ան-
մեղաց արիւնով ջրեց բոլոր Երուսաղէմը, միայն Ասորես-
տանցոց ձեռքը գերի ընկած, նա Աստուծոյ առաջին սրտանց
գլջացաւ և ստացաւ թողութիւն: Ովահա, Մանասէի թռոռ,
մինչև իր մահ մնաց առաքինի: Նա թագաւորեց ութը տարե-
կան և միշտ հաւատարիմ մնաց ճշմարիտ Աստծուն:

Յուդայի թագաւորութիւնը ծաղկեցաւ էլի հարիւր տա-
րի, Խորայէլի թագաւորութեան ընկնելից յետոյ վերջապէս
նրա վրայ էլ հասաւ Աստուծոյ արդար դատաստանը: Աս-
տուած մատնեց նրան Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագա-
ւորի ձեռքը: Այս աշխարհակալը Յուդայի Յովակիմ թագա-
ւորին իրան հարկատու արաւ: Եռու սրանից յետոյ նաբու-
գոդոնոսորը նրա որդի Յեքոնային բոլոր Յուդայի մեծա-
մեծներով միասին Բաբելոն գերի տարաւ: Տասն տարից յե-
տոյ, Սեղեկիա թագաւորը կամեցաւ ազատուել յաղթողների
ծառայութեան լծիցը: Նաբուգոդոնոսոր հրամայեց Սեղեկիայի
աչքերը հանել, ինչպէս կուտարարի և նրա ներկայութեան
ժամանակ սպանեցին նրա բոլոր որդոցը: Սոլոմոնի հոյակալ
տաճարն ալրեցին և Երուսաղէմ քաղաքը քարերի շեղ դարձ-
րին: Յուդայի ազգն իր կոյր թագաւորի հետ միասին գերի
գնաց Բաբելոն: Այս պատահեցաւ 588 տարի Քրիստոսից ա-
ռաջ: Այս ժամանակից Երուսաղէմ մնաց ամայի և տաճարը

քանդած ընկած էր, մինչև որ պարսից թագաւորը կիւրոս, Բաբելոնին տիրելով, Յուդայի գերիներին դարձրեց իրանց հայրենիքը:

75. Իսրայէլի թագաւորութիւն. Սուրբ մարգարէն Եղիա.

Իսրայէլի թագաւորներն, առանց բացառութեան, ամենքը հակամիտ էին դէպի կռապաշտութիւն. բայց ամենից չարն և անբարեպաշտն էին Աքաաբ և նրա կինը Յեզաբէլ. նրանք ոչ միայն Բահաղի կռքին բագին շինեցին, այլև Հայածում էին մարգարէներին և ամեն ճշմարիտ աստուածապաշտներին: Աքաաբ թագաւորի պալատականներից մէկը, Արդիու անունով, էր երկիւած Աստուծոյ, սա պահեց այրերի մէջ Աքաաբի և Յեզաբէլի դազանութիւնից հարիւր մարգարէներին. այնտեղ թաքուն տանում էր նրանց կերակուր և ամեն հարկաւոր բաները: Իսկ Եղիա մարգարէին փրկեց Աստուած ինքը:

Սուրբ Եղիան, մի անգամ յայտնուելով Աքաաբի առջևը, ասաց նրան. «Քո մեղքերի և կռապաշտութեանդ պատճառու յայտնում եմ քեզ, որ այս օրից սկսած երկնքից չի ընկնիլ ոչ մի կաթիլ անձրև և ոչ ցող, մինչև որ ես նրա համար աղօթք չանեմ Աստծուն»: Աքաաբը չվախեցաւ այս սպառնալիքից, այլ միտը դրեց թաքուն սպանել Եղիաին: Աստուած ինքը փրկեց մարգարէին, ասելով նրան. «Հեռացիր այս տեղից և թաքնութիր Քոռաթի հեղեղատի մօտ, որ Յորդանանի մէջ է վազում: Ես հրամակեցի իմ ագռաւներիս, որ քեզ կերակրեն»: Եղիան հպատակեցաւ և տեղափոխեցաւ Քոռաթի հեղեղատի ափը, Յորդանանի մօտ: Նա բնակում էր մարդոյ հասարակութիւններից հեռու. հեղեղատը

տալիս էր նրան խմելու ջուր, և առաւօտ ու երեկոյ ագռաւները բերում էին նրան միս և հաց ուտելու:

Բայց երկար ժամանակ անձրև չգալից և սաստիկ տապից Քոռաթի հեղեղատն էլ ցամաքեցաւ: Սուրբ Եղիան ջրի պակասութիւն էր զգում: Այն ժամանակ Աստուած ասաց նրան. «Գնա Սիրոնացոց Սարեփթա քաղաքն, այնտեղ ես կը հրամայեմ մի այրի կնոջ, որ քեզ կերակրէ»: Մարգարէն հպատակեցաւ և երբ եկաւ քաղաքի դռան մօտ, տեսաւ մի այրի կին, որ փալտ էր ժողովում: Սա էր այն կինն, որի մօտ Աստուած նրան զլկեց:

Սուրբ Եղիան մօտեցաւ այրի կնոջ և ասաց. «Ես շատ ծարաւ եմ, տուր ինձ ջուր»: Այրին շատ բարի կնիկ էր: Նա այն րոպէին գնաց ջրի ետևից: Եղիան նրա ետևից ձայն տուեց. «բեր ինձ հաց էլ, ես քաղցած եմ»: —Աստուած ինքը վկայ է, ասաց այրին, որ ես ոչ մի կտոր հաց չունիմ. ես ունիմ մի բուռ ալիւր միայն սափորիս մէջ և փոքր ինչ իւղ ամանումս. ես եկայ այստեղ, որ մի քանի կտոր փայտ գտնեմ և եփեմ մնացած ալիւրից նկանակ: Այս վերջին կերակուրն էլ ուտելից յետ, իմ որդուս հետ միասին մենք պէտք է մեռնենք սովից»: Եղիան ասաց նրան. «մի վախենար, եփիր նկանակդ, միայն այն այստեղ ինձ մօտ բեր և լետոյ կեփես քո և որդուդ համար էլ: Աստուած ասաց, «ալիւրդ և իւղդ չեն պակասիլ մինչեւ այն օրն, երբ կըզայ անձրև երկրիս վրայ»: Բարի այրին հաւատով լսեց մարգարէի խօսքերը, կատարեց ամենն, ինչ-որ ասաց նրան սուրբ Եղիան, կշտացաւ ինքն և իր որդին և այն ժամանակից ըսկըսած չէր պակասում ոչ նրա ալիւրն և ոչ իւղը:

Սուրբ Եղիան բնակեցաւ նրա տանը:

Մի քանի ժամանակից այրիի որդին հիւանդացաւ և մեռաւ: Սուրբ Եղիան տեսնելով մօր անմիտիթար արտասուքը, առաւ երեխայի մարմինը, դրաւ իր անկողնի վրայ. յետոյ ջերմեռանդ աղօթքով դարձաւ դէպի Աստուած, փչեց երեք

անգամ մեռածին և երեխան վեր կացաւ և յանձնուեցաւ եր մօրը:

աս թշուան և զայտ և սին մայմ միշ նայդա զյան
աս թշուան և զայտ և սին մայմ մայմ զայտ զայտ
մայմ մայմ 76. Եղիայի զոհը. մը դիմանո՞ւ զայտ
զայտ ճառասմ յամանան միշ նայդ զայտ մայմ ասախար:

Սուրբ Եղիայի մարգարէութիւնն, որ նա ասաց Աքաս-
քին, կատարուեցաւ. երեք տարի և վեց ամիս անձրեւ և ցօղ-
չիչաւ, ջրի աղբէւըները ցամաքեցան, երկիրը չտուեց ոչ ցո-
րէն և ոչ խոտ. Խորայէլի թագաւորութեան մէջ սարսափելի
թշուառութիւն էր: Ծառերը կանգնած էին առանց տերևի
և դաշտերն ընկած առանց բոյսի: Ամբողջ անտառներ չո-
րացան, անասունները կոտորւում էին և մարդիկ մեռնում:

Վերջապէս Խորայէլացիները զդշացան, դարձան Նրան,
որ միայն կարող է ջրել երկիրս պտղաբեր անձրեսով և զո-
ւացնել նրան երկնային ցօղով. նրանք սկսան աղօթք անել
ամենազօր Արարչին և Աստուած ասաց Եղիային. «Գնա, յալտ-
նուիր Աքապէի առջեւ. ես կրտամ երկրիս անձրեւ»: Սուրբ
Եղիան հպատակեցաւ:

Այս ժամանակ ինքն Աքապէ թագաւորը բարեպաշտ
Աքգիուի հետ ճանապարհորդութիւն էր անում, փնտրելով
մի ձոր հեղեղատով, ուր կարելի լինէր արածեցնել արքունի
ձիերն ու ջորիներն, աշխատելով գոնէ մի քանի անա-
սուն կենդանի պահել Խորայէլի երկրում: Թագաւորը գնում
էր մի ճանապարհով և Աքգիուն միւսով: Յանկարծ Եղիան
հանդիպեցաւ Աքգիուին և ասաց նրան. «Յայտնիր թագա-
ւորին իմ գալուստս»:

Աքգիուն յայտնեց թագաւորին, որ Եղիան, որին ամեն
տեղ փնտրում էր, ինքն եկել է նրա մօտ: Թագաւորն ասաց
մարգարէին. «Այն դռւ ես, որ խռովում ես Խորայէլի աղ-
գին»: «Ես չեմ այն», պատասխանեց Եղիան, «այլ դու ինք
և քո հօրդ առւնը: Դու մոլորեցրիր նրան Աստուծոյ ճա-

նապարհից և ստիպեցիր կոքերին երկրպագութիւն տալ:
զրկիր ամեն կողմ հրեշտակներ, որ ժողովեն քո ազգի Կար-
մելոս լեռան վրայ, թող գան այնտեղ նոյնպէս Բահաղի
քուրմերն էլ»:

Ամենը ժողովեցան Կարմելոս լեռան վրայ: Բահաղի քուր-
մերը չորս հարիւր լիսուն հոգի էին. իսկ Եղիան էր միայն
Ճշմարիտ Աստուծոյ մարգարէն: Նա առաջարկեց պատրաս-
տել երկու զոհ, մէկը Բահաղի համար և միւսը Իսրայէլի
Աստուծոյ համար և ասաց ազգին, թէ Ճշմարիտ Աստուծը
նա է, որ կըղբկէ երկնքից կրակ զոհի վրայ: Բոլոր ազգը
աղաղակելով համաձայնեցաւ այս առաջարկութեան:

Բահաղի քուրմերն առաջինն սկսան բերել իրանց զռհը:
Մորթեցին մի եղն, զրին նրան զոհարանի վրայ և քուր-
մերն սկսան աղաղակել. «Բահաղ, լսիր մեզ. Բահաղ, լսիր
մեզ»: Նրանք ծունը իջան, պտըտում էին սեղանի չօրս կող-
մովը, կանչում էին, բայց նա չէր կարողանում լսել նրանց,
նրանք ոչինչ պատասխան չստացան: «Բարձր ձայնով կան-
չեցէք», ասում էր Եղիան, «գուցէ քնած է ձեր Աստուա-
ծը կամ զբաղուած է ուրիշ գործերով. նրան պէտք է զար-
թեցնել»: Բահաղի քուրմերը գոռում էին, ծեծում էին ի-
րանց, մինչև որ արիւն էր դուրս գալիս. բայց ամենն իզուր
էր. այսպէս գոռում էին նրանք առաւօտից մինչեւ երեկոլ,
միայն ոչ ոք նրանց ոչ ձայն տուեց և ոչ լսեց: Այն ժամա-
նակ Եղիան ասաց պզգին. «մօտեցէք ամենքդ ինձ»: Ժողո-
վուրդը մօտեցաւ: Եղիան կանգնեց Աստուծոյ սեղան տաս-
ներկու քարերից, Խորայէլացոց ցեղերի թուով, սեղանի մօտ
հրամայեց փորել խորը փոս, զրեց փայտ զոհարանի վրայ և
մորթեց զոհի համար նշանակուած եղը: «Բերէք ջուր», ա-
սաց նա, «և ածէք զոհի վրայ»: Երեք անգամ բերին ջուր և
թրջեցին նրանով բոլոր սեղանն ու փոսը, որ փորած էր
սեղանի չօրս կողմում, մինչեւ բերանը լցուեցաւ: Այն ժա-
մանակ Եղիան, մօտենալով սեղանին, ասաց. «Տէր Աստուած

Արքահամի, Խսահակի և Յակովի, ցոյց տուր ալժմ Խսայէլացաց բոլոր ազգին, որ Մու ես միայն Աստուած և թէ ես, Քո ծառադ, անում եմ այս Քո հրամանովդ: Լսիր ինձ, Տէր, դարձրու այս մարդոց սրտերը դէպի Քեզ, որ միմիայն ես ճշմարիտ Աստուած»: Այս խօսքերն ասելիս, իջաւ կրակ երկնքից, վառեց փայտն, այրեցաւ զոհը և կրակը պատեց բոլոր գետինը սեղանի չորս կողմում և ցամաքեցրեց ջուրը փոսի մէջ: Ֆողովուրդն ընկաւ գետին, աղաղակելով. «Ճշմարիտ, Սա է Տէր Աստուածը»:

Սուրբ Եղիան հրամայեց Բահաղի քուրմերին սպանել, որոնք ազգին մոլորութեան մէջ էին գցում, կործանել կուռքերն և քանդել նրանց բազիները: Յետոյ Աքաաբին դառնալով ասաց. «Գնա տուն. Ես լսում եմ անձրեի մօտենալը»: Խսկ ինքը ելաւ Կարմելոսի գագաթն և ծունը իջած աղօթում էր: Արդարի աղօթքը զօրեղ է Աստուծոյ առաջ: Յանկարծ վեր կացաւ սաստիկ հողմ, սև ամպեր պատեցին երկինքն և նրանցից եկաւ մեծ անձրեւ և ոռոգեց Երկիրը:

Յեզաբէլ լսեց Բահաղի քուրմերի մահը, երդում տուեց, որ Եղիան էլ նոյն վիճակին կըհասնի. բայց Աստուած պահպանեց նրան Յեզաբէլի վրէժինդրութիւնից. արդարը հեռացաւ Արաբիա:

77. Եղիա մարգարէն Քորէբ լեռան մօտ.

Սուրբ Եղիան բնակում էր մի քանի ժամանակ Արաբիա-ում, այրի մէջ, Քորէբ լեռան մօտ: Այստեղ նա շատ անգամ տրտմութեամբ մտածում էր, թէ ինչպէս Խսրայէլացոց տասն ցեղերը մոռացան ճշմարիտ Աստծուն, քանդեցին նրա սեղաններն և կոտորեցին նրա մարգարէներին, որոնք, յայտնի բան է, ամենքն կըկորչէին, եթէ Արդիուն նրանցից մի քանլսին չաղատէր: Այս տիսուր մտքերով սուրբ Եղիան դուրս

եկաւ այրից: Աստուած Հրամայեց նրան յայտնուել Իրան լեռան գլխին: Նա կանգնեցաւ այրի դռան մօտ և յանկարծ վեր կացաւ մեծ քամի, որ խորտակում էր լեռները. բայց սրա մէջը չկար Աստուած: Եղիան հողմի ժամանակ չէր ըգգում նրա մօտ լինելը: Յետոյ Երկիրը շարժուեցաւ, բայց Աստուած չկար այս շարժի մէջն էլ: Յետոյ անցաւ հուրը. Աստուած չէր նրա մէջն էլ: Սրանից յետոյ վիչեց մեղմ քամի և օդի մէջը մարգարէի տիսուր սիրտը զգաց Աստուծոյ լինելը: Նա ծածկեց իր գլուխը մաշկեակով և դուրս եկաւ այրից և խօսակցում էր Աստուծոյ հետ: Աստուած հանգըստացրեց նրա նախանձարոյզ ոգին, ասելով, թէ Խսրայէլի թագաւորութեան մէջն էլ, ուր Եղիան չէր գտնում ճշմարիտ Աստուածապաշտներ, կան էլի 7000 հոգի, որոնք Բահացին Երկպագութիւն չեն տալիս:

Աստուած մօտ է ամեն մարդոց և խօսում է մեզ հետ բնութեան ամեն Երևոյթներով՝ մըրիկով, որոպումով, փայլակով, անձրեսով, արեգակի փալլելովը և հողմի մեղմ փըշելովը: Հպարտ և յանդուգն մարդուն զսպելու համար կան մըրիկ և որոտումն, հեզ և տիսուր սրտի համար հողմի մեղմ փչելը, արեգակի փալլելը:

Սրանից յետոյ սուրբ Եղիան Աստուծոյ հրամանով դարձաւ Խսրայէլի Երկիրը:

78. Աքաաբի և Յեզաբէլի յանցանքն և նրանց պատիժը.

Մի Խսրայէլացի, Նաբաւթ անունով, բնակում էր Յեզաբէլի գեղեցիկ և պտղաբեր ձորի մէջ, Յեզաբէլ քաղաքում. այստեղ թագաւորն էլ ունէր պալատ Նաբաւթի այգու մօտ: Աքաաբը խնդրեց Նաբաւթին, որ ալգին իրան տալ, որով-

Հետև այնտեղի վրայնա կամենում էր պարտէզ տնկել տալ։ Նա խոստացաւ փոխարէնը կամ ուրիշ այդի տալ և կամ փող վճարել նրան։ Բայց նաքաւթը ասաց. «Աստուած չանէ, որ ես երբէք համաձայնեմ ծախել ժառանգութիւնն, որ ստացել եմ ծնողներից»։ Այն ժամանակ ծնողաց թողած ժառանգութիւնը սովոր էր համարւում և նրան ծախելը մեղք։ Աքասը այս բացասացութեամբ այնպէս տրտմեցաւ, որ հիւանդ պառկեցաւ, դարձրեց երեսը գէպի պատն և չէր ուզում ոչին նայել և ոչ կերպառ ուտել։

Նրա կինը Յեղաբել, նրա մօտ մտնելով, հարցրեց. «Քեզ
քնչ պատահեցաւ, ինչո՞ւ դու ոչ ոքին չես ուզում տեսնել
և բան չես ուտում»։ Աքաաբ պատմեց նրան իր խօսակցու-
թիւնը նաբաւթի հետ. «Խ՞նչպէս, պատասխանեց Յեղաբել.
ուրեմն էլ դու ո՞րպիսի թագաւոր ես, ով քո հպատակիդ
խոնարհում ես. կեր հաց և հանգիստ եղիք, ոչինչ բանի
վրայ մի մտածիր. ես կըտամ քեզ նաբաւթի այգին»։ Նա
գրեց Աքաաբի անունովը մինամակ Յեղալէլ քաղաքի ծերերին
և մեծերին և կնքեց արքունի կնքով։ Այս նամակում հրա-
մայած էր սուտ վկաներով ամբաստանել նաբաւթին, իբրև
թէ նա հայկոյել էլ Աստծուն և չարաբանել թագաւորին։
Այս պատճառով անմեղ նաբաւթը քարկոծուեցաւ։

Յեզաբէլ, Երբ Նաբաւմթի մահն իմացաւ, ասաց Աքատ-
քին. «այժմ կարող ես ձրի առնուլ այն այգին, որ Նաբաւ-
մթը քեզ չէր ուզում փողով ծախել. Նաբաւմթը մեռաւ»:
Աքատը այն ըստէին գնաց այնտեղ և մտաւ այգին. Եղիա
մարդարէն, Աստուածանից զրկած, եկաւ այնտեղ և ասաց Ա-
քատըին. «դո՞ւ՝ մարդասպան ես. Աստուծոյ անունով յայտնում
եմ քեզ, որ նոյն տեղում, ուր թափուեցաւ անմեղ Նաբաւ-
մթի արիւնը, կըմափուի քո արիւնդ էլ. իսկ Յեզաբէլին կը-
պատառեն շները»:


Երեք տարի սրանից լետոյ Աքասաբը պատերազմում մահաբեր վէրը ստացաւ. Նրան բերին Սամարիա, իր մալրաքա-

Դաքը և թաղեցին։ Նրա կառքը լքուել էր արիւնով, որ վազում էր վերքից։ Այս կառքը լուացին իսկ այնտեղում, ուր թափուել էր նաբաւթի արիւնը։ Իսկ Աստուծոյ դատաստանը Յեղաբէլին վրայ կատարուեցաւ Յեղրայէլում այնտեղ, ուր էր նաբաւթի այգին, որին անօրէնութեամբ տիրել էր։ Երբ Աքապէ ցեղը ջնջող զօրավարը՝ Յէուն հանդէսով մըտնում էր Յեղրայէլ քաղաքը, Յեղաբէլը զարդարուեցաւ, զարդարեց գլուխն և մօտեցաւ պատուհանին, որ նայէ յաղթողի հանդիսաւոր ընթացքին, յաղթողի, որ տիրեց Խրայէլի թագւարութեան և եղաւ նրա որդու Յովրամի մահի պատճառը։ Թագաւառը, երբ նրան տեսաւ, ասաց իր մօտ եղող ծառաներին. «Պուրս գցեցէք դրան պատուհանից»։ Նրան գուրս գցեցին. պատերը սրսկեցան նրա արիւնով, ձիերը ոտնակոխ արին նրա մարմինն և երբ թագաւառը հրամայեց վեր առնել նրա դին, որ թաղեն, գտան միայն նրա կառափը, ոտներն ու ձեռները. նրա ըոլոր մարմինը պատառել էին շները։

Աքաաբի որդին և յաջորդը Յովրամ սպանուեցաւ նետով և նրա մարմինը գցուեցաւ Նաբաւթի ալգու մէջ։ Աքաաբը բացի նրանից ունէր էլի եօթանասուն որդի, որոնք ամենքը սպանուեցան։ Այսպէս ջնջուեցաւ Աքաաբի բոլոր տունը։

79. Սուրբ մարգարէն Եղիսէ.

Աստուծոյ հրամանով սուրբ Եղիսան իրան աշակերտ ընտեց Եղիսէին, որ ամեն տեղ նրան ուղեկից էր լինում:



Եղիսան օծեց նրան մարգարէ և Աստուած զրկեց Սուրբ Հոգոյ շնորհքը նրա վրայ: Սուրբ Եղիսան, Եղիսէի աչքի առաջին, երկինք բարձրացաւ հրեղէն կառքով: Սուրբ Եղիսէն իր սուրբ վարդապետի վերաբուի հետ միասին ժառանգեց մարգարէութեան շնորհքն և հրաշագործութեան զօրութիւնը:

Մի աղքատ այրի կին եկաւ Եղիսէի մօտ և ասաց. «Իմ մարդս մեռաւ, դու ինքդ գիտես, որ նա բարեպաշտ մարդ էր: Այժմ եկել է պարտատէրն, և մարդուս պարտքի համար իմ որդոցս կամենում է իրան ստրուկ անել. ազատիր իմ

որդոցս»: — «Ինչո՞վ կարող եմ քեզ օգնել», հարցը Եղիսէն. չունես արդեօք մի կալուածք»: — «Ես ոչինչ չունիմ, պատասխանեց ալրին, բացի մի աման իւղից»: — «Ուրեմն գնա տուն», ասաց Եղիսէն. «Փոխ ուզիր դրացիներիցդ, ինչքան կարելի է շատ ամաններ, փակիր տանդ գուռն և քո որդոցդ օգնութեամբ ածիր իւղը քո ամանիցդ փոխ ուզածդ ամանների մէջ, և բոլորն էլ կը լքուին»: Այրին կատարեց Եղիսէի հրամանը. Փոխ առաւ իր ծանօթներից շատ ամաններ և ամենը լցրեց իւղով, որ վազում էր նրա ամանից: Նա ալնքան իւղ ծախեց, որ ոչ միայն կարողացաւ իր մարդու պարտքը տալ, այլ նրան մնաց գեռ էլի բաւական փող, որ կերակրէ իրան և իր որդոց:

Միանգամ Խսրայէլի թագաւորութեան մէջ սով ընկաւ: Մարգարէնների որդիքն եկան Եղիսէի մօտ և նա հրամայեց իր ծառային նրանց համար կերակուր պատրաստել: Ծառաներից մէկը գնաց բանջար հաւաքելու կերակրի համար և գտնելով մի վալրի պտուզ, որ խաղողի նման էր, ժողովեց և գրեց եփած կերակրի մէջ, չիմանալով այդ պտուզի վնասակար լինելը: Երբ կերակուրը պատրաստ էր, ամենքը նստան ուտելու. բայց փոքր ինչ ուտելից յետոյ ամենքը կանչեցին. «Մարդ Աստուծոյ, մենք կորանք, մենք թունաւորած ենք. այս կերակրի մէջը թոյն է խառնած»: Եղիսէն հրամայեց ալիւր ածել պղնձի մէջ և ասաց ծառային. «ալժմ տո՛ւր. թո՛ղ ուտեն աներկիւղ»: Ամենքը կշտացան և մնացին առողջ. պտուզներն կորցրին իրանց վնասակար յատկութիւնը:

Մարգարէի որդիքն ասացին Եղիսէին. «Այստեղ, ուր մենք ընակւում ենք, շատ նեղուածք է. մենք գնանք Յորդանանի մօտերքը, փայտ կտրենք և մեզ համար ընակարաններ շինենք»: Եղիսէն էլ գնաց նրանց հետ: Երիտասարդներից մէկն իր կացինը վայր գցեց ձեռքից գետի մէջ: «Ոհ, ես ինչ անեմ հիշեցինս էլ փոխ ուզածդ էր», աղաղակեց նա: «Ցոյց տո՛ւր ինձ, ասաց Եղիսէն, կացինդ որտեղ վայր գցեցիր»:

Երիտասարդը ցոյց տուեց այն տեղն, ուր ընկաւ կացինը։ Եղիսէն գցեց այնտեղ մի փայտի կտոր և կացինը դուրս եկաւ ջրի երես։ «Առ քո կացինդ», ասաց Եղիսէն։ Երիտասարդն իր ձեռքն առաւ կացինը։

Մի քաղաքում երեխալք մտքերը դրին մարգարէի վրայ ծաղը անել։ Քաղաքից դուրս գալով կանչում էին նրա ետեւից։ «գնա, կնտակ, կնտակ, գնա»։ Այն ըոպէին դուրս եկան անտառից երկու արջ և պատառեցին քառասուն երկու երեխալք։

80. Նէեման Ասորիի բժշկուիլը.

Խորայէլի երկրի հիւսիսային սահմանն է Ասորոց երկիրը։ Ասորոց թագաւորի առաջին զօրավարը՝ Նէեման էր լաւ զինւորական, առաքինութիւնների տէր մարդ և սիրելի շատ իր թագաւորին։ Նա շատ երեւլի էր և հարուստ։ բայց այս ամեն արտօնութիւններն ոչինչ էին նրա աչքում, որովհետեւ ինքը բորոտութիւն ստացաւ, որ սարսափելի և գրեթէ անբուժելի ցաւ է։

Մի անգամ միքանի Ասորի զինւորներ յարձակեցան Քանանացոց երկրի վրայ և յափշտակեցին ուրիշ գերիների հետ միասին մի փոքրիկ աղջիկ էլ, որին բերին իրանց հետ և տուին Նէեմանին։ Զօրավարի կինն առաւ գերի աղջկան և պահում էր իր մօտ։ Փոքրիկ Խորայէլացի աղջիկը կարեկցութեամբ նայում էր հիւսանդ Նէեմանի վրայ։ «Ո՛չ, ասաց նա միանգամ Նէեմանի կնոջ։ Եթէ մեր տէրը գնար Սամարիա մարգարէի մօտ, յալտնի բան է, նա կը բժշկէր սրան»։ Կինը կրկնեց աղախնի խօսքերն իր մարդուն և սա էլ ասաց թագաւորին։ «Գնա Սամարիա, ասաց թագաւորն, ես կը տամ քեզ նամակ Խորայէլացոց թագաւորի վրայ։» Նէեման առանց ուշանալու գնաց, և առաւ հետը տասն տաղանդ արձաթի, վեց հազար

կան և տասն ձեռք շար։ Երբ Սամարիա հասաւ, նա դըրկեց Խորայէլի թագաւորին իր թագաւորի նամակն, որ գըածէր այս մտքով, թէ այս նամակը կը բերէ քեզ իմ ծառաս Նէեման, որին զրկում եմ քեզ մօտ, որ դու բժշկես նրան բորոտութիւնից։ Խորայէլի թագաւորը շփոթուեցաւ և ասաց. «Միթէ ես Աստուած եմ, նա միան կարող է յարուցանել մեռելներին և բժշկել բորոտներին։ Ասորոց թագաւորը վեճուրում է պատճառ ինձ պատերազմ յալտնելու։» Եղիսէն զրկեց թագաւորի մօտ մարդ և հրամայեց նրան ասել. «Իզուր ես տիրում, դու զրկիր Ասորին ինձ մօտ. Թող նա իմանալ, որ Խորայէլի մէջ կայ մարգարէ։»

Նէեման նստաւ իր կառքը, գնաց Եղիսէի մօտ և կանգնեցաւ նրա տան դռան առաջ։ Եղիսէն զրկեց իր ծառային նրան ասելու, որ նա գնայ Յորդանանի մօտ և եօթն անգամ լուացուի այն գետում, այն ժամանակ նա կը սրբուի բորոտութիւնից։ Նէեման, սարտիկ նեղացած, ասաց. «Ես սպասում էի, որ մարգարէն ինքը դուրս կը զայ ինձ մօտ, աղօթք կանէ իր Աստծուն, կը դնէ իր ձեռքն իմ վէրքերիս վրայ և կը բժշկէ ինձ։ Միթէ Ասորոց գետերը Խորայէլի գետից վատ են. ինչո՞ւ է զրկում նա ինձ Յորդանանում լողանալու։» Նա բարկացած կամենում էր արդէն հեռանալ, բայց ծառաներն, որոնք ըոլոր սրտով սիրում էին նրան, ասացին, «Եթէ մարգարէն քեզ մի ծանր բան ասէր, միթէ դու չէիր կատարիլ քո բժշկութեանդ համար նրա հրամաններն։ Իսկ նա ասաց քեզ։ «Լուացուիր և կառողջանաս։» Նէեման լսեց նրանց խորհուրդը, լուացուեցաւ Յորդանանում եօթն անգամ և սրբուեցաւ բորոտութիւնից։ Այն ժամանակ դարձաւ նա մարգարէի մօտ բոլոր իր ուղեկիցներով, մտաւ նըրան տունն ու ասաց. «Այժմ ես ճշմարտութեամբ տեսնում եմ, որ բոլոր տիեզերում չկայ ուրիշ Աստուած, բայց Խորայէլի Աստուածանից։ Խնդրում եմ քեզ, ընդունիր ինձնից

այս ընծաները»։ Նա կամենում էր տալ մարգարէին բոլոր իր ոսկին, արծաթն ու ծանրագին շորերը։

Բայց Եղիսէն պատասխանեց. «Վկայ է Ամենազօրն Աստուած, որ ես չեմ ընդունիլ ոչինչ»։ Նէեման ամեն կերպի աշխատում էր համոզել նրան. բայց մարգարէն մնաց անհամոզելի և ասաց նրան. «Գնա խաղաղութեամբ»։

81. Գէեղի.

Եղիսէ մարգարէի ծառան Գէեղին չունէր իր առիրոջ անարծաթասիրութիւնը. «Ինչու համար, մտածեց նա, խնայեց տէրս այն Ասորիին, ինչու չընդունեց նա նրանից ոչ ամի ընծայ. Ես կը հանեմ նրան հետևից և ակառնեմ նրանից մի բան»։ Գէեղին գնաց նէեմանի ետևից։

Նէեման, երբ տեսաւ մարգարէի ծառային, ինքը դուրս եկաւ նրա առաջ և քաղցրութեամբ ընդունեց նրան. Գէեղին ասաց նէեմանին, որ իր տիրոջ Եղիսէի մօտ եկել են Եփրեմի սարից երկու աղքատ տղայք, որ մարգարէի որդիք են և թէ նրանց տէրը խնդրում է նէեմանին ընծայել նրանց մի մի տաղանդ արծաթ և մի մի ձեռք շոր. Նէեմանի ծառաներից երկուսը տարան Գէեղիի ետևից ընծաները. Գէեղին երբ տուն հասաւ, ծառաներին լետ զրկեց, թաքցրեց առած ընծաներն ու Եղիսէին ոչինչ չասաց ալդ մասին։

«Ո՞րտեղից եկար, Գէեղի», հարցրեց Եղիսէն. «Ես ոչ մի տեղ չեմ գնացել», պատասխանեց Գէեղին. Բայց բնչ կարող էր ծածուկ մնալ մարգարէից. Եղիսէն ամենը դիտէր արդէն։ «Ես տեսալ, ինչպէս դու խորամանկութեամբ առար փող, որ գնես քեզ համար պարտէզներ, այդիներ և խաշներ», ասաց մարգարէն. «Դու խարեբայութեամբ ստացար հարսութիւնը. խնդրեցիր նէեմանից փող և շորեր. նրանց հետ միասին ընդունիր ուրեմն նրա ցաւն էլ»։

Դէեղին դուրս եկաւ մարգարէի մօտից բոլորովին բոլորած, ինչպէս էր նէեման։

82. Յովնան մարգարէն.

Խորայէլի թագաւորութեան մէջ բնակում էր Յովնան մարգարէն. Աստուած ասաց նրան. «Վեր կաց, գնա Նինուէ քաղաք և քարոզի՛ ժողովրդին ապաշխարութիւն. Այս ընդգրծակ, քազմամարդ քաղաքը սարսափելի անօրէնութիւնների մէջ ընկաւ, որոնց ձախը հասաւ երկինք»։

Յովնան, ակամայ հպատակելով Աստուածոյ հրամանին, ճանապարհ ընկաւ, միայն ոչ նինուէ քաղաք երթալու համար. նա վարձեց իրան տեղ նասի վրայ, որ գնում էր Թարսիս, և կամենում էր անցնել ծովն, որ ազատուի Աստուածոյ հրամանը կատարելից։

Բայց բնչ պատահեցաւ. Վեր կացաւ սաստիկ մըրիկ և նաւը մեծ վտանգի մէջ էր. Ամենը սարսափեցան և սկսան աղօթք անել, որովհետև վտանգի ժամանակ տմենից մեծ չարագործն էլ դառնում է դէսի Աստուած։

Յովնան այս ժամանակ քնած էր. Նաւի տէրն ասաց Յովնանին. «Ամօթ չէ քեզ, որ քնել ես. Վեր կաց և աղօթք արա քո Աստծուդ, դուցէ նա ազատէ մեզ մահից»։

Ամենքը կարծում էին, թէ Աստուած վեր է կացըել մըրիկ պատժելու համար մի մեծ չարագործի, որ իրանց մէջ է. Ամենքը ժողովեցան միասին և ասում էին. «Եկէք վիճակ դցենք, որ իմանանք, թէ ով է պատճառն այս պատուհասին, որ ամենուս սպառնում է»։ Աստուած այնպէս կարգեց, որ վիճակն ընկաւ Յովնանին. Այն ժամանակ ամենքը սկսան նրան հարցնել. «Ասա, ով ես դու. ուր էիր կամենում գու գնալ և ինչո՞ւ Աստուած պատժում է մեզ քեզ համար»։ Յովնան պատասխանեց. «Ես Խորայէլացի եմ և եր համար»։

Կրպագութիւն եմ տալիս Ամենազօր Աստուծուն, որ ստեղծեց
Երկինքը, ջրերն ու ցամաքը»։ Յովնան չծածկեց, որ ինքը
կամենում էր Աստուծոյ հրամաններից փախչել։ Այն ժամա-
նակ ամենքը տեսան, որ նա մեղանչել է և վախենալով ա-
սում էին նրան։ «Ինչու փախչում ես դու Աստուծոյ երեսից։
Ի՞նչ անենք ուրեմն մենք այժմ, որ դադարեցնենք մըրիկը»։
Յովնան պատասխանեց։ «Մցեցեք ինձ ծովն, ես գիտեմ որ
մըրիկն իմ պատճառովն է բարձրացել Յառասմ մշյաբյան-
բայց ծովադնացները մարդասէր մարդիկ էին, նրանք կամե-
նում էին Յովնանին ափը հանել, աշխատում էին մօտենալ
ցամաքին և երկար ժամանակ կռւում էին մըրիկի հետ, բայց
ալիքն անդադար նրանց հեռացնում էր, այնպէս որ վերջա-
պէս զօրութիւնից ընկան։ Տեսնելով, որ իրանց ամեն աշխա-
տանքներն ի զուր են, սկսան աղօթք անել, ասելով նոյն
ժամանակ լետագալ խօսքերն էլ, «Տէր մի կորցնիլ մեղ ա-
մենուս այս մի մարդու անօրէնութեան համար և սրա մահը»
մեղք մի համարիր. մենք կատարում ենք Քո կամքը»։ Նը-
րանք վեր առան Յովնանին և գցեցին ծովը։ Մըրիկն այն
ըոպէին գաղարեցաւ։

Նաւի վրայ բոլոր գտնուողները զօրացան կենդանի
հաւատով Աստուծոյ և ջերմեռանդութեամբ։ Նրանք զոհ բե-
րին Ամենաբարձրեալ Աստծուն և խոստացան պահել նրան
պատուիրանները։ բնի հարցում ամ պարունակ բանառու ոց այս
միջյուն մասսով չ զի նույնում էն, ոչ և նույնայ զգմնի։

83. Յովնան կետ ձկան փորում։

Այն ըոպէին, երբ Յովնանին ծովը գցեցին, Աստուծ
հրամայեց կետ ձկան, որ նրան կուլ տայ. բայց կետի փո-
րումն էլ պահպանեց Աստուծ նրա կեանքը։ Յովնան մը-
նաց անվնաս երեք օր և երեք գիշեր ձկան փորում։

Այս Յովնան մարգարէի անցքն էր օրինակ մեր Տիրոջ՝
Յիսուսի Քրիստոսի երեքօրեալ թաղման և յարութեան։ Եւ
աղօթքն, որ Յովնան կետի փորում ասաց, պարունակում է
իր մէջ շատ մարգարէութիւն։

Աստուած լսեց Յովնանի աղօթքն և հրամայեց կետին,
որ նրան ցամաք դուրս գցէ։

Աստուած երկրորդ անգամ հրամայեց Յովնանին երթալ
Նինուէ և նրա բնակիչներին ապաշխարութիւն քարոզել. նա
անյապաղ ճանապարհ ընկաւ։ Նինուէն Ասորեստանի թագա-
ւորութեան մայրաքաղաքն էր և այնպէս ընդարձակ էր, որ
Յովնան բոլոր օրը գնում էր մի ծայրից մինչև միւս ծայրը,
անդադար ձայն տալով. «Կանցնի էլի երեք օր և Նինուէն
կը կործանուի»։ Նինուէի բնակիչները, վախենալով այս սպառ-
նալիքներից, ապաշխալեցին. պահք դրին իրանց, հագան
քուրձ և նստան մոխրի վրայ ամենքը. թագաւորից սկսած
մինչև վերջին մարդը թողին իրանց ամեն գործերն և մեծ
ջերմեռանդութեամբ աղօթք էին անում։ Աստուած տեսնե-
լով նրանց սրտանց զզջումն, ներեց նրանց։

Յովնան դուրս եկաւ քաղաքից և փոքր ինչ հեռու նըս-
տաւ նրա հանդէպ և սպասում էր, թէ ինչ կը պատահի քա-
ղաքին։ Այս ժամանակ Աստուծոյ հրամանով բուսաւ այն
տեղումն, ուր Յովնան էր, դգմենի, որ իր լայն տերեւնե-
րով պահպանում էր նրան օրուան շոքից։ Այնտեղ նստաւ
նա և քաղաքին նայելով սպասում էր իր մարգարէութեան
կատարուելուն։ Բայց տեսնելով որ Նինուէն անվնաս կեցած
է, նա սկսաւ տրտմիլ, որ իր մարգարէութիւնը չկատարուե-
ցաւ։ Նա մինչև անգամ մահ էլ խնդրեց իրան Աստուածա-
նից և ասում էր. «Ահա թնչու ես չէի ուզում Նինուէ
գալ. ես գիտեմ, Տէր, որ Դու երկայնամիտ ես և բազումո-
գորմ և թողութիւն ես տալիս զզջացած մեղաւորներին։ Այժմ,
խնդրում եմ Քեզ, Տէր, առ իմ կեանքս, ես աւելի կամե-
նում եմ մեռնիլ, քան թէ ապրել»։

Միւս օր էլ չկար դդմենին, ճիճուն կերաւ նրան և նա թառամեցաւ արեգակի տաքութիւնից: Յովնան աւելի տըխրեցաւ: Նա էլի սկսաւ կանչել մահին, որովհետև Աստուած իւլեց նրանից դդմենու շուաքը: Այն ժամանակ Աստուած ասաց նրան. «Յովնան, դու չես տնկել դդմենին, հոգս չես քաշել նրա մեծանալու վրայ, բայց տրտում ես նրա կորուստի համար: Նա դուրս եկաւ մի գիշերում և մի գիշերումն էլ թառամեցաւ: Դու ցաւում ես ալդ դդմենու վրայ և ուզում ես որ ես ջնջեմ այս մեծ քաղաքը, որի մէջ հազարներով մարդիկ են կենում, ուր 120,000-ից աւելի մարդկ կան, որոնք չեն կարող գեռ աշ ձեռքը ձախից զանազանել և շատ էլ անասուններ:

84. Իսրայէլի թագաւորութեան ընկնիլը.

Ասորիներն և Եբրայեցոց միւս դրացիները քանիցս անգամ յափշտակեցին Իսրայէլի գեղեցիկ երկիրը: Իսրայէլացիները գեռ կարողանում էին ընդդիմանալ դրացիներին և պաշտպանել իրանց նրանց յարձակումներից: Բայց վեր կացաւ Ասորեստանցոց ազգն և բոլորովին նուածեց Իսրայէլի թագաւորութիւնը: Ովսէէ թագաւորն անհաւատարմութեամբ վարուեցաւ Ասորեստանի թագաւորի հետ և ալդ ոլածառով զրկուեցաւ թագաւորութիւնից և եղաւ Իսրայէլի վերջին թագաւորը:

Ասորեստանցոց բազմաթիւ զօրքը տիրեց Սամարիային: Ովսէէ թագաւորը, գրեթէ բոլոր իր հապատակներով, գերի գնաց: Այնուհետև Իսրայէլի թագաւորութիւնը բոլորովին վերջացաւ: Դատարկ տեղերում բնակուեցան կռապաշտներն, որոնց հետ միացան մնացած փոքրաթիւ Իսրայէլացիներն էլ և սկսան այնուհետև Սամարացիք կոչուել:

Այսպէս ընկաւ Իսրայէլի՝ Հրէից տասն ցեղերի թագաւորութիւնն Ասորեստանի Սաղամանասար թագաւորի ձեռքով 722 տարի Քրիստոսի ծննդից առաջ:

85. Առաջ մարգարէները.

Ահա այն մարգարէների անուններն, որոնց գրուածքը գրած են Աստուածաշնչի մէջ:

Եսայի, Ամովսի որդին, բնակում էր Յուդայի երկրում, Ողիայի, Յովաթամի, Աքազի և Եղեկիայի թագաւորութիւնների ժամանակ: Խնչքան տրտմեցնում էին նրան չար թագաւորների անաստուածութիւնն ու մեղերը, ընդհակառակն այնքան էլ աւելի ուրախացնում էին բարի թագաւորների առաքինութիւններն ու բարեպաշտութիւնը: Եղեկիան Յուդայի թագաւորների լաւերից մէկն էր: Նրա թագաւորութեան ժամանակ Ասորեստանցիք պատերազմ բաց արին Յուդայի հետ և շատ յաղթութիւններ արին, այնպէս որ Եղեկիան սպասում էր, որ իր թագաւորութիւնը կը քանդուի. բայց Եսայի մարգարէն խոստացաւ նրան Աստուծոյ մերձակայ և շուտ օգնութիւնը, որ և ճշմարտիւ կատարուեցաւ: Նմանապէս Եղեկիայի ծանր հիւանդութեան ժամանակ, Եսայի խոստացաւ նրան բժշկութիւն և հաւատացրեց այն նրան հրաշքով. նա արեգակի ստուերը տասն աստիճան յետ դարձրեց: Եսային լքցուած էր Աստուծոյ Հոգով, նա վառ զգացմամբ խօսում է Աստուծոյ վրայ և նրանց երջանկութեան վրայ, որոնք երկըրպագութիւն են տալիս նրան հաւատով. նա յայտնի մարգարէանում է Դաւթի այն զաւակի վրայ, որ կը ծնի Կոյսից, մարդկանց փրկելու համար. նա խօսում է նմանապէս այն չարչարանքների վրայ, որոնց նա կը տանէ մարդկալին ազգի համար. մարգարէներից ոչ մէկն այսպէս պարզ չէր գուշակում Մեսսիայի՝ Յիսուսի Քրիստոսի ծննդիը, չարչարանքներն ու

փառքը: Այս պատճառով միքանի սուրբ Հայրերը սուրբ Եսայի մարգարէին անուանում են Հին Ուխտի աւետարանիչ:

Երեմիա մարգարէն ուրիշների պէս մարգարէանում էր Մեսսիայի գալուստն, և յօրդորում էր Աստուծոյ ժողովրդին ապաշխարելու և գուշակեց Երուսաղէմի քանդուիլը և ինքն էլ տեսաւ իր գուշակութեան կատարումն:

Դանիէլ մարգարէի վրայ աւելի ընդարձակ կըխօսենք լետոյ:

Մարգարէներն Եզեկիէլ, Ովսէէ, Յովէլ, Ամովս, Աբգիու, Յովնան, Միքիա, Նաւում, Ամբակում, Սոփոնիա, Անդէ, Զաքարիա և Մաղաքիա մարգարէացան նոյնպէս Մեսսիայի և Յուդայի թագաւորութեան և ուրիշ ազգերի զանազան վիճակների վրայ:

86. Տովբիթ.

Այս Իսրայէլացիների մէջ, որոնց Ասորեստանցիք գերի տարան, կար մի բարեպաշտ մարդ, Տովբիթ անունով: Նրան բերին Նինուէ՝ Ասորեստանի մայրաքաղաքն իր կնոջ և միակ որդու հետ միասին: Բայց օտար երկրումն էլ հաստատ մնաց նա իր հաւատին և կատարում էր Աստուծոյ պատուիրանները: Սաղմանասար, Ասորեստանի թագաւորը, սիրում էր այս բարեպաշտ մարդուն և հրամայում էր նրան ազատ ման գալ իր բոլոր տէրութեան մէջ: Տովբիթ այս հրամանը գործ էր դնում, որ միսիթարէ իր գերի եղբայրներին, օգնէ նրանց իր կարողութեան չափ և նրանց օգտակար խորհուրդներ տալ: Նա ամեն տարի գնում էր իր ազգականների և ծանօթների մօտ, նրանց էլ մասն հանում այն ամենից, ինչ որ ունէր:

Տովբիթ վաճառականութեամբ շահեցաւ տասն տաղանդ արծաթ: Այս փողերն որ հաւաքեց, գնաց Մարաստանի Հռադա քաղաք, որ այնտեղ էլ թեթևացնէ գերի Իսրայէլացիների վիճակը:

Շուտ սրանից յետոյ մեռաւ Սաղմանասար և նրանից լետոյ թագաւորեց նրա որդին Աննեքերիմ: Սա խստութեամբ էր վարւում Խորայէլացիների հետ և ատում էր նրանց: Այս ազգի թշուառութիւնը սարսափելի էր. նրա մեծ մասը չունէր ոչ օրուան հաց և ոչ շոր. շատերը սպանուեցան և դիերը գցուեցան քաղաքի պատերից գուրս, որ վարի գագաններին և պատառող թուչուններին կերակուր լինին: Այս թշուառ ժամանակները Տովբիթի ողորմածութիւնն առաւել աւելացաւ, նա կերակրում էր քաղցածներին, հազցնում էր մերկերուն և թաղում էր մեռածներին:

Նրա այսպիսի անխոնջ բարեգործութեան համբաւը հասաւ թագաւորին: Աննեքերիմ բարկացաւ, հրամայեց խլել Տովբիթից նրա բոլոր ստացուածքը և իրան սպանել: Թըշւառականն, ամեն բանից զրկուած, փախաւ: Նրան թաքցնում էրն բարեկամներն, որովհետև իր առաքինութիւններով շատ բարեկամներ էր գտել:

Տովբիթի փախուստից յետ յիսուն օր հազիւ էր անցել, որ Աննեքերիմ սպանուեցաւ իր հարազատ որդիներից: Նրանից յետոյ թագաւորեց նրա որդի Ասորգան, որի մօտ Տովբիթի ազգականներից մէկն էր երեսելի իշխան: Սա խնդրեց Տովբիթի համար թողութիւն, և նա յետ ստացաւ կրկին իր կնոջ, որդուն, իր տունն ու բոլոր ստացուածքը: Նա առաջուան պէս սկսաւ բնակել Նինուէում իր ընտանիքով:

Եկաւ եօթներորդ շաբաթը, Պենտէկոստէի տօնը: Տովբիթի տանը պատրաստուեցաւ մեծ ճաշ: Տովբիթ, տեսնելով կերակուրների առատութիւնն, ասաց իր որդուն. «Գնա, կանչիր ինձ մօտ իմ աղքատ եղբայրներիցս միքանըսին, որոնք պահում են Աստուծոյ օրէնքներն և թող տօնեն այս մեծ օրը. ես քեզ ճաշի կըսպասեմ»: Նրա որդի Տուբիան, երբ յետ գարձաւ, պատմեց, թէ տեսաւ փողոցում մի սպանած Խորայէլացու մարմին: Տովբիթ սեղանից գեր կացաւ և թաքուն մեռելին բերաւ իր տուն, որ արեգակի մտնելից յետ թաղէ:

Դրացիները նախատում էին նրան, ասելով. «Նաև ժամանակ է, որ թագաւորը քեզ կամենում էր սպանել մեռեալները թաղելուդ համար. Հազիւ ազատուեցար մահուան վճռից և էլի մի և նոյնն ես անում»: Բայց Տովբիթ թաղեց սպանածի մարմինը:

Գիշերով, թաղումից յետ դառնալով, չմտաւ իր տուն. այլ պառկեցաւ տան պատի մօտ և չնակատեց, որ ուղիղ իր գլխի վրայ կար ծտի բոլն: Այս բունից ընկաւ նրա աչքի մէջ ծիրտ, որից եկաւ աչքի վրան փառ: Տովբիթ գնաց բժիշկների մօտ, միայն նրանք ոչինչ օգնութիւն չտուին նրան և նա բոլորովին կուրացաւ: Բայց այս թշուառութեան էլ տանում էր նա համբերութեամբ:

Աննան, Տովբիթի կինը, անխոնջ աշխատում էր, որ կերակրէ իր ընտանիքը. նա մանում էր բուրդ: Մի անգամ երբ տարաւ տիրոջ իրան յանձնուած աշխատանքը, ստացաւ բացի իր վարձից մի ուլ էլ ընծայ: Տովբիթ, որ լսեց նրա ձայնը, չէր իմանում, թէ այն ինչ է նշանակում: «Տես, ասաց նա իր կնոջ, գողացած չէ արդեօք ուլը. յետ տուր այն տիրոջը. գողունի բան ուտելն մեղք է»: Կինը շատ բարկացաւ նրա այս կասկածանքի համար: Նա ասաց նրան շատ աւելորդ խօսքեր, Տովբիթը լուսութեամբ համբերում էր նրա հայի՛ոյանքներին և յանդիմանութիւններին. նա հոգոց էր հանում և իր սրտում խնդրում էր Աստուածանից, որ կամ թեթևացնէ իր վիճակն և կամ դրկէ իրան մահ:

Աստուած լսեց նրա աղօժքն և դրկեց նրան օգնութիւն իր Ուափալէլ հրեշտակին:

87. Տովբիթի իր որդուն տուած խրատները.

Տովբիթը հաւատում էր, որ Աստուած լսել է իր աղօժքն և շուտ կըզրէ իրան մահ և այս պատճառով կանչեց իր որդուն և ասաց նրան յետագալ խօսքերն. «Որդեակ, լսիր քո հօրդ և պինդ պահիր իմ խօսքերս սրտումդ:

«Երբ Աստուած կըկանչէ իր մօտ իմ հոգիս, թաղիր իմ մարմինս:

«Պատուիր մօրդ, մի մոռանար երբէք, ինչոր նա քաշել է քեզ համար: Եւ երբ նա կըմեռնի, թաղիր նրան էլ ինձ մօտ մի գերեզմանում:

«Աստծուն միշտ աչքիդ առջև ունեղիր, կատարիր նրա պատուիրաններն, և փախիր մեղքից:

«Ողորմութիւն արա քո կարողութեանդ համեմատ մերբէք երեսդ մի դարձնիր աղքատից. այն ժամանակ Աստուած էլ քեզնից չի դարձնիլ իր երեսը:

«Օգնիր ամենին, ինչքան կարող ես: Եթէ դու հարուստ կըլինիս, տուր շատ. Եթէ գու աղքատ կըմնաս, տուր քիչ, միայն բարի սրտով: Այսպէսով կըհաւաքես մեծ գանձ թշշւառութեան ժամանակի համար: Ողորմութիւնը փրկում է մահից և չէ թողնում մարդուս խաւարն երթալ:

«Եղիր ողջախոհ, հեռացիր զեղիս մարդոց հասարակութիւնից և մի առնիր քեզ կին կուտաշտ, այլ ընտրիր մեր ազգից:

«Փախիր հպարտութիւնից. նա չպէտք է տեղ ունենալ սրտումդ: Հպարտութիւնն ու փառամոլութիւնը մարդուս ամեն բարի որպիսութիւններ խախտում են և գցում են նրան ամեն մեղքի մէջ:

«Տուր վարձ արդարութեամբ ամենին, ով քեզ համար

կաշխատէ և մի պահիր մօտդ վարձկանի աշխատանքի գինը։
«Մի անիր ուղիղին այն, ինչ որ չես ուզում, որ քեզ
անեն։»

«Մի խմիր գինի այնքան, որ հարբես»։

«Բաժանիր հացդ կարօտեալների հետ և հագցընւ մեր-
կերին քո շորերդ։»

«Հարցընւ խորհուրդ միշտ իմաստուն մարդկանց։»

«Կենացդ ամեն դիպուածներում փառաբանիր Աստծուն
և խնդրիր նրան, որ կառավարէ ամեն քո գործքերդ և խոր-
հուրդներդ. որովհետև Աստուածանից է ամեն բարին։ Նա
բարձրացնում է և խոնարհեցնում է ում որ կամենում է։»

«Արիացիր, որդեակ, մենք աղքատ ենք. բայց եթէ կը-
կենանք Աստուծոյ կամաց համեմատ և կրփախչենք մեղքից,
այն էլ, ինչ որ ունինք, քաւական կըլինի մեղ»։

Երիտասարդ Տուբիալի սիրտը շարժեցաւ այս խօսքերից։
Նա ասաց իր հօրը. «Հայր իմ, ես կըկատարեմ բոլոր քո հը-
րամաններդ։» և պահեց իր խօսքը։

88. Երիտասարդ Տուբիայի ճանապար- հորդութիւնը։

Իր խրատները վերջացնելից լետոյ, Տովքիթ ասաց իր
որդուն. «Ես քեզ պէտք է էլի յալտնեմ, որ քո մանկութեան
ժամանակ Մարաստանի Հռագա քաղաքում Գաբայէլի մօտ-
պահ եմ տուել տասն տաղանդ արծաթ. գնա նրա մօտ, որ-
դեակ։ Բայց առաջ գտիր քեզ ընկեր, որ առաջնորդէ քեզ
Հռագա և էլի լետ արի ինձ մօտ կատարիր այս իմ մահիցս
առաջ»։

Երիտասարդ Տուբիան գնաց իրան ընկեր փնտրելու և
պատահեցաւ մի Երիտասարդի, որ շատ գեղեցիկ էր տեսքով։

Այս Երիտասարդն էր Թափայէլ հրեշտակը. նա հագած էր
ճանապարհի շորերը։ Տուբիան չիմանալով, թէ ով է նա,
մօտեցաւ հրեշտակին, ողջունեց և ասաց. «Զգիտե՞ս արդեօք
Մարաստանի Հռագա քաղաքի ճանապարհը»։ — «Դիտեմ, պա-
տասխանեց հրեշտակն, ես այնտեղ քանիցս անգամ եղել եմ
մեր եղբօր՝ Գաբայէլի մօտ։ Տուբիան ասաց. «Սպասիր ինձ
այստեղ, մինչեւ ես այդ յայտնեմ հօրս»։ Հայրը զարմացաւ,
տեսնելով, որ Տուբիան այդպիս շուտ գտաւ իրան ուղեկից
և հրամացից որդուն կանչել երիտասարդին։ «Կըհամա-
ձայնես դու իմ որդուս Հռագա Գաբայէլի մօտ առաջնորդե-
լու, հարցրեց Տովքիթ։ Երբ դու կըդառնաս նրա հետ միա-
սին, մենք քեզ կըտանք աշխատանքիդ վարձն», աւելացրեց
նա։ «Ուրախութեամբ, պատասխանեց երիտասարդն. «Ես կը-
տանեմ որդուդ Հռագա և լետ կըդարձնեմ նրան էլի»։ — «Ու-
րեմն, ասաց Տովքիթ, զնացէք, Աստուած ձեզ հետ լինի,
Աստուած թոն զրկէ ձեզ ուղեկից իր հրեշտակին»։

Երիտասարդ Տուբիան պատրաստուեցաւ ճանապարհի, հը-
րամարական ողջոյն տուեց իր հօրն ու մօրը, առաւ նրանց
օրհնութիւնն ու գնաց երիտասարդի հետ։

Ճանապարհորդութեան առաջին օրը նրանք հասան մին-
չեւ Տիգրիս գետը։ Տուբիան գնաց գետում լողանալու, Յան-
կարծ մի մեծ ձուկը գուրս եկաւ ջրից և կամենում էր կուլ
տալ նրան։ Տուբիան վախեցաւ, պինդ գուռաց և օգնութիւնն
կանչեց իր ընկերոջը։ Հրեշտակն ասաց. «Բանիր այդ ձկան
և հանիր ջրից»։ Տուբիան հանեց ձկան ցամաք. «Այժմ,
ասաց հրեշտակը, ձեղքիր փորը. սիրտը լեղին և լիարդը
պահիր. դրանք դեղ են»։ Տուբիան կատարեց ինչ որ իրան
հրամալուեցաւ. Այս ձկնից միքանի կտոր նա խորովեց ընթ-
րիքի համար։

Յետու գնացին առաջ և եկան Եկրատանա քաղաքը։
«Ո՞ւր իջևանենք մենք», հարցրեց Տուբիան հրեշտակին։
«Այս տեղ կենում է մի մարդ Հռագուէլ անունով, ասաց

Հրեշտակը. նա քեզ ազգական է և բացի մի աղջկանից, որի անունը Սառա է, չունի ուրիշ գաւակ: Նա գեղեցիկ է, խելօք և բարեբարոյ: Ես կըխօսեմ քո մասին նրա հօր հետ, նա կըհամաձայնի նրան քեզ տալ. դու ես նրա ստացուածների օրինաւոր ժառանգը»: «Ես լսել եմ նրա մասին, պատասխանեց Տուբիան. ասում են, թէ նա չար դեմի իշխանութեան տակն է, թէ նա եօթն անգամ ամուսնութիւնից յետ առաջին գիշերը մեռել են: Ես վախենում եմ, որ ինձ հետ էլ միենոյնը պատահի: Եթէ ես մեռնեմ, ով հոգս կըքաշէ ծնողներիս վրայ: Ես եմ նրանց միակ նեցուկը: Տրտմութիւնը նրանց գերեզման կիջեցնէ»:

«Մի վախիր, ասաց Հրեշտակը. չար ոգին քեզ վնաս չի տալ. միայն ջերմեռանդութեամբ աղօթք արէք Ամենաբարձրեալ Աստծուն և նա կազմուէ ձեզ և կողորմի:

89. Տուբիայի ամուսնութիւնը.

Տուբիան Հրեշտակի ուղեկցութեամբ եկաւ Հռագուէլի մօտ և Սառան ընդունեց նրանց: Հռագուէլ, Տուբիային նայելով, ասաց իր կնոջ Հեղնալին. «Նայիր բնչպէս նման է այս երիտասարդը մեր ազգականին՝ Տովբիթին»: Յետոյ, դառնալով ճանապարհորդներին, հարցրեց նա. «Ո՞րտեղից էք գալիս, սիրելի եղբայրներ»: «Մենք գերի հսրայէլացիներից ենք, նեփթաղիմի ցեղից, որ նինուէումն է», պատասխանեցին նրանք: «Չէք ճանաչում արդեօք ախտեղ իմ ազգական Տովբիթին», հարցրեց Հռագուէլ: «Ճանաչում ենք», պատասխանեցին նըրանք: «Նա իմ հայրս է», ասաց Տուբիան: Այն ժամանակ Հռագուէլ գրկեց Տուբիային և լաց եղաւ ուրախութիւնից: «Օրհնում եմ քեզ, որդեակս, ասաց նա. դու ունիս առաքինի և բարեպաշտ հալր»: Հեղնան Հռագուէլի կինը և Սառան,

նրա աղջիկը, ուրախութեամբ բարեկեցին Տուբիային, բայց ամենքն էլ շատ տիրեցան, երբ լսեցին, որ ծերունի Տովբիթը զրկուել է աչքից:

Հռագուէլ Հռամալեց մեծ ճաշ պատրաստել և խնդրեց իր հիւրերին, որ նստեն: Բայց Տուբիան ասաց. «Ես ոչ կուտեմ և ոչ կըխմեմ, մինչև չհամաձայնիս իմ խնդիր կատարելու: Տուր ինձ կին քո աղջկանդ Սառային»: Հռագուէլ վախեցաւ այսպիսի առարջարկութիւնից, մտածելով, թէ արդէն իր աղջկայ եօթն ամուսններն մեռան, նա վախենում էր, որ նոյն վիճակը Տուբիային էլ հասնի, բայց հրեշտակն ասաց նրան. «Մի վախիր, սա բարեպաշտ մարդ է և Աստուած ինքը նշանակել է նրան քո աղջկանդ համար. ահա ինչու մինչև հիմիկ ոչ ոք չէր կարողանում տիրել նրան»: Այն ժամանակ Հռագուէլ միացրեց Տուբիայի և Սառայի ձեռներն, ասելով. «Աստուած տեսաւ իմ արտասունքներս և լսեց իմ աղօթքս: Տալիս եմ նրան քեզ: Աբրահամի, Իսահակի և Յակովի Աստուածը օրհնէ ձեր պսակը»:

Կէս գիշերից յետոյ Հռագուէլ կանչեց իր ծառաներին և դնաց նրանց հետ միասին պարտէզ, որ գերեզման փորէ աղջկայ նոր մարդու համար: Երբ գերեզմանը պատրաստեց, նա գարձաւ իր կնոջ մօտ և ասաց նրան. «Պրկիր քո աղախիններից մէկին, չք մեռել արդեօք Տուբիան, որ մենք կարողանանք նրան թաղել արեգակի ծագելից առաջ և այսպէսով ծածկենք նրա մահը»: Աղախինը գարձաւ և համբաւ ըերեց, որ երկու նոր ամուսնացածներն էլ առողջ են: Տուբիան Հրեշտակի հրամանով, իր համար պատրաստած սենեակը ծխեց աղջկանը նրանց: Հռագուէլ Հռամալեց իր ծառաներին ծածկել փորած գերեզմանը. իսկ ինքը և իր կինը աղօթք էին անում և շնորհակալ լինում Աստծուց:

90. Տուբիայի դարձը.

Հռագուէլը պատրաստեց հարսանիքի խնջուք, ու հրաւիրեց ամեն իր բարեկամներին և դրացիներին։ Նա խնդրեց եր փեսայից, որ մնայ իր մօտ էլի երկու շաբաթ։ Տուբիան, չկարողանալով բացասել իր անիրոջ և միենոյն ժամանակ վախենալով իր երկար ժամանակեալ բացակացութեամբ իր ծնողներին անհանգստութիւն պատճառել, խնդրեց հրեշտակին, որ իրան Ազարիա էր անուանում, որ գնայ առանց իրան Հռագա Գաբայէլի մօտ և ձեռագրի զօրութեամբ ստանայ նրանից փողն և իրան էլ հարաւիրէ հարսանիք։ Հրեշտակը կատարեց Տուբիայի յանձնարարութիւնը։ Գաբայէլ տուեց բոլոր արծաթն, որքան պարտ էր և ինքն էլ ուրախութեամբ եկաւ Տուբիայի հարսանիքը։

Երկու շաբաթից յետոյ Հռագուէլն ասաց Տուբիային։ «Մնա իմ մօտ միքանի ժանանակ. ես կըզրկեմ քո հօրդ մօտ մարդ ասելու, որ դու առողջ ես»։ — «Զէ», պատասխանեց Տուբիան։ «Ես գիտեմ, որ իմ ծնողքս համարում են այժմ ամեն րոպէն և իմ բացակալութիւնս անհանգստացնում է նրանց»։ Թէև շատ խնդրեց Հռագուէլ նրան, բայց Տուբիան ոչ մի կերպով չհամաձայնեցաւ մնալ։ Ուստի Հռագուէլ տուեց նրան իր աղջկան Սառային, իր բոլոր խաշների կէսը, իր փողերի կէսը, տուեց նրան ծառաներ, աղախիններ և ցանկալով նրանց բարի ճանապարհ, ասաց նրանց։ «Աստուծոյ սուրբ հրեշտակը ուղեկից լինի ձեզ, հասցնէ ձեզ յաջողութեամբ ձեր տուն։ Աստուծած տալ, որ ծնողներիդ առողջ գտնես և ես իմ մահիցս առաջ արժանանամ ձեր որդոց տեսութեանը»։ Հռագուէլ և Հեքնան զրկեցին իրանց փեսային և աղջկան ու համբուրելով հրամալեցին Սառային, որ սիրէ իր մարդուն և պատուէ իր սկեսուրին ու սկեսրային և պահէ իրան այնպէս, որ

ոչ մի յանդիմանութեան չարժանանայ։ Սառան, արտասուք թափելով, խոստացաւ որ երբէք չի մոռանալ իր ծնողների խրատները, Յետոյ նրանք բաժանուեցան։

Իսկ ծերունի Տովբիթ և նրա կինը շատ անհանգստանում էին իրանց որդու համար, որ փոքր ինչ ուշացաւ հարսանիքի խնջուքի պատճառով։ «Ի՞նչ բան կարող էր պատահել մեր որդուն», ասում էր նա իր կնոջը։ Դուցէ Գաբայէլը մեռել է և նա չգիտէ ումնից ստանայ փողերը»։ Տովբիթ և Աննան ժամից ժամ աւելի անհանգստանում էին։ Նրանք լաց էին լինում, տեսնելով որ իրանց որդին նշանակած ժամանակին յետ չէ դառնում։ Մայրը չէր դադարում տրտմելից։ «Ո՛հ, որդեակ իմ, որդեակ իմ», ասում էր նա. «Ինչու զրկեցինք մենք քեզ օտար երկիր. գու՝ մեր աչքի լոյսը, մեր ծերութեան նեցուկը, մեր կեանքի մխիթարութիւնը, մեր ցեղի լոյսը։ Միթէ մենք բաւկան հարուստ չէինք, երբ քեզ ունէինք»։ Տովբիթ մխիթարում էր նրան ասելով. «Բաւական է, մի տիրիր. յայտնի բան է, որ մեր որդին առողջ է, ընկերն, որ նրա հետը գնաց, արդար և հաւատարիմ մարդէ»։ Բայց Աննան չէր կարողանում մխիթարուել և ամեն օր գնում էր այն ճանապարհն, որով պէտք է նրա որդին դառնար։ Սյատեղ բարձրութեան վրայ նստած նայում էր հեռուն։ Վերջապէս հեռուից տեսաւ ճանապարհորդներ, որոնք գալիս էին այն ճանապարհով և նրանից մէկին ճանաչեց, որ իր որդին էր։ Աննան ուրախացած վագեց իր մարդու մօտ աղաղակելով. «Որդիդ գալիս է»։

Տուբիան Ուափայէլի հետ միասին գնաց առաջ, որ շուտով տեսնուի ծնողների հետ, իսկ Սառային բոլոր ծառաներով և խաշներով յետ թողին։ սա կամաց-կամաց հետեւում էր նրանց։

Հրեշտակն ասաց Տուբիային. «Վեր առ հետդ լեղին, որ ձկից հանեցիր և քսիր այն հօրդ աչքին, որով կըբժկես նրա աչքերը»։

Ծերունի կոլը՝ Տովբիթ, շտապելով իր որդուն ընդ առաջ,

գլորուեցաւ. որդին շուտ գնաց նրան բարձրացըք: Հայր և մայր զրկեցին իրանց սիրելիին և ամենքը միասին շնորհակալ եղան Աստծուց և ջերմառանդութեամբ աղօթք արին: Երբ փոքր ինչ հանգստացան, ուրախութեան առաջին ըովէներից յետոյ, Տուբիան առաւ ձկան լեղիով լիք ամանն և օծեց նրանով իր հօր աչքերը. նոյն ըովէին փառը աչքերի բիբից հեռացաւ և Տովբիթ սկսաւ տեսնել: Ամենքը փառաւորեցին Աստծուն: Ծերունի Տովբիթ ասաց ուրախութեամբ. «Տէր Աստուած Խորհրդի, շնորհակալ եմ Քեզնից. Դու պատժեցիր ինձ, բայց Դու էլ ողորմեցար. ես էլի տեսնում եմ իմ որդի Տուբիալին»:

Բարեպաշտ Տովբիթի առաջին խօսքերը, աչքերի բացուելից յետ, էին շնորհակալութեան աղօթք Աստուծոյ: Նա գիտէր որ ամեն ուրախութիւն Աստուծոյ պարզեւ է, ամեն բանի մէջ տեսնում էր նա Աստուծոյ բարութիւնը:

Տովբիթ ուրախ սրտով գնաց իր հարսի առաջը նինուէի դռներիցը դուրս. ով նրան ճանաչում էր, զարմանում էր, որ նա առանց առաջնորդի է գնում, իսկ Տովբիթ ամենի առջևը փառաւորում էր Աստուծոյ, որ դարձրեց նրան աչքի լոյսը: Տովբիթի բոլոր ազգականներն ուրախանում էին և եօթն օր տօնեցին Տուբիալի պսակը: Խնջուքի օրերն անցնելից յետ, երկուսն էլ, հայր ու որդի, խնդրեցին ծրագրեալ Ազարիալին, որ իբրև շնորհակալութեան նշան ընդունէ իրանց բոլոր ստացուածի կէսը, բայց հրեշտակն ասաց նրանց. «Փառաւորեցէք Աստծուն ամենի առջև. նա զրկեց ձեզ մեծ ողորմութիւններ. թագաւորի գաղտնիքը պահել հարկաւոր է, իսկ Աստուծոյ գործքերը յայտնելը բարի է: Պահք, աղօթք, և ողորմութիւնն ամեն դանձերից լաւ են: Լաւ է քիչը արդարութեամբ, քան թէ շատը անարդարութեամբ: Ողորմութիւնը փրկում է մահից և սրբում է մեղքերն. ողորմութիւն և արդարութիւն անողները կեանք կըստանան, խստասիրտ մեղաւորն իր հոգւոյ թշնամին է: Ես

չեմ ծածկիլ ձեզնից մեծ գաղտնիքը: Այն ժամանակ, ասաց հրեշտակը Տովբիթին. «Երբ դու աղօթք էիր անում և քո հարսդ Սառան էլ աղօթք էր անում, ես տանում էի ձեր աղօթքն Ամենաբարձրեալի առաջ. երբ դու թաղում էիր մեռածներին և այս բարի գործի համար չծուլացար սեղանից էլ վեր կենալ և թողնել քո ճաշդ, ես քեզ հետ էի այն ժամանակ. ես այն բոլորը տեսալ: Աստուած զրկեց ինձ, որ պսակեմ քեզ և քո հարսիդ Սառալին: Ես Ռափայէլն եմ, մէկն այն եօթն սուրբ հրեշտակներից, որոնք տանում են սուրբերի աղօթքն և կանգնում են Ամենաբարձրեալի աթոռի առջեր:

Այս որ լսեցին Տովբիթ և իր որդին, գողացին և յարգութեամբ ընկան հրեշտակի առջեր:

«Խաղաղութիւն ձեզ», շարունակեց նա, «մի վախենաք ոչնչեց. ես ոչ թէ իմ կամքովս, այլ Աստուծոյ հրամանով կայ ձեզ մօտ և բնակեցայ ձեր մէջ: Փառաւորեցէք նրան. աղօթք արէք նրան այժմ, ես դառնում եմ նրա մօտ, Ով ինձ զրկեց. յայտնեցէք մարդոց և գրեցէք հրաշքներն, որոնք ձեզ պատահեցան»:

Այս ասելից յետ Ռափայէլ հրեշտակն անհետացաւ: Տովբիթ և իր որդին ընկան գետին, փառաւորեցին Աստծուն և ամենին պատմում էին իրանց պատահած հրաշքները:

Սրանից յետոյ ծերունի Տովբիթն ապրեցաւ էլի վաժտուն երկու տարի յաջողութեամբ և տեսաւ իր թոռներին: Իր մահից առաջ նախագուշակեց որդոցն, որ նինուէն շուտ կըքանդուի և Խորական կըդառնան իրանց հայրենիք: Տովբիթ մեռաւ խորին ծերութեան մէջ հարիւր լիսուն ութը տարեկան և պատուով թաղուեցաւ: Տուբիա, որա որդին, կեցաւ իր մօտ մինչեւ նրա մեռնին և յետոյ տեղափոխուեցաւ Եկբատանա իր աներոջ՝ Հռագուէլի մօտ և պատուում էր նրան և նրա կնոջ Հեղնալին, ինչպէս իր ծնողներին: Նա փակեց նրանց աչքերը: Տուբիան կեցաւ Երկրիս երեսին

Հարիւր քսան եօթն տարի և հանգիստ վախճանեցաւ արդարների մահով:

91. Յուղիթ.

Բաբելոնի թագաւորը Նաբուգոդոնոսոր պատերազմ էր տալիս Մարաց Արփաքսատ թագաւորի դէմ: Նա զրկեց ամեն դրացի ազգերի մօտ օգնութիւն խնդրելու. միայն ամենքն էլ բաց ասեցին: Երբ յաջողութեամբ վերջացրեց պատերազմը Մեդացոց թագաւորի դէմ, Նաբուգոդոնոսոր միտքը դըեց վրէժ հանել նրանցից, որոնք օգնութիւն չտուին իրան: Այս բանի համար զրկեց նա իր Հողեփեռնէս զօրավարին բազմաթիւ զօրքով նրանց դէմ: Այս զօրավարը սրով և կրակով ջնջում էր ամեն իրան ընդդիմացողներին: Յուղալի բնակիչներն, որոնք նմանապէս նրանցից էին, որ բաց ասեցին Նաբուգոդոնոսորին օգնութիւն, սպասում էին նոյն վիճակին: Նրանք պահք կարգեցին և վճռեցին մինչև վերջին զօրութիւնը պաշտպանել իրանց: Հողեփեռնէս զարմացաւ նրանց այսպիսի հաստատամտութեան վրայ: Նա պաշարեց Բնտուղիս բերդը, կտրեց ջրի աղբեկրներն. և քաղաքի բնակիչները քաշում էին ջրի մեծ պակասութիւն: Թշուառութիւնը Բնտուղիալի մէջ սարսափելի էր և շատերը կամենում էին վերջապէս անձնատուր լինել, քան թէ մեռնիլ ծարաւից: Վճռեցին էլի հինգ օր սպասել և եթէ այս միջոցումն Աստուած իրանց օգնութիւն չի տալ, մատնել բերդը թշնամիների ձեռքը:

Բնտուղիս քաղաքում բնակում էր մի բարեսլաշտ և գեղեցիկ այրի կին, Յուղիթ անունով. նա միտը դրեց փրկել քաղաքը: Նա ոչ ոքին չայտնեց իր խորհուրդը. բայց միայն խնդրեց իր քաղաքացիներին, որ աւելի ջերմեռանդութեամբ աղօթք անեն իրան համար Աստծուն: Յետոյ հանեց իր սգի

զորերն, որ իր մարդու մահուան պատճառով հագած ունէր, զարդարուեցաւ ճոխութեամբ և գնաց թշնամու բանակը: Նրան տարան Հողեփեռնէսի մօտ, որին նա ասաց, թէ ինքը կարող է զտնել միջոց հեշտութեամբ քաղաքին տիրելու, յետոյ նա խնդրեց միայն, որ իրան և իր հետ եկած աղախնին հրաման տալ ամեն առաւօտ և երեկոյ բանակից դուրս գնալ աղօթք անելու համար:

Հողեփեռնէսը շատ բաւական մնաց այս առաջարկութեամբ և հրամալեց պահապանին, որ չարգելէ Յուղիթին և նրա աղախնին բանակից դուրս գալու առաւօտներն ու երեկոները նա սիրահարուեցաւ Յուղիթի գեղեցկութեան և խոհեմութեան վրայ: Նրա գալուստի չորրորդ օրը հրաւիրեց նրան իր սեղանի մօտ նստել: Երբ նա վրանը մտաւ, Հողեփեռնէս ասաց. «Նստիր մեզ հետ, կեր, խմիր և ուրախացիր»: «Ոչ, յատնի բան է, ես ուրախ կըլինիմ, պատասխանեց Յուղիթ, ինձ գեռ ոչ ոք երբէք այսպիսի յարգանք չէ ցոյց տուել»: Հողեփեռնէս, Յուղիթի ներկայութեամբն ուրախացած, խմում էր սովորականից աւելի, նոյնպէս էլ նրա սպասաւորները: Սեղանից յետոյ ամենքը հեռացան մէկ մէկից, ով որ կողմը կամեցաւ. վրանում մնացին Յուղիթ և Հողեփեռնէս. այնպէս հարբեցաւ վերջինս, որ պառկած էր անկողնի վրայ առանց զգացողութեան: Յուղիթ, նըրան մօտենալով, ասաց արտասուքով. «Տէր Աստուած Իսրայէլի, զօրացըն ինձ այս ժամիս»: Յետոյ նա վեր առաւ Հողեփեռնէսի սուրը, որ կախած էր նրա գլխի վրայ, և կըտրեց նրա գլուխը: Յուղիթի աղախինը Հողեփեռնէսի գլուխը դրաւ պարկի մէջ:

Առաւօտն իրանց սովորութեամբ դուրս գնացին նրանք բանակից իրանց աղօթքը կատարելու. բայց նրանք բանակը դառնալու փոխարէն մտան քաղաք:

Երբ քաղաքի ծերերը ժողովեցան հրապարակում, Յուղիթ ցոյց տուեց նրանց Հողեփեռնէսի գլուխը: Բնտուղիալում

ամենքն ուրախացան շատ և նոյն ժամին վճռեցին դուրս գալ քաղաքից և յարձակուել թշնամու վրայ: Թշնամիները, գեռ չիմանալով իրանց զօրավարի մահը, ծաղրում էին Յուղացիներին: Նրանք ժողովեցան Հողեփեռնէսի վրանի չորս կողմը, կարծելով որ նա դեռ քնած է. բայց տեսնելով որ իրանց զօրավարը շատ ուշ է զարթում, մի քանիսը յանձն առան վրանը մտնել և գտան այնտեղ Հողեփեռնէսի գըլխատած մարմինը: Զօրավարի մահուան համբաւը մեծ իրուովութիւն գցեց բանակի մէջ: Զօրքը բանակը թողնելով փախաւ և Բետուղիայի բնակիչները մտան բանակ և գտան այնտեղ մեծ աւար, որ երեսուն օրուան մէջ հազիւ կարողացան քաղաք տանել: Յուղիթը գովասանական երգ երգեց Աստծուն:

92. Բաբելոնի դրութիւնը. Դանիէլ.

Բաբելոն տարած գերի Եբրայեցիների մէջ կալին շատերը թագաւորական ցեղից և մեծամեծների որդիքը: Նաբուգոդոնոսոր հրամայեց այս ընտանիքներից ընտրել խելօք և գեղեցիկ երեխաներն: Նա նշանակեց նրանց իրան ծառայելու համար, հրամայեց սովորցնել նրանց ամեն գիտութիւններ և արհեստներ, պահել լաւ, տալ նրանց կերակուր և գինի իր սեղանից:

Այս երախաների անուններն էին Դանիէլ, Անանիա, Ազարիա և Միսայէլ: Նրանք մտքերը դրին չգործածելու նըրանց բերած ոչ քաղցրահամ կերակուրները և ոչ թանկագին գինիները: Չնայելով իրանց մատաղ և փափուկ հասակին, Եբրայեցի երեխաներն էին բարեխտուն. Նրանք ոչինչ էին համարում ամեն երկրային բարութիւններն, և ոչինչ ուրիշ բանի վրայ չէին մտածում, բայց միայն որ կատարեն Աստուծոյ պատուիրանները: Նրանք գիտէին, որ թագաւորի

սեղանում գտնւում են շատ այնպիսի կերակուրներ, որոնք Մովսէսի օրէնքով արգելուած են, և վախենալով որ նրանցից չանցնեն, նախաղասելի համարեցին բաւականանալ հացով, կանանչունով և ջրով: Եբրայեցի մանուկների վերակացուն, որ թագաւորի առաջին պաշտօնեաներից մէկն էր, յայտնում էր Դանիէլին և նրա ընկերներին, որ իր վրայ կըբարկանայ թագաւորն, եթէ իմացուի, որ նրանք չեն կերակըրում արքունի սեղանից բերած կերակուրներով և եթէ թագաւորը տեսնէ նրանց երեսները դեղնած և տիսուր. բայց Դանիէլ խնդրեց նրան, որ միայն տասնօրեայ փորձ անէ և եթէ այս միջոցումն նկատէ, որ իրանք վատանում են կամ գեղնում, նա խոստացաւ ուտել այն, ինչ որ կըհրամայեն: Վերակացուն համաձայնեցաւ եւ սկսաւ ուտելու տալ նրանց միայն ունտ, հաց և ջուր խմելու համար: Նշանակած տասնօրեայ ժամանակից յետ, նրանք աւելի առողջ և զուարժէին երևում, քան թէ այս երեխայք, որոնք ուտում էին թագաւորի սեղանի կերակուրներից: Այս տեսնելով, վերակացուն հրամայեց նրանց գործածել այն կերակուրն, ինչոր կըբարեհածեն իրանք: Աստուած վարձատրեց այս բարեպաշտ և բարեխառն երեխաներին, տալով ընդունակութիւն գիտութիւններ սովորելու: Նրանք մեծ յառաջադիմութիւններ արին և գիտութեամբ անցան ամեն Բաբելացի ուսեալներից և իմաստուններից: Նրանց յանձնեցին երեսելի գործքեր Բաբելոնի երկրում (Դան. Գ. 12):

93. Երեք մանուկները կրակի հնոցի մէջ.

Նաբուգոդոնոսոր հրամայեց ոսկիից մի մեծ կուռք ձուլել և գնել դաշտում: Նա կանչեց իր տէրութեան ամեն երեսելի մարդոց տօնելու այս կոքի պատուի համար և փողերի ձախներով հրամայեց յայտնել, թէ ով որ երկրակագութիւն չի

տալ կոքին, նրան կը գցեն. վառած հնոցի մէջ: Այս հրամանը լսելիս ամենքը ժողովեցան, որ երկրպագութիւն տան կուռքին և երկրպագանում էին, բացի երեք Երաւեցի մանուկներից, որոնց անունները Սեդրաք, Միսաք և Աքեղնազով էին: Այս երեք մանուկներին տարան թագաւորի առաջ:

«Ճշմարիտ է, որ չէք կամենում երկրպագութիւն տալ ոսկէ կոքին», հարցրեց բարկացած թագաւորը. «ալժմ իսկ հրամալում եմ ձեզ, որ երեք կը լսէք փողի ձայնն, ընկնէք կոքի առաջին և երկրպագէք նրան: Իսկ եթէ չէք հնազանդիլ, կը նկնէք կը ակի հնոցի մէջ: Այն ժամանակ կը տեսնենք, թէ ո՞ր Աստուածը կը փրկէ ձեզ իմ ձեռքից»: Մանուկները պատասխանեցին. «Ամենազօր Աստուածը, Որին մենք երկրպագութիւն ենք տալիս, կարող է փրկել մեզ քո ձեռքիցդ և հնոցի բորբոքեալ կը ակից. բայց եթէ նա էլ չի բարեհաճիլ մեզ փրկել, այն ժամանակն էլ այս յայտնի լինի քեզ, որ մենք քո չաստուածներիդ և կուռքիդ, որ դու կանգնեցիր, երկրպագութիւն չենք տալ»:

Թագաւորը, զայրացած, հրամայեց, որչափ կարելի է, սաստիկ բորբոքել հնոցն և դցել նրա մէջ երեք մանուկներին, պինդ կապած: Ամեն բան նաբուգողոնոսորի հրամանին համեմատ կատարուեցաւ: Հնոցն այնպէս տաքացրած էր, որ սպասաւորներն, որոնք մանուկներին դցեցին մէջը, այլում էին: Բայց կապած մանուկները, որոնք ընկան այս սարսափելի բացի մէջ, մնացին անվնաս: Աստուածանից դրկած հրեշտակը մեղմացրեց կը ակի սաստկութիւնն ու զովացրեց նրանց ինչպէս զովարար ցօղով: Կը նրանց չէր հասնում: Նրանք, կը ակի մէջ կանգնած՝ երգում էին Աստծուն երգ:

Նաբուգողոնոսոր, երեք մանուկներին անվնաս տեսնելով, զարմացաւ, վեր կացաւ իր տեղից և հարցրեց իր պալատականներին. «Մենք երեք մարդոց կապած չգցեցինք բորբոքեալ հնոցի մէջ: Նայեցէք, նրանք ազատ են. անվնաս իրանց սլատող բոցի մէջ և նրանց հետ միասին էլի չորրորդը,

գեղեցիկ երկնալին ոգիի պէս»: Նա մօտեցաւ հնոցին և կանչեց. «Դուք՝ Բարձրեալ Աստուգոյ ծառայք, դուքս եկէք բոցից և մօտեցէք ինձ»: Նրանք մօտեցան թագաւորին: Ոչ մի մազ նրանց գլխի վրայ չէր խանձուել. նրանց շորերն անգամ անվնաս էին մնացել. չէր երևում կրակի ոչ մի հետք և ոչ էլ կրակի հոտը կար. միայն շղթաներն, որով կապած էին, թուլացել և քակուել էին: Այն ժամանակ նաբուգողոնոսոր երկրպագութիւն տուեց ճշմարիտ Աստծուն և ասաց. «Օրհնեալ է ձեր Աստուածն, որ զրկեց իր հրեշտակին փրկելու իրան վրայ յուսացողներին: Եթէ իմ հպատակներիցս մէկը կը համարձակուի հայկոյել Աստծուն, Որին երկրպագում են այս Յուդացիները, մահով կը մեռնի նա. որովհետեւ չկայ ուրիշ Աստուած, որ կարողանայ այսպիսի հրաշք գործել»:

Թագաւորի հրամանով Սեդրաք, Միսաք և Աքեղնազով (այսպէս անուանուեցան Բաբելոնում Անանիա, Ազարիա և Սիսակէլ) ստացան բարձր պաշտօններ տէրութեան մէջ:

94. Դանիէլ մարդարէ.

Նաբուգողոնոսոր թագաւորը միանգամ տեսաւ երազ, որ մեծ անհանգստութեան մէջ գցեց նրան: Նա մոռացաւ երազի մանրամասն հանգամանքները. բայց զգում էր ահ և ոչինչ ուրիշ բանի վրայ չէր կարողանում մտածել, բայց միայն նրա վրայ, թէ ինքը տեսել է մէկ սարսափելի բան: Վերջապէս կամենալով հանգստանալ այս երազից, կանչեց իր թագաւորութեան բոլոր գիտուն մարդոց, մանաւանդ երազահաններին և քուրմերին, որոնք պարապում էին ապագան գուշակելով: Ամենքն ասում էին, որ առանց երազն իմանալու, նրանք չեն կարող մեկնել նրան: Թագաւորը կամենում էր, որ անպատճառ պատմեն և մեկնեն իրան այն երազն, որ ինքը մոռացել էր: Նա սպառնում էր սպանել

նրանց, որոնք չեն իմանալ նրա երազն, և քանդել նրանց տները: Իզուր էին ասում նրան, թէ այս մարդկային մտքի զօրութիւնից վեր բան է: Թագաւորը հրամայեց սպանել իր թագաւորութեան մէջ եղած բոլոր գիտնականներին, որովհետեւ նրանք չկարողացան մեկնել նրան այն, ինչ որ ինքն էլ չէր իմանում:

Այս թշուառների մէջ, որոնք պէտք է մեռնէին անարդար հրամանով, էր Դանիէլն և նրա ընկերներն էլ, ինչպէս գիտութիւններով պարապող անձներ: Մրանք ամենքն էլ չէին իմանում՝ թէ ինչ է պատահել թագաւորին: Սպառնացող վտանգն որ իմացաւ, Դանիէլ գնաց այն պաշտօնատարի մօտ, որ պէտք է կատարէր թագաւորի հրամանը: Արիովք (այսպէս էր պաշտօնատարի անունը) պատմեց նրան Նաբուգոդոնոսորի բարկութեան պատճառն ամեն իմաստունների վրայ: Դանիէլ, լիքը կենդանի յոյսով Ամենազօր Աստուծոյ վրայ, որ պահպանեց նրան բոլոր կեանքում, խնդրեց իրան տանեն թագաւորի առջև, որից խնդրեց ժամանակ տալ գատապարտածներին, մինչև ինքը կիմանայ երազն և մեկնութիւնն էլ կասէ: Թագաւորը համաձայնեցաւ ժամանակ տալ: Դանիէլ կանչեց իր մօտ իրան ընկներներին՝ Անանիալին, Ազարիային և Միսայէլին. պատմեց նրանց, թէ ինչ է պահպանում թագաւորն և խնդրեց նրանց, որ իրան հետ միասին աղօթք անեն Աստծուն, որ նա բարեհածի յայտնել իրանց գաղտնիքն այնքան անմեղ մարդոց փրկութեան համար: Նրանք ամենքն սկսան ջերմեռանդութեամբ ազօթք անել: Աստուած լսեց նրանց ազօթքն և գիշերը տեսիլքում յայտնեց Դանիէլին, ինչ որ հարկաւոր էր նրան գիտենալ: Առաւօտը վեր կացաւ, շնորհակալ եղաւ Աստուածանից և յետոյ գնաց թագաւորի պալատն և խնդրեց, որ իրան Նաբուգոդոնոսորի առջև տանեն:

Արիովք յայտնեց թագաւորին Դանիէլի գալուստն և ներս մտցրեց նրան: Դանիէլ ասաց Նաբուգոդոնոսորին, թէ

գիտութիւններով ոչ ոք չէր կարող մեկնել այն երազն, որ Աստուած իրան բաց արաւ: Քանի որ Դանիէլ պատմում էր Նաբուգոդոնոսորին նրա տեսած երազը, թագաւորը իր միտն էր բերում ամեն պարագաներն. և մեկնելով երազը, Դանիէլ ասաց, որ Աստուած կամենում էր նրա ձեռքով յայտնել այն մեծ անցքերի գաղտնիքն, որոնք երկրիս երեսին, պէտք է կատարուին: Լսելով մեկնութիւնն, որ բոլորովին համաձայն էր երազի ամեն մանրամասն հանգամանքներին, Նաբուգոդոնոսոր վեր ընկաւ Աստուծոյ առջև, աղաղակելով. «Ճշմարիտ, բացի յաւիտենական, ամենազօր Աստուածանից, ոչ ոք չէր կարող յայտնել այդպիսի երկելի գաղտնիք»: Նաբուգոդոնոսոր թանկագին ընծաներ տուեց Դանիէլին և բարձրացրեց նրան իր թագաւորութեան առաջին աստիճանի պաշտօնատարների կարգը: Դանիէլ խնդրեց իր բարեկամների՝ Անանիալի, Ազարիալի և Միսայէլի մասին և նրանց լանձնուեցան Բաբելոնի երկրի գործերի կառավարութիւնը: Դանիէլ մարգարէն պալատում թագաւորի սիրելին լինելով, միջոց ունեցաւ շատ բարեգործութիւններ անելու իր հայրենակից Հրէաներին:

Նաբուգոդոնոսոր տեսաւ ուրիշ երազ էլ և երբ հրամայեց մեկնել այն, Դանիէլ յայտնեց նրան, որ Աստուած կամենում է կոտրել նրա հպարտութիւնը և թէ նա մի քանի ժամանակ կըզըռի խելքից և աթոռից կընկնի, մարգոց հասարակութիւնից կըհեռանայ, կըստիպուի թափառել անապատներում և վայրենի գաղանների պէս կերակրուել արօտով, մինչև այն ժամանակ, երբ կըհաւատալ, որ մի է Ամենազօր Աստուածն և որ նա միայն տալիս է իշխանութիւն և թագաւորութիւն, ում կամենում է: Ամեն գուշակածը կատարուեցաւ. Նաբուգոդոնոսոր իր հպարտութեան և փառասիրութեան համար զրկուեցաւ մտքից և վայրենի գաղանների հետ եղաւ նրա քնակութիւնը:

Նոյնպէս մեկնեց Դանիէլ Նաբուգոդոնոսորի որդուն և

ժառանգին՝ Բաղդասարին էլ մի հրաշալի երեսոյթ։ Բաղդասարը տալիս էր մեծ խնջովք, ուր հրաւիրեց իր թագաւորութեան ամեն մեծամեծներին։ մօտ հազար հոգի կըլինէին ամենքը։ Նա հրամայեց բերել սուրբ ամաններն, որ նրա հայրը Նաբուգոդոնոսոր առել էր Երուսաղէմի տաճարից։ Այս ամաններով խմում էին գինի, և մեծացուցանում էին ոսկեղէն, արծաթեղէն, պղնձի, երկաթի, քարեղէն և փայտեղէն կոքերին, բայց ոչ ոք չէր մտածում փառաւորելու Մի, Յաւիտենական և Ամենազօր Աստծուն։ Յանկարծ երեցաւ մի ձեռք, որ գրում էր ամենին անծանօթ բառերը՝ Մանէ, Թէկէղ, Փարէս»։ Թագաւորը, սարսափած, տեսնում էր վառ լապտերների լուսով գրող ձեռքն և մատներն, որ շարժում էին, բոլոր հիւրերը նմանապէս տեսան այն։ Ելի կանչեցին ամեն գիտուններին, բայց ոչ ոք չկարողացաւ ոչ կարդալ անծանօթ գրերն և ոչ մեկնել այն բառերի միտքն, ոչ ոք չըկարողացաւ բացի Դանիէլից, որ ասաց թէ այն բառերը նըշանակում են՝ չափեցի, կշռեցի, բաժանեցի և թէ Բաղդասարի թագաւորութիւնը կըբաժանուի և կընուածուի Մեդացիներից և Պարսկիներից։ Նոյն գիշերն իսկ Բաղդասարին սպանեցին և նրա թագաւորութեանը տիրեց Մարաց Դարեհ Թագաւորը։

95. Շուշան.

Բարելոնում բնակւում էր մի անուանի և հարուստ հրէայ, Յովակիմ անունով, որի կնոջ անունը Շուշան էր։ Յովակիմի մօտ հաւաքւում էին ամենից անուանի հրէաներն և նա նրանց մէջ առաջինն էր համարւում։ Մանաւանդ երկուսը հրէաների դատաւորներից ամեն օր այցելութիւն էին անում նորան։ Նրանք ծերունի էին և ամենքի առաջ պատուելի, բայց նրանց սրտերն էին չար և արատաւոր։ Նրանք զբարտեցին

Շուշանին մի մեծ յանցանքում, որի համար Մովսէսի օրէնքով յանցաւորը մահու պէտք է դատապարտուէր։ Ատեանը, ծերունիների վկայութիւնը յարգելով, Շուշանին յանցաւոր հանեց։ Նրան տանում էին արգէն դատապարտութեան տեղը, բայց Աստուած լսեց անմեղի աղօթքը։ Նա լըքցրեց իր հոգով Դանիէլին, որ յայտնուեցաւ դատաւորների առջև և պահանջեց, որ նրանք նորից քննեն Շուշանի գործը։

Դատաւորները, դատապարտածն ու զրպարտիչներները դարձան դատարան։ Դանիէլ հրամայեց զրպարտիչներին զանազան սենեակներ բաժանել և հարցնել նրանց մէկ-մէկ։ Նրանց պատասխաններում անամօթ ծերունիները հակառակաբանեցին միմեանց։ Այն ժամանակ ամենքը տեսան Շուշանի անմեղութիւնն և փառաւորում էին Աստծուն, որ փրկում է իր վրայ լոյս դնողներին։ Երկու զրպարտիչներն էլ ստացան իրանց արժանի հատուցումն։ Նրանք մահու դատապարտուեցան, ինչոր պատրաստում էին անմեղ Շուշանին։

96. Բէլի կոքի կործանումն.

Բարելոնի բագիններից մէկի մէջ կանգնած էր Բէլի կուռքը, որ Բարելոնում առաջին Աստուածն էր համարւում։ Նրան բերում էին ամեն օր զոհ քառասուն ոչխար, տասներկու արդու նաշիհ և վեց մար գինի։ Թագաւորը ինքն ամեն օր գնում էր տաճար կոքին երկրպագութիւն տալու։ Ամենքը հաւատում էին, որ Բէլը կենդանի էակ է, ուտում է բոլոր իրան բերած զոհերն, ամենքը աղօթք էին անում նրան, ամենքը պաշտում էին նրան—ամենքը, բացի Դանիէլից և ուրիշ աստուածապաշտ հրէաներից։ Մի անգամ թագաւորը հարցրեց Դանիէլին։ «Ինչու դու չես ուզում երկըրպագութիւն տալ Բէլին»։ «Այն պատճառով, պատասխանեց

Դանիէլ, որ ես չեմ պաշտում կռքեր, որոնք մարդու ձեռքով շինած բաներ են: Ես երկրպագում եմ ճշարիտ, մի Աստծուն՝ երկրի և երկնքի Արարիչին, որ տիրում է ամեն արարածներին»: —Միթէ դու կարծում ես, որ Բէլը կենդանի Աստուած չէ, հարցրեց թագաւորը. միթէ չես տեսնում, ինչքան շատ ուտում է նա և խմում է ամեն օր: «Թագաւոր, մի՛ մոլորուիլ. Բէլն արձան է, մէջից հող է և դըսից պղինձ է. նա երբէք ոչ կերել է ոչ խմել»: Թագաւորը չարացաւ և հրամայեց կանչել Բէլի ամեն քուրմերին, որոնց թիւը եօթանասուն էր, չհամարելով կանանց և երեխանց: Նա ասաց նրանց. «Եթէ չէք ասել ինձ, ով է ուտում զոհը, որ ամեն օր բերում է Բէլին, ամենքդ մահի կարժանանաք. բայց եթէ դուք կապացուցանէք, որ ինքը Բէլն է ուտում, ես կըհրամայեմ Դանիէլին սպանել, որովհետեւ նա հայհոյեց աստծուն»: Դանիէլ պատասխանեց. «Թագաւոր, թո՞ղ լինի, ինչպէս ասացիր»:

Թագաւորը մտաւ բագին Դանիէլի հետ միասին, քուրմերն ասացին. «Թագաւոր, մենք ամենքս կերթանք այստեղից, դիր ինքդ կերակուր և գինի, յետոյ փակի՞ր դուռն և կնքի՞ր քո կնքովդ և եթէ էգուց առաւօտ պատրաստ կերակուրդ անվնաս մնացած կըլինի, թող մեզ սպանեն, բայց եթէ կըգտնես, որ Բէլը կերել է նրան, այն ժամանակ, պէտք է սպանուի Դանիէլ, որ զրպարտում է մեզ», Քուրմերը դուրս դնացին և թագաւորն ինքը դրեց բերած կերակուրները սեղանի վրայ: Խոկ Դանիէլ այս միջոցին հրամայեց իր ծառաներին բերել մոխիր և ցանել այն, թագաւորի ներկայութեան ժամանակ, տաճարի բոլոր յատակի վրայ: Յետոյ, տաճարից դուրս գալով, թագաւորը փակեց դուռն և կնքեց իր մատանիի կնքովը: Գիշերի մէջ քուրմերն, իրանց կանանց և որդոց հետ միասին, մտան տաճարն և վեր առան ամենն, ինչոր թագաւորը դրել էր Բէլի կռքի առջև:

Միւս օր առաւօտը վաղ թագաւորը Դանիէլի հետ ե-

կաւ տաճարի դռան մօտ: «Դանիէլ, ասաց թագաւորը, լաւ տես՝ ո՞ղջ է կնիքը»: «Այո՛, թագաւոր, ասաց Դանիէլ, ո՞ղջ է կնիքը»: Դուռը բաց անելով թագաւորը նայեցաւ զոհի սեղանին և աղաղակեց. «Ո՞վ Բէլ, մեծ ես դու. այստեղ ոչ մի խաբեբայութիւն չէր կարող լինել»: Դանիէլ կանգնացրեց թագաւորին, որ նա չմտնէ տաճար, որպէսզինոր հետքեր չթողնէ փռած մոխրի վրայ: «Թագաւոր, նայիր տաճարի յատակին, ասաց Դանիէլ, չես տեսնում արդեօք ոչ մի հետք»: — «Ես տեսնում եմ, պատասխանեց թագաւորը մարդոց, կանանց և երեխանց ոտների հետքեր»: Այս հետքերը թողել էին քուրմերը, նրանց կանայք և երեխաները: Որչափ խորամանկ էր խաբեբայութիւնը, բայց էլի բացուեցաւ: Գտան գաղտնի դուռն, որով մտնում էին քուրմերն իրանց ընտանիքներով, որ ուտեն զիշերով ամեն բան, ինչոր կռքին զոհ էին բերում: Թագաւորը հրամայեց բոլոր քուրմերին սպանել իբրև չար խաբեաներ, իսկ կուռքը տուեց Դանիէլին, որ քանդեց նրան էլ, նրա տաճարն էլ:

97. Դանիէլն առիւծների փոսում:

Այն մարդիկ, որոնք հաւատի աստուածատուր ուսումն չունին, ընդունակ են ամեն մոլորութիւնների մէջ ընկնելու: Բաբելոնում կար մի մեծ օձ, որին ժողովուրդը պաշտում էր: Մի անգամ թագաւորն ասաց Դանիէլին. «Այս աստուծոյ վրայ չես ասիլ, գիտեմ, թէ կենդանի չէ, դու տեսնում ես ինքդ, ինչպէս նա ուտում է և խմում է, ուրեմն երկըրպագի՞ր դրան»: Դանիէլ պատասխանեց. «Ես երկրպագում եմ Տէր Աստծուն. Նա միայն է կենդանի Աստուած: Տնը ինձ հրաման, արքայ, ես կըսպանեմ այդ կենդանուն, որին ժողովուրդը ընդունում է աստուած, և ես կըսպանեմ առանց սուր և գաւազան զործածելու»: Թագաւորը հրաման տուեց:

Դանիէլ առաւ ձիւթ, ճարպ և մազ, եփեց ամենը միասին և գցեց օձի առջև, որ կերաւ այս պատրաստած խառնուածքը և արաքեցաւ: «Տեսնում էք, ումն էք պաշտում դուք», ասաց Դանիէլ ժողովրդին:

Երբ այս համբաւը տարածուեցաւ, ազգը սկսաւ տրտընջել թագաւորի վրայ. պատեցին նրա պալատն և գոռում էին. «Թագաւորը հրէայ է դառել. նա քանդեց Բէլին, դատապարտեց նրա քուրմերին և սպանեց օձին»: Ապստամբների խումբը մտաւ թագաւորի պալատը և ասում էր թագաւորին. «Տուր մեզ Դանիէլին, կամ թէ չէ, կըսպանենք քեզ էլ, բոլոր ընտանիքդ էլ»: Թագաւորը ստիպուեցաւ Դանիէլին նրանց ձեւքը մատնել: Ժողովուրդը գցեց նրան փոսն, ուր կալին եօթն առիւծներ: Ամեն օր նրանց կերակում էին, տալով նրանց երկու մարդու մարմին և երկու գառը. բայց Դանիէլին գցելից յետոյ վեց օր ոչինչ կերակուր չտուին, որ սովից շուտ պատառեն նրան:

Աստուած այստեղ էլ չթողեց Դանիէլին: Առիւծներն ոչինչ վնաս չտուին նրան: Բայց Դանիէլ ինքը զգում էր սով: Այս ժամանակ բնակում էր Հրէաստանում Ամբակում մարդարէն: Նա եփեց կերակուր իր հնձողների համար, կողովի մէջ դրեց հաց և պատրաստած կերակուրի հետ միասին տարաւ արտը իր մշակների մօտ: Աստուծոյ հրեշտակն երևցաւ Ամբակումին ճանապարհում և ասաց. «Տար այդ ճաշը Բաբելոն Դանիէլին, որ առիւծների փոսի մէջ է»: «Տէր, պատասխանեց Ամբակում, ես երբէք Բաբելոնում չեմ եղած և չգիտեմ էլ, թէ ուր է առիւծների փոսը»: Այս ժամանակ հընդարձակը բարձրացրեց նրան, տարաւ, ինչպէս մըրիկ, օդի միջովն և դրեց Բաբելոնում առիւծների փոսի մօտ:

Ամբակում կանչեց. «Դանիէլ, ծառալ Աստուծոյ, առայս կերակուրն, որ Աստուած զրկում է քեզ»: «Աստուած իմ, ասաց Դանիէլ. Դու շմոռացար ինձ: Դու երբէք չես թողնում նրան, ով Քեզ սիրում է»: Նա վեր կացաւ և կուշտ

կերաւ, իսկ հրեշտակը տարաւ Ամբակումին իր առաջուան տեղը:

Եօթներորդ օրը թագաւորը գնաց առիւծների փոսի մօտ, որ լաց լինի Դանիէլի մահն, որովհետև նրան մեռած էր կարծում. բայց Դանիէլին անվնաս և առողջ տեսնելով բարձր ձայնով աղաղակեց. «Ո՛վ Աստուած, Աստուած Դանիէլի. Դու մեծ ես և չկայ ուրիշ Աստուած բացի Քեզանից»: Նա հրամայեց հանել Դանիէլին առիւծների փոսից և գցել այն տեղ նրանց, որոնք նրան գցել էին: Մի ըոսէում թագաւորի աչքի առաջին առիւծները պատառեցին նրանց: Թագաւորն ասաց. «Իմ ամեն հպատակներս, պէտք է երկրպագութիւն տան Դանիէլի Աստծուն: Նա է գործում հրաշքներ. Նա փրկեց Դանիէլին առիւծներից»:

98. Եսթեր.

Եսթերի ծնողները գերի հրեաներից էին և բնակում էին Պարսկաստանում, ուր այն ժամանակ թագաւորում էր Արտաշէս, մականուանուում էր երկայնաբազուկ: Նրանք մեռան և Եսթեր մնաց որբ օտար երկրում և օտարների մէջ: Բայց Աստուած, ամեն որբերի հայրը, զըկեց նրան պաշտպան, որ էր նրա ազգական Մուրթքէոսը, նրա հօրեղբօր որդին: Սա էր առաքինի, աստուածասէր մարդ և կրթում էր Եսթերին ճշմարիտ Աստուծոյ հաւատով: Եսթերը գեղեցիկ էր շատ, բարի և խելօք:

Արտաշէս հզօր թագաւոր էր և տիրում էր հարիւր քսան գաւառների: Մի անդամ նա իր Սիսիս մայրաքաղաքում մեծ խնջոյք կազմեց և հրաւիրեց իր թագաւորութեան ամեն մեծամեծներին և պաշտօնատարներին: Խնջոյքի տեղ նշանակած էր թագաւորի տան գաւթում. սիւների վրայ կախած էին գոյնզգոյն գործուածքներ, որոնք պաշտպանում էին հիւ-

ըերին արեգակի ճառագայթներից: Սեղանը զարդարած էր ոսկի ամաններով և խմիչքները բաժանում էին ոսկի բաժակներով: Այս հացկերոյթը տևեց եօթն օր: Եօթներորդ օրը թագաւորը սովորականից աւելի ուրախ էր. մեծ բազմութիւն հաւաքուեցաւ և թագաւորը նրանց յարգելով, կամենում էր, որ ճաշի ժամանակ իր կի՞ Ասթանէն, բոլոր իր զարդերով զարդարուած, յայտնուի իր բախտաւոր հպատակների մէջ: Բայց հպարտ Ասթանէն չկամեցաւ կատարել իր ամուսնու կամքը: Թագաւորը բարկացաւ, թողեց Ասթանէին և միտը դրեց ընտրել իրան ուրիշ աւելի հեզ և խոնարհ կին:

Ըստրութիւնն ընկաւ Եսթերին: Պարկեշտ Եսթերն ամենևին չէր կարծում, որ այս բախտաւորութիւնն իրան կը վիճակուէր: Նա զարդերով չէր պարապում և իր համեստութեամբ չէր էլ իմանում, որ ինքն ամենից գեղեցիկ է: Թագաւորը նրան նախադասելի համարելով ամեն ուրիշ աղջիկներից, դրեց նրան գլխին թագաւորական թագ:

Եսթերի պատուի համար թագաւորը կազմեց խնճուք, ուր հրաւիրեց ամեն իշխաններին և մեծամեծներին: Բոլոր ազգին մի տարի հարկի թողութիւն արաւ և ամենին պարզեց տալիս արքունի առատաձեռնութեամբ՝ իր ուրախութիւնը յայտնելու համար. նա ուզում էր որ իր բոլոր թագաւորութիւն էլ մասնակից լինի այս ուրախութեան: Բայց Եսթեր ամենևին չհպարտացաւ իր նոր վիճակում: Թագուհի լինելով, նա էլի չէր դադարում պատուել և սիրել Մուրթքէոսին, ինչպէս առաջ, երբ բնակում էր նրա տանը, իբրև մի պարկեշտ որբ:

99. Մուրթքէոս և Համան.

Մուրթքէոսը շատ յաճախ գալիս էր թագաւորի պալատի դռան մօտ, որ տեսնէ թէ ինչ է պատահում Եսթերին: Մի անգամ նա լսեց ինչպէս պալատականներից երկուսը խօսք էին կապում թագաւորին սպանելու համար: Մուրթքէոս, երբեք հաւատարիմ հպատակ, կամեցաւ զգուշացնել իր թագաւորին, նա յայտնեց այս թագուհուն, որ իր կողմից ասաց թագաւորին: Գործի վրայ քննութիւն եղաւ, ամբաստանութիւնն արդարացաւ, երկու դաւաճաններն էլ կախուեցան, իսկ անցքը գրուեցաւ արքունի լիշտակաց զրքի մէջ:

Արտաշէսի առաջին նախարարն էր Համան: Թագաւորը նրան իր թագաւորութեան ամեն իշխաններից վեր բարձրացրեց. ամենքը, պէտք է ծունը իշնէին նրա առջև, բայց Մուրթքէոս չէր կամենում Համանի առաջին ծունը իշնել, ուստի սա շատ ատեց նրան: Համան գոհ չէր լինում՝ միայն նրանից վրէժ հանելով: Գիտենալով որ Մուրթքէոս Հրէայ է, միտը զրեց Համան Արտաշէսի տէրութեան մէջ եղած է, միտը զրեց Համան Արտաշէսի տէրութեան մէջ եղած է ապստամբութիւն անելու: Վերջապէս հանեց հրովարտակ, թագաւորի ստորագրութեամբ, ամեն Հրէաններին կոտորելու համար: Զար ուրախութեամբ լցուած, Համան շտապեց թագաւորի հրամանը հրամարակելու; Ադար ամսի տասնչորսը նըշանակած էր Արտաշէսի թագաւորութեան մէջ եղած բոլոր Հրէաններին ջնջելու օր:

Մուրթքէոս սարսափեցաւ, երբ լսեց այսպիսի տմարդի հրաման: Նա չերմեռանգութեամբ ալօթք էր անում Աստուծոյ, որ փրկէ իր թշուառ ազգին: Աստուծոյ օգնութեան վրայ լուսալով, նա մտածում էր Հրէաններին փրկելու մի-

ջոցների վրայ: Այս մտածմանց մէջ նա դրկեց Եսթերին թագաւորի հրամանից մի օրինակ և խնդրեց, որ թագաւորից մի ողորմութիւն հանէ: Եսթեր հրամայեց իր հօրեղբօր որդուն ասել, որ բոլոր տէրութեան մէջ լայտնի է այս օրէնքըն, որ հրամայում է ամենին, ով որ առանց կանչելու կը համարձակուի թագաւորի մօտ մտնել, սպանել, ով էլ լինի՝ թէ մարդ և թէ կին: «Ես չեմ համարձակում, ասաց Եսթեր, գնալ թագաւորի մօտ. ահա արդէն երեսուն օր է, նա ինձ չէ հարցրել»: Մուրթքէոս հրամայեց ասել նրան. «Մի կարծիր, որ քեզ կը ինայեն Հրէաների ընդհանուր կոտորածի ժամանակ լոկ այն պատճառով միայն, որ դու թագաւորի տանն ես. չէ, չեն ինայիլ, դու էլ կը կորչես քո հայրենակիցներիդ հետ, քո ազգիդ հետ միասին: Ի՞նչ կարծենք, արդեօք Աստուած քեզ այդ բարձր աստիճանը չքարձրացընց, որ դու լինիս գործիք Հրէից ազգի փրկութեան»:

Եսթերի սիրտը շարժեցաւ Մուրթքէոսի խօսքերից, հրամայեց նրան ասել. «Գնա, ժողովիր քեզ մօտ Սիսիս քաղաքում գտնուող բոլոր Հրէաներին, պահէք պահեցէք երեք օր և երեք գիշեր և ամենքն միասին աղօթք արէք ինձ համար: Ես իմ աղախիններովս նմանապէս երեք օր կանցկացնեմ պահով և աղօթքով. լետոյ, չնայելով արքունի արգելման կերթամ նրա մօտ անկոչ, եթէ մինչև մահ անդամ ստանալու լինիմ այս գործի համար»:

100. Եսթերը յայտնուում է թագաւորի առաջ.

Ոչ մի բանի չպէտք է ձեռք խփել առանց Աստուածանից օգնութիւն խնդրելու: Եսթեր գիտէր այս և աղօթք էր անում ասելով. «Աստուած, Տէր տիեզերաց, ես ամենից

թողած եմ. չունիմ ոչ պաշտպան և ոչ հովանաւոր, օգնիր ինձ. օգնիր Քո ազգիդ, նրա թշուառութեան օրն, ողորմիր մեզ. տուր ինձ համարածակութիւն և դիր բերնումս այնպիսի խօսքեր, որոնք կարողանան ազգել թագաւորի սրտին վրայ: Ո՛հ, Ամենագէտ Տէր, Դու կարդում ես իմ սրտումս եղածը. Դու գիտես, որ ոչ թագաւորական թագն, ոչ էլ ինձ պատող մեծութեան փառքը չեն ուրախացնում իմ սիրտս. Դու գիտես, որ իմ բոլոր միխթարութիւնս, իմ բոլոր ուրախութիւններս Դու միայն էրի: Ո՛վ Տէր, Աստուած Աքրահամի, լսիր Քո ծառաներիդ ազօթքն, որոնք իրանց բոլոր լոյսը Քեզ վրայ են դրել, փրկիր նրանց սպանիչների ձեռքից և ազատիր ինձ իմ վտանգիցս»:

Երբ աղօթքի երեք օրերը վերջացան, Եսթեր հագաւիր ճոխ թագաւորական զարդն և գնաց թագաւորի մօտ, երկու աղախինների հետ միասին: Նա թեք ընկած էր մէկի վրայ, իսկ միւսը բարձրացրած ունէր նրա երկար ծիրանիի քղանցը: Նատ սենեակներ անցնելից լետ, մտաւ նա վերջապէս այն սենեակն, ուր էր թագաւորը: Նա նստած էր գահի վրայ, նրա շորը փայլում էր ոսկով և թանկագին քարերով: Արտաշէս նայեցաւ Եսթերին — և բարկութիւնը փայլեցաւ նրա երեսին: Թագուհին դեղնեցաւ և անզգայ ընկաւ մի աղախինի ձեռքի վրայ: Բայց Աստուած զսպեց թագաւորի բարկութիւնը. նա գահից իջաւ. ինքը բռնած ունէր անզգայ Եսթերին, մինչև որ սա ուշքի եկաւ և վերջապէս քաղցրութեամբ ասաց նրան. «Եսթեր, դու չես մեռնիլ. դու բացառութիւն կը լինիս հասարակաց օրէնքից, որ դատապարտում է մեռնել ամենին, ով առանց իմ հրամանին կը համարձակուի իմ առջև լայտնուել»: Տեսնելով, որ նա բոլորովին կազդուրեցաւ, Աստաշէս շարունակեց. «Թագուհի, ի՞նչ ես կամենում դու: Խնդրիր համարձակ. ես պատրաստ եմ քեզ տալ մինչև թագաւորութեանս կէսն անզամ»: Եսթեր խնդրեց, որ թագաւորը համանի հետ միասին գալ իր մօտ ճաշին: «Ո՞ն

Ժամանակ, ասաց նա, ես կըյալտնեմ քեզ, թագաւոր, իմ խնդիրքս»։ Թագաւորը հրամայեց ասել Համանին, որ թագուհու կամքն անպատճառ կատարուի։

101. Մուրթքէոսի յաղթանակը.

Թագաւորը Համանի հետ միասին ճաշ կերաւ Եսթերի մօտ, միւս օր էլի խնդրեց նա թագաւորին իր մօտ ճաշի գալ Համանի հետ և խոստացաւ երորդ օրը յայտնել իր խնդիրքը։ Համան տուն գնալիս, գոհ լինելով այն պատուով որ իրան տուին, շատ ուրախ էր։ Բայց չար մարդու սրտի ուրախութիւնը երկրատե չէ լինում։ Նա տեսաւ Մուրթքէոսին, որ նստած էր թագաւորի պալատի դռան մօտ։ Մուրթքէոսը նրա առաջին վեր չկացաւ։ Այս միայն բաւական էր, Համանի բոլոր ուրախութիւնը թունաւորելու, նրա ուրախութիւնն այն բոպէին կորաւ։ Նա, շատ նեղացած, եկաւ տուն և իր բարեկամների ու կնոջ առաջին համարում էր ամեն շնորհքներն, որ ինքը ստացել էր։ «Ես, ասում էր նա, բարձրացայ թագաւորի ձեռքով նրա թագաւորութեան ամեն իշխաններից և նախարարներից վեր։ ունիմ անթիւ հարստութիւն։ Թագուհին բացի ինձնից ոչ ոքին չկանչեց ճաշի իր մօտ թագաւորի հետ միասին։ Նա էգուցւան ճաշին էլ կանչեց ինձ։ Բայց, շարունակեց նա, այս ամենը չէ ուրախացնում ինձ, եթե տեսնում եմ Մուրթքէոսին թագաւորի պալատում»։

Կինն ու բարեկամներն ասում էին նրան. «Հրամալիք կանգնել կախաղան և էգուց իսկ խնդրիք թագաւորից հրաման Մուրթքէոսին կախելու։ Այն ժամանակ քո ուրախութիւնդ թագաւորի ճաշի ժամին ոչինչ բանով չի խանգարուիլ»։ Այս խորհուրդը շատ հաճելի թուեցաւ Համանին. նա այն բոպէին հրամայեց կանգնել իր բակում բարձր կախաղան։

Առաքինի Մուրթքէոսն ամենեին չէր կասկածում, որ իրան սպասում է այնպիսի մերձակայ մահ. բայց Աստուած պաշտպանեց Մուրթքէոսին։ Դիշերը թագաւորը չկարողացաւ քնել և որ ցըուէ իր անքնութիւնից պատճառուած ձանձրութիւնը, հրամայեց իր թագաւորութեան ժամանակագիրքը կարգալ։ Տէր Աստուած, ով չէ հաւատում յարգութեամբ Քո նախախնամութեանդ։ Պատահեցաւ, որ թագաւորի առաջին կարգացին երկու նախարարների դաւաճանութեան վրայ նրա կեանքի գէմ, որ բաց արաւ Մուրթքէոս։ «Ինչով է վարձատրուած Մուրթքէոսի հաւատարմութիւնը», հարցրեց թագաւորը։ «Ոչնչով, թագաւոր», պատասխանեց կարգացողը։ Թագաւորն ամաչեց այս պատասխանից և միտը դըեց միւս օրն իսկ վարձատրել Մուրթքէոսին։

«Տէս, ասաց թագաւորը կարգացողին, չկայ արդեօք մի մարդ միւս սենեակում»։ — «Այստեղ կանգնած է Համանը», պատասխանեց կարգացողը։ «Կանչիր նրան այստեղ», ասաց թագաւորը։ Համան մտաւ թագաւորի մօտ։ Նա եկել էր առաւօտը վաղ, որ խնդրէ հրաման թագաւորից Մուրթքէոսին կախելու համար։ Թագաւորը հարցրեց Համանին. «Ի՞նչ պէտք է անեմ այն մարդուն, որին կամենում եմ տալ մեծամեծ պատիւ»։ Փառասէր և մեծամիտ Համանը կարծեց, թէ թագաւորը կամենում է իրան տալ այս պատիւն և այն պատճառով պատասխանեց. «Նա, ում թագաւորը կամենում է տալ ամենամեծ պատիւը, պէտք է հագնէ այն ջորն, որ գործ է ածում թագաւորը, նստէ այն ձիու վրայ, որի վրայ հեծնում է ինքը թագաւորը, թագաւորի նախարարներից առաջինը թնդ բռնէ ձին և այսպէս անցնելով բոլոր քաղաքի միջով թո՛ղ գոչէ՝ ահա այսպէս յարգւում է նա, ով հաւատարմութեամբ ծառայում է թագաւորին»։ «Բարի է, ասաց թագաւորը. գնա ուրեմն պատրաստիր ամենն ինչպէս գու ասացիր։ Դու ինքդ իբրև առաջին նախարարս ման կածես բոլոր քաղաքի միջով Մուրթքէոսին, այն Հրէալին, ու միշտ նըս-

տում է իմ արքունիքիս դռան մօտ. բայց միայն տես, ոչ ինչ չմոռանաս»։ Համան գնաց. նա պէտք է հագնէր Մուրթքէոսին թագաւորի զորերը, նստեցնէր նրան ճոխ զարդարած արքունի ձիու վրայ, պտղտեցնէր այս ձին Սիսիս քաղաքի ամեն փողոցներով և աղաղակէր. «Աշա այսպէս լարգում է նա, ով որ հաւատարմութեամբ ծառայում է թագաւորին»։ Պալատի դռան մօտ Մուրթքէոս իջաւ ձիուց, հանեց զարդերն ու նստաւ իր սովորական տեղում։ Իսկ Համան, գլուխը կորացրած, նեղութեամբ և ամօթով դարձաւ տուն։

102. Համանի մահը.

Հազիւ կարողացաւ Համան պատմել իր կնոջ և բարեկամներին ամեն պատահածներն, եկան թագաւորից մարդիկ և կանչեցին նրան ճաշի թագուհու մօտ։ Նա գնաց նրա մօտ թագաւորի հետ միասին։ Թագաւորը ճաշի ժամանակ ուրախ էր շատ և ասաց. «Եսթեր, այժմ ասա ինձ քո խնդիրքը։ Ես կը կատարեմ այն, եթէ մինչև անդամ իմ թագաւորութեանս կէսն էլ խնդրես»։ Եսթեր պատասխանեց. «Թագաւոր, եթէ գտայ շնորհք քո առաջիդ, ինդրում եմ քեզ, ընծայիր կեանք ինձ և իմ ազգիս, որովհետեւ մենք ամենքս դատապարտուած ենք իմահ, մեզ ամենուս կամենում են ոչնչացնել, ջնջել։ Գոնէ եթէ մեզ իբրև ստրուկների ծախէին, մեր թշուառութիւնն էլի տանելի կը լինէր, այն ժամանակ ես լոռութեամբ կը թափէի արտասուք. բայց մեր թըշնամին խստասիրտ է և անողոքելի. նա վճռեց մեզ ամենիս զրկել կեանքից, ով թագաւոր. նա արժանի չէ քո պալատիդ»։ — Ո՞վ է դա՝ այդ յանդուգն, աղաղակեց Արտաշէս։ «Այդ շար թշնամին Համանն է»։

Այժմ յայտնուեցաւ, որ Եսթեր պատկանում էր այն

ազգին, որին Համան դատապարտեց ջնջել։ Համան կանգնած էր, սարսափած, չհամաձակելով աչք բարձրացնել ոչ թագաւուրի և ոչ թագուհու վրայ։ Արտաշէս զայրացած դուրս գնաց պլատէզ, Համան ընկաւ Եսթերի ոտները, խնդրում էր, որ խնայի իր կեանքն և վախից այնքան մոռացաւ թագուհուն պատշաճաւոր պատիւն, որ մինչև Համարձակուեցաւ փաթաթուել նրա ծնկներին։ Այս ըոպէին թագաւորը դարձաւ պարտէզից, տեսնելով Համանին Եսթերի ծնկները բռնած, առաւել բարկացաւ։ Թագաւորի տուած նշանով կապեցին Համանի աչքերը դատապարտեալ յանցաւորի պէս և դուրս հանեցին թագուհուն սենեակներից։ Արտաշէսի ծառաներից մէկն ասաց. «Համան իր բակում կանգնել տուեց կախաղան յիսուն կանգուն բարձրութեամբ այն Հրէայի Համար, որ փրկեց թագաւորի կենաքը»։ «Թող նոյն կախաղանի վրայ կախեն իրան Համանին», ասաց թագաւորը։

Համան կախուեցաւ այն կախաղանի վրայ, որ պատրաստել էր Մուրթքէոսի Համար, իսկ Մուրթքէոսն Արտաշէսի պալատումն բռնեց Համանի տեղը։ Թագաւորը նրան կարգեց պահապան իր կեանքի և յետ առաւ իր տմարդի հրամանը՝ Հրէից ազգը ջնջելու մասին։ Հրէաներն այս դիպուածին Համար կարգեցին տօն, որ մինչև այժմս էլ կատարում են ամեն տարի։

103. Թարձը գերութիւնից։

Տաճարի նորոգումն.

Աստուած դեռ շատ ժամանակ առաջ յայտնել էր մարգարէների բերանով իր ընտրեալ ազգին ոչ միայն բարելունական գերութիւնն, այլև նրա վերջանալու ժամանակն էլ։ Հրէաներն եօթանասուն տարի չարչարուեցան գերութեան մէջ։

Կիւրոս, Պարսից թագաւորը, նուաճեց Բաբելոնի և Ասորեստանի թագաւորութիւններն, ուր գերի էին Իսրայէլացոց բոլոր ցեղերը: Իմանալով, որ Երայեցոց սուրբ գըրքում շատ ժամանակ առաջ արդէն իր անունն էլ յիշած է և նշանակած է ինքը Հրէաների ազատիչ գերութիւնից, Երուսաղէմի և Աստուծոյ տաճարի նորոգիչ լինել, Կիւրոս, առաջին տարին, իր թագաւորութեան Բաբելոնի վրայ, հրամայեց հրատարակել յետագայ հրամանը: — Այսպէս է ասում Կիւրոս, Պարսից թագաւորը: « Ամենաբարձրեալ Աստուածն՝ երկնքի և երկրի Տէրը, որ իմ ձեռս տուեց երկրիս ամեն թագաւորութիւնները, հրամայեց ինձ Իրան տաճար կանգնել Երուսաղէմում: Ով որ իմ հպատակներիցս պատկանում է Իսրայէլացոց ազգին, թող երթայ Երուսաղէմ և կանգնէ Իսրայէլի Աստծուն տաճար և Աստուած ինքն ուղեկից կը լինի նրան»:

Ազգի առաջնորդները, քահանաները, ղետացիներն ու ժողովրդեան մեծ բազմութիւն հաւաքուեցան ճանապարհ ընկնելու: Ճանապարհ ընկնողների գլխաւոր առաջնորդն էր Սուրբ Դաւթի ցեղից Զորաբարէլ: Բացի կամաւոր նուերներից տաճարի շինութեան համար, նրանց տուին շատ արծաթ և ոսկի, նոյնպէս ամեն պիտոյք ճանապարհի համար: Կիւրոս հրամայեց յետ տալ ամեն ոսկի և արծաթի սկիհներն, որ Նաբուգոդոնոսոր առել էր Երուսաղէմի տաճարից: Այսպէս Հրէաները դարձան կրկին Իսրայէլացոց երկիրը, առաջուան իրանց հայրերի թողած բնակութիւններն և հաւաքուեցան Երուսաղէմում: Սկսան տաճարը կանգնել. ամենից առաջ շինեցին սեղան և զոհ բերին Աստուծոյ: Քահանաները փող էին ածում և աղաղակում էին. «Գովեցէք Աստծուն, Նա բարի է և Նրա ողորմութիւնը մշտնջենաւոր»: Բոլոր ազգն աղաղակում էր միևնոյն ուրախութեան ձայներն և զղջման արտասուբները խառնում էին միասին:

Սամարիայի և մերձակայ քաղաքների բնակիչները, կռա-

պաշտ ազգեր, որոնք բնակել էին աքսորուած Իսրայէլացիների տներում և ունեին մի քանի թերի հասկացողութիւն ճշմարիտ Աստուծոյ վրայ, լսելով Երուսաղէմի տաճարի նորոգւիլն, եկան Իսրայէլացոց առաջնորդների մօտ և ասացին. «Մենք էլ կամենում ենք օգնել ձեզ տաճարի շինութեան մէջ, որովհետեւ մենք պաշտում ենք ձեր Աստծուն և նրան զոհ ենք բերում»: Բայց նրանք պատասխանեցին. «Մեզ պատեհ չէ այլազգիներին թողնել տաճար շինելու. մենք մենակ կը կանգնենք Աստուծոյ տունը»: Սամարացիք, զարդացած այսպիսի բացասութեան վրայ, ամեն կերպով աշխատում էին արգելք լինել տաճարի շինութեան, բայց ամենն իգուր եղաւ, տաճարը շինուեցաւ: Յետոյ Սամարացիք շինեցին իրանց համար Սիւքէմի մօտ Դարիզին լեռան վրայ տաճար, բայց Հրէաները քանդեցին այս: Այս պատճառով ծագեցաւ այս երկու ազգերի մէջ մշտնջենաւոր պատերազմ:

104. Երուսաղէմի նորոգութիւը.

Տաճարի շինութիւնից յետոյ էլ Երուսաղէմ քաղաքն գեռ քարերի շեղջ էր. պատերը քանդած էին, քաղաքի գըռներն ալրած: Հրէաները (անուն հասարակ Իսրայէլի ամեն ցեղերի համար) բնակում էին աղքատութեան մէջ և արհամարհուած էին ամեն դրացի ազգերից:

Այս ժամանակներս Շօշ քաղաքում, պարսից Արտաշէս երկայնաբազուկ թագաւորի գուանն էր մի առաքինի Իսրայէլացի, Նէեմի անունով: Սա էր թագաւորի տակառակետը: Սրա բարեկամներից մէկն, Անանիա անունով, եկաւ Շօշ իր հայրենիքից, և Նէեմիին տեսութիւն գնալով պատմեց նըշանակամներից մէկն, Անանիա անունով, եկաւ Երուսաղէմ քարան, որ թէւ տաճարը կանգնած է, բայց Երուսաղէմ քաղաքն էլի գեռ ողբարի գրութեան մէջ է. նրա պատերը քանդած են, գոներն ալ ած, մարդիկն անտուն, ժողովուրդն աղաղակամները անունում էին միասին:

աղքատ և արհամարհուած ամեն դրացիներից: Նէեմին չէր համարձակում թագաւորին խնդրել, որ օգնութիւն տայ իր թշուառ եղայրներին, այլ լաց էր լինում. և աղօթքով դարձաւ դէպի Աստուած և Աստուած լսեց նրա աղօթքը:

Մի անգամ ճաշի ժոմանակ նա սովորութեամբ տալիս էր բաժակը խմիչքով թագաւորին, որ նայելով նրա երեսին, հարցրեց. «Քեզ ի՞նչ է պատահել, նէեմի, դու շատ տիսուր ես»: «Ո՛հ, թագաւոր, պատասխանեց նէեմին, կարելի՞ է արդեօք, որ ես տիսուր չլինիմ, երբ քաղաքն, ուր իմ հայրես բնակում էին, ամայացած է. նրա պատերը քանդած են և նրա դռները մոխիր դարձած»: — Ի՞նչ ես ուրեմն խնդրում դու ինձնից, հարցրեց թագաւորը: Նէեմին մըտքումը ջերմեռանդութեամբ աղօթք արաւ Աստուծոյ և պատասխանեց. «Թագաւոր, եթէ քո առաջետ գտայ շնորհք, զրկիր ինձ երուսաղէմ և հրաման տուր ինձ այն նորոգելու»: Թագաւորն և նրա մօտ նստած թագուհին հարցրեցին երկուսն էլ. «Երկար արդեօք կըտեսէ քո ճանապարհորդութիւնդ: Ե՞րբ դու էլի յետ կըդառնաս մեզ մօտ»: Նէեմին սշանակեց իր բացակայութեան և դարձի ժամանակ. թագաւորը համաձայնեցաւ այս ժամադրեալ ժամանակին, քաղցրութեամբ թողեց նրան և ճանապարհորդութեան ժամանակ նրա պաշտպանելու համար զրկեց նրա հետ մի գունդ ձիաւորներ էլ:

Երուսաղէմ հասնելից յետու նէեմին քննեց քաղաքն և ամեն այնտեղ եղած Հրէաներին հաւաքելով, սկսաւ շինել քաղաքն աշխատութեամբ: Նա աշխատում էր աղգի հետ, հաւասարապէս քաղաքի շինութեան և աղքատներին կերակրելու համար, ծախեց բոլոր իր ստացուածքն և ամենին վրայ նայում էր արթնութեամբ: Սամարացոց առաջնորդները ծիծաղում էին այս աշխատութիւնների վրայ, Հրէաները նրանց ծաղը բանի տեղ չէին դնում և շարունակում էին անխոնջ աշխատել: Նուտ պատերը բարձրացան մինչեւ կէսն.

այն ժամանակ դրացի ազգերը մտքերը դրին յանկարծ Հրէաների վրայ յարձակուել և քանդել նրանց աշխատանքները: Բայց մի քանի բարեպաշտ Հրէաներ, որոնք բնակում էին այս ազգերի մէջ, յայտնեցին իրանց հայրենակիցներին նրանց միտքը: Հրէաները զինաւորուեցան և շարունակում էին աշխատել զէնքը ձեռքներին: Թշնամիներ այս իմանալով չհամարձակւեցան յարձակուելու նրանց վրայ. բայց իմանալով որ նէեմին է Հրէից ազգի հոգին, նրանք վճեցին խորամանկութեամբ բերել նրան իրանց մօտ և սպանել: Սամարացոց գլխաւոր իշխանը կանչեց նրան իր մօտ խորհուրդի համար, բայց նէեմին չգնաց և այսպէս ոչնչացան նրանց ամեն չար խորհուրդները: Հրէաները յաջողութեամբ վերջացըն երուսաղէի շինութիւնն և նրա պատերն, օրհնեցին նորոգած քաղաքը սաղմոսերգութեամբ, թմբուկի և փողի ձայներով, շնորհակալութեան աղօթքներով, զոհեր բերելով և ուրախութեան աղաղակներ արձակելով:

105. Եղիազար.

Հրէաները մի քանի ժամանակ բնակում էին իրանց երկրում հանգստութեամբ և երկրպագում էին ճշմարիտ Աստուծուն, բայց կամաց-կամաց սկսան անցնել նրա պատուիրաններից և ընկղմել մեղքերի ու անօրէնութիւնների մէջ: Աստուած էլի մատնեց նրանց թշնամիների ձեռքը: Ամենից խստասիրտը սրանցից, Ասորոց թագաւորը, Անտիոքն (Եպիփան) էր: Նա առաւ երուսաղէմ, յափշտակեց տաճարի սուրբ սկիհներն, աստուածապաշտութեան համար հարկաւոր ուրիշ բաները, սպանեց այր մարդոց, կանանց և երեխանց ծախեց իբրև ստրուկների, և ստիպում էր ազգին կոքերին երկրպագութիւն տալ և ամենքին հրամայում էր ուտել կըու

քերին գոհ բերած խոզի միս — կերակուրն, որ Մովսէսի օրէնքով արգելուած էր Հրէաներին ուտել:

Եղիազար, ուսեալ Հրէաներից մէկն, էր պատուելի ծերունի, սպիտակ մազերով և բարի դէմքով։ Նրան բռնութեամբ ստիպում էին ուտել կոքին գոհած խոզի միս. բայց նա չէր ընդունում և աւելի նախադասելի համարեց մեռնել փառքով, քան թէ վարել անկարգ կեանք։ Եղիազարի փոքրոգի բարեկամներից ոմանք ասում էին նրան. «Մենք կըքերենք քեզ զոհած մսից, միայն դու ձեացիր, իբրև թէ ուտում ես այն թագաւորի կամքը կատարելու համար, դու կըփրկես այսպէս քո կեանք»։ «Զէ, պատասխանեց Եղիազար, ես չեմ ուզում այսպիսի գարշելի կեղծաւորութեամբ գնել կեանքիս քանի մի օրերն, որ մնում են ինձ այս երկրումս, այդ անվայել է իմ ալիքներիս։ Այսպիսի երեսպաշտութիւնը կըգալթակղէ մատաղ մարդոց, երբ նրանք կիմանան, որ իննսուն տարեկան Եղիազարն անցել է կռապաշտների կողմը. այդ կանպատուէ իմ ծերութիւնս։ Իսկ ինձ էլ ինչ օգուտ դրանից։ Եթէ ես ազատուեմ էլ մարդոց տանջանքից, Ամենաբարձեալի ձեռից չեմ կարող փախչէլ՝ թէ կենդանի լինիմ և թէ մեռած։ Ես արիութեամբ կերթամ մահի դէմ, կըվարուեմ, ինչպէս վայել է իմ ալիքներիս և օրինակ կըգառնամ երիտասարդներին, թէ ինչպէս պէտք է յօժարութեամբ և քաջութեամբ մեռնել Աստուծոյ սուրբ օրէնքի համար»։

Այս ասելով, արդար ծերունին քաջութեամբ գնաց տանջանքն ընդունելու։ Նրան ճանապարհ գցողները դադարեցին նրա վրայ ցաւիլ, կարծելով որ միայն հպարտութիւնը ըստիպեց նրան այսպէս խօսիլ։ Մինչև իմահ չարչարեցին նրան։ Իր հոգին աւանդելից առաջ Եղիազարն ասաց. «Ամենագէտ Աստուծոյ յալտնի է, որ ես, ունենալով միջոց փրկութեան, տանում եմ մարմնովս չարաչար տանջանքներ. բայց հոգով ուրախանում եմ, որ այս ամենը նրա համար եմ քաշում»։

Այս նրա վերջին խօսքերն էին. նա վախճանեցաւ, թողնելով մեզ օրինակ, թէ ինչպէս հաստատութեամբ պէտք է կատարենք մեր պարտաւորութիւնները, որ մեզ վրայ դնում է Հաւատը։

106. Եօթն եղբարք և նրանց մայրը Շամունէ.

Անտիոքոսի առջև տարան նմանապէս մի Շամունէ անուն կնոջ, իր եօթն որդոց հետ միասին, որոնց հրամայեց ծեծել խարազանով և եղան ջիւերով, որ կարողանալ ստիպել օրէնքով արգելած կերակուրն ուտելու։

Մեծ որդին ասաց. «Ինչու էք այդքան երկար մեզ հարցնում և յորդորում։ Մենք կամենում ենք աւելի շուտով մեռնել, քան թէ անցնել օրէնքից, որ մեր հայրերի տուածն է»։ Անտիոքոսը զայրացաւ շատ, հրամայեց կտրել այդ թըշւառականի լեզուն, կաշին հանել, կտրել ոտներն և ձեռքերը, յետոյ գեռ կենդանի գնել ջեռուցած տապակի վրայ ու խորովել։ Մայրն և միւս եղբայրները, պէտք է նայէին այս նահատակի տանջաքների վրայ, բայց նրանք, մինչև որ նրան տանջում էին, աշխատում էին մէկ մէկու քաջալերել և իրանք էլ պատրաստում էին նոյնպիսի չարաչար մահուան համար։

Յետոյ տարան տանջելու երկրորդ եղբօրը։ Կաշին հանելից յետ, հարցըին նրան. «Համաձայնում է արդեօք խոզի միս ուտել, աւելցնելով, որ եթէ չէ, էլե կըտանջեն նրան»։ Վերջին շնչառութեան ժամանակ ասաց նա Անտիոքոսին. «Դու խստասիրտ, դու խլում ես մեր ժամանակաւոր կեանքը, բայց երկնաւոր թագաւորը յարութիւն կըտայ մեզ յաւիտենական կեանքի համար»։

Երբորդը յօժարութեամբ գնաց տանջուելու, և երբ տանջողները հարցըին. արդեօք կամենում է կատարել թագաւորի հրամանը, նա պատասխանեց. «Աստուածանից ստացալ կեանքս. նրա օրէնքը կատարելու համար զոհում եմ այն և յոյս ունիմ որ նրանից էլի կըստանամ կեանք»։ Նա այնպիսի քաջութեամբ համբերեց ամեն սարսափելի տանջանքներին և մահուան, որ զարմացրեց թագաւորին և սրան պատողներին։

Չորրորդը տանջուեցաւ իր եղբայրների պէս. մահուան ըոպէում ասաց թագաւորին. «Լաւ է մարդոց ձեռքով սպանւել, բայց յուսով, որ Աստուած կըտալ յարութիւն յաւիտենական կեանքի համար. իսկ դու այդ յոյսից զուրկ ես»։

Հինգերորդը, տանջանքի ժամանակ թագաւորի վրան նայելով, ասաց. «Այժմ կարող ես անել, ինչ որ ուզում ես, բայց դու էլ այնպիսի մարդ ես, որպիսին մենք ենք. մի կարծիր, որ Աստուած թողել է մեր ազգին։ Սպասիր և կըտեսնես, ինչպէս ամենակարող է Աստուած, երբ քեզ և քո զաւակներին նա կըմատնէ տանջանքի»։

Վեցերորդը մեռնելիս ասաց թագաւորին. «Մենք տանջուում ենք ոչ թէ այն պատճառով, որ դու ուզում ես, այլ որովհետեւ Աստուած կամենում է մեզ պատժել մեր մեղքերի համար։ Բայց չկարծես, թէ դու կազատուիս պատժից. Աստուած կըհատուցանէ քեզ փոխարէնն, որ դու զինաւորւեցար նրա դէմ»։

Մնում էր եօթներորդ եղբայրն, ամենից կըտսերը, դեռ երեխայական հասակում։ Թագաւորը կանչեց նրան իր մօտ և քաղցրութեամբ յորդուում էր թողնել իր հայրերի օրէնքըն և երդումով խոստանում էր նրան ամեն կերպի բարերարութիւններ։ Բայց երեխան մնաց անշարժելի։ Թագաւորը հրամայեց կանչել մօրն և հրամայեց նրան իր որդուն յորդորել, որ կարողանալ գոնեա իր մէկ հատ որդուն պահել կենդանի։

Մայրը, մօտենալով երեխայրին, ասաց. «Միրելի որդեակ, դու, որին ես գրկումս սնուցի, դու, որին ես մեծ աշխա-

տութեամբ և կարիքով հասուցի մինչև այս օրս, խնդրում եմ քեզ, ողորմիր ինձ, նալիր երկնքին, երկրիս, մարդկութեանս ազգին, և ամեն գեղեցիկ արարածների վրայ, այն ամենն ամենազօր Աստուծոյ ստեղծածներն են, Որին մենք երկրագութիւն ենք տալիս։ Մի ուրանար նրան, մի վախնար ոչ տանջողներից, այլ մեռմիր իբրև արժանի եղբայր, որ ես կարողանամ մի անգամ ձեզ ամենին սիրով հանդիպել»։

Մայրը հազիւ կարողացաւ վերջացնել իր խօսքերն, երեխան արգէն, դառնալով դէսի տանջողներն, ասաց. «Ինչու էք սպասում դուք, միթէ կարծում էք դուք, որ կուրանամ իմ հաւատս։ Ես երբէք չեմ անցիլ այն պատուիրաններից, որ Աստուած մեզ տուեց Մովսէս մարգարէի ձեռքով։ Բայց դու, ով արքան չարիք հասուցիր մեր ազգին, չես ազատուիլ Աստուծոյ դատաստանից։ Այժմ, կարճատես տանջանքից յետոյ իմ եղբայրներս ստացան յաւիտենական կեանք, իսկ քեզ Աստուած կըպատժէ քո հպարտութեանդ, խոտասրտութեանդ համար։ Ես, իմ եղբայրների պէս, կամենում եմ դնել իմ մարմինս էլ, հոգիս էլ հայրենի օրէնքի վրայ և խնդրում եմ Աստծուն, որ նա ողորմի իր ազգին։ Իսկ դու, ամենասաստիկ տանջանքի մէջ վերջապէս կըհաւատաս, որ նա միայն է Աստուած տիեզերքի»։

Այս խօսքերը շատ գալրացըին Անտիոքոսին։ Նա մատնեց այս գեռահաս նահատակին ամենից շատ տանջանքների։ Վերջապէս նահատակիցին նրանց արդար մօրը՝ Նամունէին էլ։

107. Մատաթի և նրա որդիքը.

Այս հալածանքերի ժամանակ Մատաթի քահանան իր որդոց հետ հեռացաւ մի փոքրիկ քաղաք, որ Մովսիմ էր կոչւում։ Անտիոք զրկեց նրան մօտ աստիճանաւորներ, որոնց

Հրամայած էր ասել նրան. «Դու այս երկրումս ամենից երևելի մարդն ես, դու ունիս շատ որդիք և ազգականներ, որոնք քեզ պատում են: Երուսաղեմ և բոլոր Հրէատան հպատակեցան թագաւորին, հպատակիր նրան դու էլ, այն ժամանակ թագաւորը քեզ, քո որդոցդ և քո ազգականներիդ իր բարեկամների թիւը կըմտցնէ և կըտայ ձեզ պատիւներ և հարստութիւն»: Մատաթին համարձակ պատամխանեց Անտիռքոսի պատգամաւորներին. «Եթէ Անտիռքոս տիրէր բոլոր տիեզերքին, և երկրիս ամեն ազգերին ստիպէր ուրանալ իրանց հաւատն, այն ժամանակն էլ ոչ ես, ոչ իմ որդիքս և ոչ իմ ազգականներս չէինք երկրագութիւն տալ կոքերին»: Յետոյ գուրս գալով քաղաքի հրապարակը, Մատաթին աղաղակեց բարձր ձախով. «Ով որ օրէնքի վրէժը կամենում է հանել և հաւատարիմ մնալ ուխտին, որ Աստուած դրել է մեր հալրերի հետ, նա թող գայ իմ ետևից»: Նա և նրա որդիք թողնելով բոլոր իրանց ստացուածքը գնացին լեռները: Շատ բարեպաշտ մարդիկ, որ հաւատարիմ մնացին Մովսէի օրէնքին, հետևեցին նրանց իրանց կանանց, երեխաների հետ և անասուններովը: Նրանք կենում էին անապատ լեռներում և կերակրում էին արօտով և արմատներով: Խորայէլացիներից ամենից քաջերը, որոնք պատրաստ էին թափել իրանց արիւնը հաւատի համար, ժողովեցան Մատաթիին մօտ: Այսպէս հաւաքուեցաւ զօրք, որ կարող էր ընդդէմ կենալ Անտիռքոսին:

Մատաթին էր արդէն շատ ծեր և զգում էր իր մահուան ժամի մօտենալը: Նա կանչեց որդոց իր մահճի մօտ և ասաց նրանց. «Աժմ իշխում է անօրէնութիւնն. եկել է թշուառութեան, աւերածութիւնների և սաստիկ հալածանքների ժամանակը: Ուրեմն որդիքը, զինաւորուեցէք Աստուծոյ անունով մեր հաւատի համար, մեր հայրերի հաւատի համար: Յիշեցէք ձեր հայրերի զործքերը, հետևեցան նրանց իշխանութիւններին, ապա անօրէնութիւնն է»:

աանգեցէք նրանց փառքը: Աբրահամն էլ փորձեցաւ, բայց մնաց հաւատարիմ Աստուծոյ և նրա հաւատը համարուեցաւ իրան արդարութիւն. Յովսէփ թշուառութիւնների մէջ էլ հաստատ մնաց իր հաւատին և Աստուած կարգեց նրան առաջին իշխան Եգիպտոսումը: Յեսու Նաւեան կատարում էր Աստուծոյ պատուիրաններն, և դառաւ Խորայէլացոց ազգի առաջնորդ: Քաղէք վկայեց ճշմարտութեան և մտաւ աւետեաց երկիր: Դաւիթ հեզ էր և ողորմած և ալսպէս ստացաւ թագաւորի գահը: Եղիան, նախանձայուղութեամբ Աստուծոյ համար, բարձրացաւ երկինք. Անանիան, Աղարիան և Միսալէլը մնացին հաւատարիմ Աստուծոյ, չնայելով թագաւորի սպառնալիքներին և մնացին անվնաս բոցի միջում: Դանիէլի բարեպաշտութիւնը պահեց նրան առիւծների կատաղութիւնից: Քննեցէք մեր ազգի բոլոր պատմութիւնն և ամեն տեղ կըդտէք, որ Աստուած պահպանում է չարից և թշուառութիւնից նրան, ով նրա զրայ է գնում իր լոյսը: Մի վախենաք չարագործների սպառնալիքներից, որովհետեւ անօրէնների իշխանութիւնը կարճատեւ է, այսօր յաղթող են հանդիսանում, Եգուց հող են զառնում, իրանց հետ միհասին կորչում են նրանց ամեն խորհուրդներն էլ: Զօրացէք, հաստատ պահեցէք մեր հաւատը: Ձեր եղբայր Նմաւոնը իմաստուն և խորհրդական մարդ է. լսեցէք նրա խորհուրդները, հպատակեցէք նրան, նա կըլինի ձեզ հայր: Ձեր եղբայր՝ Յուդան, մականունով Մակաբէ, էր քաջ իր մանկութիւնէց, ուստի և նա կառաջնորդէ ձեզ պատերազմում: Պաշտունեցէք ձեր հաւատն. եղէք համաձայն միմեանց հետ, ընդդէմ կացէք նեղութիւնների, որոնց մէջ զցում են ձեր հայրենակիցներին, պահեցէք Մովսէսի օրէնքի ամեն հրամանները:

Ուս ասելով Մատաթին օրհնեց իր որդոց և վախճանեցաւ խաղաղութեամբ: Որդիքը թաղեցին նրան, կատարեցին ամեն նրա հրամաններն և Խորայէլացոց բոլոր ազգն ողբաց նրա մահը:

108. Անտիռքոսի մահը.

Անտիռքոս գնաց Պարսկաստան այն դիտաւորութեամբ, որ տիրէ այս թագաւորութեան Պերսեպոլիս մայրաքաղաքին և աւար առէ նրան, իսկ Հրէաստանում թողեց իր երևելի զօրավարներից մէկին։ Բայց Պարսկաստանում Անտիռքոս ջարդուեցաւ և ստիպուեցաւ ամօթով յետ դառնալ։ Նոյնպէս էլ Հրէաստանում, Յուղա Մակարէն շատ պատերազմներով ջարդեց նրա զօրքերին։ Յուղան առաւ Երուսաղէմ, քանդաց կուռքներն, որ Անտիռքոսի հրամանով դրել էին ճշմարիտ Աստուծոյ տաճարում։ Տաճարը մաքրուեցաւ և սրբուեցաւ։

Այս համբաւը շատ զայրացրեց Անտիռքոսին։ Նա կամենում էր թաքցնել իր ամօթալի փախուստը Պարսկաստանից և Հրէաներից հանել վրէժ ամեն վնասների համար, որ ստացաւ այս անյաջող պատերազմում։ Իր ձեռնարկութիւնների անյաջողութիւնն այնպէս շատ տրտմեցըն նրան, որ նա հիւանդացաւ և ստիպուեցաւ մտնել անկողին։ Երկարատև հիւանդութիւնն աւելի մեծացրեց նրա տրտմութիւնը։ Նա կանչեց իր մօտ իր բարեկամներին և ասում էր նրանց. «Քունս փախչում է աչքերիցս, սրանից առաջ ինչպէս ուրախ էի ես և ամենին սիրելի. իսկ այժմ նեղութիւններ ամեն կողմից հաւաքւում են գլխիս, տխուր մտքերն ինձ չեն թողնում, թշուառութիւններն, որ ես հասցը Երուսաղէմին, աչքիս առաջև են միշտ. ես յափշտակեցի Երուսաղէմի տաճարն և շատ անմեղ Հրէաների արիւնը թափեցի։ Ես խոստովանում եմ, որ իմ խստութիւնս է թշուառութեանս պատճառը։ Ահա մեռնում եմ ես տրտմութիւնից և նեղութիւնից օտար երկրում»։

Նրա հիւանդութիւնն օրից օր սաստկանում էր. նա զգում էր սաստիկ ցաւ բոլոր մարմնում և դեռ կենդանի՝ ուտում էին նրան որդերը, վէրքերի հոտը անտանելի էր և

Անտիռքոս, որ դեռ փոքր ժամանակ առաջ իր հպարտութեամբ իրան Աստուծոյ հաւասար էր համարում, դառաւորդերին կերակուր, և ամենքը թողին նրան։ Նա ինքն իրան էլ անգամ ծանրութիւն էր։ Վերջապէս Անտիռքոս, զըսպելով իր հպարտութիւնն, պէտք է խոստովանէր իր ոչընչութիւնը, նա աղօթք էր անում Աստծուն, զանազան ուխտեր էր դնում և խոստանում էր ոչ միայն Երուսաղէմի տաճարից յափշտակածը յետ դարձնել, այլև զարդարել այն ընծաներով, ընդունել Հրէից հաւատն և տարածել այն բոլոր իրան հպատակ երկրներում։ Բայց ամենն իգուր էր. բոլոր իրան հպատակ երկրներում։ Բայց ամենն իգուր էր. Աստուած չընդունեց նրա ուխտն, որովհետև նա էլ նրան Անտիռքոս կեանքում։ Անտիռքոս, որ շատ թշուառընդունեց իր բոլոր կեանքում։ Անտիռքոս, որ շատ թշուառների հեռացընց իրանց տներից, հայրենիքից, քշեց նրանց անապատներ և չարչարեց նրանց անդթութեամբ, այս Անտիռքոսը ստիպուեցաւ վերջացնել իր կեանքն օտար երկրում, անապատում, սարսափելի տանջանքի մէջ։

109. Փրկչի ակնկալութիւնը.

Մակաբէեանք յաջորդաբար կառավարում էին մի քանի ժամանակ Հրէից թագաւորութիւնը. յետով Հրէաները դառան չոռվմայ հարկատու և հպատակ Հերովդէսի (Եգումէտացի), որ չնչեց Մակաբէեանց ցեղը. Հոռվմայեցիք, հզօր, պատերազմասէր ազգ, որ նուաճեցին գրեթէ բոլոր այն ժամանակուան ծանօթ երկիրները, նուաճեցին նմանապէս Հրէանենէսկուսինէն բաժանած էր չորս մասն՝ Հրէաստան, Ամարիա, Գալիլիա և Պերէա կամ Երկիր յալունկուս Յորդանանու։ Հոռվմայեցիք տիրում էին Պաղէստինէի այս ամեն մասերին էլ, բայց թոյլ էին տալիս Հերովդէսին Հրէից թաւոր անուանուել։

Այս թշուառ ժամանակներում էլ չէին յայտնւում իս. ըալէլացւոց մէջ մարգարէներ: Նրանք չէին լսում ոչ մի մխիթարական խօսք. բայց գիտէին, որ մարգարէների խօսքերի կատարման ժամանակը մօտենում է, որովհետև իշխանութիւնը վերացել էր Յուղալի ցեղից: Իսրայէլացւոց ցեղերը տանջլում էին կռապաշտների: Ճառալութեան լծի տակ: Իսրայէլացիները թշուառ էին, բայց նրանց մէջ էր միայն ճշշմարիտ աստուածգիտութիւնն. իսկ բոլոր երկիրս ընկողմած էր կռապաշտութեան խաւարի մէջ: Միայն իսրայէլացիներին չէր հարկաւոր Փրկչի գալուստն, այլ ամեն մարդիկ զգում էին աշխարհիս Փրկչի և Լուսաւորչի կարօտութիւնը:

Մեր նախահայրերի մէղքի մէջ ընկնելից յետ, Աստուած ասաց օձին. «Կնոջ զաւակը կըջախջախէ քո գլուխդ»: Այն օձն, որ խաբեց Եւային, հասարակ օձ չէր, այլ սատանայ, այսինքն, չար ոգի, որ կամենում էր ճառալեցնել և ջնջել բոլոր մարկութիւնը: Աստուած այն ժամանակ արդէն խոստացաւ փրկել մարդոց սատանայի իշխանութիւնից Փրկչի ձեռով, որ պէտք է ծնէր անայր կնոջից, այսինքն կոյսից:

Աստուած խոստացաւ Աբրահամին բազմացնել նրա ցեղըն ինչպէս երկնքի աստղերն և նրա զաւակներից մէկի ձեռքով օրհնել երկրիս բոլով ազգերը:

Այս խոստումն աւելի բաց հաստատուեցաւ Յոկոբին. նրա տասներկու որդիներից յալտնուեցաւ այն, որի զաւակից պէտք է ծնէր Փրկիջը: Յակոբ մեռնելիս, մարգարէական հոգւով լցուած, իր մահուան ըոպէին ասաց. «Յուղա, քեզ կըհնազանդեն քո եղբայրներդ, չի խլուիլ Յուղայի գաւազանն և օրէնստու նրա զաւակից, մինչև կըգայ Խաղաղարն՝ ամեն ազգերի Յոլսը:

Աստուած կրկնեց իր խոստումն ամեն Իսրայէլացոց առաջին Մովսէսի բերանով. որ իր մահից առաջ ասաց ժողոված Իսրայէլացիներից. «Ձեր միջից, ձեր եղբայրների միջից, Աստ-

ւած մի ուրիշ ինձ նման մարգարէ կըկանգնեցնէ, նրան լսեցէք»:

Արքալ — մարգարէն Դաւիթ, գիտէր Սուրբ Հոգւոյ աղդեցութեամբ, որ իր զաւակից կըծնի Խոստացեալը՝ յաւիտենական Թագաւորն, իր սուրբ ուրախութեան մէջ նա անուանում էր Նրան Տէր, Մեսիա, Որդի Աստուծոյ:

Վերջապէս ամեն մարգարէներն էլ բաց գուշակում էին այն Խոստացեալի, Դաւիթի որդու Մեսիայի, Քրիստոսի, այսինքն Օծեալի, այն Մարգոյ Որդոյ վրայ, որին Դանիէլ մարգարէն տեսաւ ամպերի մէջ, այն փրկչի, այն ազատիչի՝ Աստուծոյ վրայ: Ժամանակն եկաւ. որքան որ թանձրանում էր երկրիս վրայ խաւարն, այնչափ աւելի մօտենում էր փրկութեան արջալոյսը:


Անմիտ Հրէաները կարծում էին, թէ Խոստացեալը կըգայ երկրային մեծութեամբ ծածկած, կըքանդէ Հռովմալեցոց իշխանութիւնն և փառքով կընստի իր հօր՝ Դաւիթի աթոռը. բայց Աստուած իր իմաստութեամբ այսպէս չէր կարգել:

Եկաւ այս փրկիչը, բայց ոչ երկրային մեծութեան փառքով: Նա յալտնուեցաւ աշխարհիս վրայ հեզ և խոնարհ, սուրբ սիրով վառուած մարդկութեան համար:

Այս հին կտակարանում խոստացեալ Մեսիան՝ է Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Տէրն

Վ Ե Ր Զ



1587

1587



